Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

Բակուր

Մատենաշար

ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ

49 810

ԲԱԿՈՒՐ

ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ

Մատենաշար
գիրք առաջին

49 810

«Շուշի» ԲՀ
հրատարակչություն
Երևան - 2008

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.3 (2Հ)
Կ-294

Խմբագիր՝ Անահիտ Սաատրյան
Շապիկը՝ հեղինակի

Կարապետյան Բակուր
Կ-294 Արցախյան գոյամարտի համահավաք, գիրք առաջին. - Եր.: «Շուշի» ԲՀ, 2008թ. - 252 էջ:

Մատենաշարն ընդգրկում է արցախյան շարժումը, ջոկատների կազմավորումը, բանակի ստեղծումն ու 1992-1994 թթ. պատերազմը: Որպես վավերագրի ստեղծման ձեւ ընտրվեց շարժման, պատերազմի մասնակիցների հետ ակտիվ զրույցը, որի ընթացքում նրանք պատմում են ճշմարտացի, իրական դեպքեր: Մատենաշարում հավասար պայմաններում են գլխավոր հրամանատարն ու զինվորը, շարժման առաջնորդն ու թռուցիկ տարածող բանվորը, ռազմաճակատային լրագրողն ու ճակատային գծից վիրավոր զինվորին առաջին օգնությունը ցույց տվող սանիտարուհին, զինամթերք հայթայթողն ու մեր ժողովրդի երկու հատվածների միջեւ օդային կապը պահպանող ուղղաթիռի օդաչուն: Ընտրության հիմնական սկզբունքը զրուցակիցների հիշելու, պատմելու կարողությունն ու ազնվության աստիճանն է:

Խմբագրման ընթացքում միայն ոճական եւ ուղղախոսական մասնակի շտկումներ են արվում՝ պահպանելով պատմողին յուրահատուկ խոսելաձեւը, բարբառը:

Մատենաշարը՝ որպես մեր ժողովրդի պատմության վավերագիր, կարեւոր ու հարուստ նյութ է պարունակում նաեւ ապագա ուսումնասիրողների համար:

ԳՄԴ 66.3 (2Հ)

ISBN 978-99941-2-132-5

© Բակուր, 2008թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 4
Ժաննա Գալստյան 6
Վլադիմիր Մովսիսյան 22
Յուրի Բեկնազարյան 33
Մարգարիտա Գասպարյան 36
Կարեն Բաբուրյան 38
Ռոբերտ Քոչարյան եւ Սաշա Բարխատով 42
Գրիգոր Գրիգորյան 46
Գալինա Ստարովոյտովա 62
Արկադի Վոլսկի եւ Բորիս Դադամյան 67
Պարգեւ արք. Մարտիրոսյան 69
Արմեն Մազմանյան 81
Վազգեն Մանուկյան 92
Լեւոն Գեւորգյան 112
Գեղամ Գաբրիելյան եւ Ստեփան Նիկողոսյան 134
Սուրեն Հարությունյան 144
Բժիշկներ Մարտակերտից 167
Վլադիմիր Վարդանով 176
Արկադի Տեր-Թադեւոսյան 190
Արկադի Կարապետյան 199
Արթուր Ալեքսանյան 220

ԱՌԱՋԱԲԱՆ

Արցախյան շարժման, ջոկատների կազմավորման, 1992-1994 թթ. Արցախ-Ադրբեջան պատերազմի մասին վավերագրական մատենաշար ստեղծելու առիթը նախեւառաջ ԼՂՀ-ում եւ ՀՀ-ում ամենատարբեր հեղինակների՝ հաճախ ազատագրական շարժման հետ ոչ մի կապ չունեցող կամ թեկուզ փոքր-ինչ մասնակցած մարդկանց պատվերով լույս տեսնող գրքերն են: Այս գրքերում ստեղծվում են կեղծ հերոսների կերպարներ, հերոսացվում են պատվիրատուն ու նրա տոհմը, որն էլ խեղաթյուրում է մեր ժողովրդի համար կարեւոր ժամանակաշրջանի պատմությունը, ղարաբաղյան շարժման, պատերազմի մասնակցի կերպարը: Այս կերպ ծնունդ են առել հարյուրավոր գրքեր, որոնք շփոթության մեջ են գցում ուսումնասիրողներին, ընթերցողներին: Միակողմանի կողմնորոշմամբ քիչ չեն խեղաթյուրումները նաեւ անվանի գրողների ստեղծագործություններում:

Հանրահայտ է, որ հին ժամանակներում մեր անվանի պատմիչները իշխանական տների պատվերով պատմություն են գրել՝ գովերգելով այդ տոհմի իշխաններին եւ նսեմացնելով հակառակորդ իշխաններին ու նրանց տոհմը: Ահա մեծն Խորենացին Բագրատունյաց իշխանի պատվերով Բագրատունիների տոհմը կապել է հրեաց նահապետ Մովսեսի, Դավթի ու Սողոմոնի, Հիսուս Քրիստոսի հետ, ինչն էլ այս տոհմի շառավիղներից վրացական ճյուղավորման պատմությունում լուրջ խեղաթյուրումների առիթ էր հանդիսացել: Եղիշեն իր հերթին գովերգել, փառաբանել է բյուզանդական կողմնորոշում ունեցող Մամիկոնյաններին, մինչեւ հայրենադավի աստիճանին նսեմացրել պարսկամետ իշխաններին:

Մատենաշարը ընդգրկում է Արցախյան շարժման, ջոկատների կազմավորման, բանակի ստեղծման ու 1992-1994 թթ. պատերազմի կարեւոր մանրամասները, այնպես որ հետագա ընթերցողը կամ ուսումնասիրողը լիարժեք պատկերացում կազմի մեր ժողովրդի պատմության այդ կարեւոր ժամանակահատվածի մասին: Որպես վավերագրի ստեղծման ձեւ ընտրվեց շարժման, ջոկատների, ապա եւ բանակի կազմավորման, պատերազմի մասնակիցների հետ ակտիվ զրույցը, որի ընթացքում նրանք պատմում են ճշմարտացի, իրական դեպքեր: Զրուցակիցներն ընտրվում են առանց խտրականության: Միակ տարբերությունը հիշելու, պատմելու կարողությունն ու ազնվության աստիճանն է: Նույն իրադարձությունը եթե տարբեր ձեւով են

պատմում, ապա այն չի խմբագրվում, ու ճշմարտության բացահայտումը թողնվում է ընթերցողին:

Մատենաշարում հավասար պայմաններում են գլխավոր հրամանատարն ու զինվորը, շարժման առաջնորդն ու թռուցիկ տարածող բանվորը, ռազմաճակատային լրագրողն ու ճակատային գծից վիրավոր զինվորին առաջին օգնությունը ցույց տվող փրկարարն ու սանիտարուհին, զինամթերք հայթայթողն ու մեր ժողովրդի երկու հատվածների միջեւ օդային կապը պահպանող ուղղաթիռների օդաչուները: Զրուցակցից պահանջվում է պատմել դեպքերի մասին, հիշել ժամանակը, դեպքերի հետ կապված մարդկանց անունները: Զրույցը վարելիս ձգտել եմ օգնել պատմողին չշեղվել բուն նյութից, ավելի խորանալ պատմական արժեք ունեցող մանրամասների մեջ: Հաճախ առաջին հայացքից երկրորդական թվացող դեպքերը առաջին պլան են մղվում: Երբեմն այս կամ այն հրամանատարն առաջարկում է որեւէ գրողի գրվածքը իր մասին կամ ձայնագրությունը: Դա մերժվում է, քանի որ մատենաշարի ոճը կենդանի ու անմիջական պատմելաձեւն է: Իսկ խմբագրման ընթացքում միմիայն ոճական եւ ուղղախոսական շտկումներ են արվում՝ պահպանելով պատմողի յուրահատուկ խոսելաձեւը, երբեմն բարբառը:

Խմբագրությունը պահպանում է զրուցակիցների ձայնագրությունները DVD սկավառակի վրա, որոնք, ի վերջո, կհանձնվեն շահագրգիռ թանգարանի: Հետագա ուսումնասիրողները անպայման կլսեն այդ ձայնագրությունները, կհամեմատեն մատենաշարում զետեղված տեքստի հետ: Մատենաշարում ընդգրկվել են նաեւ 1988-1994 թթ. ձայնագրված զրույցները, որոնք չեն հրապարակվել, սակայն վավերագրական արժեք են ներկայացնում: Մատենաշարի հատորները այնպես են կազմվում, որ յուրաքանչյուր գիրք առանձին ու ամբողջական արժեք ներկայացնի: Մատենաշարն ուղղված է նաեւ ապագա սերունդներին եւ ուսումնասիրողներին: Գրողները, սցենարիստները կամ դրամատուրգները այստեղ հարուստ ու անհատնում նյութ կունենան վեպերի, կինոֆիլմերի, պիեսների ստեղծման համար:

«Շուշի» բարեգործական հիմնադրամի հրատարակչությունը շնորհակալ է Արթուր Ալեքսանյանին ու Նինա Հովնանյանին՝ խմբագրությանը տեխնիկական անհրաժեշտ միջոցներով ապահովելու համար: Շնորհակալություն եմ հայտնում Արցախյան գոյամարտի այն մասնակիցներին, որոնք իրենց ներդրումն ունեցան մատենաշարի ստեղծման գործում:

Բակուր

Պատմում է Ժաննա Գալստյանը: Զրույցը վարեց Բակուր Կարապետյանը. 23.10.2005, Ստեփանակերտ: Մուտքագրեց Անահիտ Ասատրյանը

Ժ.Գ. - Սերգեյ Շաքարյանը, Բագրատ Ուլուբաբյանը 1965 թ. ընդհատակյա երիտասարդական խումբ ստեղծեցին: Բագրատ Ուլուբաբյանը Գրողների միության նախագահն էր: Այդ խմբի անդամներից էր Էդիկ Բեգլարյանը, որը մի որոշ ժամանակ հիվանդ, թերաճ երեխաների հատուկ դպրոցի տնօրենն էր, մյուս Էդիկը փոստատանն էր աշխատում, իսկ Քաջիկ Հարությունյանը թատրոնից էր: Խմբում միակ կինը ես էի: Դա ղեկավար հնգյակն էր: Այն ժամանակ մեզ հաջողվեց տպարան ստեղծել:

Բ. - Բնութագրեք այդ մարդկանց, ով ինչ առաջադրանք էր կատարում, ինչպե՞ս էր կազմակերպվում:

Ժ.Գ. - Առաջադրանքը, կապը միայն իմ ու Բագրատ Արշակիչի հետ էր: Նույնիսկ իմ ընկերուհին՝ Շաքարյան Զոյան, չգիտեր, որ իր հայրը ինձ հետ կապ ունի: Օրինակ՝ պետք էր որեւէ բովանդակությամբ թռուցիկ բաժանել, կամ որեւէ թեմայով զրույց անցկացնել երիտասարդների հետ: Մեր հավաքատեղին տատիկ-պապիկի արձանի ետեւում գտնվող անտառում էր: Մենք բավական երկար գործեցինք: 1967-ին Արշաբի հետ կապված դեպքի ժամանակ էլ մեր խումբը գործում էր: Ժորիկ անունով մի տղա էլ կար, բանակից նոր էր վերադարձել, սուզորդ էր, բարձրահասակ, հաղթանդամ, հասարակ ընտանիքից էր: Բայց մեր մեջ գտնվել էր մեկը, որ մեզ մատնել էր, Ադո անունով մի տղա կար: Հիանալի խումբ էր, բոլոր տղաների մեջ ազգասիրությունը խորը արմատներ էր գցել, շատերը Երեւանում էին սովորել, 60-ականների հայրենասիրական շարժումների ականատեսն էին: Նույնիսկ Երեւանից մի տղա եկավ Ջանիկ անունով: Այսինքն՝ Երեւանի ուսանողության, երիտասարդության հետ եւս կապ էինք ստեղծում: Այն ժամանակ ՊԱԿ-ը շատ աչալուրջ էր: Այդ Ադոյին ազատում են բանակից, գրքույկն էլ ուրիշ գույնի էր, որով ազատում են բանակից: Ըստ երեւույթին, հենց այդ գրքույկի համար գնաց դավաճանության: Ստեփանակերտցի ակ-

տիվ տղա էր, Արկադի Մանուչարովի քրոջը՝ Ահդային էր սիրահարված: Ես, Ահդան, Շաքարյան Զոյան հարեւանուհիներ էինք: Ադոն միշտ գալիս, մեր տան պատի տակ, անկյունում կանգնում էր: Այնպես որ՝ շատ լավ էի ճանաչում նրան եւ վստահում էի: Չնայած մեր մտքով էլ չէր անցնում, որ դավաճանությունը հնարավոր է: Վախենում էինք ՊԱԿ-ից, մանավանդ թուրք ոստիկաններից: Բեգլարյան Էդիկենց տանը տպատախտակ էինք հավաքել ձուլած տառերով: Տեքստը հավաքում էինք, տպում մի օրինակ ու լուսանկարելով բազմացնում: Ընտրում էինք ամենահայատյաց մարդկանց եւ նրանց դռան շեմին անընդհատ դնում այդ թռուցիկները: Ադոն, խմբի ղեկավար հնգյակին մատնելիս, բոլորի անունները տալիս է՝ բացի իմ անունից: Անմիջապես հաջորդ օրը նա տեղափոխվեց Միջին Ասիա, եւ այլեւս չվերադարձավ: Մեզ հասած տեղեկություններով՝ երիտասարդ տարիքում է մահացել: Մի անգամ էլ հավաքվել էինք Թամարի ձորում, որտեղ ընտրված էին փախչելու տեղերը, եւ մի քանի հոգու բռնեցին: Ղեկավար անդամներից յուրաքանչյուրին առանձին հարցաքննում էին ՊԱԿ-ի նկուղներում: Ժորային սարսափելի ծեծել էին մետաղյա խողովակով, վրան անընդհատ ջուր էին լցրել, որպեսզի խմբում գտնվող աղջկա անունն ասի: Էդիկին աշխատանքից հեռացրին, որից հետո նյութական ծանր վիճակ ստեղծվեց նրա համար, քանի որ նա էր մորը պահում: Բոլոր տղաները դժվար կացության մեջ հայտնվեցին, եւ հնարավոր է, որ այդ ժամանակ խմբի գործունեության հետ կապված ամեն ինչ ոչնչացրած լինեն: ՊԱԿ-ի արխիվներում էլ ոչինչ չի պահպանվել: Դրանց մի մասը ՊԱԿ-ի պետը իր հետ տարավ Խարկով, իսկ մեծ մասը տասը հազար ռուսական ռուբլով վաճառեցին շարժման ղեկավարներից մի քանիսին: 1967 թվականից սկսվեցին բացեիբաց ծեծերը, հարցաքննությունները: Բայց ոչ մի անգամ ինձ չկանչեցին: Բոլորին անխտիր հարցնում էին իմ մասին, բայց ոչ մեկը իմ անունը չէր տալիս, կարծես այդպիսի մարդ գոյություն չուներ: Ինձ հարցաքննության կանչելու ոչ մի հիմք չունենալով՝ նման առաջադրանք էին տվել Կոմերիտական կազմակերպության մարզային առաջին քարտուղար Սերգեյ Սերգեյիչ Դավիդյանին: Նա ինձ կուսմարզկոմ զրույցի հրավիրեց եւ սկսեց հարցնել՝ արդյոք ծանո՞թ եմ Ուլուբաբյանի հետ, նրանց տուն գնացե՞լ եմ երբեւէ, թե ոչ, ի՞նչ է ասել նա, Շաքարյանը: Բնականաբար, ես ինձ անտեղյակ ձեւացրի: Նա էլ զեկուցեց. «Ընկե՛ր փոխգնդապետ, ոչինչ չի ասում»: Հետաքրքիրն այն է, որ Սերգեյ Սերգեյիչը տարիներ հետո էլ ինձ լավ էր հիշում, ասաց. «Գիտե՞ս, երբ քեզ հարցաքննում էի, սիրտս թփթփում էր, մտածում էի՝ երանի ոչինչ չասի»:

Գնացել էինք Կիրովաբադ հյուրախաղերի: Միակ ազատ օրը օգ-

տագործելով՝ հասցրեցի գիշերը տաքսիով գալ այստեղ, կազմակերպել թռուցիկների բաժանումը այն ծանր, տապալված օրերին, նորից ետ վերադառնալ եւ երեկոյան մասնակցել ներկայացմանը: Իմ այդ քայլը նախապես ծրագրված չէր, իմ մտահղացումն էր: Տղաներից ոչ ոք չէր մնացել, իսկ իմ բախտը բերել էր, որ իմ անունը չէր տվել նույնիսկ Ադոն: Թռուցիկների իմաստը քարոզչությունն էր, միացման գաղափարի տարածումը: Տեքստերը Բագրատը խմբագրած տալիս էր: Երեւի խմբի տղաներն էլ իմ մասին մեծ կարծիք ունեին, թե տեսեք ինչ տեքստեր է կազմում, բայց դրանք, իհարկե, ես չէի գրում:

Բ. - Ադոն արտաքնապես ինչպիսի՞ն էր:

Ժ.Գ.- Բարձրահասակ, գեղեցիկ տղա էր՝ բարակ բեղերով: Երբեք կասկածի տեղիք չէր տվել, միշտ ակտիվ էր, մասնակցում էր բոլոր ժողովներին: Իսկ թե ՊԱԿ-ն էր նրան ուղարկել՝ նույնիսկ չէինք էլ մտածում: Անփորձ երեխաներ էինք, բոլորս էլ դպրոցում լավ սովորող, ակտիվ կոմերիտականներ: Մինչեւ ուշ գիշեր բոլորս միասին թռուցիկները տպում էինք: Տպարանում ծանոթներ ունեինք, որոնց օգնությանբ տառերն այնտեղից էինք վերցնում: Էդիկենց տունը գտնվում էր ձորի մոտ: Այժմ դրանք քանդված տներ են դպրոցի նորակառույց շենքի հարեւանությամբ: Իսկ ես ապրում էի Մարտունի փողոցի վրա: Գիշերը ինձ պետք է տուն ճանապարհեին: Գրադարանի փողոցով գալիս էինք, հասանք Պետաչոկի մոտ ու մի պահ զգացինք, որ ոստիկանները հետեւում են: Վազելով մտանք մոտակայքում գտնվող լիմոնադի կրպակը, եւ այդ պահին միանգամից վեց լապտեր լուսավորեցին մեր դեմքերը: Սկսեցինք խաղալ, ձեւացնել, թե սիրահարներ ենք, ծնունդից ենք գալիս: Ամեն վայրկյան հարկավոր էր զգույշ լինել, քանի որ նրանք շատ աչալուրջ էին: Թռուցիկները բաժանելիս, երբ արդեն շատ դժվար էր հերթով գաղտնի մտնել տները եւ բաժանել, դիմեցինք խորամանկության: Անընդհատ գնում էինք Աղդամի շուկա գնումներ կատարելու: Թռուցիկները դնում էինք բացիկների մեջ եւ այնտեղ գցում փոստարկղը: Աղդամից այդ թռուցիկները հասնում էին Ստեփանակերտ:

Բ. - Բնութագրեք խմբի ղեկավարներին:

Ժ. Գ. - Շաքարյանին ճանաչում էի մանկուց: Շատ ազնիվ մարդ էր, հավատը նրա հանդեպ շատ մեծ էր: Մինչեւ 1963-64 թվականները նա Շուշիում կուսակցության շրջկոմի երկրորդ քարտուղար էր: Երբ Շուշիի փլատակները էքսկավատորով քանդում էին, ես հիշում եմ, թե տանը նա ինչպես էր լաց լինում դրա համար: Ինձ շատ էր վստահում: Ես տասնչորս տարեկանից թատրոնում էի աշխատում, եւ իմ բնավորությանը շատ լավ ծանոթ էին: Իսկ Բագրատը միշտ լուռ էր ու չէր խոսում: Շատ հետաքրքիր մի դեպքից առաջին անգամ բացվեց: Ներկայացման փակ դիտումից հետո թատրոնի շենքից դուրս եկանք, հրապարակում զբոսնում էինք: Շենքի ճակատին գրված էր «ՓԱՌՔ ՍՄԿԿ»: Ռ եւ Ք տառերը խունացել, չէին երեւում: Բագրատը կանգնեց ու բացականչեց. «Փա՛ ՍՄԿԿ, յո՛խ ինիս ՍՄԿԿ»: Այդտեղից զրույցը սկսվեց ու ծավալվեց մինչեւ իմ տատիկի, գաղթի պատմությունը: Ես անգիր գիտեի ամբողջ պատմությունը՝ ում են սպանել, ինչպես է կազմակերպվել ինքնապաշտպանությունը: Մինքենդում (Հակ) ջարդ էր եղել, Զեյվան առանց դիմադրության հանձնել են, իսկ Աղուլիում ոչ մի հայ չի սպանվել, երկու օր գյուղը պաշտպանել էին, եւ տարբեր արխիվային տվյալներով՝ հարյուր թուրք է սպանվել: Իմ պատմություններից հետո Բագրատը պատմելու շատ բան ունեցավ: Այդտեղից էլ գաղափարը ծնվեց:

Բ. - Տղաներին որ բռնեցին, հետո ինչպե՞ս դասավորվեց նրանց ճակատագիրը:

Ժ.Գ. - Տարիներ անց հանգստացան: Արշաբի հետ կապված դեպքից հետո ահագին մարդկանց ձերբակալեցին: Այդ շարժումը դադարեց, անիմաստ դարձավ: Արդեն վերջն էր: Բագրատենց տանը հավաքված էինք, Բագրատն անընդհատ ասում էր. «Բալի՛կ ջան, չվախենաս»: Չարմացա, թե ինչից պետք է վախենամ: Հանկարծ պատուհանից նկատեցի, որ ադրբեջանցի ոստիկանները ծառին նստած մեզ են նայում: Այդ պայմաններում անհնար էր ապրել, գործել: Բոլորի համար էին այնպիսի պայմաններ ստեղծում, որ ստիպված թողնում հեռանում էին: Նրանք անհատականություններ էին, կարող էին կյանքում շատ ձեռքբերումներ ունենալ, ինչը թույլ չտվեցին իրենք իրենց:

Բ. - 1967-ին Արշաբի հետ կապված պատմությունից ի՞նչ կարող եք հիշել:

Ժ.Գ. - Այդ դեպքերին ես ականատես չեմ եղել, որովհետեւ այդ ժամանակ մենք Կիրովաբադում հյուրախաղերի էինք: Որքան հիշում եմ, անգամ մինչեւ վերջ չմնացինք: Այդ դեպքից անմիջապես հետո մեզ ետ ուղարկեցին, որպեսզի ազգամիջյան բախում տեղի չունենա: Երբ Կիրովաբադից վերադարձանք, նույն գիշերը պարետային ժամ մտցրին: Ես ու Քաջիկ Հարությունյանը ներկայացումից հետո գիշերը գնացինք, այդտեղով անցանք՝ սիրահար զույգ ձեւանալով: Մեզ քշեցին այդտեղից: Թուրքերի ուղեղները դեռ թափված մնացել էին, լրիվ չէին կարողացել մաքրել: Մեքենան շուռ են տվել, բենզինը թափվել է, ինչ-որ մեկը լուցկիով վառել է, կրակը բռնկել է: Կողքին լիմոնադի կրպակ է եղել, որտեղ լիքը արկղեր էին թափված: Այդ արկղերը վերցրել, նետել էին կրակը, որ ավելի բորբոքվի: Մի աղջիկ պատմում է, որ նույնիսկ ինքը սիրած տղայի նամակը ծրարից հանել է, ծրարը եւս գցել է կրակը: Դա-

ռաբաղցու գժությունը միանգամից էր բռնել: Այդ տարի ես պետք է գնայի Լենինգրադ՝ ընդունելության քննություններ հանձնելու: Չկարողացա: Աղդամ գնացող ճանապարհին՝ օդակայանի մոտ, երկու տանկ էին հսկում: Նույն մթնոլորտն էր, ինչ 1988 թվականին:

1967 թվականին ես նշանված էի: Ամուսինս՝ Բագեյան Յուրին, նորավարտ վիրաբույժ էր: Նա շատ լավ գիտեր, թե ես ինչով եմ զբաղվում: Նա էր ինձ ուղեկցում մեր գաղտնի ժողովներին մինչեւ Էդիկենց տուն կամ այն վայրը, որտեղ պետք է հավաքվեինք: Վերջում գալիս, սպասում էր մոտակայքում, ինձ տուն բերում:

Իգոր Մուրադյանի հետ ծանոթացել եմ 1988-ի սկզբին, երբ պատվիրակության կազմում պատրաստվում էի Մոսկվա մեկնել: Գաղափարը, խնդիրը այն էր, որ Ղարաբաղի ժողովուրդը շարժվեր, դուրս գար փողոց՝ վստահ լինելով, որ լուրջ մարդիկ են զբաղվում այդ գործով: Որոշվեց, որ այդ մարդիկ պետք է լինեն մեր մտավորականները: Գուրգեն Գաբրիելյանն էր, Հրաչյա Բեգլարյանը, Վարդան Հակոբյանը, Էդուարդ Ղազարովը, պատվիրակության կազմում իմ ամենասիրելի, անգնահատելի մարդը քանդակագործ Արմեն Հակոբյանն էր, աշխատանքի հերոս մի տատիկ էր՝ «Ղարմետաքս» կոմբինատից, ես էի: Պատվիրակության ղեկավարը Վաչե Սարուխանյանն էր: Իգոր Մուրադյանի, Արկադի Կարապետյանի, նաեւ Սերգեյ Շահվերդյանի հետ որոշել էինք միանգամից հարված հասցնել Կեւորկովի թիկունքին: Այդ երեք գրողներն էին Կեւորկովի հետ մտերիմ, շահել էին նրա վստահությունը: Իգորը խորամանկ քայլ էր մտածել, մենք էլ խորամանկության դիմեցինք: Նրանք կարծում էին, որ գնալու ենք Մոսկվայից անմիջապես որոշումը բերենք, որ Ղարաբաղը միացված է Հայաստանին: Սա ամենակարեւոր նրբությունն էր: Մոսկվայում շատ հանդիպումներ ունեցանք, որոնք ոչ մի արդյունք էլ չէին տալիս: Վերցրել էինք նաեւ վաթսուն հազար ստորագրությունները: Մի տղա կար՝ Բաղդասարյան Ռոբերտը, որին Աչա էին ասում, հիմա նրան ոչ ոք չի հիշում: Երբ գնացինք Մոսկվա, նա արդեն այնտեղ էր: Վիրավորված գնաց Ղարաբաղից եւ այդպես էլ չվերադարձավ: «Ուկրաինա» հյուրանոցի իմ համարը մեր հավաքատեղին էր, որտեղ բոլորն էին գալիս: Ամենաշատ հիշում եմ Ենիկոլոպովին, Եպիսկոպոսովին, որը սրտի ցավով, մեծ հույսով Գարդմանի մասին պատմական փաստաթղթերը հավաքել էր, ասում էր, որ չի կարելի խոսել Ղարաբաղի մասին առանց Գարդմանի:

Մի անգամ արկածախնդիր Վաչե Սարուխանյանը զանգեց, պայմանավորվեցինք հանդիպել այգում: Փետրվարի 13-ն էր: Զրույցի ընթացքում Վաչեն ասաց. «Նրանք պիտի մտածեն, որ միտինգների ժամանակ Աղդամից մեզ վրա հարձակվելու են»: Եւ այդպես էլ եղավ.

աղդամցիք հասան մինչեւ Ասկերան: Փետրվարի13-ին Մոսկվայում մեզ համար ամենաանսպասելի եւ ուրախալի իրադարձությունը եղավ, այն, ինչի համար, որ հասել էինք այդտեղ: Զանգեց Արկադի Մանուչարովը եւ ասաց. «Դե լսե՛ք»: Լսափողի միջից հնչում էր. «Մի՛-ա՛-ցու՛մ»: Ժողովուրդը հավաքվել էր հրապարակում, նրանք սպասում էին, որ Մոսկվայից թուղթը ձեռքներիս գալու ենք: Հանրահավաքը կազմակերպելու գործում Արկադի Կարապետյանի արածը անգնահատելի է, այդ փուլում նա անփոխարինելի էր: Ինստիտուտում էլ Շահվերդյան Սերգեյը շատ մեծ գործ արեց: Մոսկվա գնալիս Շաքարյանը, մյուսները եկան Երեւան, «Սեւան» հյուրանոցից ճանապարհեցին մեզ:

Գնացինք ՊԱԿ, պատմեցինք Ղարաբաղի մասին, խոստացան նկատի ունենալ ամեն ինչ, հսկողություն սահմանել: Այդտեղից ոգեւորված վերադարձանք այն գիտակցությամբ, որ մեր ժողովրդին պաշտպանելու քայլ արեցինք: Եկանք Երեւան, լսեցինք, որ Աղդամում անհանգիստ դրություն էր: Կոմիտեի անդամներից չէին համարձակվում գալ: Վաչեն, Արմենը իրենց տղամարդու պես պահեցին: Բոլորս ավտոբուսով եկանք Աղդամ, այնտեղից խոջալու, որտեղ էլ գրեթե ողջ Ստեփանակերտը եկել էր մեզ դիմավորելու: Եկանք հրապարակ, որտեղ հանրահավաք էր: Երբ խոսափողը ինձ հանձնեցին, հուզմունքից ընդամենը մեկ նախադասություն կարողացա ասել. «Այսօր ես երջանիկ եմ, այսօր ղարաբաղցին սպանել է իր մեջ վախը»:

Կրեմլում մեզ ընդունեց Միխայլովն ու խնդիրը մեր կողմից ներկայացնելուց հետո հարցրեց.

- Մի՞թե ամեն ինչ այդպես սեւով է պատած:

Գուրգեն Գաբրիելյանն ասաց.

- Ոչ, ինչու՞ սեւ:

- Իսկ ի՞նչ է ,կարմի՞ր:

- Վարդագո՛յն:

Վարդագույն բառը ոգեւորեց, միշտ հիշում, ասում էինք: Ես, Վաչե Սարուխանյանը ոչնչի էլ չէինք սպասում, քանի որ արդեն մեր նպատակին հասել էինք:

Բ. - Երբ պատվիրակությունը մեկնեց, դուք զգո՞ւմ էիք, որ նրանց, կամ ինչ-որ այլ ուժերի ձեռնտու է այդ շարժումը...

Ժ. Գ. - Զգում էի, իհարկե, նրանք կարող էին շատ կտրուկ միջոցների դիմել: Չնայած մեզ ուղղակիորեն չէին ասում, թե դուք ձեր գործը արեք, բայց վստահեցնում էին, թե կապահովեն մեր անվտանգությունը: Նրանց ձեռնտու էր շարժումը, ինչն էլ մենք մեր օգտին ծառայեցրինք: Երբ Դեմիչեւի ռուսական պատվիրակությունը ժամանեց ժողո-

վուրդը, հրապարակում հավաքված, անձրեւի տակ, ոտքերը ցեխի մեջ, սպասում էր որոշմանը: Ինձ ցնցեց այն պահը, երբ բոլորը չոքեցին գետնին, ցեխի մեջ: «Սեր եւ խարդավանք» դրամայում ես խաղում էի Լուիզայի դերը: Տեսարաններից մեկում «հայրս» «մորս» ասում էր. «Չոքի՛ր աստծո առաջ, եւ ոչ թե սրիկաների»: Այդ պահին դարաբաղցին վերջին անգամ չոքեց սրիկայի առաջ, դրանից հետո՝ միայն աստծո առաջ:

Հիշում եմ նստաշրջանի որոշումը: Ես էի, մի կին թե աղջիկ, Արկադի Մանուչարովն ու Գեորգիի Պողոսյանը: Նստաշրջանի սցենարն էին կազմում, որպեսզի ներկայացնեին պատգամավորներին: Այդ գրույցի ընթացքում վախը մտավ մեջս, որ այդ երկուսի փառասիրական ձգտումները, հակամարտությունը վնաս կբերեն շարժմանը: Ժողովուրդը երկուսին էլ հավատում էր, բայց հայրենիքի համար օրհասական պահին նրանք չկարողացան վեր կանգնել նեղ, անձնական պայքարից: Եթե նույն դերը ստանձնեին, ինչ որ Շահումյանում Շահեն Մեղրյանը, ավելի վայել կլիներ նրանց, եւ շատ բաներ այլ ընթացք կստանային: Ճիշտ է, մեր փորձը քիչ էր, սխալները անխուսափելի էին, բայց հնարավոր էր ավելի քիչ սխալներ գործել:

Հետո Սումգայիթի դեպքերն էին: Ժողովուրդը իշխանությանը չէր ենթարկվում: Կեւորկովին բանի տեղ դնող չկար: Նույնը Սեպտայի, Բաքվից եկած մյուս ներկայացուցիչների պարագայում: Հարկավոր էին մարդիկ, որ ղեկավարեին ժողովրդին: «Կռունկի» անդամների ընտրությունը ժողովրդավարության առաջին դրսեւորումն էր Խորհրդային Միության տարածքում: Ժողովուրդը հրապարակում հավաքվել էր, մեզ անուններով ցուցակներ էին տալիս: Ըստ այդ ցուցակների՝ տիկին Լիդայի նկուղում նախագահ ընտրեցինք: Մինչ նախագահի ընտրությունը Աֆանասյան Գրիշան ասում էր. «Եթե ես չլինեմ նախագահը, կազմակերպությունը չի գործելու»: Նախագահ ընտրեցինք Արկադի Մանուչարովին: Ընտրությունը մարտի մեկի գիշերն էր, փաստորեն Սումգայիթի ջարդերից հետո, բայց ամբողջական տեղեկություն մենք դեռ չունեինք, կցկտուր, այստեղից-այնտեղից լսված տեղեկություն էր մեզ հասնում: Չէին թողնում բարձրանայի ամբիոն: Ինչ-որ մեկը ինձ բարձրացրեց դրեց ուսերին, այդպես մոտեցավ ամբիոնին, եւ ես, նրա ուսերի վրա նստած, ամբողջ ցուցակը հրապարակեցի, թե ովքեր են «Կռունկի» անդամները: «Կռունկ» անունը, զինանշանը Արմեն Հակոբյանի մտահղացումն էր: Սումգայիթի, Աղդամի դեպքերից հետո բոլորի մեջ միանգամից ծնվեց զինված պայքարի գաղափարը: Չնայած, մինչ այդ էլ Ագոն երիտասարդների, ուսանողների հետ մտածում էր զենքով պայքար մղելու մասին, քանի որ այն անխուսափելի է: «Կռունկում»

կազմակերպվեց ինքնապաշտպանական շտաբ: Շտաբի պետ նշանակվեց Ռազմիկ Պետրոսյանը, տեղակալ՝ Ռոլես Աղաջանյանը: Ահագին մարդիկ էին ընդգրկված շտաբում, քաղաքում յոթ պահակակետեր ստեղծվեցին, որտեղ պետք է հերթապահություն սահմանվեր: Շտաբի մասնաճյուղեր ստեղծվեցին շրջաններում: Կազմակերպվելու առաջին քայլն էր դա: Թեւ բոլորը չէ, որ գալիս էին շտաբ, վստահություն միմյանց նկատմամբ դեռեւս չկար, առանձին խմբերով էին գործում: Իսկական ջոկատները սկսեցին կազմավորվել Ստեփանակերտում 1988-ին: Հրապարակում հանրահավաքի ժամանակ լուր հասավ, որ մերոնց Խոջալուում ջարդում են: Արկադի Մանուչարովը մի խումբ մարդկանց հետ, մոմերը վառած, գնաց եղբայրական գերեզմանատուն: Ես իջա ամբիոնից ու սկսեցի մեքենա փնտրել: Կանաչ «Ժիգուլիով» նիհար մի տղա էր այնտեղ: Դեմքը ծանոթ թվաց, ասացի. «Ինչո՞վ ես զբաղված, գալիս ե՞ս գնանք Խոջալու»: Ճանաչեցի. Կարապետյան Սամվելն էր՝ Շաքարյան Զոյայի քեռու տղան: Գնացինք տատիկ-պապիկի արձանի դիմացի վետերոկից մի քանի դատարկ շիշ վերցրինք, մեջը բենզին լցրեցինք ու գնացինք Խոջալու: Ցանկապատները վառեցինք, կրակոցները դադարեցին, ոտքիս էլ խփեցին, վնասեցին: Մեկ ու կես ժամից այնտեղ եկավ Պողոսյան Գեորգիխը՝ ռուսական զինվորական ջոկատի հետ, ամբոխը ցրեց: Լսեցինք, որ ավտոկայանի մոտ մի թուրք դանակահարել է մի հայ երաժշտի: Ավտոկայանից մինչեւ այժմյան ոստիկանության շենքի միջեւ ընկած այդ փոքր տարածությունը մեքենան ընթանում էր նորմալ արագությամբ: Զգացի, որ մեքենան կանգ առավ, բայց շարժիչը աշխատում էր, անջատված չէր: Մի քանի հոգի կանգնած էին խաչմերուկի մոտ: Հանկարծ Սամվելը մեքենայից ցատկեց, մի անգամ էլ օդում ցատկեց, քացով խփեց այդ տղաներից մեկի ճակատին, սա գոռալով ընկավ գետնին: Մենք շարունակեցինք առաջ ընթանալ: Փաստորեն, նա ճանաչել էր ազերիների պարագլուխներից մեկին եւ պահը օգտագործել: Դրանից հետո Սամվելին այլ հայացքով սկսեցի նայել, եւ այդպես քաջ էլ շարունակեց կռվել՝ երբեւէ հիասթափության տեղիք չտալով: Երբ բանակի կազմավորումից հետո ինձ հրամանատարի տեղակալի պաշտոնն առաջարկեցին, ես համաձայնվեցի՝ շնորհիվ այդ դեպքի: Նույն օրը իմացանք, որ Ստեփանակերտում ոչ մի թուրք չի մնացել, բոլորը զգուշացված՝ հեռացել էին: 1988-ի փետրվարի 13-ից հետո այդ օրը առաջին անգամ թուրքի քթից արյուն եկավ, եւ թուրքի տուն վառվեց: Մինչ այդ ամեն ինչ խաղաղ էր՝ «Լենին-պարտիա-Գորբաչով-դեմոկրատիա» սկզբունքով: Այդ ընթացքում համակիրների, վստահելի մարդկանց շրջանակները ավելի մեծացան: Դրանից հետո Սամվելը անընդհատ ինձ էր դիմում, երբ փամ-

փուշտ կամ մի այլ բան էր պետք լինում: Զինամթերքն առանց այն էլ քիչ էր, ես չէի կարող այդքանն ապահովել: Քոչարյան Վալերին էր ոստիկանությունից բերում, ես էլ տալիս էի Սամվելին: Վալերին շատ լավ տղա էր, լավ զինագործ էր: Բայց նրա բախտը պարզապես բերել էր, որ Ռոբերտի եղբայրն էր, թե չէ նույն ծառայությամբ, ներդրումով հազարավոր մարդկանց գիտեմ ես: Բայց եթե ոչինչ էլ արած չլիներ, միայն այն, որ այդ վերքերով, մեկ աչքը, մեկ ոտքը կորցրած՝ նման կամքի ուժ դրսևորեց, բավական է, որպեսզի այդ հիմքի վրա առասպելը հյուսվի: Երևանից մեքենան ինքնուրույն վարելով գալիս էր Ստեփանակերտ ու դեռ երեք մատով ավտոմատով նապաստակ էր սպանում: Այնպես որ՝ նրա մասին արժե անպայման խոսել:

Բ. - Շարունակենք խոսել Խոջալուի դեպքի մասին. Մանուչարովը վախենում էր, զինված պայքարին դեմ էր, մտածում էր սահմանադրական ճանապարհով հարցը լուծել:

Ժ. Գ. - Այո, վախենում էր, զինված պայքարին դեմ էր: Վաչագան Գրիգորյանը պնդում էր, որ պետք է պահպանել կոմունիստական կուսակցությունը, մենք ազգային ազատագրական պայքարից էինք խոսում, նա՝ կոմունիզմից, եւ չէր հասկանում, որ այդ կոմունիստները թուրքի հետ են միացել, իր ժողովրդի դեմ են գործում: Վերադառնանք նստաշրջանին: Որոշումը Երեւան հասցրինք՝ Բաղդասարյան Ռոբերտին որպես «դիակ» թղթի հետ դագաղի մեջ դնելով: Պատերազմից հետո ինչ-որ մեկը վիրավորել էր նրան, ականջի ծայրը կտրել, որից հետո նա այդպես էլ Ղարաբաղ չվերադարձավ: Քոչարյան Վալերին էր նրա մեքենան՝ կանաչ «Նիվան», ձեռքից խլել, բերել: Նա չի փախել այստեղից, պարզապես սիրահարվել էր, տղամարդկային թուլություն էր, բայց այդ աղջիկը այնքան գեղեցիկ էր, որ դժվար չէր նրան հասկանալը: Շատ ձեռներեց էր: Առաջին պատճենահանման սարքը որ բերեցին, սովետական փողը դրանով տպել էր, գնացել թուրք չոբանից ոչխար էր առել: Երբ կուսակցության կենտրոնական կոմիտեն որոշում կայացրեց ցրել կուսակցական, տեղական ինքնակառավարման բոլոր մարմինները, «Կռունկն» արդեն սպառել էր իրեն: Այսինքն՝ անհրաժեշտ էր այնպիսի մի մարմին ստեղծել, որը կիրականացներ քաղաքական եւ տնտեսական գործառույթները եւ կղեկավարեր ամբողջ մարզը, միեւնույն ժամանակ կկազմակերպեր ինքնապաշտպանության գործը: Այդպիսով առաջացավ Ազգային խորհուրդ ստեղծելու գաղափարը: Ազգային խորհուրդ 1918 թ. եւս ունեցել ենք: Խորհրդակցության համար հավաքվեցինք Շոշ գյուղում, որտեղ նաեւ 1918-ին են խորհրդակցությունն անցկացրել: Ստեղծեցինք Ազգային խորհուրդը, որի կազմում ընդգրկվեցին ութսուն անդամներ, իսկ նախագահությունը բաղկացած էր քսանմեկ անդամից, որոնք հիմնականում շարժման մեջ ընդգրկված եւ տարբեր շրջաններում ղեկավար պաշտոններ զբաղեցնող մարդիկ էին: Ռոբերտ Քոչարյանն էր, Կարեն Բաբուրյանը, Պետրոսյան Ռազմիկը, Ռոլեսը: Նախագահ ընտրվեց Վաչագանը: Ազգային խորհրդի ստեղծումը այդ ժամանակ շատ կարեւոր էր: Համենայն դեպս պատմական նշանակություն ունեցող մի քայլ արվեց: Ազգային ժողովը՝ որպես ներկայացուցչական մարմին, գնաց Երեւան, եւ Գերագույն խորհրդի հետ համատեղ նիստ գումարվեց, որտեղ ՀՀ-ն Ղարաբաղը ճանաչեց իր կազմում: Ազգային խորհրդի առաքելությունը այդքանով ավարտվեց: Ներկայացուցչական մարմինների անունները էին միայն փոխվում, անդամները, գործունեությունը հիմնականում նույնն էին մնում: Այնպիսի մի մարմին էինք փորձում ստեղծել, որը խորհրդային իշխանության շրջանում կարողանար մեր ժողովրդի շահերին ծառայել եւ ազդեցիկ լինել, որպեսզի մեզ հետ հաշվի նստեն:

Մի անգամ անցնում էի Պոլյանիչկոյի նստավայրի մոտով, որը նախկին կուսմարզկոմի շենքն էր: Շենքի մոտ մի զրահամեքենա էր կանգնած, որի վերեւի եւ ներքեւի մասերում զինվորներ էին թառած: Մոտ հարյուր մետր այն կողմ մի մարդ էր կանգնած՝ փայտը ձեռքին, Հայրենական պատերազմի շքանշանները դոշին: Պոլյանիչկոյին, որը գեր, այլանդակ կառուցվածքով մարդ էր, երկու հոգով չէին կարողանում խցկել զրահամեքենան, սկսեցին չորսով հրել, դարձյալ չէր ստացվում: Անկյունում կանգնած մարդը սկսեց հայերեն հայհոյել նախ նրա ազգը, հետո՝ ցեղը, նրան, կնոջը, հարեւաններին, վերջացրեց գրպանում դրած գրիչով: Հետո նույնը թարգմանեց ռուսերեն, թուրքերեն: Եւ այդ ամբողջ ընթացքում Պոլյանիչկոյին փորձում էին հրելով նստեցնել զրահամեքենայի մեջ:

Իրադրությունը սաստկանում էր սահմանամերձ շրջաններում՝ Ասկերանի կողմից, Շահումյանի շրջանում, Մարտակերտի, Հաթերքի, Չլդրանի հատվածում, երբ միանում է Քյալբաջարին, Հադրութի շրջանը սահմանին մոտ գտնվող հատվածում: Եւ, իհարկե, Բերդաձորը իր չորս գյուղերով բոլոր կողմերից շրջապատված էր, մի կողմից՝ Շուշին, մյուսից՝ Լաչինը, հետո՝ Կուբաթլուն ու Քյալբաջարը: Բերդաձորին առաջինը օգնության հասան բուն բերդաձորցիք, ովքեր գնացել, Երեւանում էին ապրում, նորից վերադարձան իրենց գյուղը: Իգորը այնտեղ կարի արտադրամաս, ոսկերչական թանկարժեք քարերի մշակման գործարան է հիմնում, որտեղ բարձր վարձատրում էին: ՀՀ-ից Անդրանիկը եկավ իր ջոկատով: Բերդաձորցիների կապը Ստեփանակերտի հետ երկար ժամանակ կտրված է եղել: Նրանց նիստ ու կացը, վարք ու բարքը, երաժշտական, մշակութային այլ նախասիրությունները ամ-

բողջությամբ Շուշիի ազդեցության տակ էին ձեւավորվում: Այսինքն՝ Բերդաձորը խիստ հայացման կարիք ուներ: Թեեւ Բերդաձորում էլ կային շատ պայծառ դեմքեր, որոնցից մեկը Առնոն էր՝ ֆիզիկայի ուսուցիչը: Նա 60-ականներին էր ուսանող եղել, մասնակցել պայքարին, շատ ազգասեր էր: Այնտեղից էր Հրաչիկ Պետրոսյանը: Բայց այդպիսիները շատ քիչ էին, չնչին փոքրամասնություն էին կազմում: Անդրանիկը այնպիսի մի հեղափոխություն արեց Բերդաձորում, որ այն կարճ ժամանակահատվածում ոչ միայն հայացավ, այլեւ՝ մոլի հայացավ: Յուրաքանչյուր երեխա հայրենասիրական այնպիսի երգեր էր երգում, արտասանում: Եվ անկախ այն բանից, թե վտանգը ինչքան մոտ էր, նա պահակակետեր էր դրել, գենք էր գնում: Հայրենասիրության ոգին այնպես էր դրել, որ նույնիսկ դպրոցական տղաները զինվորական համազգեստով էին շրջում: Այն, ինչ Ագոն արեց Ստեփանակերտում ու մյուս շրջաններում, Անդրանիկն արեց Բերդաձորում: Ակտիվ, թեժ մարտերը ավելի ուշ տեղի ունեցան:

Բ. - Նա կոոպերատիվ ձեռնարկություն էր դրել, որպեսզի ծածկի իր գործունեությունը:

Ժ. Գ. - Այդ ձեռնարկությունները Իգորն էր դրել, ամբողջը ինչ-որ կերպ պիտի քողարկվեր: Օրինակ՝ Հադրութում նման մի կոոպերատիվի նախագահ էր Նազիկը: Ես եկել էի Բերդաձոր, իբրեւ թե ինսուներկու տարեկան մի տատիկի թոռն էի, պետք է խնամեի նրան, որովհետեւ նրա տունը շտաբին կից էր: Մնացած տղաները ժամանակավոր գրանցում ունեին, ինչը, չնայած, նրանց չէր փրկում: Բերդաձորը Ստեփանակերտի հետ ամուր կապեր չուներ, Հայաստանի Հանրապետությունից ուղղաթիռներով էին գալիս: Եվ, իմ կարծիքով, այդ ուղղաթիռների օդաչուներին մենք ըստ արժանվույն չգնահատեցինք: Նրանք տիրոջ կարգավիճակով պետք է միշտ Ղարաբաղում լինեն, ամեն մի դպրոցական պետք է նրանց անունները իմանա: Անհրաժեշտ էր, որ Բերդաձորում Ստեփանակերտից ներկայացուցիչներ լինեին՝ ժողովրդի ոգին բարձրացնելու համար: Ես ու Վալերի Բալայանն էինք ներկայացուցիչները: 1990 թ. Ամանորին երեխաների համար առաջին անգամ պիտի տոնածառ դնեին: Անդրանիկի նախաձեռնությամբ ամանորյա նվերներ, հագուստ բերեցին: Մենք էլ Ստեփանակերտից ձմեռ պապով, դիոլ-գուռնայով եկանք՝ ռուսական զորքերի ուղեկցությամբ: Քյոհնաշեն գյուղում, որտեղ հավաքվել էին նաեւ մյուս գյուղերից, ցերեկը երեխաների համար Տոնածառի հանդես կազմակերպեցինք, երեկոյան՝ ամանորյա մեծ միջոցառում: Տղաները կանգնած էին դիրքերում: Ստեփանակերտից միլիցիայի գնդապետ Գոլեւին են ուղարկում՝ մի քանի հոգու ուղեկցությամբ, այնտեղ նաեւ ռուսներ

կային: Բայց այդ ամենը մեզ ինչո՞ւ էր հարկավոր: Հին շենում մի բարձունք կա՝ Քումե քար են ասում: Դրա ետեւում Աղանուս գյուղն էր, որտեղ 1918 թվականից թուրքերն էին ապրում: Ով այդ բարձունքին տիրեր, նա էլ հսկում էր այդ տարածքը: Մի թնդանոթ ունեինք, որի համար ինքնաշեն արկեր էինք սարքել: Ուզում էինք գիշերվա ժամը 12-ին թնդանոթը փորձարկել Աղանուս գյուղի վրա, այսինքն՝ բարոյական կողմից բացի՝ նաեւ ռազմական խնդիր ունեինք լուծելու: Գիշերվա ուղիղ 12-ին ռուսները բարձր երաժշտությունը միացրած քեֆ էին անում, գոռգոռում, տոնածառի խաղալիքները պայթեցնում, իսկ մենք այդ պահին փորձարկում ենք մեր թնդանոթը: Արկը թռչում է դեպի Աղանուս ու պայթում, թեւ մեծ վնասներ չհասցրեց: Երբ հետաքրքրվեցին, զարմացան, թե ինչպես կարող էր ռուս սպաների, գնդապետների ներկայությամբ այդպիսի բան տեղի ունենալ: Ուրախացած՝ մոմերով գնացինք պահակակետերը: Դրանք բավական հեռու էին գտնվում, հասնելը դժվար էր, մանավանդ որ Բերդաձորում ձմռանը մեկ մետր բարձրությամբ ձյուն է նստում գետնին: Բայց հերթով գնացինք բոլոր դիրքերը, պահակակետերը, շնորհավորեցինք: Բերդաձորում տարբեր կազմակերպություններից, կուսակցություններից տղաներ էին գալիս. մեկն ասում էր՝ «ես հեթանոս եմ»: Ես ու Առնոն զրուցում էինք նրանց հետ եւ զգուշացնում, պայման դնում, որ այստեղ չկա ո՛չ կուսակցություն, ո՛չ կազմակերպություն, կա միայն հայ եւ սահմանապահ: Եվ հրաշալի աշխատեց այդ տարբերակը: Բերդաձորի օրինակը երկմտելու տեղիք է տալիս՝ արդյո՞ք մեզ ընդհանրապես անհրաժեշտ են կուսակցությունները:

Շատ հետաքրքիր դեպքեր կան՝ կապված իմ Վարսենիկ տատիկի հետ, որին ես իբր խնամում էի: Բերդաձորում ամիսը երկու անգամ ստուգում էին անձնագրային ռեժիմը: Ղարաբաղի ոչ մի շրջանում ռուսները այդքան մանրակրկիտ չէին ստուգում, չէին քրքրում, որքան այդտեղ: Երեւի թե իմ ներկայությունը իսկապես անհրաժեշտ էր, որովհետեւ այդ լեռներում նրանք հանդիպում էին մեկին, որը հրաշալի գիտե իրենց լեզուն, գրականությունը, պատմությունը: Եւ դա իր դրական ազդեցությունն էր ունենում, նրանց մեջ կարգին մարդիկ էլ էին հանդիպում: Երբ ռուսները գալիս էին, տղաները զենքերով հեռանում էին անտառները, ես մնում էի գյուղում: Վարսենիկ տատը վերցնում էր իմ զենքը, կապում էր փորին, շալով ծածկում ու նստում ճամփին մի քարի՝ մինչեւ նրանց հեռանալը: Երբ ինձ ձերբակալեցին եւ բերեցին Ստեփանակերտ, արդեն հնարավորություն չունեցա այնտեղ վերադառնալու: 1991 թ. մայիսին ռուսների օգնությամբ ՕՄՕԼ-ականները կարողացան դատարկել Բերդաձորը: Երբ գյուղացիներին դուրս էին հանել,

Վարսենիկ տատը վերցրել էր իմ զինվորական սապոգները, որպեսզի հանկարծ նրանց ձեռքը չընկնի, ամբողջ Հայաստանի Հանրապետությունով դրանք հետը ման էր տվել: Երբ մեկ տարի հետո Բերդաձորը ազատագրեցինք, նա այդ սապոգները ետ բերեց գյուղ, որոնք ես մինչեւ պատերազմի վերջը հագա: Վարսենիկ բաբոյին բոլորը գիտեին: Անդրանիկի հետ զենքը ձեռքին լուսանկար ունի: Ասում էր. «Գլխավտ շոռ տամ, թաղեմ Լենինին, էտ լոխ նրա գործն ա»: Երբ գնում էինք իշխող բարձունքը՝ Քումե քարը, ետեւներիցս ձայն էր տալիս. «Մտաղ ինիմ, 18 թվին մի հոգու Մեծշենում սպանել են, թորքերը ըտեղատ տեսնում ըն, այ են քաշավ քյինացիքյ»: Շատ պինդ, ուժեղ կորով ունեցող կին էր: Պատերազմից հետո մահացավ: Նա Ստեփանակերտում շատ ազգականներ ուներ, բայց գյուղից չէր հեռանում: Շատ երիտասարդ էր իրեն զգում, կանգնում էր հայելու առաջ ու զայրանում, որ դեմքին կնճիռներ կան, թե. «Էս ի՞նչ ա, շտե՞ղ ա եկալ»:

Տհաճ դեպք պատահեց այնտեղ: ՕՄՕՆ-ականները նոր զենքեր էին ստացել: Որսորդական եւ ավտոմատ հրացանների փոխարեն՝ գնդացիրներ էին ձեռք բերել: Բարձրանում էին Քումե քարը: Գիշերը սարսափ պատեց գյուղի վրա, երբ առաջին անգամ տեսան գյուղի վրայով արձակված գնդակների կարմիր հետագծերը: Իգորն էլ էր այնտեղ: Մեզ անհրաժեշտ ամեն ինչ ուղղաթիռներով էին տեղ հասցնում: Մի օր Վազգեն Սարգսյանը մի ջոկատի հետ ուղղաթիռով եկավ Բերդաձոր: Մենք այնտեղ քոսոտ, կիսատ-պռատ վիճակում էինք գտնվում: Ուղղաթիռից իջան բարձրահասակ, զինվորական համազգեստով, հրաշալի զենքերով զինված տղաներ: Այդ տեսարանը ՀՀ-ի հեռուստատեսությամբ լուրերի թողարկումով երեկոյան ցուցադրեցին: Իսկ թուրքերը տեսան: Այնինչ այդ տղաները հաջորդ օրը հեռացան: Դրանից հետո Յողոնեսի, Մուսուլմանլարի եւ ուրիշ կողմերից սկսեցին հարձակվել: Բերդաձորում սկսվեցին ամենադժվար օրերը: Լուսաբերող գնդակներով որ կրակում էին, նույնիսկ մի պահ ես էլ սարսափեցի, որովհետեւ գյուղում վայնասուն սկսվեց: Առնոն ֆիզիկոս էր, ասաց, որ այդ դիրքից կրակելիս դիմացի սարերին է կպնելու, ոչ թե գյուղին, գյուղը ներքեւում է: Մի քանի օր մարտերը գնում էին, իսկ մեր զինամթերքը վերջանում էր: Չորս-հինգ օր շատ ծանր դրության մեջ էինք: Գյուղում երկու կաղ տղաներ կային: Ամենավերջին պահակակետը Մուսուլմանլարի կողմից ֆերմայի մոտ էր: Տղաներին միշտ զգուշացրել եմ, որ մոտիկ լինեն, քանի որ անընդհատ նահանջելու պահ պիտի լինի: Այդ հավաքոր օրերին գնացի պահակակետ, տեսա այդ տղաները, մեջք մեջքի տված, կանգնել էին ծառի տակ: Հարցրեցի. «Ձեզ ո՞վ է ասել, որ գաք այստեղ կանգնեք, բա որ մի բան պատահի, ո՞նց եք նահանջելու»:

Ասացին. «Մենք էլ եկել կանգնել ենք այստեղ, որ չկարողանանք փախչել»:

Այդ մի քանի օրերի համեմատ իրավիճակը մի քիչ թեթեւացել էր: Սաքոն , Գագոն՝ Նոր Հաճնից, երեք օր ու գիշեր դիրքերից չէին հեռանում: Այդ մարտերին ոչ մի զոհ, վիրավոր չտվեցինք: Թուրքերն էլ էին հոգնել, հասկացան, որ իրենք էլ պետք է հանգստանան: Երեւանից ուղղաթիռ եկավ, որի մեջ մի խումբ տղաներ էին, մեկն էլ ռուս էր: Զարմացա, թե ռուսը ինչ գործ ունի այստեղ: Չուգունի եղբայրը եւս այնտեղ էր: Ասաց.

- Այստեղից կարո՞ղ եմ անցնել Հադրութի շրջան:

- Դու ո՞նց ես անցնում, այստեղ քանի օր է, ինչ մարտեր են, թուրքերը լցված են Մուսուլմանլարում: Ռադիոկապը Գորիսի հետ չի աշխատում, մի քիչ էլ որ գյուղից հեռանում ես, կրակ են բաց անում, այնպես որ՝ անհնար է անցնել: Նստեք, մի քիչ հանգստացեք, վաղը ավտոբուսով կգնաք,- ասացի ես:

Նրա ձեռքին էլ ավտոմատ կար, ինչ-որ պարկ էր այնտեղ գցած, հաց էին ուտում, ժամը երեք-չորսն էր, ամեն ինչ հանդարտ էր: Ասաց, որ բարձրանում են դիրքերը՝ ծանոթանալու իրավիճակին: Բարձրացան դիրքերը, հանկարծ կրակոցներ լսվեցին: Նրանք, տեղանքին անծանոթ, չգիտեին՝ ինչ անել: Իսկ այն տղաները, որոնք անընդհատ դիրքում էին, նոր էին իջել հանգստանալու: Մի հոգի եկածներից, մեկն էլ գյուղի տղաներից սպանվեցին: Հաջորդ օրը ավտոբուսով նրանց ուղարկեցի: Իգորն էլ էր ավտոբուսի մեջ: Ըստ երեւույթին, գյուղից ինչ-որ մեկը զանգում է եւ Իգորի մասին ասում, որ ավտոբուսում մարդ կա, բայց չի հասցնում անունը տալ: Բերդաձոր - Ստեփանակերտ երթուղով ավտոբուսը զինվորների ուղեկցությամբ ընթանում էր: Ճանապարհը փակեցին, տարան Շուշի: Ըստ երեւույթին Իգորին էին փնտրում, ավելի ճիշտ, իրենք էլ չգիտեին՝ ում են փնտրում: Այդ տղան մի պարկ անաշա, ավտոմատը եւ ատրճանակը գցում է եղցահողցի մի տղայի իրերի մեջ: Նրանց ձերբակալում են, եւ Իգորը փրկվում է, գալիս Ստեփանակերտ: Սրանք մեր հսկայական սխալներից էին: Այդ տղային ընտանիքը մեծ գումարներով, ռուսների միջոցով ազատում է: Եղցահողցի տղային էլ ազատեցինք, ես էի անընդհատ թուրքերի հետ բանակցություններ վարում: Այդ առիթով շատ հետաքրքիր մի հանդիպում տեղի ունեցավ: Ռուս ներկայացուցիչներ կային, թուրքական կողմից նաեւ մի լրագրող կար: Մենք սեղան էինք գցել, հատուկ նրանց համար ոչխարի մսով էինք խորոված արել: Այդ ընթացքում շատ հետաքրքիր զրույց կայացավ ռուսների ներկայությամբ: Մեր կողմից միայն ես էի գնացել՝ ընդգծված կանացի զգեստով, այստեղից-այնտեղից զարդեր

էի ճարել, որ մինչ այդ ես նույնիսկ ականջող չէի կրել: Երեւի իմ ողջ դերասանական գործունեության ժամանակ այդպիսի կանացի տեսք չեմ ունեցել: Զրույցի ընթացքում ասացի, որ այդ տղաները մեզ հետ, շարժման հետ ոչ մի կապ չունեն, նրանք պարզապես առեւտրականներ են, եկել են հավանաբար իրենց թմրանյութը վաճառելու: Մենք էլ ունենք գողականներ, դուք էլ, այդպիսիները ազգություն չունեն: Մի բաժակ խմեցին, որոշեցինք, որ տղային մեզ են հանձնում: Տաշքենդցի ռուս գնդապետը, որը Շուշիի պարետն էր, ասաց. «Իրար հետ սիրուն նստել, համերաշխ հաց եք ուտում, ինչու՞ եք իրար սպանում, թշնամություն անում»: Թուրքը, ակնարկելով ինձ, ասաց. «Դու նրանից հարցրու»: Դիմեցի նրան. «Ընկե՛ր գնդապետ, ուշադիր լսեք: Այո՛, ես էլ եմ սպանում, դու էլ ես սպանում, բայց դու անում ես չարությունից, ես՝ սիրուց, դու սպանում ես իմ ազգի հանդեպ ունեցած կենսաբանական ատելությունից ու միշտ էլ դրանից գերագույն հաճույք ես ստանում, իսկ ես սպանում եմ իմ անպաշտպան ժողովրդի հանդեպ ունեցած սիրուց, որովհետեւ գիտեմ որ այ այս պարոն գնդապետը, միեւնույնն է, միշտ քեզ է օգնելու, որովհետեւ աստված, երբ դու քո զուգարանի փոսն էիր փորում, քեզ այնտեղից նավթ տվեց»: Պատասխան չգտավ, ասաց. «Միշտ դուք եք առաջինը սկսել»: Ասացի. «Դա պատմաբանների գործն է՝ որոշելու, թե ով առաջինը սկսեց: Ես Ստեփանակերտում խաղաղ ցույց էի սկսել, իսկ ադրբեջանցիները գալիս, նայում էին, թե ինչ է կատարվում: Ինչու՞ համար Սումգայիթում այդպիսի բան սարքեցիք»: Ի վերջո, եղցահողցի տղային մեզ տվեցին, ինչ-որ մեկի հետ փոխանակեցինք:

Մեր վարորդները պետք է ցորեն թե վառելանյութ բերեին, այսինքն՝ Բերդաձորից զորասյուն էր գնացել Ստեփանակերտ: Բեռները վերցրել էին եւ պետք է հաջորդ առավոտ վերադառնային: Գյուղից երկու վարորդներ լոպազություն են անում, երեւի մի երկու բաժակ էլ խմել էին, իրենց արծիվ էին զգում, երկուսով ճանապարհ են ընկնում դեպի Բերդաձոր: Զառիսլուում նրանց սպանում են: Լուրը հասավ տեղ, թե ռուսները կարող էին պաշտպանել, բայց չեն արել: Տղաներից մի խումբ որոշում են, որ պետք է նրանց պատժել, պատանդ վերցնել: Ստեփանակերտի հետ ոչ մի կապ չկար, խորհրդակցեցինք Գորիսի հետ, Գորիսը կապվում է Երեւան՝ Մեխակի հետ: Ծածկագրերով էինք հաղորդակցվում: Մինչեւ հիմա պահում եմ «Նորք» ամսագիրը, այնտեղ էր մեր շիֆրը: Ասացին, որ նման քայլի չդիմենք: Ինքս էլ կտրականապես դեմ էի: Բայց մեծամասնությունը կողմ էր, արեցին այնպես, ինչպես որոշել էին: Այդ ժամանակ այնտեղ էին Ստեփանակերտից եկած ուսանողները, որոնք պատերազմի տարիներին հրաշալի կռվեցին, հրամանատարներ դարձան: Բժիշկը կանգնում է Մեծ շենի հիվանդանոցի մոտ, որտեղից ճանապարհն է երեւում: Տղաները ուսանողների հետ, Առնոն, որի եղբայրն էր մեքենայի ղեկին, Լաչինից Շուշի տանող ճանապարհի առաջին կամուրջի մոտ՝ ճանապարհի երկու կողմերում, դարանակալեցին: Հին, պատմական նշանակություն ունեցող կամուրջ էր, որը հետո պայթեցրին: Գիշերվա երեքին մեքենա է գալիս: Սկզբում կրակում են անիվների վրա, որպեսզի կարողանան պատանդ վերցնել: Հանկարծ մեքենայից ուժեղ կրակ են բաց անում: Պարզվում է, որ մեքենայում ռուս սպաներ են՝ կերած-խմած: Այդ պահին ամբողջ տարածքով կանացի մի այնպիսի ճիչ է տարածվում՝ վա՛յ, դադա, որ բոլորը սարսռում են: Ում մտքով կանցներ, որ գիշերվա կեսին հինգ ռուս սպաների գիրկը նստած ադրբեջանցի լրագրող Սալաքյաթինն է: Տղաները թողեցին ետ եկան: Ուսանողներից մեկի սպիտակ գծերով գլխարկը ընկնում է գետնին: Դրա հետքերը բերում են գյուղ: Հաջորդ օրը Երեւանից ուղղաթիռ եկավ: Բոլոր տղաներին՝ Մարտունեցի տղաներ էին, Շահվերդյան Սերգեյն էր, ուղարկեցին Ստեփանակերտ: Նրանց ձերբակալեցին, Բաքվում այնպիսի պայմանների մեջ դրեցին, որ ստիպված խոստովանեցին: Հարցաքննության ժամանակ Առնոյի փոքր եղբորը ստիպում են, թե ամեն ինչ արդեն ասվել է, դու էլ ասա: Նա համառորեն ոչինչ չի ասում, թե՝ ես ոչնչից տեղյակ չեմ: Տարբեր տեղեր են տարել, ծեծել, այդպես էլ չի խոստովանել: Տղաները զենքերի տեղն էին ասել: Երբ Աղդամում նրանց փոխանակեցինք, թուրքերը եկան, թաքստոցներից զենքերը հանեցին: Միայն այդ տղան ու իր ընկերը եկան, իրենց թաղած զենքերը հանեցին ու մինչեւ վերջ դրանցով կռվեցին: Պատերազմից հետո ավտովթարից մահացավ:

Պատմում է Վլադիմիր Մովսիսյանը: Զրույցը վարեց Բակուր Կարապետյանը. 10.04.2006, Երեւան: Մուտքագրեց Անահիտ Ասատրյանը:



Վ.Մ. - Ծնվել եմ 1933 թ. Սպիտակի շրջանի նախկին Շենավան գյուղում: Ծնողներս գաղթել են Արեւմտյան Հայաստանից: Պապիս արմատները Մուշից են, տատս Կարսից է: Ես հողապաշտ եմ, արմատներս գալիս են հողից, այս բազում տարիների ընթացքում ծառայել եմ հողին ու ջրին՝ իմանալով, որ դրանք են մեր գոյատեւման հիմքերը: Մենք պիտի հողն ու ջուրը սրբությամբ պահենք եւ փոխանցենք մեր սերունդներին: Աշխարհի բոլոր պատերազմները հողի ու ջրի համար են եղել: Ես հպարտ եմ, որ ծառայության բերումով մասնակից եմ եղել հողի ու ջրի պատերազմներին, չհայտարարված պատերազմներին, որովհետեւ սովետական իշխանության տարիներին դրանք տարվում էին Մոսկվայի միջոցով: Ով կարողանում էր շուտ եւ աղմկալից ներկայացնել իր հարցերը, նա էլ լուծում էր ստանում: Սովետական Միության տարիներին այդ բախումները հարգի լինել չէին կարող, որովհետեւ մտացածին խաղաղությունը իբր հարցի լուծում էր: Բայց այդպես չէր, ներքին լարվածությունը կար, եւ այդ աշխատանքները տարվում էին: Դեռեւս 1927-29 թթ. հողի օգտագործման սահմանները ճշգրտվել էին Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի միջեւ, եւ դրանք վավերացվել էին անդրկովկասյան գործադիր իշխանության մարմնի միջոցով: Բայց դրանից հետո, ինչպես միշտ, ադրբեջանցիները համառությամբ ամեն տարի քայլ առ քայլ մտել են մեր տարածքը եւ ամբողջ սահմանի երկայնքով զավթել են հսկայական տարածություններ:

Բ. - Այն, որ սահմանին փոսեր էին փորում եւ ածուխ լցնում...

Վ.Մ. - Դրանք այդ ժամանակ չեն արվել: 1968 թ. երբ հողային խնդիրների առումով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունները լարվել էին, երկու պետությունները ստեղծեցին պարիտետային հանձնաժողովներ, որոնք պետք է զբաղվեին սահմանների ճշգրտման հարցով: Երկու հանրապետությունների Գերագույն խորհուրդները հաստատել էին կազմը: Բայց 1969-84 թթ. ոչ մի տեղաշարժ չէր լինում

սահմանների գրաֆիկական գծագրերը բնության մեջ տեղադրելու հարցում: Առավել եւս, շարունակում էին ավելի համառորեն առաջ գալ եւ իրենց խնդիրները լուծել: Նման օրինակ է Ղազախի եւ Աղստաֆայի ջրամբարների հարցը: Ադրբեջանցիները մեզ երաշխիք էին տվել, որ Իջեւանի շրջանի Սարի գյուղի, Վազաշենի եւ մյուս տնտեսությունների հարյուր հեկտար հողատարածության վրա ջրամբար են կառուցելու այն պայմանով, որ իրենց՝ մեր վարչական տարածքում գտնվող Ջախարլի եւ Բարխուդարլու գյուղերը տեղափոխեն իրենց տարածք, իսկ այդ տարածքները ազատեն եւ տան Հայաստանին: Ջրամբարը կառուցեցին, բայց չգնացին: Եվ այդպես համառորեն՝ մինչեւ 1984 թ., երբ սկսվեցին հողային վիճաբանությունները, եւ Մոսկվայից հանձնարարություն ստացան այդ հարցերը քննարկել: 1984 թ. հոկտեմբերի 24-ին այդ խնդիրները տեղում քննարկելու ժամանակ ինձ պատանդ վերցրին եւ տարան: Նոյեմբերյանի շրջանի Դովեղ գյուղի անտառի տարածքում չորս աղբյուր կար: Մեծ անտառ էր՝ մոտ հազար երկու հարյուր հեկտար: Մենք պայմանավորվել էինք, որ խմելու ջրի աղբյուրները կխմբավորեն եւ ջուրը կտանեն Ղազախի շրջանի Քյամառլու գյուղը: Նրանք ասում էին, որ այդ անտառն էլ է իրենցը՝ Ադրբեջանինը, ջրերն էլ, ինչը իրականությանը չէր համապատասխանում: Կարեն Դեմիրճյանը ինձ հանձնարարեց, որ գնանք եւ տեղում քննարկենք այդ խնդիրները: Ամեն դեպքում մարդիկ են այնտեղ ապրում, կարելի է ջուր տալ, խողովակաշարով տանել, բայց անտառի հարցը քննարկման չդնել: Բարձրացանք անտառի տարածքը. Ղազախի շրջկոմի առաջին քարտուղարն էր, ինչպես եւ Ղազախի շրջգործկոմի նախագահը:

Բ. - Անունները հիշու՞մ եք:

Վ.Մ. - Սուլեյմանովը, մյուսներինը չեմ հիշում, հա՛, նաեւ իմ կոլեգան էր՝ կառավարության նախագահի առաջին տեղակալը՝ Շամիլ Ալիի Ռասիզադեն: Բանից պարզվում է, որ մենք հոկտեմբերի 24-ին պիտի գնայինք այդ տարածքը նայելու, բայց նրանք 23-ին գնացել են Քյամառլու գյուղը, ժողովրդին լարել թե. «Եկեք այնտեղ բունտ բարձրացրեք, իսկ Խորհրդային Միությունը բունտ չի սիրում, կահաբեկվեն եւ այդ խնդիրները կլուծեն հօգուտ մեզ»: Երբ գնացինք անտառ, տարածքը, աղբյուրները նայեցինք, մարդիկ աշխատում էին, խողովակաշար էին սարքում: Ես ապացուցեցի քարտեզային նյութերով, հին հայկական գերեզմանոցով, խաչքարերով: Նրանք միանգամից ասացին, թե դրանք հայկական չեն, այլ աղվանական խաչքարեր են, հայերի հետ կապ չունեն: Երբ վերադառնում էինք, անտառի բացատում մեզ վրա հարձակվեցին մոտ հիսուն-վաթսուն հոգի՝ մահակներով եվ կացիններով զինված: Մեր մեքենան շուռ տվեցին, մենք էլ մեքենայի մեջ

էինք: Հետո մեքենան նորից դրեցին անիվների վրա, մեզ մեքենայից հանեցին եւ սկսեցին խոշտանգել, փայտերով ծեծել: Ես ադրբեջանաերեն շատ լավ գիտեմ, նույնիսկ նրանցից լավ: Նրանցից մեկն ուզում էր ինձ փայտով հարվածել, փայտը ձեռքից վերցրի ու ետ վերադարձրի, ասացի. «Քեզ կարգին պահիր, թե չէ կարող ենք վիզդ պոկել»: Մի քիչ զգաստացավ, որ ես փայտը վերցրի ու ոչ թե խփեցի, այլ նորից վերադարձրի: Մեզ քշելով տարան Քյամառլու գյուղը: Մեր կողմից ես էի, Իջեւանի շրջգործկոմի նախագահ Լիպարիտ Օրդինյանը, Նոյեմբերյանի գործադիր կոմիտեի նախագահ Ամիրխանյանը, Նոյեմբերյանի շրջկոմի քարտուղար Մամյան Ռաշիդը: Ադրբեջանցիները եկան բեռնատար մեքենաներում լցված մարդկանցով: Հիմնականում կանայք էին: Ադրբեջանցիների սովորությունն է՝ կանանց առաջ գցել եւ ետեւից նայել, թե ինչ է կատարվում: Կանայք սկսեցին հարձակվել մեզ վրա: Մի մեծահասակ կին մեծ քարով ուզում էր խփել գլխիս: Ասացի.

- Մայրի՛կ, ինչու՞ եք այդպիսի բաներ անում:

- Քեզ սպանելու եմ, այս հողը մերն է:

Ուրիշ ոչինչ չի ասում: Մեզ ծեծելով-ջարդելով տարան Քյամառլու գյուղի ակումբը: Ինձ շատ վատ էի զգում, ակումբում ասացի. «Գոնե ինձ ջուր տվեք, դեղ խմեմ»: Ջուր չտվեցին, կես ժամ հետո նոր բերեցին: Ամբոխը լցվեց ակումբը: Մեզ բարձրացրին բեմ՝ իրենց ղեկավարության ներկայությամբ, բերին թուղթ եւ մատիտ, որպեսզի ես նրանց ստորագրություն տամ, որ մենք հրաժարվում ենք այդ հողերից: Ասում են. «Եթե չստորագրեք այդ փաստաթուղթը, կկտրենք ձեր շլինքը»: Կացինն էլ դրել էին վզիս: Ես սկսեցի նրանց դատողությունների համաձայն մեկնաբանություններ տալ՝ ոչ թե քաղաքակիրթ ձեւով, այլ ավելի պրիմիտիվ, որպեսզի հասկանային: Բացատրում էի երեք տեսանկյունից. «Դուք երբեւիցե մտածու՞մ եք, թե ինչ եք անում, միանգամից երեք սխալ եք գործում: Առաջինը՝ ոչ ոք չի մտածի, որ ես կամավոր կգամ ձեր ակումբում թուղթ կստորագրեմ, թե այդ հողերը Հայաստանինը չեն, այլ Ադրբեջանինը: Դրանով դուք ապացուցում եք, որ ուժ եք գործադրել, եւ ես ստորագրել եմ, չնայած չեմ ստորագրի: Երկրորդը՝ ընդունենք, որ ես վախեցա եւ ստորագրեցի, բայց սահմանները ոչ թե իմ ստորագրությամբ են ճշգրտվում, այլ երկու պետությունների միջնորդությամբ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ: Երրորդը,- ադրբեջաներենով ասացի,- ես ձեզանից անտառում չվախեցա, ակումբում կարո՞ղ եմ վախենալ»: Մի քիչ սթափվեցին. «Այդ դեպքում թող Մոսկվայից գան»: Ղեկավարությունը տեսավ, որ ես չեմ ստորագրելու, սթափվեց եւ ժողովրդին դուրս հրավիրեց: Մենք վերադարձանք ոչ թե Ղազախով, այլ Նոյեմբերյանով: Այդտեղից սկսվեց պատմությունը:

Մոսկվայից եկան այդ միջադեպի կապակցությամբ:

Բ. - Բողոքեցի՞ք:

Վ.Մ. - Ես չեմ բողոքել երբեւիցե: Զանգահարեցի կենտկոմ եւ տեղյակ պահեցի Հրանտ Ոսկանյանին, քանի որ Դեմիրճյանը Երեւանում չէր: Ոսկանյանն ինձ ասաց.

- Կարո՞ղ է հանկարծ հրաժարվեք:

- Դուք առաջին անգամ ե՞ք ինձ տեսնում, կամ եթե վատ եք ճանաչում, դա ձեր պրոբլեմն է, ես ձեզ տեղյակ պահեցի:

Այդ հարվածներից ուղեղի ցնցում էի ստացել: Ծեծված-ջարդված՝ վերադարձա Երեւան: Որպեսզի ազգամիջյան լարվածություն տեղի չունենա, երկրորդ օրը ինքս այդ վիճակով եկա Երեւան, ժողովրդին հանգստացրի, ասացի, որ Մոսկվայից հանձնաժողով է գալու, որը կլուծի մեր խնդիրները՝ օրենքին համապատասխան: Գործը հասավ Լիգաչովին, նա զարմացավ իմ համբերության վրա: Նա հայտարարեց, թե իրենք բոլորին կդատեն: Ես խնդիր դրեցի, որ մենք հարեւան ժողովուրդներ ենք, եւ ժողովուրդը ոչ մի մեղք չունի: Ես երկու հարց էի դնում. կազմակերպել են Ռասիզադեն՝ կառավարության նախագահի առաջին տեղակալը, գործկոմի նախագահը, Ղազախի միլպետը եւ շրջկոմի առաջին քարտուղարը: Նախ՝ նրանք պետք է ազատվեն աշխատանքից, դատարան ուղարկվեն: Չնայած եկան ԽՍՀՄ գլխավոր դատախազությունից՝ ինձնից բացատրություն վերցնելու, որ մարդկանց դատի տան: Ասացի. «Դրանով խնդիրը չի լուծվի, Եգոր Կուզմի՛չ, խնդիրը կլուծվի, եթե մենք սահմանները, քարտեզները, գրաֆիկական նյութերը տեղափոխենք բնության մեջ եւ դրանով մեկընդմիշտ փակենք այդ հարցը, որպեսզի հետագայում նույնպիսի միջադեպեր չլինեն, ես համբերում եմ, մեկ ուրիշը կարող է չհամբերել»: Շատ խիստ հանձնարարություն տրվեց, եւ սկսեցինք սահմանների ճշգրտումը: Ճշգրտման արդյունքում նրանք դուրս եկան 14551 հեկտար տարածքից՝ սահմանի երկայնքով: Մենք կատարեցինք երկու քայլ. առաջինը՝ դրանք պիտի կատարվեն Մոսկվայի քարտեզագիտության ինստիտուտի միջոցով՝ երկրի սահմանված կարգին համապատասխան, այսինքն՝ պետք է այդ կուրգան կոչվածները լինեն ածուխի պարունակությամբ, պետք է լինեն սահմանային սյուները եւ պիտի դրվեն ինչպես կարգն է: Այդ բոլորը դրվեցին: Բացի այդ՝ ես հասա նրան, որ Մոսկվայի քարտեզագիտության ինստիտուտի կողմից փոխվեցին բոլոր քարտեզային հին նյութերը, եւ քարտեզներ մշակվեցին արդեն ճշգրտված սահմաններով: Բացի այդ, մենք չորս տարի դրանով զբաղվելուց հետո՝ 1988 թ., ստորագրեցինք համատեղ արձանագրություն եւ հաստատեցինք երկու երկրների մինիստրների խորհուրդների որոշմամբ:

Ութերորդ կետով նշվեց, որ այսուհանդերձ, եթե կլինեն սահմանային վեճեր, միակ ճիշտ փաստաթուղթը պետք է համարել մեր կազմած այս վերջին փաստաթուղթը: Այսպիսով՝ մեզ հաջողվեց մեր սահմաններից դուրս բերել ադրբեջանցիներին: Դա ամենեւին էլ չի նշանակում, թե մենք լրացուցիչ հող ունեցանք, բայց զավթած հողերը վերադարձրինք: Ես մի փոքրիկ գիրք էի գրել այն ժամանակ, գուցե հետագայում տպագրեմ: Շամշադինում կար մի փոքրիկ ադրբեջանական գյուղ, բոլորը քաշել էին, բայց մի ադրբեջանցի մնացել էր, եւ մեր «խելոքներն» էլ նրան նշանակել էին անտառապետ, փոխարեն դուրս հանեին մեր սահմաններից: Թաղիլար գյուղն է դա՝ Այգեձորի, Չինարի հարեւանությամբ: Եւ մեր հին եկեղեցիներից մեկը՝ Ոսկեպարի եկեղեցին, եկել էին զավթել, տները բերել էին եկեղեցու մոտ, մինչեւ ճանապարհը եկել էին, եկեղեցուն, եթե դիպուկ ասենք, գերի էին վերցրել, եւ ամենակարեւորը՝ հավատացյալներին զրկել էին եկեղեցի մտնելուց: Իմ գրքույկը կոչվում է «Թաղիլարի վերջին տունը եւ հայրենադարձ եկեղեցին»:

Բ. - Ջրամբարը մնաց նրանց, գյուղերի վերաբերյալ սխալ պայմանագիր կնքվեց, ժամանակը նշված չէր:

Վ.Մ. - Երբ մերոնք ստորագրել էին համատեղ արձանագրությունը, որպես քաղաքակիրթ մարդիկ՝ հավատացել էին իրենց հարեւաններին եւ ջրամբարի վերաբերյալ գրել էին. «Մենք հողը հատկացնում ենք՝ պայմանով, որ այս գյուղերը կվերաբնակեցվեն Ադրբեջանում նրանց համար տներ կառուցելուց հետո», փոխարեն գրեին՝ մենք այս հողերը կարող ենք հատկացնել այս գյուղերը վերաբնակեցնելուց հետո: Ջրամբարը կառուցել են, տներ չեն կառուցում, ժամանակ էլ չի նշվել: Մենք ենք ստրագրել՝ որպես մարդասեր, քաղաքակիրթ մարդիկ: Բայց այդքան միամիտ քաղաքակրթությունը ես չեմ ընդունում, անձնական հարցերում կարելի է վեհանձն լինել, բայց ոչ պետական, հատկապես հողային հարցերում: Երբ 1984 թ. սկսեցինք սահմանները ճշգրտել, խնդիր դրեցինք. «Մենք ձեզ հատկացրել ենք հարյուր ութ հեկտար հողատարածք ջրամբարի տակ, որտեղի՞ց եք ետ վերադարձնում այդ հարյուր ութ հեկտար տարածքը»: Եվ այդ հարյուր ութ հեկտարը վարելահողի տեսքով ետ վերադարձվեց Իջեւանի շրջանին եւ մտավ մեր սահմանի մեջ: Չէինք կարող հարց դնել՝ ջրամբարը քանդեք, որ հողը ազատվի:

Բ. - Դուք երեւի այն ժամանակ էլ մտածում էիք, որ Հայաստանի գետերից, ջրահոսքերից ավելի շատ օգտվում է Ադրբեջանը, դաշտային մասը, նույն կերպ Ղարաբաղում էր:

Վ.Մ. - Գետերի մակերեսային հոսքը միջին տարեկան կտրվածքով կազմում է 6,8 միլիարդ խորանարդ մետր: Այսօրվա դրությամբ 6,8-ից

օգտագործում ենք առավելագույնը 2,5 միլիարդը, մնացած 4,3 միլիարդը հոսում է հիմնականում Ադրբեջան ու Վրաստան: Դեպի Վրաստան էլ Կուր գետով թափվում է Կասպից ծովը, մեր մասում ջրերը Արաքս գետով միանում են Կուրին եւ նորից թափվում են Կասպից ծովը: Մենք ունենք նաեւ խորքային ջրերի պաշար: Այդ տարիներին կարողացա մի հետաքրքիր բան ի հայտ բերել. մեր հանրապետության միջին բարձրությունը հազար ութ հարյուր տասնութ մետր է, բոլոր գետերը արտահոսում են, ոչ մի գետ չի ներհոսում Հայաստան՝ բացի Ախուրյանից, որը գալիս է Թուրքիայի մասով, այն էլ սահմանային է, չի հոսում դեպի մեր տարածքը: Սրանք մակերեսային ջրերն են: Հայերը խելոք մարդիկ են, ում ձեռքին հորատող գործիք է հայտնվել, ստորգետնյա ջուր է գտել: Կարգը այսպես էր՝ ով ջուր է գտել, նա պարգեւատրում է ստանում, եւ այդ ջրերը՝ որպես պետական պաշարներ, գրանցվում են Լենինգրադի պետական պաշարների կոմիտեում: Զարմանալի է, որ Ադրբեջանը՝ Կասպից ծովի եզերքին, Վրաստանը՝ Սեւ ծովի եզերքին, ոչ մի պաշար չեն արձանագրել: Լենինգրադի տվյալներով՝ մենք ունեինք 3,3 միլիարդ խորանարդ մետր ստորգետնյա ջրային պաշար, այն դեպքում, երբ Ադրբեջանն ու Վրաստանը միասին ունեն 1,3 միլիարդ խորանարդ մետր: Մեզ ի՞նչ էին ասում եւ ասում էին շատ խելացի ձեւով: Ես երկու չհրապարակված նյութ հաղորդեմ: Մեզ ասում էին. «Դուք մակերեսային ջրերը թողեք ներքեւում օգտագործվեն, դա Ադրբեջանն ու Վրաստանն են, դուք պետք է ստորգետնյա ջրերը հանեք օգտագործեք, 3,3 միլիարդ խորանարդ մետր ջուր ունեք»: Հիմա եկեք ապացուցենք: Նրանք ասում են. «Մենք ստորգետնյա ջրերը չենք կարող տեղափոխել, մակերեսային ջրերն ենք տեղափոխելու»: Սա մի պրոբլեմ էր մեզ համար: Երկրորդ պրոբլեմը՝ երբ ես զբաղվում էի Ռոտանի թունելի շինարարությունը օրինականացնելու եւ սկսելու հարցով, հանկարծակի մեր կողմից թերթում հոդված տպագրվեց, որ Սեւանի տակ մենք հարյուր մեր խորության վրա ծով ունենք: Պետական փորձագիտական հանձնաժողովի նախագահը ինձ ցույց տվեց այդ թերթը թե. «Ընկե՛ր Մովսիսյան, դուք ուզում եք 21,6 կիլոմետր թունել սարքել, որպեսզի Սպանդարյանից 160 միլիոն մետր խորանարդ ջուր տեղափոխեք Սեւան: Ինչու՞ չեք հարյուր մետր ծակում եւ հանում այդ 160 միլիոնը, ինչու՞ եք այդքան թունել փորում, ծախսեր կատարում, երկրին դնում այդ վիճակի մեջ»: Ես տեղյակ չէի, թե ինչի մասին է խոսքը, ասացի, որ այդպիսի բան լինել չի կարող: Նա ցույց տվեց թերթը: Հրավիրեցի այդ ընկերներին, ասացի. «Տղա՛ ջան, եթե ջուր ես գտել, լավ ես արել, բայց ինչու՞ լճի տակ լիճ չգտար, այլ ծով գտար, այս սնապարծությունը ու՞մ է պետք, ի՞նչ եք ուզում դրանով ասել»:

Այսօր ես ջրի ազգային խորհրդի անդամ եմ, մենք շուտով կհաստատենք ծրագիրը, Ազգային ժողովում կհաստատվի, որ շեշտը պետք է անպայման դրվի ջրերի մակերեսային հոսքը կարգավորելու, լրացուցիչ հարյուր հիսունյոթ ջրամբարներ կառուցելու վրա, մենք ունենք ընդամենը յոթանասունինը ջրամբար, որտեղ կուտակված է մեկ միլիարդ խորանարդ մետր ջուր: Երբ հարյուր հիսունյոթ ջրամբարները կունենանք, այնտեղ կկուտակենք մոտ 3,8 միլիարդ խորանարդ մետր ջուր, որով կլուծենք մեր բոլոր խնդիրները: Երկիրը պետք է ջրի ռազմավարական պաշար ունենա՝ մոտ 10 միլիարդ խորանարդ մետր, եւ պետք է ունենանք Սեւանա լճում, որովհետեւ այնտեղ լրացուցիչ պատվար կառուցելու անհրաժեշտություն չկա, մենք այնտեղ 24 միլիարդ խորանարդ մետր դատարկ տեղ ունենք: Երբ նախկին մակարդակը հիշեցրել ենք, 24 միլիարդ օգտագործել ենք: Հիմա 10 միլիարդը այնտեղ ունենանք, մենք ինչ խնդիրներ կարող ենք լուծել. ատոմակայանի դադարեցման դեպքում էլեկտրաէներգիա արտադրելու, ոռոգման հողերը ընդլայնելու, խմելու ջրի խնդիրները: Որտե՞ղ է գրված, որ մեկը պետք է նավթը վաճառի, իսկ մյուսը ջուրը չվաճառի: Այստեղ էլ հսկայական աշխատանքներ եմ կատարել, ինչպես ի պաշտոնե պարտավոր եմ եղել, այնպես էլ մասնակցել եմ մի շարք ծրագրերի քննարկմանը Մոսկվայում: Կուր գետի սխեման հաստատելիս մենք հարց դրեցինք, որ մինչեւ Կուրի սխեմայի հաստատումը՝ պետք է հաստատվի Սեւանա լճի սխեման, այսինքն՝ Սեւանի բաժինը վերցնենք, նոր մնացածը բաժանենք իրար մեջ: Ես ունեմ Ադրբեջանի կառավարության գրությունը. «Սեւանի նման պրոբլեմներ ունեն բազմաթիվ հանրապետություններ: Սեւանի պրոբլեմը ուռճացված է, դա չպետք է լուծել, այդ ջրերը պետք է տալ Ադրբեջանին բամբակ եւ խաղող աճեցնելու համար, եւ դրանով դուրս գալ համաշխարհային շուկա, լուծել Խորհրդային Միության վալյուտային պրոբլեմները»: Մենք հասել ենք նրան, որ Կուր գետի սխեման չի հաստատվել՝ մինչեւ չի հաստատվել Սեւանի սխեման. Սեւանը պետք է վեց մետրով բարձրանա: Այդ վեց մետրն իր մեջ ընդգրկում է ութ միլիարդը, եւ երկուսը պետք է ավելացնել: Մենք հողային եւ ջրային սահմանափակ պաշարներ ունենք, բայց լոզունգ պիտի դարձնենք ոչ թե դա, այլ այն, որ այդ սահմանափակ պաշարները օգտագործենք առավելագույն փոխհատուցմամբ, ոչ միայն բալանսը պիտի ապահովենք, այլ վերարտադրությունը:

Բ. - Հողային հարցերը շատ հնուց են գալիս, երբ թափառական ցեղերը եկան Կուր-Արաքսի հովիտ: Երբ 88-ին սրվեց արցախյան խնդիրը, այս հարցերը դեր ունեին, կամ կարելի՞ է ասել, որ հիմք հանդիսացան 88-ի պոռթկմանը ոչ միայն Ղարաբաղում, այլ ամբողջ հայ ժողովուրդը ոտքի կանգնեց:

Վ.Մ. - Առանց այն էլ ջուրը գնում էր ադրբեջանցիներին, ինչքան ցուրը վատ ենք օգտագործում, այնքան նրանց ավելի շատ ենք տալիս: Նրանց գերագույն նպատակը Ղարաբաղի հարցը իրենց օգտին լուծելն էր, եւ տանում էին իրենց քաղաքականությունը: Եթե նայում եք քարտեզին՝ Ստեփանակերտի շուրջը առաջ եկան ադրբեջանական ինքնավայրեր, մեկը կար՝ հինը, մեկը հզորացավ՝ Խոջալուն, մյուսը՝ Մալիբեյլուն: Քաղաքականություն էին վարում՝ առաջ նայելով, որ այդտեղ ադրբեջանական թեքումով ինստիտուտներ բացեն: Նրանք գիտեին, որ Ղարաբաղը իրենցը չէ, հիմա էլ գիտեն, եւ նրանց գերագույն նպատակն էր՝ ամեն ինչ անել, որ այդ դառնա իրենցը: Հայերը 1920 թվականից պայքարել են, վատ պայքարողներ էլ են եղել, բայց, միեւնույնն է, այդ էվոլյուցիան պետք է բերեր ռեվոլյուցիայի: 1920-ական թվականներին ի՞նչը լուծվեց: Գրիգորի Հարությունովը նամակ գրեց՝ չլուծվեց, Անտոն Քոչինյանը գրեց՝ չլուծվեց: Ղարաբաղի ժողովուրդը հերոսաբար անհնազանդություն էր ցուցաբերում բոլոր հարցերում: Բայց կուտակվեց, դարձավ այդ ժամանակ դետոնատորը: Ասացինք, որ ապրում ենք դեմոկրատական երկրում՝ գորբաչովյան լոզունգների: Դա առիթ էր, բայց ընդերքը գալիս էր դեռ 1900 թվականների առաջին իսկ օրերից, եւ դա պետք է այդպես լիներ: Շատ ուրախ եմ, որ այդ հեղափոխությունը հաջողությամբ պսակվեց: Բայց հիմա տարօրինակ է, որ մեզ ստիպում են նստել բանակցությունների շուրջ՝ քննարկելու, թե մեր ունեցածը մե՞րն է, թե՞ չէ: Սա է պարադոքսը: Շատ եմ ուրախ եմ, որ մեր իշխանությունները՝ հանձին հանրապետության նախագահի, այս հարցում համառորեն ցույց են տալիս մեր երկրի դեմքը, կամքը: Ոչ մի պատերազմից հետո ոչ մի պարտվող երկիր չի ունեցել վճռական ձայնի իրավունք, առավել եւս այն դեպքում, երբ ինքն է հրահրել պատերազմը:

Բ. - Ուրեմն՝ հակառակորդը դիվանագիտական փայլուն ձեռքբերումներ ունի, որ կարողանում է դրան հասցնել:

Վ.Մ. - Չեմ կարող ասել՝ փայլուն, մեք դեռ ոչ մի զիջման չենք գնացել, եւ չենք գնալու այն պարագաներում, որոնք կհակադրվեն մեր ազգային շահերին: Այսրվա դրությամբ՝ ոչ մի փաստաթուղթ չենք կարող դնել սեղանին, որ Ղարաբաղի հարցում գնացել ենք ինչ-որ զիջումների. Չեն լինելու դրանք:

Բ. - Հողային եւ ջրային պատերազմներում գլխավոր դեր եք ստանձնել, 1988-ից երկիշխանության նման մի բան առաջացավ, այդ ժամանակ նաեւ կոմկուսի լիդերություն ունեիք. Ձեր մոտեցումը այս խնդրին՝ ի՞նչ էիք տեսնում, ո՞նց էիք տեսնում, Գերագույն խորհրդի

առաջին կիստում հետաքրքիր իրադարձություն եղավ:

Վ.Մ. - Շատ հակիրճ. երբ 1990 թ. ապրիլի 6-ին ես ընտրվեցի առաջին քարտուղար, Ղարաբաղում ընդհանրապես իշխանություն գոյություն չուներ՝ ո՛չ պետական, ո՛չ խորհրդային, մարզգործկոմը չկար, մարզային կոմիտեն չկար, կար ինչ-որ կոմիտե՝ Պոյլանիչկոյի ռեժիմով: Հայաստանը շրջափակված էր, Հայաստանի կոմկուսը կազմալուծվում էր: Այդ ժամանակ ես խնդիր դրեցի. առաջինը՝ վերականգնել Ղարաբաղի օրինական իշխանությունները: Ընտրվելուց վեց օր հետո ես եղա Գորբաչովի մոտ, նա ասաց.

- Գնացեք Ռիժկովի մոտ:

- Ես Ռիժկովի մոտ անելիք չունեմ:

- Մենք պայմանավորվել ենք, որ նա պետք է ձեզ լսի, մենք միասին հարցերը քննարկենք:

Ես եղա Ռիժկովի մոտ՝ Ազգային անվտանգությունում: Որպես առաջին քայլ առաջարկեց, որ վերականգնենք Լեռնային Ղրաբաղը Ադրբեջանի կազմում՝ որպես ինքնավար հանրապետություն: Ասացի.

- Ես համաձայն եմ:

- Դե, գնացեք ձեր ակտիվի հետ զրուցեք, եթե ակտիվը համաձայն է:

- Ես գիտեմ ակտիվի կարծիքը, հիմա այնտեղ ընդհանրապես իշխանություն չկա, որպես առաջին քայլ՝ կարելի է համաձայնվել, որ այն լինի ինքնավար հանրապետություն, ոչ թե մարզ:

Երեք օր հետո գնացի, ասաց. «Գիտե՞ք ինչ, Գորբաչովը արդեն համաձայն չէ, որ լինի ինքնավար հանրապետություն, որպես առաջին քայլ՝ ուզում է վերականգնել ինքնավար մարզը»: Ասացի. «Դրան էլ եմ համաձայն»: Դա էլ չկատարվեց: Ոսկանյանի՝ Գերագույն խորհրդի նախագահի եւ Մարգարյանցի՝ կառավարության նախագահի հետ առավոտյան գնացինք՝ առանց Գորբաչովի հետ համաձայնեցնելու: Նրա ընդունարանում սպասում էինք: Երբ տեսավ, զարմացավ եւ ինձ կշտամբեց. «Ինչու՞ եք առանց թույլտվության եկել»: Ասացի. «Հարցը այնքան հրատապ է: Դուք ինձ ուղարկեցիք Ռիժկովի մոտ, չլուծվեց ինքնավար հանրապետության, նաեւ ինքնավար մարզի խնդիրը, ինչու՞ եք խաբում, Դուք ինձ խաբում եք, ես էլ գնում իմ եւ Ձեր անունից խաբում եմ ժողովրդին»: Կանչեց Լուկյանովին եւ Նիշանովին. «Երեք օրվա ընթացքում առաջարկությունը գրեք»: Երեք օրն էլ անցավ: Նորից ես քաղբյուրոյում ելույթ ունեցա, ասացի.

- Եթե դուք չլինեիք երկրի նախագահը եւ կուսակցության գլխավոր քարտուղարը, սուտ խոսեիք, ես կարող էի հաշտվել դրա հետ, մարդ եք՝ կարող եք ինչ-որ մի բան ասել: Բայց Դուք դրա իրավունքը չունեք:

- Դուք գիտե՞ք, թե որտեղ եք գտնվում:

- Եթե չիմանայի, թե որտեղ եմ գտնվում, ելույթ չէի ունենա. սա՝ մեկ,- եւ բերեցի Ղարաբաղի հարցի օրինակը,- երկրորդ՝ եթե ուզում եք այս երկիրը տանել ուրիշ ուղղությամբ՝ կապիտալիստական, մեզ տվեք ուղեցույց, թե մենք տեղերում ինչպես վարվենք, դուք մի գիծ եք վարում, մենք՝ ուրիշ գիծ:

- Դուք սահմանն արդեն անցաք:

- Ես ոչ մի սահման էլ չեմ անցնում: Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձի օրը Դուք հրապարակում ելույթ ունեցաք, դահլիճում՝ Լուկյանովը: Ձեր երկուսի զեկուցումների մեջ ընդհանրապես ոչ մի բառ չկա կոմունիստական կուսակցության մասին:

- Դուք վատ եք կարդում:

- Ընդհանրապես կարող է պատահել, որ վատ եմ կարդում, բայց տվյալ դեպքում ես բերել եմ Ձեր եւ Լուկյանովի զեկուցումների տեքստերը, դուք ինձ ցույց տվեք այդ հատվածները, եւ ես ներողություն կխնդրեմ:

Ստիպված ընդմիջում հայտարարեց: Մոտեցավ ինձ, ձեռքը դրեց ուսիս, ասաց.

- Վլադիմի՛ր, գնանք թեյ խմենք:

- Էլի սխալվեցիք, Միխայի՛լ Սերգեյիչ, -ասացի ես, - ես օղի եմ խմում, թեյ Մութալիբովն է խմում, կարող եք նրան հրավիրել:

- Դրա մասին չէ խոսքը, - պատասխանեց Գորբաչովը, - այն մասին է, որ բերեք այս հարցերը լուծենք:

Վերջը հասավ նրան, որ 28-րդ համագումարում Ղարաբաղի կոմունիստները ընտրել էին իրենց պատվիրակներին, որոնց չէին թողնում համագումարին: Ես անձամբ գնացել եմ կենտկոմ, մեր պատվիրակությունն էլ շատ լավ պահեց իրեն: Ասացինք. «Մենք համագումարին ընդհանրապես չենք մասնակցի, վերադառնում ենք Հայաստան, եթե դուք Ղարաբաղի պատգամավորների լիազորությունները չեք ճանաչում»: Պատկերացնու՞մ եք, կոմկուսի համագումարին նման հարց ենք դնում: Փաստի առաջ վիճաբանեցին երեք-չորս ժամ, եւ որոշեցին, որ պետք է Լեռնային Ղարաբաղի պատվիրակը՝ Օլեգ Եսայանը, մասնակցի կուսակցության համագումարին խորհրդակցական ձայնի իրավունքով, ինչը կանոնադրության կոպիտ խախտում է: Չի կարող սկզբնական կուսակցական կազմակերպությունը պատգամավոր-պատվիրակ ընտրել, որի լիազորությունները կամ պետք է ճանաչել, կամ չճանաչել, ոչ թե գրել, որ նա պետք է նստի խորհրդակցական ձայնի իրավունքով: Մի խոսքով, ես շատ ուրախ եմ, որ այսքան մաքառումներից հետո Ղարաբաղը անկախ պետություն է եւ աշխարհին ապացուցում

է, որ ինքը կարող է գոյատեւել որպես անկախ պետություն, դա մեծ փաստարկ է՝ կարողանու՞մ է այդ երկիրը գոյատեւել, թե՞ ոչ: Ի՞նչ է նշանակում գոյատեւել. տնտեսություն վարել, ընտրություններ անցկացնել, կազմակերպել ժողովրդին, ծրագրեր իրականացնել, պահպանել սահմանները, հարաբերություններ ունենալ աշխարհի տարբեր կազմակերպությունների հետ, համոզված եմ, որ առաջիկայում կլինի նաեւ պետությունների հետ: Սա հետադարձ քայլ չունի: Ուրախ եմ նաեւ, որ խավարի, մթության տարիներին Ղարաբաղի ընկերների, ղեկավարության խնդրանքով ես զբաղվեցի Ղարաբաղից դուրս եկած փախստականների հարցերով: Հիմնականում Մարտակերտի եւ Հադրութի շրջանների, նաեւ Մարտունու փախստականներն էին՝ հիսունյոթ հազար մարդ: Ինձ համար եւ՛ մեծ պատիվ էր, եւ՛ մեծ դժբախտություն, որ բոլորի հետ նաեւ մեր այս հայրենիքը ներկայացնող տեղահանվածների հարցերը կարողանում ենք լուծել: Ինձ պետք չէր, որ ես նրանց սոցիալական խնդիրները լուծեի: Դա էլ կարեւոր էր, բայց մենք պայմանավորվեցինք, որ աստիճանաբար ետ վերադարձնենք նրանց: Կարողացանք կազմակերպել: Ես եղա բոլոր բնակավայրերում՝ ընդհուպ մինչեւ վտանգավոր վայրերում: Իմ հիշողությունից հաթերք բնակավայրը երբեք չի ջնջվի: Գյուղում մարդ չկար, փողոցում կովերն էին բառաչում, շներն էին կաղկանձում... անտերություն էր: Ավելի վատ բան, քան անտեր, անկառավարելի անասուններն են, չկա: Ղարաբաղյան իշխանությունների հետ, այն ժամանակ պարոն Քոչարյանն էր, որի հետ ես լուծում էի խնդիրները, կարողացանք քառասուն հազար մարդու ետ ուղարկել: Այդ տարիներին ամեն օր ինը մեծ ավտոբուսով մարդիկ էին վերադառնում: Դրան զուգահեռ՝ 1992-93 թթ. սկսեցինք ավերված տների վերականգնումը: Նպատակը ի՞նչն էր. ադրբեջանցիները նայում են, տունը թնդանոթով կամ «Գրադով» քանդում, մյուս օրը տունը վերականգնվում է: Նրանք մտածում են՝ եթե տունը քանդեցինք, ու մարդը վերականգնում է, ուրեմն՝ նա գնացող չէ: Սա հոգեբանական հզոր հարված էր նրանց: Ի պատիվ մեզ, երկուս ու կես տարում վերականգնեցինք երկու հազար ութ հարյուր ինսունյոթ տուն եւ բնակարան: Ուզում եմ խորին շնորհակալություն հայտնել բոլոր այն մարդկանց, ովքեր լսեցին մեր հորդորը եւ վերադարձան: Եթե չի գործում *օրենքի ուժը*, գործում է *ուժի օրենքը*. դա մի անգամ մենք ապացուցեցինք: Եթե միջազգային օրենքները նորից չգործեն, թող մեզ ուժով չվախեցնեն: Մենք մի անգամ տեսել ենք, այն մեզ համար անցած էտապ է: Հաստատ համոզված ենք, որ այսուհետ մի թիզ հող անգամ որեւիցե մեկին չենք զիջելու:

Պատմում է Յուրի Բեկնազարյանը (ԼՂԻՄ կուսմարզկոմի առաջին քարտուղար Բ.Կեւորկովի օգնական): Զրույցը վարեց Բակուր Կարապետյանը. 29.03.1990 թ., Ստեփանակերտ:

Յու.Բ. - 1988-ի փետրվարի 11-ից մարզը Հայաստանին միացնելու շարժումը արգելափակելու նպատակով Ադրբեջանի կոմկուսի ներկայացուցիչների, մարզկոմի աշխատակիցների մասնակցությամբ շրջաններում ակտիվի ժողովներ էին անցկացվում: Երեկոյան զանգեց ԽՄԿԿ կենտկոմի ազգությունների գծով սեկտորի վարիչ Միխայլովն ու հայտնեց, որ Խորհրդային Միության կոմկուսի կենտկոմն ընդունել է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մտավորականների պատվիրակությանը, որը լավ տպավորություն է թողել կենտկոմում, խնդրեց հաղորդել Կեւորկովին, որ զանգահարի իրեն: Պարզ էր, որ պատվիրակները ճիշտ են բացատրել խնդիրը:

Այժմ այն մասին, թե ինչպես ընդունվեց Ղարաբաղի մասին ԽՄԿԿ ԿԿ 1988 թ. փետրվարի 21-ի որոշումը: Ստեփանակերտում Լենինի հրապարակը եռում էր: Հանրահավաքին մասնակցում էր վաթսուն հազար մարդ: Այստեղ էր Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Բագիրովը: Նա ամեն կերպ ձգտում էր համոզել, որ սա ոչ թե ժողովրդական շարժում է, այլ մի խումբ ծայրահեղականների ելույթ, որոնց նպատակն է անկայունացնել իրավիճակը հանրապետությունում: Երբ բացվեց Կեւորկովի դուռը, այնտեղ նստած էր Բագիրովը, ու լսելի էր խոսակցության մի մասը, որով կարելի էր կռահել, թե ինչի մասին են խոսում: Երբ Բագիրովը խոսում էր Մոսկվայի հետ, համոզում էր, որ այստեղ հավաքվել են մի խումբ ծայրահեղականներ, ու եթե ԽՄԿԿ ԿԿ համապատասխան որոշում լինի, ապա նրանք կհանգստանան ու կցրվեն: Ադրբեջանի ղեկավարները գիտեին ինչպես խաբել Կրեմլին, ու ինչպես նրան ներքաշել այդ խաղի մեջ: Այդ օրը մարզկոմի աշխատակիցներին չթողեցին տուն գնալ, ու գիշերվա ժամը երեքին բոլորին հավաքեցին մարզկոմի բյուրոյի նիստերի դահլիճում: Բագիրովը հայտարարեց, որ ահա ստացել են ԽՄԿԿ ԿԿ 1988 թ. փետրվարի 21-ի որոշումը, ըստ որի՝ հրապարակում մի խումբ ծայրահեղական ազգայնամոլներ են թեժացնում կրքերը: Այդ որոշումը, փաստորեն, թելադրել է Բագիրովը: Ուրեմն՝ կենտկոմը չգիտեր ինչ անել, ուստի եւ ենթարկվել էր Բագիրովի թելադրանքին: Մինչ այժմ էլ Միխայիլ Գորբաչովը կրկնում է ադրբեջանական ղեկավարների՝ սկսած Ալիեւից մինչեւ Մութալիբով, ձեւակերպումները:

Կեւորկովը խելացի եւ դաժան մարդ էր: Երբ փետրվարի 21-ին

պետք է տեղի ունենար մարզխորհրդի նիստը, Կեւորկովը հավաքեց շրջկոմների առաջին քարտուղարներին ու շրջգործկոմների նախագահներին: Այնտեղ էին նաեւ մարզարհկոմի նախագահը, կոմերիտմիության մարզկոմի քարտուղարը, մարզկոմի բաժինների երկու վարիչներ: Ճաշից հետո նրանց պահեց կուսմարզկոմի շենքում, չնայած պետք է նստաշրջանը սկսվեր: Հայ պատգամավորները դժգոհում էին, նրանք շտապում էին մասնակցելու նիստին: Ըստ երեւույթին, Կեւորկովը դիտավորյալ էր պահում նրանց, որ չկարողանան մասնակցել նիստին: Ես հաճախակի զանգում էի մարզգործկոմ եւ ճշտում՝ քվորում կա՞ նստաշրջանը սկսելու համար: Քվորում դեռ չկար, սակայն պատգամավորները չէին հեռանում: Երեկոյան ամեն կես ժամը մեկ մի պատգամավոր էր տեղ հասնում: Անհասկանալի պատճառով Կեւորկովը հանկարծ իր մոտ հրավիրեց շրջանների ղեկավարներին եւ հանձնարարեց գնալ մարզխորհրդի դահլիճ եւ կոմունիստ պատգամավորներին կանչել իր մոտ՝ կուսակցության մարզկոմի բյուրոյի նիստերի դահլիճ: Նրանք գնացին մարզխորհրդի դահլիճ ու այլեւս չվերադարձան՝ այդպես լրացնելով քվորումին պակասող ձայները: Կյանքի այդպիսի հարուստ փորձ ուներ, ու չկարողացավ հասկանալ, որ նրանք չեն վերադառնա: Գուցե շատ էր վստահ, որ ետ կգան:

Բ. - Իսկ գուցե դիտավորյալ է բաց թողել, որ լրացվի քվորումը:

Յու.Բ. - Չգիտեմ, բայց ի՞նչ իմանաս... տասներեք հոգի դուրս եկան, ու նա պետք է դրա համար պատասխան տար:

Մի քանի անգամ Կեւորկովն ինձ ուղարկել էր չորրորդ հարկ, որտեղ նստած էին շրջանային ղեկավարները, որպեսզի ճշտեմ՝ նրանք այնտե՞ղ են, թե՞ ոչ: Նրանք էլ, տեսնելով ինձ, հարցրին, թե ինչու Կեւորկովը չի կանչում իրենց: Իսկ շրջանների քարտուղարները շատ էին անհանգստանում: Դեռ պարզ չէր, թե կշեռքի որ նժարը կթեքվի ցած, որ իրենք էլ այդ կողմը թեքվեն: Բայց շատերն արդեն շարժման կողմն էին թեքվել: Բագիրովի շրջապատի արձագանքից կարելի էր կռահել, թե ինչ վիճակ էր տիրում: Սկզբում ինքնավստահ էին, որ չեն թողնի նստաշրջանը տեղի ունենա: Հետո վախ զգացվեց: Երբ հայտնեցին, որ նստաշրջանը սկսել է իր աշխատանքը, նրա օգնականը գրկեց Բագիրովին եւ փակեց ճանապարհը թե՝ «Խնդրում եմ, մի՛ գնա այնտեղ»: Նրա երկու թիկնապահները եւս խնդրեցին. «Մի՛ գնա, մենք չենք երաշխավորում ձեր անվտանգությունը»: Բայց Բագիրովը հագավ վերարկուն եւ դուրս եկավ: Դժվար էր տեսնել, թե Կեւորկովի հետ նա ինչ հարաբերություններ ուներ: Նստաշրջանից մեկ ժամ առաջ նա, գրավելով Կեւորկովի տեղը, նրան չէր թողնում իր կաբինետը մտնել: Կեւորկովը միջանցքներում էր թրեւ գալիս: Երբ բոլորը հագան վերարկուները եւ շարժվեցին դեպի մարզխորհրդի շենքը, Կեւորկովը գաղափար անգամ չուներ, թե նրանք ուր են գնում: Հագավ վերարկուն ու վազեց նրանց ետեւից: Մարզկոմի աշխատողները առաջին անգամ տեսան Կեւորկովին վազելիս: Խոշոր, ծանրամարմին մարդը մարմինը մեկ այս ոտքին էր նետում, մեկ այն, թվում էր, թե ոտքերը չեն դիմանա... Կեւորկովին եւս փորձել են ժողովրդի կողմը գրավել: Նա հրաժարվել էր, վստահ էր, որ ոչ մի նստաշրջան չի լինի, ոչինչ չի լինի, որ Ադրբեջանը չի թողնի իրեն նեղացնեն: Քաղկոմի առաջին քարտուղար Զ. Մովսիսյանը, երկրորդ քարտուղար Մելքումյանը եւ երրորդ քարտուղարը՝ Հասմիկ Միքայելյանը, ժամանակին նրան առաջարկել են անցնել ժողովրդի կողմը: Բայց սովորաբար այդ տիպի դրածո ղեկավարները ուատանվող մարդիկ էին: Նրանք զգուշանում ու սպասում էին: Նա հառաչ էր ասում. «Դուք ձեր համոզմունքն ունեք, ես՝ իմ, ու ես ձեզ խորհուրդ եմ տալիս հեռու մնալ այդ գործից»: Իսկ այն, ինչ պատրաստվում էր ԼՂԻՄ-ում, մինչեւ ՊԱԿ-ի մարզային բաժնի պետ Սեպտայի հեռասնալն էր: «Դե, իր հերն էլ անիծած,- Կեւորկովի մոտից դուրս գալով՝ ընդունարանում ասաց Սեպտան,- իմ գործն է՝ զեկուցել, իսկ ինքը՝ ինչպես կուզի, իր գլուխն է ցավալու»:

Սեպտան նրան նախազգուշացրել է ծավալվող շարժման, Հայաստանին միանալու վերաբերյալ ստորագրահավաքի, գաղտնի ժողովների մասին, իսկ նա դրան բանի տեղ չէր դնում: Նա նույնիսկ ծրագրել էր փետրվարի կեսերին արձակուրդ գնալ: Սակայն իրադարձությունները ստիպեցին, որ հրաժարվի այդ մտքից:

Կուսակցության մարզկոմի պլենումում նրան պաշտոնից ազատելուց հետո ընդունարանում Բագիրովը թփթփացրեց Կեւորկովի ուսն ու ասաց.

- Ոչինչ, մենք Բաքվում քեզ այնպիսի տեղ կտանք, որ քեզ այստեղից ավելի լավ կզգաս:

Պատմում է Մարգարիտա Գասպարյանը (ԼՂԻՄ մարզգործկոմի արձանագրությունների սեկտորի վարիչ): Զրույցը վարեց Բակուր Կարապետյանը. 29.03.1990 թ., Ստեփանակերտ:

Մ.Գ. - Առաջին հանրահավաքը 1988-ի 13-ին էր: Ես հրապարակում էի: Արկադի Կարապետյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Գրիշա Աֆանասյանը բարձրախոսով դիմում էին ժողովրդին: Գուրգենը պատմում էր Մոսկվա գնացած արցախյան պատվիրակության հանդիպումների, պահանջատիրության առաջ Կրեմլից բացվող «կանաչ» ճանապարհի մասին: Մարզգործկոմի նախագահ Վլադիմիր Օսիպովը, որը ծնունդով Մարտակերտի շրջանի Գյուլաթաղ գյուղից էր, նայում էր պատուհանից: Նրան բերել էին Կիրովաբադից, որտեղ կուսակցության քաղկոմի երկրորդ քարտուղարն էր: Նա ամբոխի մեջ նկատել էր ինձ ու ընկերուհուս ու ձեռքով անընդհատ նշաններ էր անում, որ հեռանանք հանրահավաքից: Հետո նրա վարորդը մոտեցավ մեզ, ասաց, որ Օսիպովը կարգադրել է հեռանալ հանրահավաքից, քանի որ մարզգործկոմը գործ չունի այս ծայրահեղականների հետ:

Գործկոմի աշխատողները խանութից ուտելիք գնելու հնարավորություն չունեին, մուտքը փակ էր: Մեր աշխատակիցներիի տներից ուտելիք բերեցին եւ պատուհանից կախած պարանի օգնությամբ վեր բարձրացրին, Օսիպովին եւս հրավիրեցին միասին ճաշելու:

1988 թ. փետրվարի 20-ին մարզգործկոմի նախագահ Օսիպովը զանգահարեց մեր տուն, հայտնեց, որ իր քարտուղարուհի Ռիմա Խաչիյանի որդին անսպասելիորեն հիվանդացել է, սրտի հետ կապված խնդիր է ունեցել, եւ նա ստիպված տուն է գնացել, առաջարկեց, չնայած աշխատանքային օր չէր, գնամ մարզգործկոմ եւ օգնեմ արձանագրություն կազմելուն: Մտածեցի, որ Լենինգրադյան հանրահավաքների փորձով կազմած «Ցույցերի անցկացման մասին» փաստաթղթի հետ է կապված ինձ կանչելը: Այն մեքենագրված էր, մնում էր կնքել եւ ստորագրել: Օսիպովն ինձ իր աշխատասենյակը հրավիրեց: Տեսա, թե ինչպես նա սեյֆից հանեց թղթի մեջ փաթաթած կնիքը, կնքեց փաստաթուղթն ու ետ դրեց սեյֆի մեջ, փակեց: Իսկ մարզգործկոմի կնիքը սովորաբար քարտուղարուհու՝ Ռիմայի մոտ էր լինում: Ետ տուն չգնացի, քանի որ իրադարձություններ էին տեղի ունենում, ու ինձ հետաքրքիր էր, թե ինչ կլինի: Մարզգործկոմի պատգամավորները խումբ-խումբ անտառներով, արահետներով, զարտուղի ճանապարհներով մի կերպ մարզկենտրոն էին հասնում, գրանցվում: Նրանց մեծ մասը մեծահասակ կանայք էին, տարեց մարդիկ: Հոգնած, սոված, ծարավ էին: Շարժման տղաները նրանց համար ուտելիք էին բերում: Նիստերի դահլիճի բանալին չէին տալիս: Հրահանգիչները գնացին ու բերեցին, բացեցին դուռը: Երբ սկսվեց նստաշրջանը, եկան Բագիրովն ու Կեւորկովը: Միջանցքը նրանց մարդկանցով էր լցված, որոնք թույլ չէին տալիս դուրս գալ սենյակներից: Նիստի ավարտից հետո պետք է արձանագրություն կազմեինք: Բայց ելույթ ունեցողները՝ շուրջ քառասուն հոգի, ոգեւորված իրենց ելույթի տեքստը պատուհանից նետում էին հրապարակում նիստի արդյունքին սպասող ժողովրդին: Ստիպված դիմեցինք հանրահավաքի մասնակիցներին, որ հավաքեն տեքստներն ու ետ վերադարձնեն: Մեկի տեքստը ծոցատետրի թերթիկների վրա էր՝ դժվար ընթեռնելի, մյուսը՝ դպրոցական թռռան մաթեմատիկայի տետրի վարժությունների արանքում: Բոլորը վերադարձրին նստաշրջանի քարտուղարուհուն՝ Լիդա Ղարիբյանին: Ես գնացի նիստի նախագահի՝ Վիգեն Սուրենի Հայրապետյանի մոտ, հավաքեցի բոլոր փաստաթղթերն ու մինչեւ առավոտյան ժամը չորսը կազմեցի նիստի արձանագրությունը: Այն խնամքով թաքցրել էի, որ չգողանան: Իրոք, առավոտյան եկել փնտրել էին, չգտնելով՝ ինձ են դիմել:

Պատմում է Կարեն Բաբուրյանը: Զրույցը վարեց Բակուր Կարապետյանը. 30.03.1990 թ., Ստեփանակերտ:

Կ.Բ. - 1988 թ. փետրվարի 20-ին Կիրովաբադից, Բաքվից բերած միլիցիայի ստորաբաժանումները փակել էին ճանապարհները, արգելում էին մարզխորհրդի պատգամավորներին Ստեփանակերտ հասնել եվ մասնակցել նստաշրջանին: Բորիս Կեւորկովը իր մոտ կանչեց քաղկոմի առաջին քարտուղար Զավեն Մովսիսյանին ու երկրորդ քարտուղար Մաքսիմ Դանիելյանին, հանձնարարեց ճնշում գործադրել պատգամավորների վրա, որպեսզի նստաշրջանը չկայանա: Պատգամավորները դժվարությամբ էին տեղ հասնում: Մարզային միլիցիայի վարչության պետ Արմեն Իսագուլովն օգնում էր նրանց, որ հաղթահարեն արգելքը:

Մարզխորհրդի դահլիճը փակ էր: Մարզգործկոմի նախագահ Վլադիմիր Օսիպովը, որը Ստեփանակերտ էր տեղափոխվել Կիրովաբադից, հանձնարարել էր չբացել այն:

Արդեն հարյուր տասներկու պատգամավոր էին հավաքվել, իսկ քվորումի համար հարյուր հոգի էր պահանջվում: Սակայն արդեն Կեւորկովի խոսքը չէր անցնում: Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Բագիրովը իր ոհմակով (կենտկոմի բյուրոյի ողջ կազմն այստեղ էր) հայտնվեց դահլիճում:

- Անօրեն է նստաշրջանը,- ասաց նա,- օրենքը չի թույլատրում, որ դուք նստաշրջան անցկացնեք: Ինչ պահանջ ունեք, խնդրեմ, պատրաստ եմ բավարարել, հո՞ղ եք ուզում, պատրաստ եմ տալ, մարզի կարգավիճա՞կն եք ուզում բարձրացնել, խնդրեմ, միայն թե նստաշրջան մի՛ արեք: Պատգամավորները պահանջեցին թե՝ մարզխորհրդի պատգամավոր չես, դուրս արի դահլիճից: Երեսուն պատգամավորներ ելույթ ունեցան: Բոլորն էին ուզում խոսել, սակայն ժամանակ չկար: Շտապել էր պետք: Երբ ժողովուրդն իմացավ, որ պատմական որոշումն ընդունվել է, հրապարակը պարահանդեսի էր վերածվել: Մարդկանց աչքերից ուրախության արցունքներ էին գալիս: Գիշերը համապատասխան արձանագրություն է կազմվում ու հաջորդ օրը շտապ ուղարկվում Երեւան, քանի որ վտանգ կար, որ կփակեն ճանապարհները: Սակայն մարզգործկոմի նախագահ Օսիպովը հրաժարվում է կնքել որոշումը: Մարզգործկոմի կազմը դիմում է Օսիպովին, որ կնքի:

- Անօրեն է նստաշրջանը,- ասաց նա,- ուստի կնիք չեմ դնի, իսկ եթե շատ եք ուզում, ասեմ, որ Կեւորկովի մոտ է կնիքը:

Վաչագան Գրիգորյանը, Գենրիխ Պողոսյանը, Կարեն Բաբուրյանը, Վիգեն Հայրապետյանն ու մյուսները հավաքվում են մարզգործկոմի նախագահի տեղակալ Շմավոն Պետրոսյանի մոտ, որոշում, որ մարզգործկոմի անդամներն իրենց ստորագրությամբ հաստատեն որոշումը: Գործկոմի տասնհինգ անդամները ստորագրում են որոշման տակ: Օսիպովը, Կեւորկովը, Իսագուլովը չեն ստորագրում: Գիշերը գործկոմ եկավ Արկադի Մանուչարովը՝ իր հետ ուտելիք բերելով մեզ համար:

1988-ի փետրվարի 25-ից մինչեւ մարտի 4-ը մարզխորհրդի հիսունհինգ պատգամավորներ դիմել են մարզխորհրդին՝ նստաշրջան անցկացնելու համար: Լուր էինք ստացել, որ Ադրբեջանի ժողովրդական ճակատը չի ուզում, որ վերականգնվի ԼՂԻՄ-ի խորհրդային իշխանությունը ու դրանով էլ ինքնավարությունը վերանա: Կյանքը ցույց է տալիս, որ եւ՛ Պոլյանիչկոն, եւ՛ զինվորական պարետությունը իրենց հերթին ամեն ինչ անում են, որ չվերականգնվի այն: Սակայն, դա հակառակ է ԽՍՀՄ սահմանադրությանը: Պատգամավորների ընդհանուր թվի մեկ երրորդից ավելին դիմել են նստաշրջան անցկացնելու համար: Գործկոմի նախագահությունը որոշեց, որ մարտի 23-ին գումարվի նստաշրջանը: Մոսկվայից Ղարաբաղի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորները խնդրեցին, որ նստաշրջանը գումարվի 27-ին, որպեսզի իրենք եւս կարողանան մասնակցել: Մարտի 26-ին Մոսկվայից եկավ Ֆատեեւն ու ասաց, որ ինքը խոսել է Նիշանովի հետ, նա ասել է, որ ոչ մի նստաշրջանի կարիք չկա: Ինքը, Ռոբերտ Քոչարյանը, Սեմյոն Բաբայանը, Սերգեյ Սարգսյանը, Շմավոն Պետրոսյանը, Մաքսիմ Միրզոյանը մարտի 26-ի առավոտյան ժամը 11-ին Աթաջանյանի գրասենյակում հանդիպեցին Ֆատեեւին: Նա հայտնեց, որ Նիշանովը խնդրել է մեկ շաբաթով հետաձգել նստաշրջանի անցկացումը, պատճառը Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանային բախումներն են, որ Ադրբեջանը կտրականապես դեմ է նստաշրջան անցկացնելուն, իսկ նստաշրջանի անցկացումը ավելի կբորբոքի իրա-

վիճակը: Կտրականապես մերժեցինք հետաձգելու պահանջը: Ֆատեեւն առաջարկեց գոնե 30-ին անցկացնենք: Մտածեցինք, որ, հավանաբար, Ադրբեջանն ուզում է մեզ կանխող քայլ անել, ուստի եւ չհամաձայնվեցինք: Ֆատեեւը ժամանակ խնդրեց Մոսկվայի հետ պայմանավորվելու համար: Ասացինք, որ հայտարարված է օրը, ուստի՝ օրենքի համաձայն էլ կանենք:

Հաջորդ օրը վաղ առավոտյան Պոլյանիչկոյի հրահանգով գորքերը շրջապատեցին քաղկոմի շենքը, սկսեցին ստուգել շրջափակման մեջ հայտնված մարդկանց փաստաթղթերը: Շենքի բոլոր հարկերում զինվորներ կանգնեցրին՝ արգելելով որեւէ մեկին ներս մտնել: Ապա հայտարարեցին, թե իբր շենքը ականապատված է, ու պետք է ականազերծեն: Երեւանից եկող թռիչքները արգելելու համար նույն կերպ հայտարարել էին, թե իբր թռիչքադաշտը ականապատված է: Այդ հաջող փորձը նկատի ունենալով՝ այստեղ շուն բերեցին, սկսեցին դահլիճը խուզարկել, իբր ական են փնտրում: Գիտեին, որ նիստը ժամը 3-ին է հայտարարված: Կրկնակի շրջափակում կազմակերպեցին:

Գեներալ Սաֆոնովը առավոտյան էր եկել ու հայտնել, թե Ադրբեջանի Գերագույն խորհուրդը որոշում է կայացրել, որ նստաշրջանը նպատակահարմար չէ անցկացնել, քանի որ դա ողջ երկրում շղթայական ռեակցիայի առիթ կհանդիսանա: Մենք պատասխանեցինք, որ այստեղ չի գրված, թե արգելվում է, իսկ նպատակահարմարության հետ կապված ասում ենք՝ նպատակահարմար է: Դատախազությանը ապացուցեցինք, որ մեր ձեռնարկը օրինական է, իսկ հանրապետությունը իրավունք չունի այն աննպատակահարմար համարելու: Ասացին՝ արտակարգ դրություն է հայտարարված, մենք էլ պատասխանեցինք, որ արտակարգ իրավիճակը հանրապետությունը չի հայտարարել, ուրեմն եւ իրավունք չունի խառնվելու: Մեկ ժամ հետո ասացին, թե հենց նոր Ադրբեջանի Գերագույն խորհրդից նոր հրահանգ են ստացել, որտեղ գրված է, որ նստաշրջանն արգելվում է: Մենք հասկացանք, որ Պոլյանիչկոն է իր աշխատասենյակում գրում Գերագույն խորհրդի հրահանգները: Մենք ձեւացնում էինք, թե զինվորներն իրոք թույլ չեն տալիս անցկացնել նիստը: Քաղկոմի ապարատը հավաքվել էր առաջին հարկի դահլիճում: Սկսեցին միկրոֆոններ տեղադրել, մաքրել դահլիճը: Իսկ իրականում մեկ ժամ առաջ էին տղաները դուրս եկել քաղկոմի շենքից ու փոքր խմբերով պատգամավորներին քաղխորհրդի շենք ուղարկել: Բանվորական խորհրդի անդամներից մեկը դուրս եկավ զինվորների մոտ եւ կես հայերեն-կես ռուսերեն, սակայն այնպես, որ ռուս զինվորները հասկանան, ասաց.

- Ժողովու՛րդ, սեսիան ինքնական ա սելխոզտեխնիկումի զալումը:

Ժողովրդից մոտ ութսուն հոգի քայլեցին դեպի տեխնիկումը: Զինվորները, կարծելով, թե դրանք պատգամավորներ են, շտապ նստեցին մեքենան եւ ուղեւորվեցին դեպի տեխնիկումի շենքը:

Երբ տեսանք, որ հարյուր ինը պատգամավորներ են գրանցվել, ավելին, քան հարյուր հիսունի երկու երրորդը, սկսվեց նստաշրջանը: Այն նախագահեց ծերակույտի ներկայացուցիչը: Նստաշրջանը որոշեց.

վերականգնել մարզգործկոմի գործունեությունը,

վերականգնել մարզի աշխատանքային ռեժիմը,

կոչ արվեց Ադրբեջանին բոլոր հարցերը որոշել բանակցություններով:

Երբ ավարտել էինք նիստը, դուրս եկանք ու դիմեցինք սպաներին.

- Մեղք են զինվորները, տարեք կերակրեք նրանց:

- Ինչո՞ւ,- հարցրեց սպան:

- Որովհետեւ ավարտել ենք նիստը, ի՞նչ կարիք կա այլեւս...

- Ո՞նց եք անցկացրել:

- Կողքի շենքում:

Զինվորականները վազեցին դեպի քաղխորհրդի շենքը, սակայն արդեն ուշ էր, քանի որ մարդիկ դուրս էին գալիս ուրախ տրամադրությամբ, շնորհավորում իրար:

«Վրեմյա» հեռուստածրագրի լրագրող Սաշա Բարխատովի զրույցը Ռոբերտ Քոչարյանի հետ: Ձայնագրել է Բակուր Կարապետյանը. 22.10.1988 թ., Ստեփանակերտ, «Ղարմետաքս» կոմբինատի հյուրատուն:



Ս. Բարխատով - Ինչպե՞ս կզարգանան իրադարձությունները: Բանակը եւս Մոսկվայի մի մասնիկն է: Նա էլ է խանգարում: Բոլոր դեպքերում՝ չի օգնելու:

Ռ. Քոչարյան - Խեղճ բանակ, հայտնվել է այս իրավիճակում: Ամեն կողմն էլ ձգտում է նշաձողեր դնելով ամրապնդել իր դիրքերը: Հավասարակշռված իրավիճակները դրան են բերում: Բանակը հավասարապես վատ է երկու կողմերի համար: Ու իրավիճակը ինքն իրեն վերածում է Կենտրոնի, բանակի նկատմամբ ատելության:

Ս.Բ. - Բանակը որոշակի գործոն է, որը խանգարում է ինչ-որ ուժերի: Երկու կողմերից փոքր բողոքները կարո՞ղ են պատերազմ առաջացնել:

Ռ.Ք. - Բանակի դուրս բերումը պետք է զուգակցվի բնակչությանը զենք տալուն, ինչը նրա անվտանգությունն ապահովելու խնդիր ունի: Դա զսպող դերակատարում կունենա:

Ս.Բ. - Գլխավորը՝ վերացվի «բեռլինյան պատը»: Ահա, այս կամ այն գործողության ժամանակ չի երեւում նպատակը: Աֆղանստանում այդպես չէր: Բանակի գոյությունն այստեղ անիմաստ է: Այն միայն երրորդ կողմ է երկու թշնամի ուժերի միջեւ: Ինչպե՞ս կզարգանան իրադարձությունները:

Ռ.Ք. - Մեր խնդիրը մենք արդեն լուծել ենք, այսինքն՝ նստաշրջանում մենք ընդունել ենք մեր որոշումը:

Ս.Բ. - Բայց ո՞ւր է փոխզիջողությունը:

Ռ.Ք. - Լեռնային Ղարաբաղի լրիվ անկախությունը ադրբեջանական քաղաքական կառույցներից:

Ս.Բ. - Ինչպե՞ս եք պատկերացնում դրա մաքուր քաղաքական իրականացումը:

Ռ.Ք. - Խնդրեմ՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում չպետք է գործեն Ադրբեջանական ԽՍՀ օրենքները, հողային օրենսգիրքը: Մարզային մեր կառույցները պետք է վերականգնվեն եւ ենթարկվեն Կենտրոնին: Դա էլ հենց փոխզիջումն է:

Ս.Բ. - Հայկական մասի դեմ նման հակազդեցություն կա ադրբեջանական կողմից: Դուք ասացիք հողերի թվաբանական բաժանման մասին, այսինքն՝ Շուշին մոտակա տարիներին հայկական չի դառնա:

Ռ.Ք. - Եթե խոսենք շրջանի մասին, ապա այնտեղ հայերն ավելի շատ են:

Ս.Բ. - Ես նկատի ունեմ սարահարթը: Գոյություն ունի ադրբեջանական գործոնը, ինչպես ձեզ մոտ, անհաշտ են տրամադրված: Մի Ղարաբաղը՝ մյուսի դեմ:

Ռ.Ք. - Ղարաբաղի լրիվ դուրս բերումը հավասար պայմաններ կստեղծի ինչպես հայերի, այնպես էլ ադրբեջանցիների համար: Ու կհամոզվենք, թե ինչքան լավ է համատեղ...

Ս.Բ. - Դա առաջին քայլը կլինի: Բայց դա չի լինելու, որովհետեւ ի սկզբանե նրանք Ղարաբաղը համարում են իրենցը, ու նրանց համար նման քայլն ընկալվում է որպես որոշակի նահանջ:

Ռ.Ք. - Սկզբունքորեն անջատումն արդեն տեղի է ունեցել, ու անհրաժեշտ է այդ գիտակցել: Նրանց դիրքորոշումն արդեն այլ է: Նրանք ունեն Մոսկվայի օրենսդրական օժանդակությունը, նրանք խորհրդային իշխանությունից դուրս՝ իրենց իշխանությունն ունեն:

Ս.Բ. - Բայց այնտեղ կապկանոցին յուրահատուկ պարզ մեխանիզմ է ստեղծված, հասկանո՞ւմ եք մակարդակը:

Ռ.Ք. - Գոյություն ունի մեկ այլ բան եւս. շահերի համընկեցումն է: Մենք հանդիսանում ենք հանգստությունը վրդովողները: Մենք ձգտել ենք սահմանադրական, կայսերական ինչ-որ բան փոփոխել, ու առաջին հակազդեցությունը բացահայտ էր: Մեր դիրքորոշումը ավելի բարդ է, սակայն կձգտենք ինչ-որ բան փոխել: Ստատուս քվոյի պահպանման խնդրում ադրբեջանական կողմի շահերը համընկել են Կենտրոնի շահերին: Այստեղ զգացինք դա: Իսկ այնտեղ Մոսկվայի սարսափն է նմանօրինակ խնդրի լուծումից առաջ սպասվող շղթայական ռեակցիան, կայսրության փլուզումը եւ այլն: Հետո Սումգայիթը... Մեծ եւ փոքր կայսրությունների շահերի համընկնումը... Սակայն դա ժամանակավոր համընկնում է միայն, որը ժամանակավոր դիրքորոշում է մշակել: Այժմ մենք ճաշակում ենք այդ դիրքորոշման հետեւանքները: Երբ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Նիկոլայ Ռիժկովն ուղիղ ասում էր. «Այո՛, մենք սկզբից չգնահատեցինք իրավիճակը», ես խոսել եմ Լիգաչովի հետ, նա էլ է նույնն ասում: Քաղբյուրոյի մյուս անդամներն էլ են ասում նույնը: Բավական օբեկտիվ տպավորու-

թյուններ են ձեւավորվել, իհարկե, տասը ամսվա ուշացումով: Ամենասկզբնական շրջանում ոչ ոք մեզ չէր ասում, թե մենք սխալ ենք: Բայց միշտ ասում էին՝ ահա գոյություն ունի ադրբեջանական գործոնը, «սումգայիթի» կրկնության վտանգը: Ուրեմն՝ ոտքի տակ կտան Հայաստանն, ու խնդիրը կլուծվի: Բայց եւ ասվում էր, որ եթե ճանաչեք երկրում տասնինը նման խնդիրները, ուրեմն պետք է լուծել դրանք: Երկու տարի առաջ ես ասել եմ. «Եթե չլուծեք հարցը, մենք այնպես կանենք, որ խնդիրները կդառնան հիսունը կամ ավելին»: Եթե մեր հարցը չլուծեն, ապա մյուս փոքր ժողովուրդները կլուծեն իրենց խնդիրները:

Ս.Բ. - Դե, աստված նրանց հետ: Մոսկվայի չխառնվելը ձեռնտու է ադրբեջանցիներին: Ի՞նչ անել:

Ռ.Ք. - Իսկ մենք, փետրվարից սկսած, մեր ուղուց չենք շեղվել: Մենք մեր կյանքը կառուցում ենք մեր հասկանալու ունակությանը համապատասխան:

Ս.Բ. - Այլ ճանապարհ չկա:

Ռ.Ք. - Մենք ոչ ոքի վրա չենք հարձակվելու: Անհեթեթություն է մտածելը, թե մենք պատրաստվում ենք հարձակվել Ադրբեջանի վրա, նրանց լցնել Կասպից ծովը: Առողջ դատողությունը հուշում է, որ մենք պաշտպանվող կողմ ենք: Մենք մեր ներքին կյանքը կառուցելու ենք՝ ելնելով այն բանից, որ մենք անկախ ենք:

Ս.Բ. - Ուժի դիրքից ստացվել է այնպես, որ դուք ձեր նման քաղաքականության պատճառով ձեր հարյուր հիսուն հազար բնակչությամբ դատապարտված եք:

Ռ.Ք. - Ինչո՞ւ:

Ս.Բ. - Նման քաղաքականությամբ ինչպե՞ս կարող եք դիմանալ:

Ռ.Ք. - Բայց մենք հեռուն ենք նայում:

Բակուր - Իմիջիայլոց, պատմությունը կրկնվում է: Այդպես էր 1905-ին, 1918-20 թվականներին, երբ Ղարաբաղը պաշարված էր թուրք-ադրբեջանական զորքերով:

Ս.Բ. - Ժամանակակից պայմաններում պաշարումը միանգամայն այլ տեսք ունի:

Ռ.Ք. - Բայց ի՞նչ եք առաջարկում:

Ս.Բ. - Ա՛յ, հետաքրքիր է՝ ի՞նչ կլինի, ո՞վ պետք է օգնի ձեզ:

Ռ.Ք. - Բոլոր դեպքերում՝ մենք Հայաստան ունենք, որից կտրված ենք չորս կիլոմետրանոց խոչընդոտով:

Ս.Բ. - Եթե իրոք բանակը հեռանա, դա կլինի պատերազմ ոչ միայն Ղարաբաղի ու Ադրբեջանի միջեւ, այլ կներքաշվի նաեւ Հայաստանը, քանի որ ձեր եղբայրները չեն թողնի, որ կուլ տան Ղարաբաղը: Բայց պատերազմը կլինի երկար, անհաշտ: Ի վերջո, իրար հետ ընդհանուր

լեզու կգտնեն Հայաստանն ու Ադրբեջանը:

Ռ.Ք. - Հայաստանը թշնամական կողմ չէ: Իսկ Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ հիմա էլ կարելի է ընդհանուր հետաքրքրություններ գտնել:

Ս.Բ. - Ես էլ եմ կարծում, որ կան դրանք:

Ռ.Ք. - Ցավոք սրտի, Ադրբեջանի ժողովակատը, իր առջեւ դնելով առավելագույնին հասնելու խնդիր, այն է՝ Իրանի բուն Ատրպատական-Ազարբայջանի միակցումը այս Ադրբեջանին, իսկ առաջինը Իրանի անբաժանելի հատվածն է, Ղարաբաղի նկատմամբ մի քաղաքականություն է տանում, որ մերժում է իր ծրագրերը: Հավատացած եմ, որ Բաքվում կգտնվեն ուժեր, որոնք կցանկանային լավ հարեւան ունենալ, ոչ թե թշնամի:

Բ. - Արյուն բաց թողնելը չնայած վիրահատական հասկացություն է, սակայն կարող է երկու կողմերի համար ընդունելի իրավիճակ ստեղծել:

Ռ.Ք. - Բոլոր դեպքերում՝ այստեղ հարձակվող կողմ չի լինելու:

Ս.Բ. - Նման պատերազմում դա կորցնում է իր իմաստը:

Ռ.Ք. - Մենք հենվում ենք ադրբեջանական քաղաքական գործիչների՝ առողջ դատողությամբ արված գնահատականին: Մենք ձգտում ենք սեփական անկախությանը: Ադրբեջանն այն հանրապետությունն է, որը բռնի կերպով պահում է մեզ սեփական պետականության սահմաններում:

Բակուր - Բայց պատերազմը լինելու է Լեռնային Ղարաբաղի տարածքում, եւ ոչ թե Բաքվի կողմերում:

Ռ.Ք. - Այսօր պետք է հստակ որոշել՝ ով է ագրեսորը: Այժմ ամեն ինչ պարզ է: Եթե նրանք խոսում են ինքնավարության մասին, ապա առաջնային է այն հանգամանքը, որ հողի տերը նա է, ով ապրում է այնտեղ:

Ս.Բ. - Սահմանազատումներ կլինեն:

Ռ.Ք. - Այդ դեպքում դեպի խորքը նայենք: Ադրբեջանական առաջին ընտանիքը Խոջալուում հայտնվել է միայն 1948 թվականին:

Ս.Բ. - Պատմությունը միշտ էլ...

Ռ.Ք. - Այդ դեպքում կա եւ բռնազավթում, որը ժամանակային սահմանափակում չունի:

Ս.Բ. - Պատմական տեղեկանքներով շատ բանի չես հասնի:

Պատմում է Գրիգոր Գրիգորյանը: Զրույցը վարեց Բակուր Կարապետյանը. 26.09.2005, Երեւան: Մուտքագրեց Անահիտ Ասատրյանը:

Գ.Գ. - Ծնունդով Ղարաբաղից եմ, 1947 թվականից ապրում եմ Երեւանում, այժմ թոշակառու եմ:

Ղարաբաղյան շարժման պատմությունը չպետք է սկսել 1988 թվականից, չպետք է կապել Սումգայիթի, Գանձակի դեպքերի հետ:

Բ. - Ձեր աշխատանքի հետ կապված առաջին անգամ ե՞րբ եք առնչվել արցախյան խնդրին:

Գ.Գ. - Արցախյան եւ, ընդհանրապես, Ադրբեջանի հետ հակամարտություններին վերաբերող խնդիրներին առնչվել եմ 1980-ականների սկզբին, երբ ադրբեջանցիները ամեն ջանք թափում էին ապացուցելու, որ որոշ հողատարածքներ ոչ թե հայկական են, այլ հայերը ժամանակին բռնազավթել են դրանք: Իջեւանում որոշ բերրի հողատարածքներ, որոնք հայերը ջրի սակավության պատճառով չեն մշակել, նրանք են վերցրել, սահմանը խորացնելով հասել մինչեւ Իջեւանի Ձախարլի գյուղը: Նույն քաղաքականությունը վարում էին նաեւ Նախիջեւանի կողմից: Այդ ամենն ավարտվեց նրանով, որ Մոսկվայից հանձնաժողով եկավ, եւ շատ հողատարածքներ վերադարձվեցին Հայաստանին: Ինչպե՞ս էին դա որոշում. Խորհրդային Միության հանրապետությունների սահմանները գծելիս խորը փոսեր են փորել, մեջը փայտածուխ լցրել: Դա էր սահմանը: Քարտեզները հանում էին, փայտածուխով սահմանները ճշտում: Հետո մենք շա՛տ բարի էինք: Վրաստանին էլ ենք շատ հողատարածքներ նվիրել, հայաբնակ գյուղեր տվել հատկապես Բագրատաշենի շրջանում, իբրեւ թե դրանք տնտեսապես ավելի կապված են Վրաստանի, քան թե Հայաստանի հետ: Ձախարլիի շրջանում Ղազախի ջրամբարը մենք կամավոր նվիրեցինք՝ հանուն «եղբայրության բարեկամության»: Ճիշտ է, որոշ հողակտորներ դրա փոխարեն հյուսիսային լեռնային շրջաններում մենք ստացանք, բայց դա շատ քիչ էր մեր տվածի դիմաց: Բավական չէ մեր ամբողջ ջրերը գնում էին Ադրբեջան, դեռ մեր սեփական ջրամբարից էլ մինչեւ հիմա չենք կարողանում օգտվել: Տասներկու հեկտար հողատարածք էլ Երասխի հատվածում Ալիեւի խնդրանքով անհատույց նվիրեցինք, երբ նրանք որոշեցին իրենց գինու գործարանը կառուցել մեր գինու կոմբինատի դիմաց:

Բ. - Դուք տեղյա՞կ եք, որ դա ոսկով ծախեցին:

Գ.Գ. - Թե ինչով ծախեցին, չգիտեմ, բայց Ձախարլիի համաձայնագիրը կնքեցին անհայտ պատճառներով: Ձեզ երեւի Ջեմմա Անանյանը կկարողանա պատասխան տալ, պարզաբանել, թե ինչու պայմանագիրը կնքելիս չեն նշվել ժամկետները, թե երբ նրանք կազատեն Ձախարլուն, ու հայ բնակչությունը կկարողանա տեղափոխվել այնտեղ: Ադրբեջանն էլ օգտվում է այդ փաստից: Ասում են՝ ժամկետ չկա, երբ կվերջացնենք՝ այդ ժամանակ: Մեր տված այն տասներկու հեկտար տարածքի մի մասը, ճիշտ է, ճահճուտներ էին, բայց հիմնականում լավ հողեր էին: Գործարանը կառուցեցին հենց սահմանին, երբ տնտեսական արդյունավետության առումով ավելի հարմար էր իրենց դաշտավայրի կենտրոնում կառուցելը: Սրանք պատմական սխալներ են, որոնք մենք թույլ ենք տվել: Մեր բոլոր ավտոճանապարհները կառուցել ենք Ադրբեջանի հետ սահմանի գոտում: Վերցնենք, օրինակ, Իջեւան - Բերդ, Իջեւան - Նոյեմբերյան ճանապարհները: Քարտեզին նայելիս երեւում է, որ ադրբեջանական հողով են գնում. տարածքը Ադրբեջանինն է, սպասարկումը՝ մերը: Դա, իհարկե, պատահական չէր, նրանք խելամիտ քաղաքականություն էին վարում, իսկ մեր իշխանություններին թվում էր, թե գոյություն ունեցող գաղափարախոսությունը հավերժ է: Սերունդների առջեւ սահմանների հետ կապված դժվար լուծելի հարցեր են դրվել: Վրաստանում բանակցությունների ժամանակ մեր առաջին պատվիրակությանը շատ սառն ընդունեցին: Մոտ ութ տարի առաջ էր, երբ առաջին պետական հանձնաժողովը ստեղծվեց: Մենք այն ժամանակ արդեն սահմանապահ զորքեր ունեինք: Մի ակադեմիկոս պնդում էր, որ պետք է հիմք ընդունել 1930 թվականի պայմանագիրը: Նա պատմությունը շատ լավ գիտեր, շատ խորամանկ դիվանագետ էր: Ասացի. «Եկեք հաշվի առնենք, թե ինչպես է դա եղել, ինչպես ենք տվել, ինչ պատճառներով է այդ դրությունը շարունակ ձգվել: Մենք ձեզ հետ չենք վիճում, բայց պետք է ընդունել այն պատմական հիմքը, որ դրանք հայկական հողեր են եղել, Լոռու մարզի մի մասն են կազմել, նոր միայն կընդունենք այն սահմանը, որ Խորհրդային Միության ժամանակ է գծվել»: Չհամաձայնվեցին: Քարտեզներ բերեցին, բայց ոչ թե ավելի վաղ շրջանի՝ ասենք 1920 թվականի, այլ 1930 թվականի պայմանագրով գծված սահմանները: Այստեղից ուրիշ հարց է ծագում՝ կապված մեր ամառային արոտավայրերի հետ: Խորացող

հակամարտությունը ժողովրդի մեջ նստվածք էր տալիս, եւ ինչ-որ տեղ մտածում էին, որ մենք էլ ենք մեղավոր: Ադրբեջանում գերակշռում են տափաստանները, իսկ մեր սահմանի երկայնքի մեծ մասով ալպյան գոտիներ են ձգվում: Հիմնական արոտավայրերը Սիսիանի հատվածում են, այնտեղ, որտեղ մոտենում են Սեւանի եւ Զանգեզուրի լեռնաշղթաները, Ջերմուկից մինչեւ Քյալբաջարի սահմանի գլուխը: Իրենց անասունը Զանգելանից ոտքով քշում, հասցնում էին այստեղ, ձրի արոտավայրեր էին իրենց համար: Մենք էլ «եղբայրաբար» տալիս էինք: Կոլխոզի նախագահներն էլ մեծ օգուտ ունեին դրանից: Փոխարենը ոչխար, ցորեն կամ մի ուրիշ բան էին վերցնում՝ մեծ մասը իրենց գրպանը դնելով: Մենք էլ ենք մեղավոր, կարելի էր գոնե ինչ-որ պայմանագրի տեսքով անել: Իսկ արդյունքում կռիվներ, բախումներ էին շատ լինում, նույնիսկ՝ զոհեր: Նման մի դեպք Խոզնավարի արոտավայրում եղավ, ադրբեջանցիները չորս հայ հովիվի սպանեցին: Խորհրդային իշխանության շրջանն էր դեռ, մենք պատասխանը տվեցինք, բայց հարցը դրանում չէ: Մի դեպք էլ Գորիսի Խնձորեսկ եւ Տեղ գյուղերի արանքում գտնվող Թալակի ձորում եղավ: Ադրբեջանցիները, որ հմուտ անասնագողեր են, այդտեղ կռվի ժամանակ հինգ հոգու մերոնցից սպանեցին: Նման դեպքերը հաճախ էին կրկնվում: Միշտ խմբեր էինք ուղարկում, որպեսզի գնան, հաշտեցնեն: Մինքեենդի գործողությունը երբ իրականացվեց, մենք երեսունհինգ հազար գլուխ հաշվառված անասուն ունեինք, որ ներմուծվել էր Հայաստան: Դատախազությունից պահանջեցինք ցուցակները, որ դատական գործ էր հարուցվել ադրբեջանցիների կողմից տարված անասունների վերաբերյալ: Ամբողջ անասունը նրանք բաժանել էին իրենց կոլխոզների միջեւ: Տեղական իշխանություններից պահանջեցինք ցուցակը: Բոլոր թվերը կրկնակի, եռակի ուռճացված էին: Բայց քանի որ քրեական գործ էր հարուցվել, դրա միջոցով իրական թվերը կարողացանք հայտնաբերել: Դա նախապատմություն ունի, որը ոչ մի տեղ գրված չէ, ես առաջինը ձեզ եմ ասում: Գյուղատնտեսության մեջ մերոնք չէին կարողանում բավարար քանակությամբ անասնակեր կուտակել: Ամռանը ադրբեջանցիներն էին իրենց անասուններին բերում մեր արոտավայրերը, ձմռանը հայերն էին անասուններին տանում նրանց դաշտավայրերը: Պետականությունը վերականգնելուց հետո այդ գործընթացը կարգավորման կարիք ուներ, բայց այդպես էլ օրենքի ուժ չստացավ, չկարգավորվեց: Մենք չէինք գնում, բայց ադրբեջանցիները գալիս էին: Մենք կարիք չէինք զգում, որովհետեւ գյուղատնտեսության հիմքերը ուժեղանում էին, կերի հարցը լուծված էր: Հակամարտությունը գնում էր, բայց ոչ մի ղեկավար պատասխանատվություն չէր վերցնում՝ կարգավորելու այդ հարցը: Այս հանգամանքը եւ հողային տարածքների պայքարը հիմնական հարցերն էին, որոնք կուտակվել էին: Երբ ղարաբաղյան շարժումն իր գագաթնակետին էր, պետական մակարդակով հարց չի դրվել, թող ոչ ոք իր վրա չվերցնի: Անտոն Քոչինյանի օրոք էր, նա էր կառավարության նախագահը, ղարաբաղյան հարցի լուծման ուղղությամբ փորձեր արվեցին: Թեեւ Գրիգորի Հարությունյանի ժամանակվանից սկսվեց, հետո շարունակվեց: Վերջացավ նրանով, որ ամերիկյան բազաներ տեղակայեցին Թուրքիայում, խաբեցին, խափանեցին, ինչպես որ Գորբաչովը խաբեց: Նախիջեւանում խնդիրն ավելի հեշտ էր, այնտեղից հեշտ էր Հայաստանի Հանրապետություն անցնելը, մուտքը մոտիկ էր, իսկ Ղարաբաղից՝ դժվար: Ղարաբաղից առողջ ուժերը եկել էին Երեւանում սովորելու եւ այլեւս չեն վերադարձել: Ադրբեջանից կենտկոմի մակարդակով մեզ այսպիսի մի առաջարկ էին արել, որ Ստեփանակերտում իրենք համալսարան կհիմնեն, թող Երեւանից դասախոսներ գան եւ դասավանդեն: Իրենք էլ գիտեին, որ ոչ ոք չի գնալու: Եւ այդպես էլ եղավ: Կային մարդիկ, ովքեր պատրաստակամություն հայտնեցին գնալ, դասախոսություններ կարդալ եւ վերադառնալ, բայց մնալու մասին խոսք չկար, ղարաբաղցիները նույնիսկ չէին մնում: Ադրբեջանցիները համալսարանը բացեցին, իրենք էլ սովորեցին: Նույնը եթե հիմա Ջավախքի համար ասեն, դարձյալ ոչ ոք չի գնա այնտեղ աշխատի: Հայրենասիրական զգացումների այդպիսի պոռթկումը Ղարաբաղյան շարժման հետ առաջ եկավ, եւ աստված տա՝ չմարի, քանզի այդ հարցին այլ կերպ հնարավոր չէ մոտենալ: Ես միայն մի քանի դրվագներ կներկայացնեմ, ամբողջին տեղյակ չեմ: Երբ շարժումը սկսվեց, այդ երեք օղակների, ղեկավար կազմի մեջ հայրենասերներ կային, «անդրանիկներ», «նժդեհներ» կային, բայց ձեռքերը կապված էին, ոչինչ չէին կարող անել: Կենտկոմը, շրջկոմի քարտուղարը, բոլորն էլ վախենում էին իրենց պաշտոնների համար: Հաշվի չառնել այդ հանգամանքը, ցույց չտալ, թե իրենք կողմնակից էին, որ շարժումը ճիշտ է, չի լինի: Կային մարդիկ, ովքեր իրենց վարքագծով ամեն ինչ անում էին, որ չերեւալով՝ գործընթացը առաջ գնար: Այդպիսի քաղաքականություն էր վարում Մովսիսյանը: Էլի մարդիկ կային նրանց խմբում: Ամենածանրը իրավապահ մարմինների կացությունն էր, նրանք կենտկոմին էլ էին ենթարկվում: Երբ ղարաբաղյան շարժումով վտանգ էր սպառնում նախկին իշխանությանը, ներքին գործերի նախարարների ռուս տեղակալներ նշանակեցին Հայաստանում եւ Ադրբեջանում: Ազգային անվտանգության համակարգում եւս առաջին տեղակալը ռուս էր: Ուզում էին ամբողջ տեղեկատվական համակարգը իրենց ձեռքը վերցնել, որպեսզի ինֆորմացիան զտեն, նոր ներկա-

յացնեն վերեւներին: Նույնիսկ թվերի մեջ էլ կար վիճաբանություն, թ
քանի հազար է դուրս եկել: Մարդիկ կային, որոնք ուզում էին այդ թվե
րը պակասեցնել, մարդիկ կային, որոնք պայքարում էին: Ավելի լավ
ավելին տուր, քան թե պակաս, ինչու՞ ես պակաս տալիս: Եթե պակա
տային իրական վիճակում, կհարցնեին, թե՝ ինչո՞վ եք դուք այդտե
զբաղված:

Բ. - Դուք այդ ժամանակ ՊԱԿ-ում էի՞ք աշխատում:

Գ.Գ. - Ես այդ շրջանում ոչ թե ՊԱԿ-ում, այլ ներքին գործերի հա
մակարգում էի աշխատում: Իսկ երբ տեղափոխվեցի անվտանգության
կոմիտե, նախորդ շրջանի գործունեությանը վերաբերող նյութերին չե
ծանոթացել: ՊԱԿ-ը եւս նույն կացության մեջ է եղել: Եկան, խփեցին
փակեցին: Վեց ամիս այդ լուրջ, կարեւոր մարմինը չի աշխատել: Ինչ
պե՞ս կարելի էր նման որոշում կայացնել: Այդ ժամանակվա բռնադատ
վածներից ոչ ոք չի կարող ասել, թե ՊԱԿ-ը նրանց հանդեպ բռնություն
է գործադրել, պարտադրել, որ որեւէ ցուցմունք տան: Ես վստահեց
նում եմ, որ նման բան չի եղել: Նույնիսկ Պարույր Հայրիկյանը, որ
այդքան խոսում է, մեղադրում, ՊԱԿ-ի հասցեին ոչինչ չի ասում
Ներքին գործերի նախարարությունը հենց առաջին օրերից անցավ
շարժման կողմը: Նախարարը Հայկազ Շահինյանն էր, ես տեղակալ
էի: Երբ Աբովյանի գործարանում հավաքվեցին՝ ցուցապաստառներով
ամեն ինչ նախապատրաստած, ինձ ուղարկեցին այնտեղ պահպանել
լու հասարակական կարգը: Եկավ քաղկոմի քարտուղար Սահակյանը
հանձնարարականով՝ այնպես անել, որ ամբոխը չշարժվի դեպի Երեւ
ան: Ինձ ասացին, որ ես իմ գլխով եմ պատասխանատու: Պատասխա
նեցի, որ ես միայն անկարգությունները կանխելու գործառույթ ունեմ
այլ ոչ թե հավաքի ուղղության: Բոլորս էլ հայ ենք, արյուն թափելու
կարիք չկա: Զանգեցի Հայկազ Սրապիոնիչին եւ ներկայացրի իմ բռ
նած դիրքը: Նա էլ հավանություն տվեց, հանձնարարրեց, որ նույն
ոգով շարունակեմ: Օրենքը ժողովրդի կողմն էր, եւ ոչ ոք չի կարող
ասել, թե ՆԳՆ-ն ամբողջ հանրապետության տարածքում անօրինա
կան գործողություններ է արել:

Երբ պարետային ժամ մտցվեց երկրում, պարետները ներմուծված
զորքերի հրամանատարական կազմից էին: Երբ տեսանք, որ ձերբա
կալությունները օրենքի խախտումներով են ուղեկցվում, անհիմն
երեսունօրյա կալանք էին նշանակում, մեր նախարարությունը 7-ր
բանակի եւ այդ զորքերի հրամանատարներին խորհրդակցության
հրավիրեց: Արդյունքում այն բռնությունները, որ նրանք գործում էին
Վրաստանում եւ Ադրբեջանում, մեզ մոտ տեղի չունեցան: Մեկը չի ու
զու՞մ մտածել, թե ինչու տեղի չունեցան: Պարիտետային սկզբունք գո-

ություն ուներ: Հայաստանին պատժում ես, Ադրբեջանին էլ պատժիր:
Միայն Հայաստանին կամ միայն Ադրբեջանին՝ չի կարելի: Նախիջեւա-
նից Մեղրի տանող ճանապարհին մի փոքր կամուրջ կա, որտեղ մեր
ֆիդայի տղաները անհաջող պայթյուն կազմակերպեցին: «Լոկոմոտի-
վը» շուռ եկավ, բայց զոհեր չեղան: Քննություն կատարեցին պարիտե-
տային սկզբունքով: Այդ ժամանակ երկաթգծի այդ տարածքը՝ 48,2
կիլոմետր երկարությամբ, Նախիջեւանի ոստիկանության հսկողու-
թյան տակ էր: Ահագին խնդիրներ ծագեցին, գնացինք Մոսկվա՝ ԽՍՀՄ
ՆԳ նախարար Բակատինի մոտ: Ինչպես կարող էին Հայաստանի տա-
րածքում, այն էլ Իրանի հետ սահմանակից շրջանում, Ադրբեջանի հս-
կողությանը հանձնել: Նույնպիսի քաղաքականություն էին վարում
Երասխավանի հատվածում: Հիմա Թուրքիան հարց է դնում. սահմա-
նապահ կոմիսարական աշխատանքների կազմակերպումը ինչո՞ւ
պետք է Ռուսաստանին տրվի: Մենք ներկայացուցիչ ունենք այնտեղ:
Նրանք ասում են՝ մենք ոչ մի փաստաթուղթ չենք ստորագրում, մենք
Հայաստանի հետ գործ ունենք: Սրանք լուրջ դիվանագիտական հար-
ցեր են: Այդ հարցը անվերջ ձգձգվում է: Հարցեր շատ են կուտակվել:
Կգա սերունդ, որն այդ հարցերով կզբաղվի: Հնում տարեգիրներ կա-
յին, որոնք գրանցում էին պատմական փաստերը: Հիմա շատերը գր-
քեր են հրապարակում, ու մի մեծ խառնաշփոթ է տեղի ունենում: Հի-
մա կողմնորոշման խնդիրն է: Օրինակ՝ երբ կենտկոմի հանձնաժողովը
ԽՄԿԿ ԿԿ քարտուղար, Քաղբյուրոյի անդամ Յակովլեւի գլխավորու-
թյամբ Հայաստան էր եկել, իսկ ավանտյուրիստ Լիգաչովը Ադրբեջան
էր գնացել, Դիլանյանը ինձ կանչեց եւ ասաց, որ Յակովլեւն ուզում է
ժողովրդի հետ հանդիպել, կարո՞ղ եմ նրա անվտանգությունն ապա-
հովել: Յակովլեւն ուզում էր անձամբ խոսել ժողովրդի հետ: Ակադեմի-
այի մոտ գրախանութ կար, որի մոտ էլ հանդիպումը պետք է կայա-
նար: Ասացի. «Թողեք գնամ խորհրդակցեմ, նոր վերադառնամ»: Հան-
դիպեցի Վաչե Սարուխանյանին: Ասացի. «Ես չեմ ուզում միլիցիայի
հետ բախում լինի: Եթե դու կարող ես մի շղթա ստեղծել, որի միջոցով
անցկացնենք ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարին՝ խնդրեմ: Եթե մի բան
լինի, Լիգաչովը, մյուսները չեն ների ու մեծ արյուն կլինի»: Հա-
մաձայնվեց: Գնացի եւ ասացի, որ երաշխավորում են անվտանգու-
թյունը: Յակովլեւը ավելի մեղմ քաղաքականություն էր վարում: Ան-
ձամբ պատասխանատվություն չէր կրում դրա համար: Սակայն լավ
էր, որ այդ հանդիպումը չկայացավ: Այդտեղ էր, որ Հայաստանի կոմ-
կուսի կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը սխալ քայլ
կատարեց: Կողքին կանգնած էի: Ձեռքը տարավ գրպանը, ետ շրջեց,
թե՝ «Ղարաբաղը ջեբումս ա՞, որ տամ ձեզ, ո՞ւ ր ա»: Դեմիրճյանը քիչ

գործ չի արել Հայաստանի համար: Կենտկոմի աշխատողների մի զանգված Ղարաբաղի անունը չէր ուզում լսել, մարդիկ կային, ովքեր նույնիսկ Ղարաբաղի տեղը չգիտեին:

Հայրս 1947 թվականին անձամբ զեկուցագիր է ներկայացրել՝ Հայաստանի Հանրապետություն տեղափոխվելու համար: Նա ուզում էր, որ իր երեխաները այստեղ մեծանան: Այսինքն՝ Ղարաբաղից տեղափոխվելու ձգտումը մեծ էր: Իսկ հակառակ պրոցեսը չկար:

Շամշադինի Բերդ քաղաքի վերեւում մի հողատարածք կա: Թուրքերը մահացածներին ոչ թե գյուղ էին տանում թաղելու, այլ յայլաներում էին գերեզմանոցը սարքում, որ հետո ասեին՝ այս տեղը մերն է: Իջեւանում՝ Ջախարլիի մոտ՝ դեպի Ադրբեջան գնացող մասում, արաբական արշավանքներից մնացած գերեզմանոց կա, որ թուրքերը իրենց են վերագրել, սահմանի գլխին է հենց, մի մասը մեր տարածքում է, մի մասը՝ նրանց, բայց նրանք ավելի խորամանկ են: Մի դրվագ էլ ասեմ, որը ոչ մի տեղ գրված չէ: 1924 թվականին Ադրբեջանի Գերագույն խորհուրդը որոշում է կայացնում Նյուվադին տալ Հայաստանին՝ որպես «եղբայրական» օգնություն. այդ փաստաթուղթը, քարտեզը կան: Դա զուտ ադրբեջանաբնակ ամենամեծ գյուղերից էր: Նրանք շատ հեռատես քաղաքականություն էին վարում: Գենոֆոնդը սկսեցին աստիճանաբար փոխել: Եւ այնպես ստացվեց, որ Մեղրիի շրջանում ադրբեջանցիների թիվն ավելացավ: Վտանգն անցնում է Վարդենիսի, Ամասիայի շրջաններ: Ադրբեջանցիների մեջ ծննդաբերության աճը ավելի բարձր էր, եւ բնակչության քանակի տոկոսային հարաբերությունը գնալով փոխվում էր: Երբ ղարաբաղյան հակամարտությունը սկսվեց, երկաթգծի նշանակությունը մեծացավ, մոտ երկուսուկես տարի ադրբեջանցիները Նյուվադին վերցրին իրենց ձեռքը՝ շնորհիվ ռուսական բանակի զորքերի, որոնք միայն տասնմեկ զրահամեքենա ունեին այնտեղ: Մենք օպերացիա անցկացրինք, որը ես էի ղեկավարում, եւ ռուսները հասկացան, որ իրենք ավելորդ են այստեղ: Ռուսները «լավ խաղեր էին տալիս» եւ ոչ մի կոնֆլիկտային իրավիճակի ժամանակ չեն միջամտել: Իջեւանի ողջ սահմանագոտում ես եմ սովետական զորքերը տեղադրել, երբ ֆիդայիներին ետ էին քաշել: Բայց իրականում ֆիդայիներին մենք խորքի գյուղերում էինք պահում եւ տեղական իշխանությանն էլ պատվիրում էի նրանց լավ պահել, որովհետեւ ոչ մի երաշխիք չկար, որ այդ զորքերը դիրքերը չեն թողնի եւ հեռանան: Ամբողջ Սյունիքի զանգվածում դարձյալ զորքերին ես եմ տեղադրել՝ սկսած Սիսիանից մինչեւ Ղափանի Ներքին հանդ գյուղը: Եվ ոչ մի հույս չկար, որ նրանք կարող են այդտեղ դիմակայել կամ հանգցնել: Դա իր կանխարգելիչ նշանակությունը ունեցավ: Վլադիմիր Մովսիսյանն

ասաց, որ Կենտրոնն առաջարկում է տասը կիլոմետրանոց տարածք բացել, որպեսզի իրենք կարողանան զորքը մտցնել: Այսինքն՝ սահմանից հինգ կիլոմետր մենք ենք ետ քաշվում, հինգ կիլոմետր՝ ազերիները: Երբ մեր հաշվարկները կատարեցինք, ուղիղ գծով գծեցինք, այդպես ավելի կարճ էր, տեսանք, որ ամենաշատ բնակչությունը հենց սահմանամերձ գոտում է, քանի որ ճանապարհները, երկաթգիծը այդտեղով էին անցնում: Այն հատվածներում, որտեղ բնակչություն չկար, մենք այդ հինգ կիլոմետր տարածքը ապահովեցինք: Բանակցությունները բավական երկար տեւեցին, եւ այդ ընթացքում մեր ֆիդայական խմբերն են պահել սահմանը: Ճիշտ է, միմյանց հետ չեն համագործակցել, բայց յուրաքանչյուրը պահպանելու իր տարածքն է ունեցել: Բողոքներ եղել են, բայց իրենց հիմնական խնդիրը տղաները կատարել են: Ադրբեջանցիները համաձայնվեցին, նրանք կորուստներ էին ունենում միայն Թովուզի շրջանում՝ Շամշադինի մոտ, մեր գյուղերը հավարյա կպած էին իրար: Մենք էլ էինք շահագրգռված, որ այնտեղ կրակ չլինի, նրանք էլ: Մենք այդպես էլ չընդունեցինք: Կենտկոմը հաստատեց Մովսիսյանի ներկայացրածը: Ուշացումով տեսնելով, որ Հայաստանը կորցնում են՝ համաձայնվեցին, որ զորքեր մտցնենք: Երեք հարյուր գինվոր մենք տեղակայեցինք Վարդենիսում: 1988 թվականի նոյեմբերից զորքը այնտեղ էր, ու երկու ամիս մնացի այնտեղ: Ես առաջին պարետն եմ եղել այնտեղ: Հետագայում Մեղրիի պարետն եմ եղել: Պարետ մնացի մինչեւ Ադրբեջանից բողոք հղեցին՝ իբր ես պարետային ժամ չեմ մտցնում, իսկ իրենք մտցնում են: Երբ Սաֆոնովը եկավ եւ Լաչինում հանդիպում կազմակերպեցին, մեզ զրահատեխնիկայով տարան, իջեցրին Լաչինի կենտրոնում: Ես Լաչինը լավ գիտեի: Հետո ասացին. «Գիտե՞ք, մենք սխալվել ենք, պարզվում է՝ նրանք ներքեւում են ձեզ սպասում»: Ժողովուրդը հավաքված էր: Մենք ութ հոգով էինք: Տղաներին ասացի՝ առաջ շարժվենք: Ես ադրբեջաներեն գիտեմ, մի կին գոռում էր, պրովոկացիա էր: Մոսկվայից էր ներկայացուցիչ եկել, Սաֆոնովն էր այնտեղ, որն արդեն հատուկ շրջանի պարետն էր: Իմ կողքում ասացի. «Ինչու՞ եք մտցրել պարետային ժամը: Այն գործում է, որպեսզի հանցագործություններ տեղի չունենան, հասարակական կարգը պահպանվի, առանց համարների մեքենաները չերթեւեկեն, վենքի փոխադրում չլինի»: Ներկայացրի նաեւ վիճակագրական տվյալները, որ Գորիսի շրջանում նվազել են հանցագործությունները: Համոզեցի: Կենտկոմից թույլ տվեցին, որ երեք ամիս եւս շարունակեմ այնտեղ աշխատել, ասացին. «Թող շարունակի իր գործն անել, մինչեւ այդ ռուսին մեզնով անենք»: Դրանից հետո միայն՝ ուշացումով մեր զորքերը տեղակայեցինք, իսկ ադրբեջանցիները ոչ միայն իրենց զոր-

քերն էին բերել, այլեւ խրամատներ էին փորել, ամեն ինչ արել էին եւ անընդհատ նույն զորքերի հսկողության տակ ռմբակոծում էին: Սաֆոնովի հրամանով մեր հակակարկտային համակարգը Իջեւանի, Շամշադինի, Զանգեզուրի շրջաններում ռուսները վերացրին: Մենք բավական լուրջ հակակարկտային համակարգ ունեինք: Մինչեւ հիմա ջարդված, թափված են, ոչ ոք չի տանում այդ ծանր երկաթը: Հիմա կարող է ուղարկեն Պարսկաստան: Այդ հարցը հետաքրքիր հարց էր, որը այսպիսի լուծում ստացավ: Այսինքն՝ Հայաստանը, մեր կենտրոնական կոմիտեն ընդառաջ չգնաց: Պարզ է, որ շարժման հետ կոնտակտի մեջ էին, բայց այդ բնագավառում ես չեմ մասնակցել: Վերցնենք Մեղրիի հատվածի երկաթգծի խնդիրը: Կենտրոնական իշխանության բռնությունների վերջին արտահայտությունը Իջեւանի դեպքերն էին: Սումգայիթի դեպքերից հետո Դաշքեսանի, Զարդախլուի, Շամխորի, Գանձակի բնակչությունը փախավ Հայաստան՝ ջարդոտված, փշրված: Ովքեր շուտ էին եկել, շատ ավելի ապահով էին տեղ հասել, իրենց ունեցվածքն էլ էին բերել: Բայց Գանձակի, Բաքվի ջարդերից հետո հայերը լրիվ մերկ են եկել: Երկու փուլ կա: Առաջին փուլը՝ խաղաղ գնացել են: Օրինակ՝ Վարդենիսի ադրբեջանցիներին խաղաղ ճանապարհել ենք, այնպիսիք կային, որ անգամ անասունները քշել, իրենց հետ տարել էին: Այնտեղից եկածները որ ամեն ինչ պատմեցին, Լոռիի շրջանում բախումներ տեղի ունեցան, ավտոշարասյան վրա էին հարձակվել, բավական զոհեր եղան ադրբեջանցիների կողմից: Այս միջադեպի առիթով կենտկոմի նիստ հրավիրեցին հունվարի 14-ին: Հիմնական մեղադրանքներն ուղղված էին Ջեմմա Անանյանին, շրջսովետի նախագահին, թե իբր ոնց է եղել, որ մենք չենք ապահովել: Դա կենտրոնական կոմիտեի վերջին փորձն էր ցույց տալու իր ուժը, ինչը չստացվեց: Քննարկեցին, հարց դրվեց՝ կուսակցությունից հեռացնել: Շրջխորհրդի նախագահին կուսակցությունից հեռացրին, Ջեմմային խիստ նկատողություն հայտարարեցին: Ես այդ ժամանակ Լենինականում էի, նշանակված էի աղետի գոտու շտաբի պետ: Կենտկոմից շտապ կանչեցին: Գիշերը կենտկոմի բաժնի վարիչ Մավր Դանիելյանը զանգեց եւ ասաց, որ Մոսկվայից՝ ԿԱՏԵԿա-ից եկել, ստուգումներ են անցկացնում, իրենք պաշտոնական նկատողություն կանեն, ու խնդրեց, որ ելույթ չունենամ: Ասացի. «Ինչի՞ համար, ես չեմ հասկանում ձեզ, այդ ինչե՞ր եք անում»: Արդարացավ, թե պարիտետային սկզբունք է. այն, ինչ որ այնտեղ է եղել, ուզում են մի խումբ մարդկանց պատժել, Հայաստանն էլ պետք է պատժի, կարծեն, թե՝ հա, հենա մենք զոհ ենք: Նիստը եղավ: Նիստից առաջ նախնական հավաքեցին: Հետո խոսեցին, հիշեցին, թե ով որտեղ է եղել: Ես Վարդենիսում եմ եղել երկուս ու կես ամիս եւ ընդհանրապես չպետք է պատասխանատվություն կրեի, բայց նկատողության արժանացա: Շատ խիստ ելույթ ունեցավ Ջեմման, քարը քարին չթողեց, ավելացնելու ոչինչ չմնաց: Նրանք ոչ մի առիթ բաց չեն թողել ցույց տալու, որ խորհրդային իշխանությունը կա՝ «նստեք ձեր տեղը եւ լռեք»: Այդ նույն քաղաքականությունը սերմանում էին նաեւ զորքի մեջ. Եւ մեր ժողովրդի վարքագծի շնորհիվ էր, որ մենք արյունահեղություն չունեցանք: Հիմնականում Ներքին գործերի նախարարության աշխատանքի շնորհիվ մեծ կոնֆլիկտային իրավիճակներ չեն ստեղծվել:

Գերագույն խորհրդի նիստերը Ամերիկյան համալսարանի շենքում էին անցկացվում: Այդ ժամանակ Մոսկվայից հրաման եկավ բռնի ուժով ցրել ցուցարարներին: Քաղաքային վարչության պետը Սուրեն Աբրահամյանն էր: Խնդրեցի նրան կանչել Համբարձում Գալստյանին: Շարժման տղաներից ամենավստահելին նա էր եւ միայն նա կարող էր ճիշտ կողմնորոշվել տվյալ իրավիճակում: Ասացի նրան, որ ինձ հարկադրում են կիրառել հրամանը, բայց ես դա չեմ կարող անել, իրավունք չունեմ, այնտեղ հղի կանայք, երեխաներ կան, օրենքը արգելում է նման դեպքերը: Ասացի. «Տես, ես ոնց ասեմ, խնդրում եմ չհակաճառես, տղաները կանեն այն, ինչ պետք է անեն, այլ կերպ հնարավոր չէ»: Այդ ժամանակ զանգեց ՀԽՍՀ ՆԳ նախարարի ռուս տեղակալ Երեմինը թե. «Գրիգոր Գարեգինովիչ, դուք ասում եք, որ այնտեղ այնքան ժողովուրդ է նստած, իսկ ես ինֆորմացիա ունեմ, որ այնտեղ ոչ ոք չկա»: Փաստորեն կային մարդիկ, որոնք ինֆորմացիան ժամանակին տեղ էին հասցնում: Նրանց հիմնական մասը գնաց Մոսկվա, եւ բոլորին տեղավորեցին: Պատասխանեցի. «Այո՛, ցուրտ է, եւ մարդիկ ցրվել են տները, մնացել են մի քանի չսափրված տղաներ, որոնք կրակի շուրջն են հավաքվել»: Եթե Համբարձումը չլիներ, չհասկանար, ապա ստիպված կլինեինք հրամանը կիրառել, որովհետեւ չենթարկվել չէինք կարող: Եվ կատարեցինք հրամանը: Նույն պահին գնացին, միջանցքներ ստեղծեցին, պատգամավորները դուրս եկան: Այստեղ մի դրվագ կա՝ Զորի Բալայանի հետ կապված: Նա ուզում էր կենտրոնական մուտքով դուրս գալ, այն կողմից ուզում էին ներխուժել: Տղաները դուռը փակեցին. Զորին գայրացավ, հայհոյեցին, նա էլ բռունցքով խփեց, հաստ ապակին կոտրեց, ձեռքն էլ վնասեց: Հետ քաշեցինք՝ ա՛յ Զորի, էս ի՞նչ ես անում: Սա մինիստրների խորհրդի նախագահ Մարգարյանցի հետ էլ է կապված, որին մեղադրեցին, բայց նա արժանի չէր դրան: Պատգամավորները թե՝ «Այս ի՞նչ է կատարվում, Գրիգոր Գարեգինովիչ, Դուք եք պատասխանատու»: Նրանց պատասխանեցի, որ քաղաքի վարչության պետն է պատասխանատվություն կրում, իսկ ես իրենց

պարզապես օգնելու եմ եկել: Մարգարյանցը ինձ հասկացրեց, որ մոտենամ: Ասաց.

- Նրանց ուզածն ի՞նչ է:

- Նրանք ուզում են, որ ամեն ինչ արվի այնպես, ինչպես իրենց կարգադրում են այնտեղից:

- Իսկ Ձեզանից ի՞նչ են ուզում:

- Նրանք հրաման են ուղարկում այսպես անել, իսկ ես որոշել եմ այլ կերպ անել:

- Առանց իմ հրամանի ցուցարարներից ոչ մեկին ձեռք չտալ: Մենք շրջափակված կնստենք՝ քանի օր պետք է, նրանք էլ թող օրերով քաղցած մնան, դրանից ոչ մի սարսափելի բան չի լինի: Բայց ժողովրդի մազին չդիպչեք:

Եւ այդ ասում էր Մարգարյանցը, որին կանչում էին հաշվետվություն տալու, թե ինչ է արել: Վիրավորված նա թողեց երկրից հեռացավ: Հարությունյան Սուրենը մոտեցավ ինձ, հարցրեց, թե ինչպես կարող ենք ցույցը ցրելու հրամանը չկատարել: Ասացի, որ առանց տեղական իշխանության որոշման ես իրավունք չունեմ ենթարկվել այդ հրամանին: Առաջարկեցի կենտկոմի բյուրոյի նիստ հրավիրել եւ համապատասխան որոշում ընդունել, որից հետո միայն ես իմ խոսքը կասեմ: Նիստը հրավիրվեց, որտեղ Հարությունյանի դիրքորոշումը դրական նշանակություն ունեցավ, մեծ գործ արեց այդտեղ: Նրա շնորհիվ բոլորը դեմ քվեարկեցին: Լինում էին դեպքեր, երբ հանրապետության ղեկավարները իսկապես ճիշտ էին կողմնորոշվում, ճիշտ որոշումներ էին ընդունում:

Գորիսում էի, երբ Երասխավանի դեպքերը տեղի ունեցան: Որոշ հեղինակներ այն համարում են առաջին լուրջ բախումը մեր եւ ազերիների միջեւ: Բայց իրականում դրանից առաջ մենք ունեցել ենք «Կոռնիձոր առաջին», «Կոռնիձոր երկրորդ» հակամարտությունները: Առաջին լուրջ բախումը Վլադիմիր Մովսիսյանի դեպքն էր, որն անգամ զանգվածային բնույթ կրեց: Այնտեղ պրովոկացիա արեցին, որի վրա մենք թքեցինք, իսկ Վլադիմիր Մովսիսյանը կարողացավ մեծ դիվանագիտություն ցուցաբերել: Լսեցի, որ Երասխավանում զոհեր են եղել: Ես Գորիսում հատուկ դրության պարետն էի, բայց թողեցի եւ եկա Երասխավան: Այնտեղ առաջին անգամ հանդիպեցի Վազգեն Սարգսյանին: Այնտեղ էր նաեւ Դավիթ Զադոյանը: Հավաքվել ու որոշում էին՝ ինչ անել: Տղաները գնացել էին մինչեւ Ողջի դարպասները՝ Նախիջեւանի սահմանի մոտ: Այս հարցում էլ են մեր նախկին իշխանավորները «եղբայրության, հավասարության» անվան տակ տանուլ տվել, որը հիմա դժվար է հասկանալ ու ներել: Նախիջեւանցիները տասներկու հեկտար

հողատարածք են վերցրել այդ հատվածում, կենտրոնական իշխանության թույլտվությամբ այդտեղ տեղադրել իրենց ստուգիչ անցագրային կետը եւ ամրագրել այն՝ որպես իրենց տարածք: Տղաները, այդ թվում Մովսես Գեորգիսյանը, գնացել էին այնտեղ: Ես մասնակցում էի Բաղանիս -Այրումի դեպքերին, ՀԱԲ-ն այնտեղ օպերացիա իրականացրեց: Լեւոն Տեր-Պետրոսյանն էլ քաղաքական բնույթ տվեց, իբր թե ՀԱԲ-ը մեզ թիկունքից է խփում, ինչը, իհարկե, իրականությանը չի համապատասխանում: ՀԱԲ-ը քիչ գործ չի արել, պարզապես նրա սխալն այն էր, որ կազմի մեջ կային քրեածին, ոչ առողջ տարրեր, քանակի մասին մտածելով՝ երկրորդ պլան էր մղել որակական կողմը: ՀԱԲ-ում էլ եղել Վրեժը, Հովհաննիսյան Էդիկը, Մորուքը, Աբովյանի ջոկատի հրամանատարը: Մտել են Բաղանիս-Այրում, թուրքերին այնպես ջարդել, որ մինչեւ հիմա խելքի չեն գալիս: Բայց տղաները կռվել են ոչ թե ադրբեջանական բանակի, այլ սովետական զորքերի դեմ: Մեծ փորձ ձեռք բերեցին: Եվ բոլոր ճակատներում էր այդպես, մենք ազգային ֆրոնտի ներկայացուցչի դեմ չենք կռվել, շատ էին վախկոտ, իսկույն փախչում էին, գլխներին կապած սեւ չալմաներին նայելիս թվում էր, թե իրենցից ինչ-որ բան են ներկայացնում, բայց էությամբ ոչինչ էին, դրանց մեջ զինվոր գոյություն չուներ: Վրեժը, որը հետո հանցագործ դարձավ, կանգնել էր կամուրջին՝ ավտոմատը ձեռքին, նա տանկի ուղղությամբ էր կրակում, տանկից՝ նրա վրա, բայց անգամ չվիրավորվեց, Արամոն էր ոտքից վիրավորվել: Դրանից հետո Վազգեն Սարգսյանի հետ գնացինք այնտեղ: Ֆիդայիներին շտապ ետ ուղարկեցինք: Տասնմեկ զոհ ենք ունեցել այնտեղ՝ գրեթե բոլորը ետեւից խփված, բայց ոչ թե դիտավորյալ, այլ անփորձության հետեւանքով: Թեեւ դիտավորությունը չեմ բացառում, այդ թվում եւ Գեորգիսյանի դեպքում, որովհետեւ նրա հեղինակությունը մեծ էր: Եկա այդտեղ, Դավիթ Զադոյանն ասաց, որ մեզ առաջարկում են Ողջիի դարպասից Սադարակը թողնել, այս կողմ քաշվել: Սադարակում թշնամու այնքան դիակ էր թափված: Մոտ տասը օր անցավ, տեսան, որ իրենց ձեռք չենք տա, եկան, իրենց մեռելներին տարան: Սուրեն Հարությունյանն էլ էր այնտեղ: Նա տեսավ, որ ես Վազգենի հետ զրուցում եմ: Վազգենին ասացի.

- Աղաչում եմ, ինչ ուզում եք, արեք, բայց Ողջի դարպասը մի՛ թողեք:

- Չենք կարող, կստիպեն, ասում են՝ եթե դուք ետ չքաշվեք, մենք զորքը չենք մտցնի, ետ գնացեք, զորքը կմտցնենք:

- Չանե՛ք այդպիսի բան, դեռ անցյալ տարի նրանք հրաժարվել էին Նախիջեւանի սահմանը պահելուց, եւ այս խոստումներն էլ դատարկ

խոսքեր են միայն, ոչ մի գործ էլ նրանք չեն մտցնի:

Համոզեցի: Սուրեն Հարությունյանը մոտեցավ, թե.

- Այդ ի՞նչ եք խոսում Վազգենի հետ: Նախ եւ առաջ՝ ինչու՞ եք այստեղ եւ թողել եք ձեզ վստահված սահմանը: Իսկույն ետ վերադարձեք:

Եթե մենք չթողնեինք Ողջիի դարպասը, ազերիները չէին կարող վերցնել: Նախիջեւանի մոտ ահավոր տագնապ էր սկսվել, այդ ճակատամարտից հետո ազերիները փախչում էին: Ի վերջո եկանք կոմպրոմիսի: Խորհրդային զորքերի հրամանատարությանը հաջողվեց ստիպել մեր զորքերին ետ քաշվել եւ դիրքավորվել գիհու կոմբինատի մոտ: Ըստ երեւույթին, իրավիճակն այնպիսին էր, որ այլընտրանք չկար, երեւի լավ չէին ըմբռնել սովետական բանակի «խաղերը», եւ նման լավ հնարավորությունը մեր ձեռքից բաց թողեցինք: Պատերազմի հետագա ընթացքը հաստատեց մեր սխալը:

Բ. - Իսկ սահմանների մոտ տեղի ունեցած ջարդերի մասի՞ն:

Գ.Գ. - Մի քանի դրվագներ պատմեմ: Նախիջեւանում էր մոտոհրաձգային 75-րդ դիվիզիան: Այն ԽՍՀՄ ՊԱԿ-ի հատուկ ստորաբաժանումներից էր: Մերոնք բանակցություններ վարեցին նրանց հետ: Կենտրոնից էին ներկայացուցիչներ եկել, չեմ հիշում, թե ովքեր էին: Մեր պատվիրակությունը Դավիթ Զադոյանն էր ներկայացնում: Ռուսների հետ մեր համաձայնությունը հետեւյալում էր կայանում: Մենք նրանց ապահովում էինք, զորքերը դուրս հանում: Ջարդերն արդեն սկսվել էին, բոլոր զորքերն անցել էին ինքնապաշտպանության: Ոչ մի կրակոց չի եղել, պարզապես ազերիները մտել, ջարդել, փշրել, լրիվ վառել են: Ըստ պայմանավորվածության՝ մենք ռուսական զորքը պետք է ապահով տեղափոխեինք, իրենք ողջ զենքն ու զինամթերքը թողնեին մեզ, մենք Նախիջեւանով միջանցք ստեղծեինք, գային Երեւան, հետո ինքնաթիռներով հեռանային: Համաձայնությունը իրականացվեց միայն մի մասով: Ազերիները թույլ տվեցին նրանց ընտանիքներին սահմանն անցնել, Երեւանից էլ ամեն մեկը գնաց իր տունը: Դրա դիմաց ահագին զինամթերք ստացան: Նրանք ազերիների հետ բանակցությունների մեջ մտան, ապահովեցին իրենց անվտանգ տեղափոխումը, բայց ահագին զենք, ողջ ծանր զրահատեխնիկան մնաց Նախիջեւանի տարածքում: Սահմանային ջարդերի, սահմանների գծման հետ կապված՝ կարեւոր դեր ուներ գեներալ-լեյտենանտ Լիսաուսկասը, որը Մերձբալթյան հանրապետություններից մեկի ներքին գործերի նախարարն էր: Այնտեղ երբ խլրտում սկսվեց, նրան ազատեցին, եւ Մոսկվայում նշանակվեց նախարարի տեղակալ: Շատ կիրթ, լավ մարդ էր, մենք բավական մտերմացանք: Հանձնաժողով արեցինք, որին մասնակցում էին քաղկոմի քարտուղար Սահակյանը, Ղանդիլյանը՝ այդ հոյակապ հայը, որը Հայաստանի համար շատ բան արեց, ես էի, Լիսաուսկասը՝ իր հանձնախմբով: Վերցրեցինք Դեմիրճյանի կառավարական վագոնը, մի հատ «Լոկոմոտիվի» կցեցինք եւ սահմանով շարժվեցինք դեպի Մեղրի, որպեսզի ապացուցենք, որ այդ հինգ կիլոմետր տարածքում գյուղ չի մնում միայն վերեւի՝ սահմանագլխի գյուղերն էին: Միայն վերեւում մի քանի գյուղ էր մնում, ներքեւում՝ Վարդաձորը եւ էլի մի քանի գյուղեր: Եկանք Նախիջեւան, ես ու Լիսաուսկասը մտանք Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահի առանձնասենյակը: Ես որոշեցի նրանց առանձին թողնել՝ հանգիստ քանակցելու: Սեղանին միրգ դրեցին, ոչնչի ձեռք չտվեց: Ես դուրս եկա, տղաների հետ շրջում էինք մոտակայքում: Ղանդիլյանը բորբոքված խոսում էր, թե՝ գնամ, դրա պորտը տեղը դնեմ: Մի կերպ հանգստացրի. Որոշեցին, որ Մեղրիում խորհրդակցություն կանցկացնեն, նրանց երկաթգծի եւ այլ գերատեսչությունների ղեկավարները նույնպես կժամանեն: Եկանք հասանք Ջուլֆայի կայարանը, Ազգային ճակատը՝ սեւ չալմաները կապած, առաջներս կտրեց եւ մեզ կալանավորեցին: Նկավ միլպետը, որին ճանաչում էի: Լիսաուսկասին բացատրեցի, որ պահանջում են մեզ որոշ ժամանակով կալանքի տակ պահել, եւ ես նրանցից ջուր խնդրեցի: Հետո կատակով դիմեցի միլպետին, թե՝ մեզ մեկ ամիս պահեք, համ մենք կհանգստանանք, համ դուք: Լիսաուսկասը բորբոքվեց, թե՝ ինչպես կարող են իրեն՝ նախարարի տեղակալին, ձերբակալել: Բայց նա էլ էր 22մել սահմանների քարուքանդ վիճակից: Երկար բանակցություններից հետո մի կերպ ազատվեցինք: Բայց ազերիների հանդեպ նրա մեջ արդեն բացասական վերաբերմունք էր ձեւավորվել: Եկանք Մեղրի, որտեղ այդ ժամանակ քարտուղարը Ռոբերտն էր: Բանակցություններ սկսեցինք: Ղանդիլյանը շուռ եկավ ու հայհոյանքների շարանը թափեց, թե ինչու են սահմանը, երկաթգիծը փակել: Երբ խորհրդակցությունը վերջացավ, Լիսաուսկասին ասացի, որ հնարավոր է՝ քարտուղարը մեզ ճաշի հրավիրի, ոչ մի խմիչք չի լինի, այլ մածուն, մեղր եւ նման ուտելիքներ: Գետի ափին նստեցինք, ճաշում էինք եւ զրուցում: Նա էլ համոզվեց, որ այդ հինգ կիլոմետր տարածքի հարցը հիմարություն է՝ մի՞թե նրանք չեն դիտարկել, թե այդ հինգ կիլոմետր ձգվող դիրքը ում է ձեռնտու՝ ձե՞զ, թե՞ ադրբեջանցիներին: Նրա այստեղ գալը մեծ նշանակություն ունեցավ:

Ջոկատների հետ կապված մի դեպք պատմեմ, որ ոչ մի տեղ չի գրվել: Վազգենին շատ են քննադատում, բայց նա պատմական մեծ դեմք էր, եւ ժամանակի ընթացքում նրա կերպարը ավելի խորը կբացահայտվի՝ նաեւ բացասական կողմերով, պոռթկումներով, ինչ-որ տեղ նաեւ կայացրած սխալ որոշումներով: Բայց ամենամեծ թերությունը իր

մերձավորներին լիովին վստահելն էր: Բայց այդ մարդը հսկայական գործ է արել, որոնցից թերեւս կարեւորագույնն այն էր, որ նա եղավ հատուկ գնդի ստեղծման գաղափարախոսը: Գրեթե բոլոր ֆիդայական ջոկատները միավորեց մի գնդի մեջ: Դրանով, մի կողմից, բանակի հիմքը դրվեց, մյուս կողմից՝ վերացավ հակամարտությունը ջոկատների միջեւ. ֆիդային ֆիդայուն այլեւս չէր խփում:

Հատուկ նշանակության ստորաբաժանմամբ ես էի զբաղվում: Դրա ստեղծումը ժամանակի պահանջն էր: Եթե Արթուր Ալեքսանյանի մասնակցությունը դրա ստեղծման հենց սկզբից չլիներ, երեւի մենք այսօր այդպիսի ստորաբաժանում չէինք ունենա: Այդտեղ կարծեմ կապիտանությունն էր կանգնած: Զորանոցը շատ հին շինություն էր՝ փայտից սարքած, ցարական Ռուսաստանի ժամանակներից մնացած: Սարքեց, շենացրեց: Պահանջկոտ էր, շատ շուտ էր բռնկվում, բայց հրամանատարը պետք է չափը իմանա՝ որտեղ կանգ առնի:

«Կոռնիձոր երկրորդ»-ում, որտեղ հրամանատարը Չաուշը՝ Գեղազնիկն էր, մոտ հազար հինգ հարյուր ֆիդայի էին հավաքվել: Կոռնիձորից ներքեւ գտնվող ադրբեջանաբնակ Ջիջիմլիին էին խփել: Այնտեղ Ազգային ճակատն էր տեղակայված: Խողովակից էին թնդանոթը սարքել: Որ խփեցին, թնդանոթը պայթեց, խողովակի կտորները թռան մարդկանց, ամեն ինչ գետնին հավասարեցրեց: Այդպիսի թնդանոթներ մենք էլ էինք սարքում, Կոռնիձորում ունեինք դրանցից: Կոռնիձորի դեպքերը սկսվելուն պես ես մեկնեցի այնտեղ, որ տղաներին շուտափույթ դուրս բերենք: Այնտեղ մենք մի զոհ ենք տվել: Հարձակումների գերակշիռ մասը մեր կողմից է եղել, նրանք այնքան քաջություն չունեին առաջինը հարձակվելու համար: Մենք մի զոհ տվեցինք ադրբեջանական հողում: Այդտեղ ձոր էր, ձորի մի ափը մերն էր, մյուսը՝ նրանցը: Դատախազն էլ ղարաբաղցի էր, ասացի, որ տեղազննության վայրը փոխի, նշի, որ զինվորը մեր հողի վրա է զոհվել: Ուզում էի բանակցությունների ժամանակ ասել, որ ոչ թե մենք ենք հարձակվել, այլ ազերիները, մենք միայն պաշտպանվել ենք: Բայց մեր մի դիակի դիմաց այնտեղ նրանցից քսանչորսն էին թափված: Պատկերացրեք, չկարողացա համոզել այդ դատախազին: Վախենում էր, ասում էր. «Բա որ ինձ վրա չբացահայտված հանցագործություն համարեն»: Ասում եմ. «Չե՞ն հասկանում, թե ինչ է կատարվում, ի՞նչ հանցագործություն, ի՞նչ բացահայտել»: Հետո նա արձակուրդ գնաց, փոխարինողի հետ ձեւակերպման խնդիրը լուծեցինք:

Տղաները Խոզնավարի սարն են պահում, այնտեղ դիրքեր ունեինք: Անզգուշությունից նռնակը տղաներից մեկի ձեռքում պայթում է դրանից երեք հոգի հաշմանդամ են դառնում: Ոչ ոք տեղեկանք չտվեց

որ դա «դժբախտ պատահար էր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ»:

Հատուկ գունդը բաժանվել էր երկու մասի. մեկը պետական կառույցում էր, մյուսը ընդդիմություն էր: Հասկանալի չէ, թե հատուկ գնդի վետերանները ինչու պետք է երկու խմբի բաժանվեն, երկրի պաշտպանական համակարգը հզոր պահելու համար միաբան չլինեն: Ինձ երկու կողմերն էլ ընդունում էին: Հավաքեցի բոլորին եւ ասացի, որ ես նրանց այս վարքագիծը չեմ ընդունում: Սպարապետը, որ ստեղծեց գնդի անդրանիկ միավորը, պատգամ տվեց լինել հայրենիքի զինվոր, լինել միաբան: Զարմանում էիր, որ տեսնում էիր, թե ովքեր էին այդ պառակտումը գցում, ընդդիմություն համարվում: Այդ մարդկանց ինստինկտ տոկոսը, իրենց առանձնասենյակներում նստելուց բացի, ոչինչ չեն արել:

Մի անգամ ակտիվ մասնակիցներին խրախուսանքի ներկայացնելու առաջարկություն արվեց: Սերժ Սարգսյանը ՆԳՆ-ի եւ ՊԱԿ-ի միացյալ նախարարության պետն էր, ես՝ տեղակալը: Քանի որ այդ տղաներից գրեթե բոլորին ես ծանոթ էի, իմ նախագահությամբ հանձնաժողով ստեղծվեց, որպեսզի ընտրություն կատարվի: Մոտ 3600 անուն էին ներկայացրել, որից ես ընդամենը վաթսունին առանձնացրի, այնպես որ՝ այդ անունները զտման կարիք ունեն:

Պատմում է Գալինա Ստարովոյտովան: Զրույցը վարեց Բակուր Կարապետյանը. 09.11.1988 թ., Ստեփանակերտ:

Գ.Ս. - Այս գործուղման ընթացքում ես նյութեր եմ հավաքում «Իրավունքն ու քաղաքականությունը ԽՍՀՄ-ում» ժողովածուի համար, որը պատրաստում է «Իրավագիտական գրականություն» հրատարակչությունը: Այստեղ մի բաժին նվիրված է Լեռնային Ղարաբաղում հավաքած նյութերին: Ինձ հետաքրքրում են նաեւ այստեղ տիրող իրավիճակի իրավական կողմը, ինչպես նաեւ ազգահոգեբանության հարցերը, մանավանդ որ ես էթնոհոգեբան եմ, ու այս գծով այստեղ եմ այցելել 1984 թ., երբ երկարակեցության ֆենոմենի հետազոտման ծրագրով աշխատող համալիր արշավախմբի շրջանակներում ուսումնասիրում էի ԼՂԻՄ-ի հայ երկարակյացների ազգահոգեբանական յուրահատկությունները:

Բ.Կ. - Խնդրում եմ ավելի հանգամանորեն պատմեք ազգահոգեբանության մասին:

Գ.Ս. - Ազգահոգեբանությունը գիտություն է, որը զբաղվում է մարդկանց հոգեվիճակի ուսումնասիրությամբ՝ պայմանավորված նրանց ազգային պատկանելությամբ: Ես ավարտել եմ Լենինգրադի համալսարանի սոցիալական հոգեբանության ամբիոնի ասպիրանտուրան, ապա ազգագրության գծով թեկնածուական եմ պաշտպանել, ուստի ես «օրինական» ազգահոգեբան եմ:

Կովկասը միշտ առանձնացել է իր երկարակյացներով: Ինձ հետաքրքրել է ազգային ավանդույթների ազդեցությունը երկարակյացների հոգեբանական բնութագրի, կենսակերպի վրա: Ուսումնասիրությունները սկսել ենք Աբխազիայում, 1987 թ. համահեղինակությամբ պատրաստել «Երկարակյացների ֆենոմենը» գիրքը: Այժմ զբաղվում եմ ԼՂԻՄ-ի երկարակյացներով: Լեռնային Ղարաբաղի երկարակյացների՝ որպես առանձնահատուկ երեւույթի մասին հոդված եմ պատրաստում: Հազար հոգուն հիսուն երկարակյաց է ընկնում: Այստեղ առկա է ներքեւից եկող ժողովրդավարությունն ու ակտիվությունը: Զարմացնում է ընդամենը մի քանի ամսվա ընթացքում զանգվածների արագ վերելքը Արցախում եւ Հայաստանում: Սկզբում պահանջներն ու շարժումը տարերային բնույթ ունեին: Չնայած շարժումն օբյեկտիվ պատճառներ ուներ. նախ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ազգային իրավունքների ու ազգային զգացումների ոտնահարումը, ինչին նաեւ պաշտոնական գնահատական տրվեց: Հաճախ են փորձում շարժմանը մեղադրել Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի վերամիավորման պահանջի տարերայնության մեջ, ու մամուլում գրում են «փողոցային» հանրահավաքային դեմոկրատիայի մասին: Նման գնահատականի հեղինակները մոռանում են լենինյան այն դրույթը, որ շարժման տարերայնությունը ցույց է տալիս նրա խորությունը, մեծ թափն ու անկասելիությունը: Սակայն շարժումն այսօր ավելի կազմակերպված բնույթ ունի: ԼՂ-ում այն գլխավորում է մարզի կուստնտակտիվը, որի կազմում ձեռնարկությունների տնօրեններն են, կուսակցական, սովետական պատասխանատու աշխատողներ: Նրանք կմնան որպես լիդերներ, քանի որ արտահայտում են ժողովրդի կամքն ու իղձերը: Ժողովրդի իշխանության այս ձեւը ինչ-որ բանով հիշեցնում է Հռոմի ֆորումը կամ հունական պոլիսի ագորան, նովգորոդյան վեչեն: Բոլոր այս ֆորումներում կառավարումը դեմոկրատիայի ներկայացուցիչների միջոցով չէր իրականացվում: Այդ դեպքում հիմնական զանգվածից որեւէ մեկին առաջ են քաշում եւ օժտում քաղաքական իրավունքներով: Տվյալ դեպքում մենք գործ ունենք ժողովրդի կամքի անմիջական իրականացման ձեւի հետ: Այս երեւույթը կարիք ունի սոցիոլոգիական լուրջ ուսումնասիրության: Իհարկե, սոցիալական միջավայրը Հայաստանի Հանրապետությունում ավելի բարդ է ու շերտավորված, քան այստեղ: Այնտեղ կարծիքները ազատականացված են, իսկ այստեղ հասարակությունը միավորված է մեկ ընդհանուր ձգտման շուրջ:

Բ.Կ. - Ղարաբաղն ուզում է միանալ զարգացած, բարձրորակ Հայաստանի հետ:

Գ.Ս. - Իրականում պետք է գիտակցել, թե ինչ Հայաստանի հետ է ուզում միանալ Արցախը: Դա երեւի վերանորոգվող, ծաղկող Հայաստանն է:

Բ.Կ. - Առաջին հերթին՝ բարոյական արժեքներ ունեցող Հայաստանին: Այժմ զրուցենք Շուշի կատարած մեր ճամփորդության մասին:

Գ.Ս. - Ցավոք, տպավորությունները մակերեսային են, քանի որ

հնարավորություն չտվեցին լինել այն վայրերում, որոնք հետաքրքրում էին մեզ: Մենք չեղանք Ղազանչեցոց եկեղեցու տարածքում, չկարողացանք լինել բանտում, զրուցել բանտի պետի հետ:

Բ.Կ. - Բայց մենք հանդիպեցինք նրան շրգործկոմում:

Գ.Ս. - Այո, նա հայտնեց, որ հրաժարվում է մեզ տեղեկություններ տալ, ինչպես եւ թույլ չի տա մեզ այցելել բանտի տարածքը: Բացախոսության այս ժամանակներում ուղղիչ հաստատություններն արդեն չեն կարող փակ լինել լրագրողների համար: Բանտապետը ձգտում էր ապատեղեկացնել շրջանի պաշտոնական ղեկավարությանը, թե իբր մենք, շրջանցելով պարետատունը, փորձել ենք ճնշում գործադրել իր վրա եւ հայտնվել բանտի տարածքում:

Բ.Կ. - Անշուշտ, հիշում եք միլպետի հետ հանդիպումը:

Գ.Ս. - Շուշիի շրջանի միլպետ Թաղիեւը շրջգործկոմի նախագահ Գյոզալովի ու բնակիչների հետ մեր զրույցի պահին սպառնալիքներով հարձակվեց քեզ վրա՝ ասելով, որ տասներկու կետերից դիպուկահարները հրացաններն ուղղել են քեզ, պահանջեց դադարեցնել նկարահանումներն ու հետեւել իրեն: Իսկ շրջգործկոմի նախագահի տեղակալ Վագիֆ Հուսեյնովը պարետությունից մեզ ուղեկցող մայոր Եվգենի Մեդվեդեւի ներկայությամբ վիրավորական խոսքեր ասաց քո հասցեին՝ անվանելով սադրիչ: Փաստորեն Շուշիի միլիցիայի ու իշխանության գործողությունները մեզ խանգարեցին կատարել «Իրավագիտական գրականություն» հրատարակչության առաջադրանքը:

Բ.Կ. - Շուշիի մեր արկածներից հետո մենք ճանապարհվեցինք Հադրութի շրջան:

Գ.Ս. - Այստեղ գերակշռում են տեսողական տպավորությունները: Գեղեցիկ լեռներ, մշուշաքող կիրճեր, աշնան արեւ, հինավուրց հուշարձաններ, Սպիտակ Խաչվանք: Երկրորդ տպավորությունը. չնայած Հադրութը փակուղու մեջ է, ու ճանապարհ չկա, սակայն կա երիտասարդների խանդավառությունը, որոնք ձգտում են երկրամասի վերածննդին: Թանգարանի տնօրեն Արթուր Մկրտչյանը նոյեմբերի 2-ին ԼՂԻՄ-ի ազգագրության թեմայով թեկնածուական դիսերտացիա է պաշտպանել: Ես պաշտոնական ընդդիմախոսն էի ու շատ բարձր եմ գնահատում նրա այս աշխատանքը: Միեւնույն ժամանակ թանգարանը պաշտոնական կարգավիճակ չունի, քանի որ չի հաստատվում հանրապետական ինստանցիաներում: Երիտասարդներն այնտեղ ցանկանում են իրենց ուժերն օգտագործելու տեղ ունենալ: Եթե լուծվեն սոցիալական որոշ հարցեր, ու աշխատանք լինի, նրանք պատրաստ են մայրաքաղաքը թողնել, տեղափոխվել հայրենի եզերք: Այդ մասին ասել էր եւ Գենրիխ Պողոսյանը: Մեկ այլ տպավորություն եւս. ինակչությունը վարժվել է բանակի ներկայությանը, որն ինձ համար անսովոր էր մանավանդ հատուկ դրության ու պարետային ժամի պայմաններում: Բայց կյանքն իր հունով է գնում:

Բ.Կ. - Հարմարվե՞լ եք:

Գ.Ս. - Ես մի հետաքրքիր տեսարանի հանդիպեցի Հադրութում: Սաղավարտներով, զրահաբաճկոններով ու ռետինե մահակներով երկու զինվոր ցանկանում էին գրադարանի տարածքը մտնել, սակայն մեծահասակ կինը դուրս քշեց նրանց: Զինվորները հպատակվեցին գրադարանի կանոնակարգին: Իսկ կուսմարզկոմի առաջին քարտուղարը կամային եւ ամուր մարդու տպավորություն թողեց, որը կատարել է իր անդառնալի ընտրությունն ու կանգնել իր ժողովրդի կողքին:

Բ.Կ. - Դուք ընդունում եք, որ հնարավոր է եւ հակառա՞կը:

Գ.Ս. - Մեկ ուրիշ կուսաշխատող կարող էր չդիմանալ հանրապետական կուսապարատի ճնշմանը, տնտեսական կախման մեջ լինելով Բաքվից, զգալով իր կարիերային ու նաեւ կյանքին սպառնացող վտանգը, այլ դիրքորոշման կգնար: Անսովոր է այս փոքրիկ երկրում տեսնել ղեկավարության ու ժողովրդի նման միասնությունը: Մանավանդ, որ իմ նախորդ այցի ժամանակ տեսել էի, թե ինչքան հեռու էր ղեկավարությունը ժողովրդից:

Բ.Կ. - Իսկ Ֆարիդա Մամեդովան անամոթաբար ստում է:

Գ.Ս. - Նույնիսկ տարօրինակ է: Ադրբեջանական գիտնականների կողմից այդպես էլ չտեսա Ղարաբաղի բնիկ ժողովրդի ծագումնաբանության իրենց տարբերակի հաստատումը: Ֆարիդա Մամեդովայի ու Ախունդովի փնտրտուքները մասնագետների համար հեռու են ապացույց լինելուց: Միեւնույն ժամանակ գոյություն ունի Ալեքսան Հակոբյանի շատ լուրջ աշխատությունը՝ նվիրված Կովկասյան Ալբանիային, որը լույս է տեսել 1987 թ.: Մեթոդական հիմունքով, ինչպես եւ միջնադարյան հեղինակների վկայությամբ՝ հաստատվում է հնուց ի վեր տեղի բնակչության հայկական լինելը: Ինձ թվում է, որ ժամանակակից ազգավարչական կազմավորումների ճակատագրերը պետք է որոշվեն ոչ այնքան ելնելով բնակչության պատմական փոփոխություններից, որքան ժամանակակից բնակչության ազգային կազմից ու սահմանադրության համաձայն նրա կամքի արտահայտումից: Պետական բարձրագույն մակարդակով, ինչպես եւ ցածր օղակներում խորհրդային իշխանության նշանակության բարձրացման պայմաններում անհ-

նար է հաշվի չնստել ԼՂԻՄ-ի մարզխորհրդի նստաշրջանի որոշման հետ, որն արդեն հինգերորդ անգամ վերահաստատել է Հայաստանին վերամիավորվելու իր կամքը. կարծեմ՝ վերջինը նոյեմբերի չորսին էր:

Բ.Կ. - Մտածում եք, որ վեցերորդ անգամ է՞լ կլինի դա:

Գ.Ս. - Չի բացառվում: Պատգամավորների հետ իմ հանդիպումներից ելնելով ասեմ, որ նրանք չեն պատրաստվում փոխել իրենց որոշումը: Ու ոչ թե վճռական չի պետությունը: Վճռական միջոցներ են ձեռնարկվել ԼՂԻՄ-ի նկատմամբ, ինչպես օրինակ՝ հատուկ դրություն մտցնելը, որն ապահովում է բնակչության անվտանգությունը:

Բ.Կ. - Բայց եւ մենք համոզվեցինք, որ հատուկ դրությունը ստեփանակերտցիների նկատմամբ ավելի խիստ ռեժիմով է գործում, քան Աղդամի կամ Շուշիի բնակչության նկատմամբ:

Գ.Ս. - Իրոք, մենք նոյեմբերի յոթին Շուշիում էինք, որտեղ տոնական շքերթ էին անցկացնում, նույնն էլ Աղդամում էր: Հավանաբար, հատուկ դրության հրահանգներում տարբերակումներ կային տարածաշրջանի տարբեր բնակավայրերի նկատմամբ: Սակայն զրուցել բանակային ստորաբաժանումների ղեկավարների հետ մեզ այդպես էլ չհաջողվեց:

Լեռնային Ղարաբաղի մամուլի ներկայացուցիչների հանդիպումը Լեռնային Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Արկադի Վոլսկու հետ: Սղագրությունը՝ Բակուր Կարապետյանի. 06.05.1989 թ.

Ա.Վոլսկու օգնական Բորիս Նեֆեդովը մոտեցավ ու ինչ-որ բան շշնջաց Վոլսկու ականջին:

Ա.Վ. - Հեռախոսագծում Միխայիլ Սերգեեւիչն է, ստիպված եմ ընդմիջում հայտարարել:

Մեկ ամիս առաջ ամերիկահայ գործարարների պատվիրակության հետ հանդիպման ժամանակ եւս Ա.Վոլսկին հանկարծ հայտնեց, որ հեռախոսագծում Մ.Գորբաչովն է, խնդրեց հինգ րոպեով դուրս գալ առանձնասենյակից: Մտածեցի, որ տպավորություն թողնելու համար նրա դիվանագիտական հնարքներից է:

Բորիս Դադամյան - Դուք հենց նոր խոսեցիք Գորբաչովի հետ: Ի՞նչ խոսեցիք նրա հետ:

Ա.Վ. - Նա ողջույններ հաղորդեց ԼՂԻՄ-ի ժողովրդին: Ընդգծում եմ՝ ոչ թե լրագրողներին, այլ ժողովրդին: Ասաց, որ կցանկանար տեսնել իրեն ուղարկած նամակի բնօրինակը, այլ ոչ թե պատճենը: Պատգամավորներին կընդունի համագումարի ընթացքում: Այստեղ ինձ մեղադրում են, որ ես ավելի հանդուրժողական եմ ու հովանավորում եմ ադրբեջանցիներին: Շուշիում ու Բաքվում ինձ մեղադրում են հայերին հովանավորելու համար: Եթե ինձ չեք վստահում, ես կարող եմ թողնել ու հեռանալ: Ես ոչինչ չեմ կորցնում:

Բ.Դ. - Ապրիլի 13-ին տպագրվել է Ադրբեջանի ղեկավարների հետ ձեր հանդիպման մասին, որից հետո սկսվել են Ադրբեջանի ղեկավարների զանգվածային այցերը ԼՂԻՄ: Իսկ ապրիլի 14-ին դուք հայտնել եք, որ ոչ ոք իրավունք չունի առանց Հատուկ կոմիտեի թույլտվության այստեղ գալ: Ճի՞շտ է:

Ա.Վ. - Դե ինչո՞ւ հենց այդպես, Բորի՛ս:

Բ.Դ. - Միակ բանը, որ մնացել է մեզ համաձայնվելու, սահմանադրորեն իրավունքին համապատասխանող տարածքն է, իսկ մնացածը

ձեր իրավասության տակ է: Ժողովուրդն այսօր ապստամբել է, սակայն եւ չի հասկանում, թե ինչու դա կարող է խանգարել Հատուկ կոմիտեի աշխատանքին: Հավատացած եմ, որ այս դեպքում ձեզ անվստահություն կհայտնեն: Իրականում դուք ինչ-որ բան արել եք: Դուք ասացիք խնդրի լուծման տասներկու տարբերակների մասին: Քննարկել եք յոթ տարբերակ: Հիշողությունս ինձ չի դավաճանում: Հիշողության կորուստը միայն ոտքերիս մեջ է:

Ա.Վ. - Իմ հիշողությունն էլ է լավ:

Բ.Դ. - Մեր մեջ ինչ-որ ընդհանրություններ կան: Երկուսս էլ հումոր ենք սիրում, որի միջոցով կամ հաղորդակցություն ենք փնտրում լսարանի հետ, կամ խուսափում ենք պատասխանից: Բայց Դուք խոսում եք տարբերակների մասին՝ իբր դրանք ժամանակավոր ինչ-որ բան են: Բայց ո՞ր ժամանակի մասին է՝ մի տարի, երկու տարի, երեսուն տարի... Ես այդքան չեմ ձգի: Ձեզ խանգարո՞ւմ էին սովետական իշխանության մարմինները: Ինչո՞ւ արձակեցիք դրանց:

Ա.Վ. - Քսաներկու հոգի հավաքվել են եւ որոշել վերականգնել կուսակցության մարզային կոմիտեն: Նրանք աշխատում են: Ես ուզում եմ, որ լինեն եւ՛ մարզկոմը, եւ՛ մարզգործկոմը, ինձ համար հեշտ կլինի: Սակայն պատասխանել են՝ նոր կառույց պետք չէ: Իսկ եթե որոշ մարդիկ պաշտոն են ուզում, խնդրեմ...

Բ.Դ. - Ասեք, ո՞վ է պաշտոն պահանջում:

Ա.Վ. - Չեմ կարող:

Բ.Դ. - Մինչեւ Հատուկ կոմիտեի նախագահ դառնալը, մեզ հետ քննարկել եք բոլոր յոթ տարբերակները, իսկ հենց նախագահ դարձաք, մոռացաք, չուզեցիք:

Ա.Վ. - Դե, ես ձեզ խոսք եմ տալիս:

Պատմում է Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը: Զրույցը վարեց Բակուր Կարապետյանը. 29.10.2005, Շուշի, առաջնորդարան: Մուտքագրեց Անահիտ Ասատրյանը:



Պ.Մ. - 1988 թ. նոյեմբերին Վեհափառ Վազգեն Առաջին կաթողիկոսը օծեց վեց եպիսկոպոսների: Չորսը տարբեր՝ Ռուսաստանի, Սյունյաց, Հորդանանի թեմերի առաջնորդներն էին, մյուսը պաշտոնյա էր Երուսաղեմից: Ես Հռիփսիմե վանքի վանահայրն էի: Հարցրին կաթողիկոսին, թե ինչու Պարգեւին եպիսկոպոս ձեռնադրեց: Կաթողիկոսը պատասխանեց. «Որովհետեւ Պարգեւը արցախցի է, Չարդախլու գյուղից»: 1987թ. սկսվեց Չարդախլուի շարժումը: Ամիսներ շարունակ գյուղը շրջապատված էր, ձերբակալություններ եղան: Չարդախլուի ժողովուրդը ոտքի կանգնեց, ինչը ոգեւորեց արցախցիներին: Քաղաքական իրավիճակն այդ ժամանակ շատ հետաքրքիր էր: Արցախցիները նամակներ ուղարկեցին Մոսկվա եւ Ամենայն հայոց կաթողիկոսին խնդրանքով՝ վերաբացելու Արցախի թեմը, որը փակվել էր 1930 թվականից: Մոսկվան արտոնեց վերաբացել Արցախի եկեղեցիները՝ երկու վանք, երկու եկեղեցի: Ասողիկ սրբազանը, որը Սյունյաց թեմի առաջնորդն էր, Արցախի եւ Սյունյաց միացյալ թեմի առաջնորդ նշանակվեց, եւ կենտրոն ընտրեցին Գորիսը, որպեսզի Բաքվին չենթարկվեին: Ժամանակին այդ քայլը քաղաքական ճիշտ լուծում էր: Ինձ մոտեցավ կաթողիկոսի քարտուղարը՝ Վարդան Մեսրոպյանը, եւ ասաց, որ ես պետք է լինեմ Վեհափառ հայրապետի նվիրակը, ներկայացուցիչը դրսի բոլոր թեմերում, որտեղից հանգանակություն պետք է հավաքեմ եւ բերեմ Էջմիածին: Այդ ժամանակ հանդիպումներ էի ունենում իմ ազգական Դավիթ Շահնազարյանի եւ «Ամարաս» բարեգործականի փոխտնօրեն Արթուր Ալեքսանյանի հետ: Արթուրը հարցրեց, թե մեր եկեղեցիների վիճակն ինչ պետք է լինի: Ես պատմեցի, ներկայացրի, թե ինչպես է լինելու: Արթուրը թե. «Իսկ ինչու՞ Արցախի առանձին թեմ չունենալ»: Ինձ էլ դուր եկավ առաջարկը: Այս զրույցը Դավիթ Շահնազարյանի տան խոհանոցում էր տեղի ունենում: Արթուրն ինձ հարցրեց, թե արդյոք չէի ուզի Արցախի թեմի առաջնորդ լինել: Իսկ ես պատասխանեցի, որ դա

ինձ համար պատիվ կլիներ, բայց հազիվ թե նրանք իրենց որոշումը փոխեն: Երբ Արթուրը հարցրեց, թե ինչ կարող են անել, առաջարկեցի նամակ գրել Վեհափառ հայրապետին եւ շնորհակալություն հայտնել, որ ծագումով արցախցուն եպիսկոպոսի աստիճան շնորհեցին: Արթուրը մոտ տասը հեռագիր պատրաստեց: Վազգեն Առաջինը իմ ձեռքով գրված հեռագրերը բերում, ինձ էր տալիս: Այնուհետեւ բանագնացներ ուղարկեցինք: Ղարաբաղից շատ մարդիկ գնացին Վեհափառի մոտ խնդրելու՝ ինձ նշանակել Արցախի թեմի առաջնորդ: Սփյուռքից որոշ գործիչներ եւս լուրջ դեր ունեցան այս խնդրում: Վազգեն կաթողիկոսն ասում էր. «Ի՞նչ եք ուզում Պարգեւ սրբազանից, նա ուրիշ պաշտոն պիտի զբաղեցնի»: Ճարահատյալ համաձայնվեց. «Լավ, կտամ ձեզ ձեր Պարգեւ սրբազանին»: Եւ ես նշանակվեցի Արցախի թեմի առաջնորդ: Քաղաքական անկայուն իրավիճակ էր: Երբ ինձ ուղարկեց Լեռնային Ղարաբաղ, պատվիրեց անպայման հանդիպել Արկադի Վոլսկուն: Նրան Մոսկվայից էին նշանակել, Հատուկ կառավարման կոմիտեի նախագահն էր: Նա իր համաձայնությունը կամ անհամաձայնությունը պետք է տար Մոսկվային ու կաթողիկոսին: Առաջին անգամ որ եկա, Վոլսկին բացակայում էր: Երկրորդ անգամ եկա ճարտարապետների եւ Միքայել վարդապետ Աջապալյան հետ: Վեց հոգով հանդիպում ունեցանք Վոլսկու հետ, շատ ջերմ զրուցեցինք: Երբ կաթողիկոսը մեկ ամիս հետո գնաց Մոսկվա, հարցրեց Արկադի Վոլսկուն, թե ինչ տպավորություն ստացավ իր նշանակած եպիսկոպոսից, նա շատ դրական պատասխան էր տվել: Վեհափառը վերադարձավ եւ ինձ խրախուսեց՝ հորդորելով լավ ծառայել: Իմ գործունեությունը՝ որպես Արցախի թեմի առաջնորդ, ես սկսեցի 1989 թ. մարտ ամսից: Երկրորդ այցս ապրիլին էր, հաջորդը՝ մայիսին: Հուլիսից, մյուս հոգեւորականներով հանդերձ, հաստատվեցի այստեղ: Գանձասարի վանքի վանահայր նշանակեցի Միքայել վարդապետ Աջապալյանին, Ամարասի վանքի վանահայր՝ Վրթանես վարդապետ Աբրահամյանին, Խնածախ գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցում՝ Տեր Մկրտիչ քահանա Թովմասյանին, Ներքին Հոռաթաղ գյուղի Սբ Աստվածածին եկեղեցու հովիվ՝ Տեր Թադեւոս քահանա Գեւորգյանին: Պատմական Արցախի թեմը չորս հոգով վերաբացեցինք: 1989թ. սեպտեմբերի 2-ին Գաբրիել Սունդուկյանի անվան թատրոնում տեղի ունեցավ հայ մտավորականների հավաք՝ քննարկելու մեր առօրյա խնդիրները: Ինձ նույնպես խոսելու հնարավորություն տրվեց, ինչը ես չէի ակնկալում: Այդ «սադրանքի» հեղինակը Բակուր Կարապետյանն էր: Ելույթում խոսեցի հայոց լեզվի, նրա կանոնադրության մասին՝ ասելով, որ այդ հարցում վերապահումով պետք է վերաբերվել փախստականներին, քանի որ երկար տարիներ ռուսերենով հաղորդակցվելով՝ նրանց համար դժվար է հայերեն խոսելը, դրա համար ժամանակ է պետք: Դիմելով մտավորականներին՝ ասացի. «Իսկ մենք ի՞նչ պետք է անենք, եթե հանկարծ Ռուսաստանը առաջինը դուրս գա ԽՍՀՄ-ի կազմից: Եթե հանկարծ անկախությունը գա ու չոքի մեր առջեւ, մենք պատրա՞ստ ենք դիմավորելու անկախությանը»: Բոլորը զարմացած ինձ էին նայում: Իմ ներքին ձայնն էր ինձ հուշում, որ այդպես է լինելու: Եվ դիմեցի մեր մտավորականներին. «Գնացեք եւ բախեք կոմկուսի կենտկոմի, Գերագույն խորհրդի, կառավարության, պետական անվտանգության, ներքին գործերի նախարարության, մյուս գերատեսչությունների դռները, որպեսզի այսօրվանից պատրաստվենք գալիք անկախությանը»: Այդ ելույթից հետո պետանվտանգության ծառայությունը դիմել էր Վազգեն կաթողիկոսին՝ ինձ կարգի հրավիրելու խնդրով, որ այդքան խիստ եմ խոսել պետական ատյանների հասցեին: Երբ կաթողիկոսը հարցրեց, թե ինչ եմ ասել, պատասխանեցի, որ հակապետական ոչ մի դիտողություն, վերաբերմունք չեմ ցուցաբերել: Ես ընդամենը առաջարկել եմ հայցել նրանց աջակցությունը, որպեսզի հոգեբանորեն, տնտեսապես մենք պատրաստվենք անկախությանը: Բայց շատերի համար տարօրինակ էր խորհրդային իշխանության տարիներին խոսել անկախության մասին: Ես չէի ասում, թե մենք անկախություն պիտի ձեռք բերենք, այլ կարծում էի, որ Ռուսաստանը առաջինը ԽՍՀՄ-ի կազմից դուրս կգա, եւ մենք ակամա կանկախանանք: Ու պիտի պատրաստ լինենք դրան: Այս էր իմ ամբողջ կոչը:

Ալեքսանյան Արթուրի հետ ծանոթացա Դավիթ Շահնազարյանի տանը: Մի քանի հանդիպումից հետո զրույցի ժամանակ Դավիթն ասաց, որ շինանյութով բեռնված մեծ մեքենաների շարասյուն է գնալու Ղարաբաղ՝ ՀԽԱՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանի գլխավորությամբ: Արթուրը պնդեց, որ այդ մեքենաներով նաեւ զինամթերք տեղափոխվի Ղարաբաղ: Դավիթ Շահնազարյանը համաձայնվեց, թեեւ կարծում էր, որ վտանգավոր է: Այդպես էլ արեցին: Դրանից հետո մեր հանդիպումներն ավելի հաճախակի դարձան: Դավիթն ասաց, որ զենք գտնելու, մատակարարելու, Ղարաբաղ տեղափոխելու հարցերով Արթուր Ալեքսանյանն է պատասխանատու: Երբ նշանակվեցի Արցախի թեմի առաջնորդ, Արթուրը «Ամարաս» բարեգործական միության փոխտնօրենն էր: Սկսեցինք համագործակցել մարդասիրական օգնության ստացման ու բաշխման, ինչպես նաեւ դրամական միջոցների հայթայթման հարցերում: Նախ Ամենայն հայոց կաթողիկոսից դրամ խնդրեցինք, եւ նա տվեց: Բավական խոշոր գումար էր. մաս-մաս՝ 100 000, 200 000, 300 000, 400 000 ռուբլի: Կա-

թողիկոսը փող էր տրամադրում նաեւ փախստականներին օգնելու, նրանց վերաբնակեցման հարցը լուծելու համար: Սկսեցինք օգնել գնդին, որի հրամանատարն էր Սամվել Վարդանյանը, ինչպես եւ Մորուք Ռաֆոյի ջոկատին: Գումար հավաքելու նպատակով 1992 թ. կազմակերպեցինք առաջին հեռուստամարաթոնը: Մեզ հաջողվեց հանգանակել յոթ միլիոն դոլար, որից երկու միլիոնը տրամադրվելու էր Արտաքին գործերի նախարարությանը, հինգ միլիոնը՝ Ղարաբաղին: 1994 թ. ԼՂՀ-ի համար ԱՄՆ-ում հավաքեցինք չորս միլիոն դոլար: Ստեղծեցինք նաեւ «Ղարաբաղ» հիմնադրամը, որի խորհրդում ընդգրկված էին այն մարդիկ, որոնք զբաղվում էին դրամահավաքությամբ ու հովանավորում էին Ղարաբաղի գոյապայքարը: Բացի այդ, ստիպված էինք հատուկ հարաբերություններ մշակել ռուս բարձրաստիճան զինվորականների հետ: Օրինակ, մի գեներալի հետ, որը Հայաստանում խորհրդային զորքերի հրամանատարն էր, հետո նա դարձավ Կովկասյան ռազմական օկրուգի հրամանատարը: Նա մեզ ծանոթացրեց գեներալ Բաբկինի հետ, որը Գյումրիի դիվիզիայի հրամանատարն էր: Մեր խնդրանքով նա Վազգեն Սարգսյանին ծանոթացրեց, մտերմացրեց պաշտպանության նախարար Գրաչովի հետ: Նա բացատրեց Վազգեն Սարգսյանին, թե ինչպես պետք է պահի իրեն Ադլերում՝ նավի վրա Վրաստանի, Ադրբեջանի պաշտպանության նախարարների ու մարշալ Գրաչովի հետ հադիպման ժամանակ: Բաբկինի միջոցով ստացա վոց հազար զինվորական համազգեստ եւ շատ այլ անհրաժեշտ բաներ: Առաջին նվերը, որ նրանցից ստացանք, երկու ռազմադաշտային հոսպիտալներն էին՝ նախատեսված վեց հարյուր հոգու համար: Այն մեզ համար փրկություն էր: Երկու «ԿԱՄԱԶ» մեքենայով փոխարկիչ տվեց, որ շատ թանկ արժեր:Այդ ամենը տեղափոխվեց Լեռնային Ղարաբաղ:

Նյութական օգնություն ցուցաբերում էինք բոլոր ջոկատներին՝ հաշվի չառնելով կուսակցական պատկանելությունը: Քնապարկեր ստացանք, որոնք դարձյալ բաժանում էինք զինվորականներին: Մի քանի տասնյակ էլեկտրագեներատորներ ստացանք, որից տասնմեկ հատ ես թողեցի Շահումյանի շրջանում: Քսանհինգ հատ բաժանեցի հիվանդանոցներին ու զինվորական շտաբերին: Արցախի թեմը ստացավ նաեւ մեծ քանակությամբ դեղորայք, զինվորական ծածկոցներ: ԱՄՆ-ից զինվորական համազգեստ ստանալու խնդրանքով դիմեցի կալիֆոռնիացի հայազգի Սիրար Կոկոյին: Կարո Քաղկեջյանի միջոցով, որը «խաչակիրների» հրամանատարն էր, շուրջ երկու հազար զինվորական համազգեստ ուղարկեց Արցախ՝ հետագայում ավելացնելով դրանց քանակը: Երբ ծանոթացավ Սամվել Բաբայանի, Սերժ

Սարգսյանի հետ, նրանց միջոցով սկսեց օգնություն ուղարկել: Առաջին դրամահավաքները Կալիֆոռնիայում անցկացնելիս ամենակարեւոր բանը, որ արեցինք, ռացիաներ ձեռք բերելն էր: Այնտեղից ռացիաներ բերելը Արմեն Իսագուլովի գաղափարն էր: Վարդգես Պարսամի հետ ռացիաներ բերեցինք, որոնց դերը մեր հաղթանակի հարցում շատ մեծ էր: Առաջին անգամ դրանք օգտագործվեցին Շուշիի ազատագրման ժամանակ: Ես հեռուստամարաթոնից վերադարձա ապրիլի սկզբին եւ ինձ հետ բերեցի առաջին յոթանասուն «Ալինկոները» եւ ութ «Մագելանները», որոնք կապվում էին արբանյակի հետ ու ցանկացած կետի ճշգրիտ կոորդինատները տալիս: Այն մեր հրետանու համար անգնահատելի նշանակություն ուներ: Դրանք բերեցի իմ ճամպրուկներով, անցկացնելը շատ դժվար էր, հատկապես «Մագելանները»: Շատ օգնեց Փարիզում մեր ավիացիայի ներկայացուցիչը:

Բ. - Այդ շրջանում ջոկատների կազմավորման մասին պատմեք:

Պ.Մ. - Շատ մտերիմ էի «Արցախ» գնդի տղաների հետ, մասնակցել եմ դրա կազմավորմանը: Շատ ենք օգնել Մորուք Ռաֆոյի՝ Վերին Հոռաթաղի ջոկատին, Կարո Քաղկեջյանի «Սպիտակ արջ» խաչակիրների ջոկատին: Շատ մտերիմ եմ եղել Շահեն Մեղրյանի հետ, նրանց ես մթերք ենք տվել: Կոռնիձորի Արայի ջոկատի հետ էինք կապ պահպանում: Ռազմիկ Դանիելյանը իր փոքր խմբով Մարտունիում էր գործում պատերազմի սկզբում:

Բ. - Իսկ «Ամարասի» հետ ի՞նչ կապեր ունեիք:

Պ.Մ. - «Ամարասի» հետ մարդասիրական օգնություն էինք հայթայթում, բաժանում ողջ Ղարաբաղով մեկ: Շատ կարեւոր գործ էր՝ կարիքավորներին օգնելու, նրանց մխիթարելու, գոտեպնդելու առումով: Բայց, իհարկե, «Ամարասը» զբաղվում էր ոչ միայն մարդասիրական օգնությամբ: Այդ օրերին պարետային ժամ էր գործում: «Ամարասի» տղաները օդանավակայանում էին, մարդասիրական օգնություն էին բերում: Նրանք լավ հարաբերություններ էին ստեղծում պարետների հետ, որոնք կամ տեսնում էին եւ աչք էին փակում, կամ հավատում էին: Ավագ լեյտենանտի կոչումով մեկը Արթուրին խիստ նկատողություն էր արել, թե՝ այլեւս թույլ չենք տալու ապրանք բերեք: Բայց շատ հավատացյալ մարդ էր: Նրա եղբայրը Խորհրդային Միության Ռազմական խորհրդի անդամ էր: Երբ Արթուրը եկավ օդանավակայան ինձ դիմավորելու, այդ ավագ լեյտենանտը հարցրեց, թե ով է: Արթուրը պատասխանեց, թե մեր եպիսկոպոս առաջնորդն է: Նրա խնդրանքով Արթուրը մեզ ծանոթացրեց: Մոտեցավ, աջս համբուրեց, խնդրեց, որ օրհնեմ իրեն, աղոթեմ իր համար: Նրան խաչ, ավետարան, Աստվածաշունչ նվիրեցի: Շրջվեց Արթուրի կողմը եւ ասաց. «Արթուր ջան, օդանա-

վակայանը քոնն է, ինչ ուզում ես, արա»: Մյուս պարետների հետ էլ կարողացանք լեզու գտնել: Ես անցաթուղթ ունեի իմ եւ մեքենայի համար. գենարալ Սաֆոնովին նամակ էի գրում, եւ միշտ անցաթուղթ տալիս էր ինձ, նաեւ մյուս հոգեւորականների համար:

Մենք Մարտակերտի շրջանում՝ Գանձասարի մոտակայքում, հինգ օդանավակայան էր պատրաստվել՝ բոլորն էլ թվերով համարակալված: Հավանաբար մեզ լսում էին, որովհետեւ երբ ասում էի՝ թիվ 1, մոտ հիսուն հոգով գնում էին այնտեղ: Իսկ մենք հակառակ ուղղությամբ էինք վայրէջք կատարում: Մի քանի այդպիսի դեպքեր եղան: Երկու անգամ մեր մեքենան մանրակրկիտ ստուգեցին: Եւ հաստատ ինչոր մեկը մեզ մատնել էր, քանի որ, հաշվի չառնելով անցաթուղթը, ստուգեցին: Նրանք հատուկ ջոկատից էին՝ կարմիր բերետներով:

Պատերազմից առաջ պիտի ժողովրդին ոգեկոչեինք, որ գային ջոկատներում ընդգրկվեին: Տղաների հետ առանձին-առանձին զրուցում էինք, որպեսզի նրանք ջոկատներ ստեղծեին, մտնեին ջոկատների կազմի մեջ: Երկրորդ փուլում, երբ ջոկատներ կային եւ պետք է բանակ ստեղծեինք, արդեն աշխատում էինք հրամանատարների հետ, որ նրանք ազատվեին առանձին ջոկատ հասկացությունից ու միավորվեին՝ լինի դա գունդ, վաշտ թե գումարտակ: Շատերն այդ ժամանակ չէին ուզում միացյալ բանակում լինել: Մի շատ գռեհիկ խնդիր ծագեց: Սովորություն էր դարձել թուրք գերի բռնել եւ տանել ընկերոջ գերեզմանին մորթել՝ իբրեւ թե մատաղ են անում: Ես ստիպված հավաքեցի մեր հրամանատարներից մի քանիսին, նախատեցի՝ ասելով, որ այդ երեւույթը կախարդություն ու մոգություն է, հայ քրիստոնյային վայել չէ, դա ոչ թե մատաղ է, այլ անեծք հանգուցյալ ընկերոջ հիշատակին: Ստիպեցի բոլորին խոստանալ, որ այլեւս նման դեպք չի լինի: Ոչ մի գերի չպետք է սպանվեր, բոլորին պետք է հանձնեին շտաբին: Մեզ հաջողվեց մի քանի շաբաթ տեւած այդ երեւույթի առաջն առնել: Նույնիսկ անհասկանալի էր, թե այդ գռեհիկ արարքը որտեղից առաջ եկավ: Երբ հրամանատարներին պատվիրել էինք բոլոր գերիներին կենդանի հանձնել շտաբին, մի քանի օր անց մեկն ինձ ասաց. «Գիտե՞ս, քո շատ սիրած Մորուք Ռաֆոն այսօր առավոտյան մի գերու է սպանել»: Մնացի ապշած. անհնար բան էի համարում, որ նա ինձ խոսք տա, եւ խոստումը չկատարի: Կապվեցի նրա հետ: Պայմանավորվեցինք հանդիպել Գետավանում: Հարցրի.

- Ռաֆո՛, դու գերի ե՞ս բռնել:
- Այո:
- Իսկ ու՞ր է նա:
- Չկա, մեռավ:

- Ինչպե՞ս թե մեռավ, չէ՞ որ պայմանավորվել էինք բոլոր գերիներին հանձնել:

- Սրբազան ջան, սարերում նրան բռնեցի, իջեցրի: Նա իմ առջեւից էր գնում: Մի քանի կիլոմետր իջել էինք, մտածում էի, թե ադրբեջանցին ի՞նչ գործ ունի Ղարաբաղում: Հարցրի. «Ա՛յ տղա, ինչի՞ ես եկել այստեղ կռվելու: Շրջվեց, ասաց. «Եկել եմ քեզ եւ քեզ նմաններին ոչնչացնելու»: Խփեցի գլխին մի քանի հոգու ներկայությամբ: Չոքեց գետնին ու այլեւս վեր չկացավ, շունչը փչեց: Ես ի՞նչ իմանայի, որ ձեռքի մի հարվածից կմեռներ:

Մի դեպք պատմեմ Կարո Քաղկեջյանի մասին: Հարցրի նրան. «Կարո, ի՞նչ երազանք ունես»: Ասաց. «Սրբազան, ուզում եմ Մասիսը մերը լինի, եւ ես իմ այս ձեռքերով հալեցնեմ Մասիսի ձյուների մի մասը»:

Ճակատամարտի նախորդ օրը, երբ պատրաստվում էին մարտի, Կարոն այնպես էր ուրախանում: Հարցնում էի. «Կարո, ինչու՞ ես այդպես ոգեւորվել»: Ասում էր. «Բա վաղը ճակատ ենք գնալու, գնում եմ հողը ազատագրելու, թշնամուն ոչնչացնելու»:

Մարտակերտի հրամանատար Նորայր Դանիելյանին ճանաչում էի, երբ տասնինը տարեկան ուսանող էր: Ստեփանակերտի Մանկավարժական ինստիտուտի ուսանողական շարժման առաջնորդն էր: Նրան իր ընկերոջ հետ բերեց փիլիսոփայության դասախոս Ղարիբը: Մտերմացանք: Սկսեցին հաճախակի գալ ինձ մոտ: Ես օգնեցի, միջոցներ ճարեցի, որպեսզի Քաջավան գյուղը հիմնեն: Հատուկ ջոկատը Նորայրին ձերբակալեց, բանտարկեց: Ազատվելուց հետո նա Մարտակերտի հրամանատար նշանակվեց: Շատ գրագետ տղա էր Նորիկը:

Լեոնիդ Ազգալդյանը շատ հայրենասեր, գրագետ խելոք անձնավորություն էր: Ներքին շենում՝ Շահումյանի շտաբում, ես, Շահեն Մեղրյանն ու Լեոնիդ Ազգալդյանը նստած էինք: Տղաները դրսում էին, մենք պետք է երեքով խորհրդակցեինք: Լեոնիդը այնքան զգոն զինվոր էր, որ աջ ձեռքով ոտքերի արանքում դրած ավտոմատն էր բռնել, ձախ ձեռքով թեյ էր խմում: Շահենն ասաց. «Լեոնի՛դ, դուռը փակ է, ներսում էլ ես ու սրբազանն ենք, ախպոր պես, ավտոմատը կողքիդ դիր, մարդավարի թեյդ խմիր, ի՞նչ է, մեզ չե՞ս վստահում»: Լեոնիդն ասաց. «Չէ, այսպես լավ է, մյուս անգամ էլ դիտողություն արեցիր, կթողնեմ, կգնամ»: Շահենը ստիպված տեղի տվեց:

Մոնթեին հանդիպել եմ առաջին օրը, երբ նա եկավ Վերին շեն: Եկեղեցին էինք նորոգում: Եկեղեցու շեմին Գրիգոր քահանայի հետ կանգնած կանգնած էի: Շահեն Մեղրյանը ծանոթացրեց մեզ, ասաց. «Սրբազան, մեր ընկերն է, դաշնակցությունն է ուղարկել, մականունը

Ավո է»: Կարճ թեւերով շապիկ, ջինս ու բոթասներ էր հագել: Պարբերաբար հանդիպում էինք Շուշիում, Ստեփանակերտում, Մարտունիում... Մոնթեն անսահման հայրենասեր էր, նվիրված իր ազգին, տաղանդավոր հրամանատար էր եւ լավ մարդ:

Կարո Առաքելյան ունեինք. Սրխավանդի դիրքում էր կռվում, ամեն կիրակի գալիս էր պատարագի: Վերին աստիճանի համեստ, հանդարտ բնավորության տեր մարդ էր, միեւնույն ժամանակ շատ խիզախ, տաղանդավոր հրամանատար էր: Համեստությունն ու քաջությունը զարմանալիորեն միահյուսվել էին այդ մարդու մեջ: Նա զոհվեց պատերազմում:

Բ. - Կոմանդոսի հետ ե՞րբ եք ծանոթացել:

Պ.Մ. - Կոմանդոսի մասին ինձ պատմել էին Ժաննա Գալստյանը, Սերժ Սարգսյանն ու Ռոբերտ Քոչարյանը: Գաղտնի խորհուրդ ունեինք Ղարաբաղում: Յոթ հոգով՝ Ժաննա Գալստյանը, Սերժ Սարգսյանը, Ռոբերտ Քոչարյանը, Գեորգի Պետրոսյանը, Վալերի Բալայանը եւ ես հաճախակի հանդիպում էինք, զանազան հարցեր քննարկում: Երբեմն խորհրդի կազմն ընդլայնվում էր, մեզ միանում էին Մաքսիմ Միրզոյանը, Ռոլես Աղաջանյանը, Արկադի Կարապետյանը: Հետագայում մեր հավաքներին երկու անգամ մասնակցեց Սամվել Բաբայանը:

Բ. - Ի՞նչ հարցեր էիք քննարկում:

Պ.Մ. - Քննարկում էինք բոլոր հարցերը: Շարժման ողջ պատասխանատվությունը մեզ վրա էինք վերցնում: 1989 թվականից մեր գաղտնի խորհուրդը սկսեց գործել: Ինձ պատմեցին Տոդի գործողության մասին, որ այն շատ լավ ղեկավարեց Արկադի Տեր-Թադեւոսյանը: Մենք լավ հրամանատարի կարիք ունեինք, եւ ինձ առաջարկեցին զրուցել նրա հետ: Երբ առաջին անգամ եկավ եւ ծանոթացանք, սպորտային հագուստով էր, վրայից անձրեւանոց էր հագել: Հարցրի. «Ինչու՞ ես եկել Ղարաբաղ»: Ասաց. «Իմ նախնիները Կարսից են, եկել եմ Ղարաբաղն ազատագրեմ, որ հետո էլ Կարսը ազատագրեմ»:Ես աղոթեցի, օրհնեցի նրան: Միաձայն որոշեցինք, որ նա մեր կռվում պետք է հրամանատար լինի: Նրա դերը անուրանալի է հատկապես Շուշիի ազատագրման, բանակի կազմավորման գործում:

Մենք նստած էինք Արմեն Իսագուլովի առանձնասենյակում, որը երկրորդ՝ «անպաշտոն» շտաբն էր: Բուն շտաբը, որտեղ Կոմանդոսն էր նստում, ձորի մյուս կողմում էր: Արմեն Իսագուլովի սենյակում պարբերաբար՝ երեք-չորս ժամը մեկ, հավաքվում էինք: Եկան Զորի Բալայանը, Գուրգեն Դալիբալթայանը, Սերժ Սարգսյանը, Ռոբերտ Քոչարյանը, Օլեգ Եսայանը, Սամվել Բաբայանը: Քննարկում էինք, թե ինչ ենք անելու եւ ինչպես: Ես երեք հատ ռացիա ունեի, երեք ճակատներից լսում էի, թե ինչ է կատարվում: Հաճախ նրանք կապվելիս իրար լավ չէին լսում, հասկանում: Ես էի միջամտում եւ ասում, թե ինչ են ուզում: Երբ հարցնում էին, թե ով եմ (որովհետեւ բոլորն էին լսում), ասում էի՝ կարեւոր չէ, թե ով եմ, դուք պարզապես այսինչ բանն արեք: Մի հետաքրքիր դեպք պատմեմ: Գյումրիից եկած տղաները բարձրացան Բալուջայից վերեւ՝ Ջանհասանի մոտ: Լսում եմ՝ տղաներից մեկն ասում է. «Արա՛, պետք չի, դեմը անտառ է, կարող է թակարդն ընկնեք»: Մյուսն էլ ասում է. «Չէ՛, հանգիստ, բան չկա, հեսա մտնում ենք»: Հանկարծ լսվեց՝ «Ա՛խ, վա՛յ, արա՛, սխալ արինք»: Այդ պահին Սեյրան Օհանյանի ձայնը լսեցի: Մեկը նրանից ինչ-որ բան էր խնդրում, Սեյրանը շատ հոգնած ձայնով ասում էր. «Այսօր տասներկու հոգի զոհվել են, դժվար թե ավելի շատ մարդ կարողանամ ուղարկել այդ ուղղությամբ»:

Շուշիի դեպքերը նկարահանում էր Շավարշ Վարդանյանը: Երբ նա եկավ ժապավենները վերցնելու, խնդրեց, որ իմ վարորդը իրեն տրագ Շուշի հասցնի: Ես ռացիայով լսում էի, թե որտեղ ինչ է կատարվում, բայց, որպես ականատեսի, նրանից հետաքրքրվեցի, թե Շուշիում ինչ իրավիճակ է: Նա պատմեց զինվորների վիճակի մասին: Վարորդս՝ Կարենը, մեքենայով տարավ նրան: Սկսեցին կրակել: Մոտ կես ժամ կանգնեցին, հետո կրակոցների տակ առաջ շարժվեցին: Տեղ հասնելուց հետո Կարենը վերադարձավ: Դրանից յոթ-ութ ժամ հետո բոլորս մտանք Շուշի: Կենտրոնն ամբողջությամբ մաքրված էր: Ես ռացիայով լսում էի, երբ թուրքերը կապվեցին Ադդամի հետ: Ասում էին. «Բյոռօղլուն ուղարկեք Ասլանին»: Մտածում էի, թե դրանք ինչեր են: Հետո երբ ինքնաթիռը ռմբակոծեց Ստեփանակերտը, հասկացա, որ «Բյոռօղլին» ինքնաթիռն է, «Ասլանը»՝ ուղղաթիռը: Փաստորեն, ոգուժին էին օգնության կանչում:

Զորի Բալայանն ու Դալիբալթայանը եկան: Ես ու Արմեն Իսագուլովը բարձրացանք մեկ այլ սենյակ՝ սուրճ խմելու: Միացրինք հեռուստացույցը, որպեսզի լսենք՝ արդյոք Մոսկվայի հեռուստաընկերության լուրերի թողարկմամբ կհաղորդե՞ն, որ հայերը սկսել են Շուշիի ազատագրումը: Այն պահը ցույց տվեցին, որ գցել էին Դերժինսկու արձանը: Դրանից հետո գցեցին Լենինի արձանը: Դրա արձանը ես մի ամիս առաջ էի փորձում գցել: Բաց եթերով կապվեցի Զորի Բալայանի հետ, ասացի. «Կոմիսա՛ր, անհոգ եղեք, հրեշի արձանը տապալել են, Շուշին մի երկու ժամից մերը կլինի»: Ես այնպես ասացի, որ մեր զինվորները բոլորը լսեն, ավելի ոգեւորվեն: Երկու ժամ քառասուն տոպե հետո մենք շարժվեցինք դեպի Շուշի: Մայիսի յոթին մինչեւ երեկո բոլոր զինվորները տարբեր շրջաններից եկան, ինձնից խաչեր ու-

գեցին: Հազար երեք հարյուր հատ խաչ էի բաժանել, էլի քիչ էր, ուզում էին: Սկսեցի կրծքին կամ ճակատին կպցվող խաչեր բաժանել, դա էլ չբավականացրեց: Տղաները սկսեցին մարմնի տարբեր մասերում խաչեր նկարել: Նայելիս թվում էր, թե խաչակրաց արշավանք է: Գործողությունը պետք է սկսեինք դեռ մարտի 1-ին, բայց տեղափոխվեց մարտի 15-ին, հետո՝ ապրիլի 1-ին, 15-ին, 24-ին, ի վերջո այն իրականացավ մայիսի յոթին: Հետաքրքիրն այն է, որ 353 թ. մայիսի 7-ին Խաչի երեւման օրն է եղել:

Մայոր Մադաթովը Մադաթովների պատմական խաչքարն էր բերել: Մոմ էինք վառում մեր հաղթանակի համար: Ասացի, որ ծնկաչոք պիտի աղոթք անենք: Հովիկ Եսայանը շատ ջիգյարով ասաց. «Սրբազան ջան, փորի վրա պառկած կաղոթեմ, մենակ թե հաղթենք»:

Սերժ Սարգսյանի ու Ռոբերտ Քոչարյանի դերը շատ մեծ էր, նրանք ընդհատակյա ղեկավարում էին շարժումը: Բոլոր խնդիրները քննարկելիս շատ հավասարակշռված էին, լավ ծանրութեթեւ էին անում ամեն ինչ: Քոչարյանն ասում էր. «Պատասխանատվությունը վերցնում ենք մեզ վրա. սխալ արեցիք՝ պատասխան կտանք, ճիշտ արեցիք՝ բոլորիս համար է լավ»: Ուրախալի էր, որ այդ գիտակցությունը մեր յոթնյակի մեջ առկա էր, որն էլ միշտ ընդգծված դրսեւորում էր Ռոբերտ Քոչարյանը: Պատահում էր՝ ռմբակոծությունների ժամանակ Սերժ Սարգսյանի կամ Ռոբերտ Քոչարյանի շտաբում էի եւ տեսնում էի, որ այդ ժամանակ էլ նրանք շատ հավասարակշռված էին՝ «ի՞նչ անենք, որ ռմբակոծում են, ամեն մարդ իր գործով պիտի զբաղվի»: Մի անգամ Սերժ Սարգսյանը եկավ, ասաց.

- Սրբազան, շատ ծանր վիճակում ենք, զինվորներին համազգեստ է պետք, որպեսզի իրենց միացյալ բանակի զինվոր զգան:

- Ի՞նչ հնարավորություն ունես:

- Մոսկվայից զինվորական համազգեստ գնելու հնարավորություն կա:

- Ի՞նչ արժե:

- 178 հազար դոլար:

- Ինձ երեք օր ժամանակ տուր, ես այդ գումարը կտամ: Գնա զինվորներին ասա, որ երեք օրից համազգեստ կունենան:

Ուրախացած գնաց, զինվորներին լուրը հաղորդեց: Երեք օրից ես իսկապես գումարը ճարեցի, տվեցի նրան: Տղաներին առաջին անգամ զինվորական հագուստ հագցրինք Սերժ Սարգսյանի նախաձեռնությամբ: Երբ ջոկատները պետք է միավորեինք միացյալ բանակի կազմում, Սերժ Սարգսյանը դիմեց ինձ. «Մորուք Ռաֆոն չի ուզում միանալ բանակին»: Երեքով հանդիպեցինք, Մորուք Ռաֆոյին ասացի, որ պարտավոր է բոլորի հետ միանալ: Սերժ Սարգսյանը Ղարաբաղում պաշտպանության նախարարն էր: Այդ ժամանակ Նարեշտարի ազատագրման գործողություններն էին ընթանում: Սերժ Սարգսյանը Ռաֆոյին խոստացավ «ԴԵՇԵԿա» տալ, որպեսզի մասնակցի Նարեշտարի գործողություններին: Այդ օրվանից էլ Մորուք Ռաֆոն իր ջոկատով միացավ բանակին: Սերժ Սարգսյանը Կրկժանում լեզու էր գտել հրամանատարների հետ՝ իր հանդարտ բնավորության, լսելու ունակության շնորհիվ: Ցանկացած հարցով դիմելիս՝ աշխատում էր միշտ օգտակար լինել: Մի անգամ Սերժ Սարգսյանի, Արմեն Աբգարյանի, որը թիկունքի պետն էր, եւ Սամվել Բաբայանի հետ նստած էինք: Վանք գյուղի ջոկատների համար երեք ավտոմատ էի ուզել՝ Վանքի հրամանատար Հուրայի խնդրանքով: Նրանք Առաջաձորի ճակատով պիտի գնային: Դիշերը եկել էի դրանք վերցնելու: Սամվել Բաբայանը հարցրեց, թե ինչ է լինելու: Հանգստացրի նրան՝ ասելով, թե մեր տղաները առյուծի պես մտել են, հիմա կգրավեն: Սամվելը, թե. «Սրբազան, ի՞նչ ես ասում, զինվորները նախօրոք որ իմանան հաղթելու են, էլ չեն կռվի»: Բայց Սերժը ընդհատեց. «Սրբազանը ճիշտ է, մեր տղաներին պիտի ոգեւորենք, ու այն էլ ոնց կկռվեն»:

Շուշիի գրավման ժամանակ Ռոբերտ Քոչարյանն ու Սամվել Բաբայանը շրջանցեցին Շուշին ու գնացին Չառիսլու: Մի օր դիրքավորվեցին, ետ եկան: Ասացին, որ ճանապարհին թուրքի մի զրահամեքենա են խփել, դիրքերը արդեն պատրաստ են, գնդացիրները դրված, անելու ոչինչ չկա, մնում է Շուշին մաքրենք, եւ այն մեր ձեռքում կլինի: Այդտեղ առաջին անգամ Ռոբերտ Քոչարյանին զինվորական համազգեստով տեսա:

1992 թ., երբ Շահումյանից, Մարտակերտից գաղթականներ կային, մեր սահմանագիծը անցնում էր Դրմբոնով, Չլդրանով: Լեդի Քոքսը լրագրողների խումբ էր բերել, որպեսզի նրանց տանենք Չլդրանի գերեզմանոց եւ ցույց տանք, թե թուրքերն ինչ վայրագություններ են արել: Մեզ հետ էր նաեւ Զորի Բալայանը: Ութ-ինը մեքենաներով հասանք, գյուղի ճանապարհին կանգ առանք: Մենք չգիտեինք, որ դիմացի բլուրից ազերիները մեզ նկատել են: Սկսեցին հրետանիով կրակել: Արկը հիսուն մետր ձախ ընկավ: Ասացի. «Ավելի լավ է մեքենաները այստեղից հեռացնենք, թե չէ ամբողջ շարասյունը թշնամին ցրիվ կտա, երեւի կարծում են, թե զինվորական օգնություն ենք տանում մերոնց»:

Մեքենաները մոտ հարյուր քսան մետր ներքեւ գտնվող բլրի ետեւը տարանք: Գնդակները արդեն մեզնից երեսուն մետր բարձր բլրին էին կպնում:

Պատերազմն ավարտվել էր արդեն, մի օր Դալիբալթայանին ասացի.

- Խեր լինի, պարոն գեներալ, Դուք էլ եք ինձ հրաման տվել:

- Հնարավոր չէ, ես ինչպե՞ս կարող էի Ձեզ հրամայել:

- Տվել եք, բայց երեւի չգիտեք, որ ես եմ եղել: Դուք շտաբում նստած էիք:

Գանձասարի մականունը դրել էին «Պարգեւ»: Նարեշտարից առաջին անգամ խփել են Գանձասարին: Շտաբում նստած՝ ռացիայով հարցնում են նրան. «Պարգեւ՛, Պարգեւ՛, ձեզ մոտ ի՞նչ կա»: Նա էլ ասում է. «Նարեշտարից գրադով եւ թնդանոթով խփում են»: Լսում եմ Դալիբալթայանի ձայնը, ռուսերեն հրամայում է. «Հաղորդիր Պարգեւին, որ դուրս գան Գանձասարի ետեւը, շրջապատեն ու ոչնչացնեն թշնամուն»: Քթիս տակ ժպտում եմ: Ութ հոգեւորականներով ենք՝ ավտոմատներով, նռնակներով զինված: Ձորն ենք պահում: Իսկ Նարեշտարում մոտ երկու հարյուր քսան զինվոր կար, մենք ինչպե՞ս պիտի բարձրանայինք լեռը, շրջապատեինք: Բայց նա չէր հիշում, որ նման հրաման է տվել:

Գյուղն այդ ժամանակ դատարկ էր, ութսուն հազար մարդ գաղթեց, մի աքլորի ձայն էլ չէր լսվում: Ութ հոգով Գանձասարի վերեւի բլուրներն էինք պահում: Քսան-քսաներեք հոգի էլ ձորն էին պահում, որ թշնամին այդ կողմից չմտնի: Իմ թեմի հոգեւորականներից ոչ մեկի մեջ վախի զգացում չտեսա:

Բ. - Իսկ ինչպե՞ս եք վերաբերվում այն երեւույթին, որ հոգեւորականը զենք է վերցնում:

Պ.Մ. - Լավ երեւույթ չէ, բայց երբ զինվորի պակաս կա, ստիպված ես զենք վերցնել եւ ժողովրդին էլ քո ետեւից տանել: Մեր վանքը մենք պիտի պաշտպանեինք, ուրիշ մարդ չկար: Աստված երբ պարտեզ է տալիս, եւ դու մշակն ես, ամեն գնով պետք է պահպանես այն, չթողնես, որ մոլախոտը գա եւ ավերի քո պարտեզը: Հոգեւորական լինելուց բացի՝ մենք պարտական ենք նաեւ մեր ազգին, հայրենիքին:

Պատմում է Արմեն Մազմանյանը: Զրույցը վարեց Բակուր Կարապետյանը. 17.11.2005, Երեւան: Մուտքագրեց Անահիտ Ասատրյանը:

Ա.Մ. - Ես ավելի շատ սկզբնական շրջանում եմ մասնակցել շարժմանը՝ 1988-ից մինչեւ 1992 թվականի վերջը: Հիշում եմ այն օրը, երբ հանրահավաքի ժամանակ առաջին անգամ գոչեցինք՝ ի զեն: Հարթակում էին Մովսես Գեորգիսյանը, Սմբատ Հակոբյանը, որին *սպարապետ* էինք կոչում (այժմ նա պաշտոնաթող գնդապետ է), եւ ես: Օրեր շարունակ խոսում էինք զինված պայքարի մասին, որ ժամանակն է բարձրաձայն ասել այդ մասին: Բայց այդպես էլ խոսքը որոշում չէր դառնում: Երեքս իրարից անկախ գոչեցինք՝ ի զեն.... որտեղից, ինչպես ուզում եք ճարեք.... Գետաշենը, Արծվաշենը... Դրանից հետո ստիպված էինք թաքնվել: Ազգային անվտանգության, դատախազության որոշմամբ երեքիս դեմ գործ էր հարուցված՝ ելույթում զինված պայքարի եւ զենք խլելու կամ փող հավաքելու կոչերի համար: Դա վայրենություն էր դիտվում: Նույնիսկ շարժման քաղաքական ղեկավարները՝ «Ղարաբաղ» կոմիտեի լիդերները, միանգամայն այլ կարծիք ունեին: Մտավախություն կար: Վտանգավոր էր: Բայց չեմ կարծում, թե մեր արածը քյալագյոզություն էր: Ցերեկները հանրահավաքների ժամանակ մեզ ոչ ոք չէր բռնում, բայց երեկոյան պետք է թաքնվեինք, քանի որ տան շրջակայքում կամ էլի ինչ-որ տեղ սպասում էին մեզ: Մովսեսին տաքսի նստելիս բռնեցին, քսանհինգ-երեսուն օր պահեցին: Սմբատին նույնպես բռնեցին: Իսկ ես Նորքում իմ ընկերների, հարազատների տանն էի թաքնվում: Թեեւ մի անգամ թատրոնում փորձեցին բռնել: Այդ ժամանակվանից սկսած՝ ականատեսն ու շարքային մասնակիցն եմ եղել առաջին ջոկատի կազմավորման, առաջին մի բուռ փամփուշտը բերելու: Այն ժամանակ Անապայից բերված հինգ հատ կարաբինը կամ Ռիգայից ինքնաթիռով բերված մի գնդացիրը մեզ համար հավասարազոր էին հինգ տանկի, այնքան որ բոբիկ ու անզեն էինք, որսորդական հրացան էլ չունեինք: Զինվելու կոչին առաջին հերթին արձագանքեցին հիմնականում ղաչաղները, «քուչի տղերքը», մեծա-

մասնությամբ հանցագործ տարրերը: Ֆիդային էլ է այդպիսին եղել: Օրենքից դուրս, թուրքի քարավանը կտրող գողն էր, որը երբ իմացավ՝ դաշտավայրում մորթում են հային, սկսեց կռվել: Հետո նրանց միացան դաշնակցականները, գաղափարախոսությամբ նվիրյալները: Միշտ ժողովրդական պայքարի առաջին գծում հայտնվել է փողոցներում դանակահարված եւ դանակահարող, բանտ նստած խուժանը: Բայց այդ խուժանի մեջ ինձ հիացնում է նրա ինքնագիտակցումը, ներքին ինքնակառավարումը, որ առանց վախի գողանում էին ՊԱԿ-ի պահեստի զենքը: Դա Երասխավանի դեպքից առաջ էր: Այդ զորամասից զենք տանելու ժամանակ ես նրանց հետ չեմ եղել, այլ դրա ածանցյալ պատմությանն եմ մասնակցել, քանի որ մեր ընկերներն էին, երբ ՊԱԿ-ում նրանց անուններն էին տվել: Ասել էին, որ եթե զենքը չտանք, «Ղարաբաղ» կոմիտեն կփակեն՝ որպես ռազմական կազմակերպություն: Արեշի մի խումբ տղաներ՝ Գոքորը, Համիկը եւ այլն, ՊԱԿ-ի մի զորամասից զենք էին գողացել՝ մոտ հարյուր հիսուն միավոր ավտոմատ: Այդ զենքերը Երասխավանի առաջին կռվի ժամանակ մեծ նշանակություն ունեցան: Որսորդական հրացաններով էին զինված այնտեղ, եւ եթե այդ ավտոմատները չլինեին, արդյո՞ք մի քանի զոհ կտային, թե՞ հարյուրավոր: Թշնամին սեւ համազգեստներով, մինչեւ ատամները զինված էր, իսկ մենք, համենայն դեպս, երեւանցի տղաներս նոր-նոր էինք զենք վերցնում ձեռքներս: Քսանհինգ-երեսուն միավորը հատկացված էր Մովսես Գեորգիսյանի, Աշոտ Նավասարդյանի «Անկախության բանակին»: Երեսուն-երեսունհինգ միավորով «Ղարաբաղ» կոմիտեի անվան ներքո ստեղծվեց առաջին պաշտպանական թիմը, որի կազմում էին Բուդոն (Ռոմիկը), Մուշեղ Մխոյանը, Սմբատ Հակոբյանը, Երրորդ մասի Գրոն, Ղըժ-ղըժ Սուրոն, ես եւ ուրիշներ: Հետո Աֆղանստանում կռված տղաները միացան: Մնացած զենքը Արեշի ջոկատի համար պահեցին: Վոժդի՝ Մուշեղ Մխոյանի մանկության ընկերներն էին: Զենքը բաշխեցին: Զենքը հասավ հենց Երասխավանի կռվի պահին: Մովսես Գեորգիսյանը ոգեւորված իր ընկերների հետ բարձրացավ սարի գլուխը, եւ ես ականատեսը եղա նրա մահվան:

«Ղարաբաղ» կոմիտեի առաջին հարկում զինանոցն էր: Տալլինից, Թիֆլիսից, Ռոստովից ընդամենը մի քանի միավոր զենք էինք ստանում, ուղարկում Գետաշեն: Ստեղծվեց «Ամարաս» կազմակերպությունը, Արթուր Ալեքսանյանի հետ էինք անընդհատ կապ պահպանում: Պատերազմ դեռ չկար: Զենքը ուղարկում էինք վերեւի գյուղերը: Դրանցով էլ ձեւավորվեցին առաջին ջոկատները, գոնե «Ղարաբաղ» կոմիտեի թեւը: Աշոտ Մանուչարյանն ու Համբարձումը Գալստյանը ինձ, Վոժդին, Սմբատին ասացին, թե միութենական ՊԱԿ-ը, Մոսկվան կա-

տաղել են, պետք է զենքերը ետ վերադարձնել, ինչի համար սահմանափակ ժամանակ է տրված, հակառակ դեպքում «Ղարաբաղ» կոմիտեն կհամարեն ռազմական կազմակերպություն եւ շենքը կփակեն: Մեզ միամիտ ձեւացրինք՝ իբր ոչ մի կապ չունենք: Եթե ուզենայինք, կարող էինք այդ պահին գտնել, մոտ քսան միավոր զենք մի կողմ էինք դրել: Խորհրդային ՊԱԿ-ի կողմից տարվող պրովոկացիան շատ իրական էր: Այն մեզ համար նշանակություն չուներ: Բայց Աշոտ Մանուչարյանն ու Համբարձումը Գալստյանը տղաների անուններն իմացել էին: Նիստ էր հրավիրված: Անունները ներկայացրել էին ՊԱԿ-ին, թե ովքեր են գողացել, ովքեր են կազմակերպել: Զենքը բաժանված էր արդեն, բայց այդ տղաները հայտնվեցին ՊԱԿ-ում: Երբ Մուշեղ Մխոյանը տրամաբանորեն եկավ այն եզրակացության, որ Աշոտ Մանուչարյանն ու Համբարձումը Գալստյանն են արել, վազելով բարձրացավ վերեւ, բացեց սենյակի դուռը, որտեղ նիստն էր ընթանում, մի հարվածով երկու հոգու փռեց գետնին: Հայհոյեց՝ «ես սրանց ծախող մերը...»: Իրավիճակն այնպիսին էր, որ նույնիսկ չգիտեմ՝ մեղադրեմ նրան այդ քայլի համար, թե ոչ: Իրականում մեզ ծախել էին, մարդկանց մատաղի զոհ մատուցելու նման մի բան էր: Տղաները մոտ ինն ամիս մնացին ՊԱԿ-ում: Մուշեղի հետ լիմոնկաներով, ուլտիմատումով նրանց խլեցինք: Այդ օրը ստեղծվեց ՄՈՒԾ-ը՝ Միացյալ ուժերի շտաբը: Այդ ժամանակ միայն Վազգեն Մանուկյանին եւ Իգոր Մուրադյանին էինք լսում: Մեր՝ կռվող տղաների ջոկատի համար այդ երկուսն էին հեղինակություն: Վազգեն Մանուկյանը Վոժդին սպառնաց վռնդել կոմիտեի շարքերից: Տղաներով որոշեցինք, որ պետք չէ կուսակցական կախվածության մեջ գտնվել, մենք ինքնապաշտպանության հարցերով պիտի զբաղվենք: Գործին չվնասելու համար դուրս եկանք կոմիտեի կազմից: Սմբատի հետ մնացին Աֆղանստանում կռված տղաները, որոնք հետո նախագահի թիկնապահները դարձան: Ես, Գրոն, Վոժդը, Աշոտը, Հովիկը եւ այլոք ուրիշ կազմակերպություն ստեղծեցինք:

Երասխավանի կռվի ժամանակ պատահաբար իմացա, որ մի կտոր զենք է մնացել. բիաթլոնի «ՏՈՉ-8» էր: Ես վերցրի, վազեցի, հասանք այնտեղ: Գոքորը, որն ինձ ճանաչում էր, բայց ես նրան՝ ոչ, նայեց ինձ, ասաց. «Սա՞ է զենքդ»: Ասացի. «Այո, սա է մնացել»: Վերցրեց ձեռքիցս, խնդրեց նվիրել: Ասացի. «Հո գի՞ժ չես»: Դեռ չէինք հասել ճակատային գիծ, մի նոր ավտոմատ հանեց, թե. «Սա է քեզ վայել, իսկ դա թող ինձ հիշատակ»: Զենքերը փոխեցինք: Այդ ժամանակ Մովսեսը սարի վրա էր՝ Գոքորի տված զենքերով, որոնք հետո հանձնեցինք ՊԱԿ-ին: Պարզվեց, որ ոչ ոք չի գնալու Մոսոյենց ջոկատի ետեւից: Երբ ավտոմատը ձեռքիս մտա գինու գործարան, Վարդանը՝ Տոզը, նայեց աչ-

քերիս, հետո՝ ավտոմատին, ասաց. «Մա՛զ, դու ավտոմատ առաջին անգա՞մ ես բռնում: Ասացի. «Ես խորհրդային բանակից փախել եմ գժանոցով որպես պացիֆիստ՝ զենքը ատող մարդ: Զենքի կնքումը՝ առաջին մարտը, ինձ համար մեծ ողբերգությամբ ավարտվեց: Ձեռքերիս մեջ զոհվեց իմ մանկության ընկերը՝ Սողոյան Երվանդը, որը եկել էր օգներ Մովսեսի դիակը դուրս հանեինք:

Բ. - Ինչու՞ են ասում, թե Մովսեսին թիկունքից ՊԱԿ-ի մարդիկ խփեցին:

Ա.Մ. - Այդ փաստը միայն ես կարող եմ հավաստել, ինչը ոչ մի լրատվամիջոցի մինչ այժմ չեմ ասել: Մովսեսին ու իմ ոտքին կպած առաջին գնդակը միաժամանակ եղավ: Ես մոտ տասը հոգու համոզեցի: Մուշեղը այստեղ չէր, գնացել էր Ռիգա թե Տալլին՝ զենք բերելու, բայց ճակատամարտին հասավ: Օդանավակայանից զանգել էր տուն, ասել էր. «Մաուզերս բերեք Երասխավան»: Մի քանի հոգով՝ Սուրոն, Ռոմիկը, Աֆղանցի Նվերը, Բուդոն, ես, Մոսոյենց ետեւից բարձրացանք սարը: Ես բարձրանում էի, որ Մոսոյին ասեմ իջնի, քանի որ մյուս ջոկատները չէին մասնակցելու այդ գործողություններին: Կողքի գինու գործարանը պայթեցրել էինք, ետ քաշվել: Հեռադիտակով նայում էինք, թե ինչպես էին ադրբեջանցիները՝ սեւ համազգեստներով, զինված, բեռնատար մեքենայով իջնում: Նրանք արդեն շատ ավելի լավ էին կազմակերպվել: Երբ հասանք սարի գլուխը, սկսեցի Մովսեսին համոզել, որ իջնի՝ ասելով, որ նա ակցիան արդեն արել է, դրոշը խփել է, բայց պետք է զգուշանալ, որովհետեւ տանկերը, հնարավոր է, հիմա կխփեն, իսկ եթե ուզում է՝ կմեռնենք: Հասկացանք իրար: Ներքեւից ջոկատ էր բարձրանում: Կանգնեցրինք նրանց ու ետ գնացինք: Արդեն դուրս էինք եկել թուրքերի ճակատային գծից: Ճանապարհին՝ սարի տակ, պետավտոտեսչության կետ կար, դրա ետեւում ֆուտբոլի դաշտի կեսի չափ տարածություն էր՝ լրիվ ձյունով ծածկված: Մենք հասել էինք բետոնի տակ եւ այնքան հանգիստ էինք, որ նույնիսկ սկսեցինք ծխել: Մովսեսի մահը իմ մեջ տարակուսանք էր հարուցել, բայց պատասխանը գտա: Իմ՝ որպես ականատեսի համոզմամբ՝ Մովսեսի սպանությունը քաղաքական սպանություն էր: Սարի վրա մենք թուրքերի հետ դեմ առ դեմ կռվում էինք, մեր միջեւ ընդամենը հարյուր հիսունից երկու հարյուր մետր տարածություն էր: Նրա՝ այդ պահին զոհվելը տրամաբանական կլիներ: Երասխավանցի մի տղայի թուրքերը խփեցին: Երբ իջել էինք, կարծես թե կռվի դաշտից դուրս էինք եկել: ՊԱԿ-ը, բանակը փորձում էին գործընթացը հսկողության տակ առնել, դադարեցնել: Այսինքն՝ որ մենք դուրս էինք եկել, այնտեղ էլ լրացրել էին թուրքերին: Երբ նստած ծխում էինք, մի քանի կրակոցներ եղան:

Մովսեսի կանգնած տեղը ավելի ցածր էր: Նա իմ դիմացն էր կագնած: Ես ցած ընկա: Գնդակը մտել էր ոտքս, ներքեւից դուրս եկել: Հարվածի ուժը ինձ գցեց գետնին:

Այդ պահին ոչ մի ցավ չզգացի: Դեռ Վոժդը ծաղրեց, թե վախից նստեցիր: Նա ինչպե՞ս հայտնվեց այստեղ. թուրքի գերեզմանում քարի ետեւից կրակում էր թուրքերի վրա: Հանկարծ գլխիս մեջ այնպիսի մի զրնգոց, տրաքոց զգացի, որ մտածեցի, թե խփեցին: Բայց հասկացա, որ ոչինչ էլ չկա: Գլխավերեւումս Վոժդի ծիծաղը լսեցի՝ վախեցա՞ր, արա՛: Այդ պահին չիմացա, թե ինչու ընկա: Գնդակը կպել էր Մովսեսի լազդրին: Ես, Արեշից Արջ Աշոտը անմիջապես Մոսոյին օգնության վազեցինք: Նրան տեղափոխեցինք բետոն կոչված տեղը: Ետեւում փոսեր կային, դրեցինք դրա մեջ: Վոժդը քարի ետեւից կրակում էր թուրքերի դիրքի կողմը, որովհետեւ այդ կողմից էլ կրակ սկսվեց: Ես համոզված եմ, որ դա քաղաքական սպանություն էր, որովհետեւ ՊԱԿ-ի համար ոչ մի խնդիր չկար՝ կրակել մեր կողմից, թե թուրքերի դիրքից: «Վիլիս» մեքենաներով շրջում էին, օպերատիվ իրադրության տերը նրանք էին: Վերլուծելիս հանգում եմ այն մտքին, որ հայկական կողմից խփեցին: Ես կանգնած էի պրոֆիլով. աջ կողմով՝ դեպի ազերիների դիրքերը, ձախ կողմով՝ դեպի մեր կողմը: Հարվածը այդ կողմից է ինձ կպել, Մոսոն էլ դեմքով դեպի այդ կողմն էր: Եթե նույնիսկ այդպես չէր, միեւնույնն է, ես քաղաքական սպանություն եմ համարում: Նա շատ ինքնուրույն էր, չէր ենթարկվում սխեմայի տրամաբանությանը, անկառավարելի էր: Քսաներորդ դարի վերջի քաղաքական հատուկենտ լուսավոր դեմքերից էր: Երբ վազեցի նրան բարձրացնելու, ավտոմատս թողեցի քարի վրա: Երբ նրան գցեցի փոսը, Վոժդը ասաց՝ զենքդ: Շուռ եկա զենքս վերցնելու: Արջ Աշոտը, Հովիկը եւ Մովսեսը բետոնե պատի ետեւի փոսի մեջ էին: Իմ զենքը չգտա: Այդ մարդը դուրս գալիս հետը տարել էր: Պետք էր պատի ետեւը թաքնվել, որպեսզի թշնամու կրակահերթի տակ չընկնեինք: Մի հատ կարճ կարաբին ու մի որսորդական բերդանկա գտա: Թողել էին երեւի վախից, փախչելու ժամանակ: Այդ ընթացքում Մովսեսն իրեն փոսից դուրս էր գցել: Մենք ասել էինք՝ պահեք նրան, հույս ունենալով, որ գրահամեքենա կգա, եւ կտանենք նրան: Բայց արդեն դիակ էր: Գնդակը թիկունքից էր կպել: Կարծում եմ՝ դա էլ թուրքերի կողմից էր խփած: Բայց, միեւնույնն է, ՊԱԿ-ի համար խնդիր չէր՝ աջ, ձախ, վերեւ թե ներքեւ... Մնացածների ոտքին կամ ձեռքին էին խփում: Ես ոտքից վիրավորվեցի, Սմբատը՝ ձեռքից, նույնը՝ Գերոյան Հովիկը, Արջը: Այն տպավորությունն էր, որ շատ առաջ կանգնածներն էին խփվում, եւ, չգիտես ինչու, ոչ գլխից: Միայն Մովսեսի գլխին էին խփել: Փոսից գլուխը դուրս էր գցել, ու միանգամից խփել

էին: Փորձեցի բերանով շնչառություն տալ՝ քանի դեռ շնչառության ձայն էր լսվում, ապտակում էի: Բայց երբ կապտեց, ամեն ինչ պարզ էր: Դաշտից դուրս բերեցի: Նրան գրկած՝ մենակ դժվար էր թեքությունը հաղթահարելը: Ձայն տվեցի, որ ինչ-որ մեկը գա: Վոժդը ինձանից առաջ էր գտնվում, կրակում էր դիրքերում, որպեսզի ես կարողանամ Մովսեսին դուրս հանել: Երվանդը՝ իմ մանկության ընկերը, որին ես էի բերել ջոկատ, մոտեցավ թե չէ՝ նրան էլ խփեցին: Իմ վիճակը ավելի ծանրացավ: Երվանդին էլ ոտքով գլորելով էի իջեցնում: Նա դեռ ողջ էր: Բայց գոռում էր. «Մեռնում եմ, փորս եփվում է, խփիր՝ պրծնեմ»: Բայց չէի հասկանում՝ եթե ոտքից է վիրավոր, ինչու չի կարողանում, ինչու է պառկած: Մահանալուց հետո պարզ դարձավ, որ 5,45-ը (ծանրության կենտրոնը շեղած փամփուշտը -խմբ.) ոտքից մտել, անցել էր փորի մեջ, պտտվել: Սեւ, գանգուր մազերով տասնութ-տասնինը տարեկան մի տղա՝ Կարմիր խաչի պայուսակով, վախեցած աչքերով մոտեցավ, օգնեց, երկուսին էլ դրեցինք բետոնից այն կողմ: Այդ ժամանակ ՀԱԲ-ի զրահամեքենան եկավ, կանգնեց գարաժի ձյուների մեջ: Այսինքն՝ ես տղաներին պիտի նորից ետ տանեի: Հեռվից բացատրեցի, հասկացան՝ ինչ եմ ասում, մոտեցան: Եթե քսան րոպե ուշացած չգային, միգուցե ամեն ինչ այլ կերպ ավարտվեր: Երոյի գլուխը դրեցի ոտքերիս, ասացի. «Տեսա՞ր՝ ողջ մնացինք, ասում էիր՝ այստեղից դուրս չենք պրծնի»: Ձեռքը տարավ, թե՝ նագանս: Ասացի. «Ի՞նչ նագան, դու ես կարկուտը լսիր»: Զրահամեքենան դեռ չէր շարժվել: Պետավտոտեսչության կետի տակ մարդիկ էին պատսպարվել, դուրս գային՝ կրակոցների տակ կընկնեին: Ետ գնացինք, որ նրանց էլ մեզ հետ տանենք: Գնդակները կպչում էին երկաթին, թվում էր, թե կարկուտ է: Երոն ստիպում էր, որ գնամ իր նագանը բերեմ: Հիմարի պես գնացի: Նագանը չգտա, փոխարենը երկու կարաբին գտա, Մովսեսի մեքենայի բանալին ու ռացիան:

Վստահ եմ, որ Վոժդի մահն էլ քաղաքական պատճառներ ուներ:

Ես, Սուրոն, Գրոն, Վոժդը, Արեշի Աշոտը զենք առնելու համար գնում էինք Մերձբալթյան երկրներ, Անապա, Ռոստով, Կրասնոդար: Մեր հավաքած ու տնտեսած գումարներով հինգից քսան միավոր, ինչքան որ հնարավորություն էինք ունենում, զենք էինք գնում: Ճամպրուկներով գնում էինք Մերձբալթիկա, բայց սառնարանի արկղերի մեջ դրված բավական լուրջ նշանակություն ունեցող զենքերով էինք վերադառնում: Թեեւ այդ ժամանակ մի քանի կարաբինն ու փամփուշտը մեզ համար մեծ նշանակություն ունեին:

Մի անգամ Սուրիկը, Գրիշը, Վոժդը, երբ դեռ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ էինք, Վրաստանի սահմանի մոտ բռնվեցին: Մեքենայի մեջ ահագին զենք կար: Զենքը երբ տեսնում են, Միշան զենքը ձեռքին մեքենայից դուրս է գալիս, իսկ հայերեն ասում՝ քշի՛ր: Սուրիկը լավ վարորդ էր, հասցնում է փախչել: Երեք ու կես ժամում հասավ Երեւան: Մեքենան լրիվ շարքից դուրս էր եկել: Կանգնեց «Ղարաբաղ» կոմիտեի շենքի դիմաց ու շնչակտուր ասաց. «Միշան մնաց Վրաստանում»: Զանգահարեցինք, տեղն իմացանք: Նստել էր միլպետի սենյակում: Նագանի ծիծիկը ջարդել էր, նագանն էին տեսել, իսկ տակի կարաբինները չէին տեսել: Պետք է փող տայինք վրացի ոստիկաններին, որ Միշային բաց թողնեին: Մինչեւ ես հասա Թիֆլիս՝ Միշան արդեն դուրս էր եկել: Հայկական ինչ-որ կազմակերպությունից պարտքով փող էին վերցրել: Պարտքը վերադարձրինք, ետ եկանք:

Միշայի անունը *Վոժդ* էինք կնքել, որովհետեւ նա մեզ համար քաջության տիպար էր, սպարապետ, նրա հրամանները քննության չէին առնվում: Վազգեն Սարգսյանն այդ ժամանակ իրենց գյուղի կամավորական ջոկատի հրամանատարն էր: Մի քանի որսորդական հրացան ունեին: Ոստիկանության զորամասից գողացած մի քանի ուսումնական ավտոմատներ էլ մենք տվեցինք: Երեւանի ոստիկանության բոլոր զորամասերը մեր խմբի տղաներն են «մաքրել»: Ուսումնական ավտոմատները ծեծել էինք տալիս ու բաժանում Գետաշենից մինչեւ Երասխավան: «Ղարաբաղ» կոմիտեին կից ռազմական թեւի լիդերը Միշան էր, որը միայն Վազգեն Մանուկյանին էր ենթարկվում: Մինչեւ վերջ էլ մենք միայն նրան ենթարկվեցինք: Փող հայթայթելիս այնքան վստահ էինք մեզ վրա, որ ոչ մի վատ բան չենք անի, որ չէինք էլ թաքցնում, թե որտեղից կամ ումից ենք վերցնում: Երբ խանութի վարիչներից կամ արտադրության պետերից փող էինք վերցնում, չէին տալիս, անգամ կուսակցական գրքույկներն էին ցույց տալիս՝ ասելով, որ դաշնակցականին փող չեն տա, զոռով վերցնում էինք ու ստորագրություն թողնում, թե ումից եւ ինչքան վերցրինք: Երրորդ մասի գործարանների տնօրեններին ու արտադրամասի պետերին ճնշել էինք, քանի որ շտապ փող էր պետք, Ղարաբաղում խնդիրներ էին ծագել: Բողոքել էին միլպետ Դիոնիս Մարգարյանին: Դիոնիսը ինձ, Վոժդին, Ռաֆոյին ու Գրոյին: Այդ ժամանակ ՄՈՒԾ-ը ստեղծվել էր: Զայրացավ. «Այս ի՞նչ եք անում, ձեզ կբռնեն, հետո ի՞նչ եք անելու»: Արդարացանք՝ ասելով, որ փող է պետք: Առաջարկեց մեկ այլ տարբերակ. «Որքա՞ն է պետք, ես գոնե օրինական ճանապարհով փոխանցել կտամ»: Այդպես էլ որոշվեց: Մեծ քանակությամբ հաց ու գինամթերք ուղարկվեց Ղարաբաղ: Բեռնատար մեքենաներով արկեր էինք գնում, ուղարկում այնտեղ: Կամա թե ակամա քրեական հանցագործներ էինք դարձել: Երրորդ մասի խանութներից մեկի վարիչին պարտադրեցի որոշակի քանակությամբ գումար տալ: Չհամաձայնվեց. «Դուք ազգի զենքի անվան տակ ձեր

անձնական հարցերն եք լուծում»: Ասացի. «Արի զենքը վաճառողի կողքին կանգնիր, փողը տուր, զենքը վերցրու»: Նորից չեմուչում արեց: Ասացի, որ այդ ժամանակներն արդեն անցել են, վաղը դարձյալ գալու եմ, փողը վերցնեմ: Տոմս ցույց տվեց, որ ինքը դաշնակցականներին հովանավորում է: Նեղ վիճակից դուրս գալու համար, որքան ես հասկացա, դիմել էր Ազգային անվտանգությանը կամ Ներքին գործերի նախարարությանը: Երբ հաջորդ օրը տղաներով եկանք, Սարի թաղի Օնիկն ասաց.

- Արմեն, պոչը...

- Տեսա:

- Դիմացի մայթից էլ նկարում են:

- Դա էլ եմ տեսնում:

Նրանք հանցագործ տղաներ էին, աչքերն ավելի սուր էին: Ես ռեժիսոր էի, այդ ամենին նոր էի ծանոթանում, սովորում: Օնիկն առաջարկեց թողնել, հեռանալ, իսկ ես, ընդհակառակը, առաջ գնացի՝ ասելով, որ մենք էլ գիտենք, նրանք էլ, տեսնենք, թե ինչ կլինի: Ներս մտա, տնօրենին հարցրի, թե արդյոք փողը պատրաստ է: Ասաց. «Այո, բայց մի խնդրանք ունեմ»: Հասկացա, որ խաղ է: Փողը կոշիկի տուփի մեջ էր դրել: Ասաց. «Ամոթ է, որ այսքան մարդկանց միջով տուփը ձեռքներիդ դուրս գաք: Դուրս եկեք, ես պատուհանից կտամ»: Համաձայնվեցի, դուրս եկա: Օնիկը մոտեցավ, զգուշացրեց, որ թակարդ են սարքել, դրսում նկարում են: Նրան ասացի, որ մեքենան շարժի գցած սպասի: Հանգիստ մոտեցա, փողը վերցրեցի, նստեցի մեքենան, եւ այնքան արագ սլացանք, որ չհասցրին մոտենալ: Մեքենայով մեր ետեւից եկան: Օնիկին պատվիրեցի հանգիստ քշել: Հասանք Լենինյանի ոստիկանություն: Օնիկը զարմացած ինձ էր նայում: Դիոնիսը, ոստիկանները ինձ շատ լավ ճանաչում էին որպես «ՄՈՒՇ» ջոկատի Մազ: Այնպես որ՝ անարգել ելումուտ ունեի: Գիշերները մեր ջոկատի տղաները հերթով հսկում էին այնտեղ, որ հանկարծ շարժման տղաները ոստիկանի չծեծեին, չկրակեին: Մինչ Դիոնիսի առանձնասենյակը մտնելը՝ տուփը ձեռքիս մտա զուգարան: Ամբոջ փողը տեղավորեցի շապիկիս ու վերնաշապիկիս տակ, տուփը պատռեցի ու գցեցի: Դիոնիսի հետ սուրճ խմեցի, զրուցեցի այլ թեմայով ու դուրս եկա, նստեցի ավտոմեքենան: Զգացի, որ մնացին շվարած, ու թողեցին գնացին, հետքն էլ կորավ: Հավանաբար մտածել էին, թե փողը Դիոնիսի համար էինք տարել:

«ՄՈՒՇ» կազմակերպությունը ժամանակին իր դրական նշանակությունն ունեցավ՝ դարձյալ Վոժդի շնորհիվ: Նրա առաջ բոլորը քարանում էին: Կոմայգում բոլոր ջոկատներին ստիպեցինք ստորագրել քաղաքականացված չլինելու, միայն պաշտպանության խնդիրներով

զբաղվելու որոշման տակ: ՀՀՇ-ի, ՀԱԲ-ի, «անկախականների» ներքին հասունացող հակամարտությունը, քաղաքացիական պատերազմը մենք ենք կասեցրել՝ Վոժդի գլխավորությամբ: Հայտարարեցինք «միացյալ ուժերի շտաբ», բոլորին մի տեղ հավաքեցինք, հրամանատարները եկեղեցում մոմ վառեցին, երդվեցին, որ կբացառվեն միմյանց վրա կրակելու դեպքերը: Կուսակցական որոշումը ջոկատի համար հիմք չպետք է հանդիսանար: Քանի դեռ պետություն, նախարարություն չունեինք, ջոկատի միակ գործը, խնդիրը պաշտպանությունը պիտի լիներ: ՀՀՇ-ի հետ հակամարտություններ, միեւնույնն է, լինում էին: Ոսկեպարում մի երեխայի էին գողացել: Մենք գնացինք կռիվ տվեցինք, իսկ Բաբկեն Արարքցյանը հայտարարել էր, թե Ոսկեպարում գտնվողները ազգի դավաճաններ են: Այդ ազգի դավաճաններն էին ՄՈՒՇ-ի Մազը, Արաբոյի Մանվելը, Սարի թաղի Վրեժը, եւ մեզ հետ՝ մեր ջոկատները, Գեւորգյան Սամվելը՝ Ծաղիկ Սամվելը, որը շատ պինդ, լավ տղա էր, զոհվեց... ՀՀՇ-ն մոտ երկու շաբաթ չէր ստորագրում՝ ի դեմս Սմբատ Հակոբյանի ու Վազգենի: ՀԱԲ-ը ստորագրեց այն բանից հետո, երբ ես կալանավորեցի Ռազմիկ Վասիլյանի գաղափարախոսին: Փակել էինք աստղադիտարանի շենքում, ելումուտը արգելված էր: ՀԱԲ-ը եկավ շրջապատեց, բայց ելք չունեին: Նրանց էլ այդ ճանապարհով ստիպեցինք ստորագրել: Ալիվռոյի Սամոյի ու Կծան Միշիկի կռիվը Արարատյան դաշտում... Ես ու Վոժդը մեր ընկերների հետ գնացինք մի քանի օր գյուղի արանքում գիշերեցինք, որ իբր միմյանց վրա կրակելու դեպքում կկպնի մեզ, որ երկու գյուղն էլ չոչնչանա: Խաղաղություն պահպանելու համար ստիպված էինք նաեւ սպառնալիքի դիմել: Աբովյանի «Ապավեն» գնդի կոնֆլիկտը, որը ոչ Վազգեն Մանուկյանը, ոչ Լեւոն Տեր-Պետրոսյանը չէին կարող հարթել, ու Երասխավանի կոնֆլիկտը մենք հարթեցինք: Կոնֆլիկտներ շատ են եղել, եւ ՄՈՒՇ-ը պարտադրել է հարթել դրանք առանց հաշվի առնելու, որոշելու մեղավորն ու արդարը: Նման պարտադրանք է եղել նաեւ երկաթգծի ու Սովետաշենի պատմությունների ժամանակ, երբ մեղադրում էին տղաներին, թե ով է ուղարկել կայարան՝ ՀՀՇ-ն, թե՞ «անկախականները»: ՀՀՇ-ն էր ուղարկել: Հետո հրաժարվեցին տղաներից, ՀԱԲ-ի նշաններն էլ անամոթաբար խփեցին իրենց վրա: Ղաչաղ, կիսագրագետ, քաջ, ինտելեկտուալ եւ այլ հակասական գծերով կերպարներ էին այդ ժամանակվա հրամանատարները, եւ մեկի էքսպրեսիվ խելառվելը կարող էր շատ թանկ նստել Երեւան քաղաքի վրա: Փառք աստծո, մեզ մոտ տեղի չունեցավ այն, ինչ Վրաստանում Գամսախուրդիայից հետո: Բայց եղան դեպքեր, երբ ՀՀՇ-ն իր հերթին, ՀԱԲ-ը իր հերթին բռնելու, գնդակահարելու հրամաններ էին տալիս, երբ

անկախականներն էին քննադատում երկաթգծի պատմությունը: ՄՈՒԾ-ի դերը մեծ էր: Կատակում էին՝ «Վոժդը դուխն է, Մազը՝ ուղեղը»: Որոշել էինք, որ գործողությունները պետք է արվեն բոլոր ջոկատների գիտությամբ: Սարի թաղի Վրեժը հարբել էր, մի քանի ջոկատների հրամանատարներին համոզել, որ գնան հորը բանտից ազատեն: Բանտը կալմեջ էր արել, հորը խլել, դուրս բերել: Եկավ, իրենից գոհ կանգնեց աստղադիտարանի դիմաց: Վոժդը հարցրեց, թե ուր էր: Սա էլ՝ «Ախպեր, ախպորդ պապան...», ու չհասցրեց խոսքը ավարտել: Վոժդը խփեց քիթ ու մռթին, որովհետեւ կարգ ու կանոնը խախտել էր: Բայց այդ նույն Վրեժը, երբ հիսուն տանկ էին բերել շարել պլատֆորմի վրա, դարձյալ գաղտնի գիշերվա կեսին իր ջոկատով գնաց, քսանհինգ թե երեսուն տանկ գրավեց, բերեց Կոմայգում կանգնեցրեց: Մտածում էի, որ չենք կարող այդ արարքի պատասխանը տալ, թեեւ գիտեի՝ ճիշտ ենք անում, որ չենք ուզում վերադարձնել տանկերը: Պարզվեց, որ սպառնացել են սպանել մեզ եւ քաղաքում պարետային ժամ մտցնել, եթե տանկերը չվերադարձնենք: Նրանք որոշել էին գրավել տանկերը: Իսկ մենք առաջարկում էինք տանել սահմանի մոտ կամ գարաժում կանգնեցնել, բայց Հայաստանից դուրս չհանել: Նրանց էլ դասակներով էինք կալանավորել: Լուսադեմին էր: Կոմայգու աստղադիտարանի երկրորդ հարկում ես, Վոժդը, եւս մի քանի տղաներ քնած էինք: Ամբողջ այգում ծառերի, քարերի վրա իբր թե դիրքեր էինք դրել, ԴՕՍԱԱՖ-ի դիմաց գնդացիր էինք դրել, որպեսզի նրանց գալու դեպքում պատրաստ լինենք պաշտպանվելուն: Արթնացա, դուրս եկա, տեսա՝ «կարմիր բերետներից» մի գեներալ է քայլում, ետեւից՝ երկու գնդապետ: Միշտ էլ մյուս կողմից դուրս թռավ: Գեներալը կարճ հրամաններ էր արձակում՝ զինաթափե՛լ, գցե՛լ: Եվ մեր տղաներին հավի ճտի պես ծառերի, քարերի վրայից գցում էին, զինաթափելով զենքը գլխին խփում: Վրեժը վազեց, որ կրակի: Հետեւից գոռացի, որ հանկարծ այդպիսի բան չանի: Ու չնկատեցի, թե ինչպես Վոժդը ծառի ետեւից իրեն գցեց գեներալի վրա: Նա միշտ դոշից լիմոնկա էր կախում, բայց ոչ ձեւական: Մյուսներին էլ էր խորհուրդ տալիս, որ գոնե ծոցը գցեն, չերեւա: Ինքն էլ կամբինիզոնի գրպանում էր դնում: Գեներալին թիկունքից գրկեց, օդակը հանեց ու լիմոնկան գցեց պարանոցին: Գոռաց՝ կանգնե՛լ: Գեներալը, զինվորները կապտեցին, կակազեցին: Երբ գեներալը հրամայեց՝ «ստոյա՛ծ», բոլորը քարացան: Պրոֆեսիոնալ սպաներ էին եւ շատ լավ հասկանում էին, որ օդակը հանած է եւ գեներալի մահը անխուսափելի է: Վոժդը սկսեց պատվիրել, որ զենքերը վերադարձնեն, տանկերը ետ բերեն իրենց տեղը, բոլորը ետ գնան, իսկ գեներալը մնա, նրա հետ նաեւ մի «Վիլիս» եւ վարորդ այն

քան ժամանակ՝ մինչեւ հրամանը կկատարվի: Գնդապետները ասացին. «Ոչ մի դեպքում, ընկեր գեներալ»: Գեներալն էլ գոռաց, հայհոյեց, որ անեն այն, ինչ հրամայված է: Այդպես էլ արեցին: Շատերիս կյանքը Վոժդի շնորհիվ փրկվեց: Մի տղա էրեբունիում կարաբինով կրակել էր զրահամեքենայի վրա: Փոխարենը՝ կրակ էին բաց արել շենքի վրա, եւ երեխա, աղջիկներ էին մահացել: Բայց անփորձությունից էր արել: Եթե հանկարծ այգում էլ մեկը կրակեր, սարսափելի բան կստացվեր, քանի որ հարյուր քսան հոգի մենք էինք, մոտ երկու հարյուր՝ նրանք: Գնդապետները զորքի հետ գնացին: Միշան օդակի ծայրը ծամելով նայեց գեներալին, ասաց. «Ցտեսություն, պարոն գեներալ»: Սա կատաղած շրջվեց. «Դե կորի՛ր, աստված չանի քեզ նման ապուշի հետ մեկ էլ հանդիպեմ»: Նստեց «Վիլիսն» ու հեռացավ: Տանկերը մնացին Երեւանում:

Վոժդի դերը մեծ էր բանակի ստեղծման գործում, երբ դաչաղական ջոկատները հանեցինք կուսակցական ազդեցությունից, կանխեցինք քաղաքացիական կռիվները ու մնացինք որպես երկրապահ: Վազգենը հետո երկրապահը քաղաքական կառույց դարձրեց: Դրա համար այնտեղից էլ դուրս եկանք: Մեր սկզբունքը թանկ էր մեզ համար. զենքը, նույնիսկ պետական շահի համար, երկրի ներսում չպետք է կիրառել:

Պատմում է Վազգեն Մանուկյանը: Զրույցը վարեց Բակուր Կարապետյանը. 03.03.2006, Երեւան: Մուտքագրեց Անահիտ Ասատրյանը:

Վ.Մ. - 1965 թվականից ես մտա ազգային շարժումների մեջ՝ գաղտնի, կիսագաղտնի կազմակերպություններով, ընկերական շրջապատով: 1970-80 ական թթ. մենք ոչ ֆորմալ կազմակերպություն ունեինք: Չէի ասի, թե այն գաղտնի էր, բայց գործունեությունը կապված էր ազգային հարցերի հետ: Ընդգրկված էինք ես, Բաբկեն Արարքցյանը, Դավիթ Վարդանյանը, Լյուդվիգ Խաչատրյանը, Հայկ Ղազարյանը... Մենք բավական մեծ կապեր ունեինք Մոսկվայում: Նույնիսկ մտածում էինք, թե կարելի է, Գալինային՝ Բրեժնեւի աղջկան, կաշառելով՝ կազմակերպել, որ Ղարաբաղը միացնեն Հայաստանին: Այդ ժամանակ Միջին Ասիայում այդպիսի դեպք տեղի ունեցավ, Ղրիմի հարցը կար Խրուշչովի օրոք: Այսինքն՝ զգացվում էր, որ կարելի է խորհրդային իշխանության միջոցով դա կազմակերպել: Դիմեցինք Սերովբե սրբազանին, որը Արեւմտյան Եվրոպայի հայ առաքելական եկեղեցու առաջնորդն էր: Նա մեզ ծանոթացրեց Հրայր Հովնանյանի հետ: Այն ժամանակ արդեն այդ բանակցություններն ընթանում էին: Հետո երկար, գաղտնի բանակցություններ ենք վարել Եղիշե պատրիարքի հետ: Հարցը նրանում էր, թե Գալինան թող հաշիվ բացի, երկու-երեք միլիոն սփյուռքահայություն հավաքի, դիմենք, որ Ղարաբաղի հարցը լուծեն: Հիմա մտածում եմ՝ միգուցե ճիշտ քայլ էր, միգուցե երիտասարդական ռոմանտիզմ էր: Փորձում էինք բոլոր հնարավորություններն օգտագործել:

1986 թե 87 թվականին իմ ընկերներից մեկը՝ Սահակյան Մելսը, ինձ ծանոթացրեց Իգոր Մուրադյանի հետ, ասաց. «Մի երիտասարդ տղա կա, որը զբաղվում է Ղարաբաղի հարցով եւ բավական թափով է զբաղվում, բայց այն փորձը, կապերը, հարաբերությունները չունի, որոնք դու ունես դեռ 60-ական թվականներից: Լավ կլինի, որ դու նրա հետ կապվես եւ խորհուրդներ տաս»: Իգորը հարցը ճիշտ էր դնում, որ գորբաչովյան ժամանակաշրջանը հնարավորություն է տալիս Ղարաբաղի հարցը լուծել սահմանադրական եղանակով: 1987 թ. երկուսով գնացինք Ղարաբաղ, այնտեղ հանդիպումներ պիտի լինեին: Հիմնականում Իգոր Մուրադյանն էր հանդիպելու, քանի որ նա Ղարաբաղում կապեր ուներ: Նախապատրաստում էին Ղարաբաղի ժողովրդի հայտարարությունները, մարզխորհրդի նիստերը: Ես հասկանում եմ, որ կային նաեւ մարդկանց ուրիշ խմբեր, որոնք իրարից անկախ էին գործում կամ գաղտնի պայմանավորվածություն ունեին իրար հետ. ես պատմում եմ այն, ինչին ծանոթ եմ: Ղարաբաղում այդ հարցն արդեն ուշադրության կենտրոնում էր, որովհետեւ ինձ ու Իգորին Մարտակերտում ձերբակալեցին, բայց ոստիկանությունում երկու-երեք ժամ պահելուց հետո բաց թողեցին: Արդեն զգացվում էր՝ ինչ-որ բան կա: Մենք Հայաստանում սպասում էինք, գիտեինք, որ նիստ է լինելու: Երեւանում սկսվեցին հանրահավաքները: Առաջին հանրահավաքը տեղի ունեցավ Պուշկինի այգու դիմաց՝ այժմյան նախագահական նստավայրի առաջ: Մի քիչ միամիտ բան կար. տղաները Գորբաչովի նկարն էին ձեռքներին պահել, մտածում էին, թե ոստիկանությունը Գորբաչովի նկարի դեմ չի գնա, կարծես սրբի նկար լիներ: Բայց ՊԱԿ-ի տղաները, առանց որեւէ բան հաշվի առնելու, ճղեցին Գորբաչովի նկարը, մի երկուսին էլ մի քիչ ծեծեցին ու բաց թողեցին:

Հավաքվում էինք Իգորի տանը: Մեզ հետ նաեւ Մանվելն էր, Վաչեն, որը հավաքների ժամանակ ամպագոռգոռ խոսում էր: Բայց այդ ժամանակ ուրիշ՝ շատ հետաքրքիր պրոցես էլ էր տեղի ունենում: Ղարաբաղից պատվիրակություններ, էին գալիս, որպեսզի գնան Մոսկվա՝ հանդիպելու կենտկոմի պատասխանատու աշխատողների հետ: Ամեն մի հանդիպումից այն տպավորություն էինք ստանում, թե Խորհրդային Միությունը կողմ է, որ Ղարաբաղի ժողովուրդը այդ պահանջները ներկայացնի: Մտածում էինք՝ կամ Խորհրդային Միությունը ինչ-որ բարդ խաղ է խաղում եւ ուզում է մեզ օգտագործել, բայց եթե օգտագործվելով կարող ենք Ղարաբաղի հարցը լուծել, ուրեմն՝ ավելի լավ, կամ հույսեր են տալիս, որոնք իրականությունից հեռու են: Միեւնույն ժամանակ շատ հետաքրքիր գործընթաց էր տեղի ունենում Հայաստանում: Գորբաչովի ժամանակաշրջանում սկսեցին քաղբանտարկյալներին բաց թողնել, օրինակ՝ Պարույր Հայրիկյանին: Նա մի քիչ ուշ եկավ, բայց իր ընկերները, գործընկերները ավելի շուտ վերադարձան: Նրանց մեջ ազատության, անկախության գաղափարախոսությունն էր իշխում, ձգտումը շատ մեծ էր: Մեկ այլ գործընթաց էլ էր տեղի ունենում: Կարեն Սիմոնյանը անընդհատ Գրողների միությունում էկոլոգիական հարցեր էր առաջ քաշում, որոնք նախորդ տարիներից կուտակվել էին, այդ թվում՝ «Նաիրիտ» գործարանի խնդիրը: Այն տպավո-

ությունն էր, թե Խորհրդային Միությունը Հայաստանում կառուցում է գործարաններ, որոնք վնասակար են առողջությանը, որ իր ժողովրդի առողջության մասին մտածելով՝ վնասում է մեր առողջությանը: Այդպիսի սուր, նույնիսկ հակասովետական տրամադրություն էր տիրում: Մտավորականության մի մասը ատոմակայանը գործարկելուն դեմ էր: Ես միշտ կողմ եմ եղել՝ հասկանալով դրա վտանգավոր լինելը: Նույնիսկ իմ ուսանողներին ասում էի, որ մի օր մենք անկախ ենք դառնալու, իսկ էներգետիկայի խնդիրը ամենամեծն է, ուստի՝ ատոմակայանը պետք է թողնել: Իսկ «Նաիրիտի» փակմանը կամ տեխնոլոգիական բարելավմանը ես կողմ էի: Այդ գործընթացը մեծ ոգեւորություն առաջ բերեց հատկապես երիտասարդության, մտավորականության շրջանում: Եւ կար երրորդ՝ Ղարաբաղյան շարժման գործընթացը: Նրանք ինչ-որ տեղ միախառնված էին, նույն մարդիկ երեք գործով էլ զբաղվում էին: Առաջին պոռթկումները տեղի ունեցան հենց էկոլոգիական հարցերով. «Լիզինգ» գործարանում էր: Ժողովուրդը հավաքվեց, հետո հանրահավաքով իջավ ներքեւ: Այդ ժամանակ սկսեցին դեպքեր կատարվել Ադրբեջանում: Չարդախլուի հետ կապված պատմությունը եղավ: Իսկ մեր ժողովուրդը ազգային հարցերում կոմպլեքսավորված էր, քանի որ մենք 1915 թ. տեսել ենք ցեղասպանություն, հսկայական պետություն ենք ունեցել, բայց կորցրել ենք բոլոր հողերը, չենք կարողացել պաշտպանել մեր հայրենակիցներին... Ադրբեջանում ապրող հայերի եւ հատկապես Ղարաբաղի հարցը, որը ոչ միայն հայությունն է, այլեւ մեր պատմական տարածքը, ծածկեց մնացած բոլոր հարցերը, դարձավ դոմինանտը: Այդ ժամանակ էլ սկսեցինք հանրահավաքները: Ինձ որոշ մարդիկ, այդ թվում իմ աները՝ Ռաֆայել Իշխանյանը, ասում էին. «Վազգե՛ն, բայց դու հասկանու՞մ ես, որ սա Մոսկվայի կողմից հրահրվող է, չընկնենք ինչ-որ վատ պատմության մեջ»: Ասում էի. «Պարո՛ն Իշխանյան, ես հասկանում եմ, որ սրա մեջ կա մի շերտ, որն ինձ համար հասկանալի չէ: Բայց եթե կարելի է դրանից օգտվելով Ղարաբաղը միացնել Հայաստանին, ուրեմն արժե մտնել այդ խաղի մեջ»: Առաջին հանրահավաքներից հետո Մոսկվայում պետք է քննվեր հարցը՝ Ղարաբաղը միացնե՞լ Հայաստանին, թե՞ ոչ: Մեր տպավորությունն այն էր, որ ամբողջ նախապատրաստական աշխատանքը կատարվել է, պատվիրակությունները վերադարձել են լավ լուրերով, նիստը տեղի է ունեցել, Հայաստանում մեծ դեմոկրատական հանրահավաքներ են արվում, ինչը համապատասխանում է վերակառուցման կուրսին, ոչ մի վատ բան չի ասվում Խորհրդային Միության ղեկավարության դեմ, ընդհակառակը՝ նրանցից սպասվում է հարցի արդար լուծում: Թվում էր՝ հնարավոր է Ղարաբաղը միավորվի: Երբ մերոնք վերադարձան,

Կարեն Դեմիրճյանը Հայաստանի կենտկոմի պլենում թե խորհրդակցություն սկսեց: Սիլվա Կապուտիկյանը մասնակցում էր: Իգոր Մուրադյանի տանն էինք, զանգեցինք Սիլվա Կապուտիկյանին: Տիկին Սիլվան ասաց. «Ոչ մի հարց էլ չի լուծվում, որոշում ընդունվեց, որ ամեն ինչ մնալու է նույն ձեւով»: Մեծ հիասթափություն ապրեցինք, քանի որ սպասումներն ուրիշ էին: Զանգեցի մեր տուն եւ կնոջս ասացի, որ զանգահարի իմ բոլոր ընկերներին, որոնք կապված էին ազգային շարժումների հետ: Գիշերը որոշեցինք, որ գնալու ենք մինչեւ վերջ, սկսելու ենք հանրահավաքները, նրանք մեզ ուզեցին օգտագործել, հիմա մենք նրանց խաղը կվիճարկենք ու Ղարաբաղի հարցը առաջ կտանենք: Առավոտյան հանդիպեցի Պարույր Հայրիկյանին, միայն նա կարող էր ապահովել, որ «Ամերիկայի ձայնը» անընդհատ ճիշտ հաղորդումներ հեռարձակի, թե ինչ է կատարվում Հայաստանում: Հայրիկյանը մեծ սիրով այդ հարցը հանձն առավ: Նա գիտեր, որ ես կողմնակից եմ անկախությանը, բայց ասում էի. «Պարո՛ւյր, եթե մենք միանգամից անկախության դրոշ վերցնենք, կարող է կործանարար քայլ անենք Ղարաբաղի եւ մնացած այլ հարցերի համար: Աստիճաններով կամաց-կամաց կբարձրանանք: Առաջին աստիճանը «Գորբաչով» բացականչություններն են, եւ ինչ-որ մի տեղ՝ վերեւում, անկախության դրոշը կկանգնի: Շարժումը պիտի դրան հասնի: Եւ եթե արանքում Ղարաբաղի հարցը պետք լինի լուծել, պետք չէ միանգամից ամենավերեւի աստիճանին հասնել...»: Այդ ժամանակ բոլորն իրար հետ համագործակցում էին: Մենք հասկանում էինք, որ Խորհրդային Միությունը խաղ է անում, ինչից մենք պիտի օգտվենք, նրա խաղը ջարդենք եւ մեր խաղը թելադրենք: Այդ ժամանակ Իգորի միջոցով ծանոթացա Զորի Բալայանի հետ, նրանց տանը եղա: Զորին ասաց, որ Կարեն Դեմիրճյանը իրեն հրավիրել է եւ ասել. «Զորի՛, ես չեմ՝ դու ես, ասենք՝ ես Գորբաչովն եմ, դու՝ Կարեն Դեմիրճյանը, եկել ես Ղարաբաղի հարցը լուծելու, ի՞նչ փաստարկներ ես բերել...»: Սահմանադրության ինչ-որ հոդվածով Դեմիրճյանն ապացուցել էր, որ այդ ձեւով Խորհրդային Միությունում չի կարող հարց լուծվել: Ոչ թե Դեմիրճյանը շահագրգռված չէր այդ հարցում, այլ, լինելով Խորհրդային Միության ղեկավարության մեջ, հասկանում էր, թե ինչ սկզբունքներով են հարցերը լուծվում, մանավանդ դեռ պարզ չէր, թե Գորբաչովի առաջ քաշած նոր սկզբունքներից որն է շինծու, որն իրական, որն էր արտասահմանին ցույց տալու համար: Դեմիրճյանը շատ զգուշությամբ էր վերաբերվում այդ շարժմանը:

Շարժումը պայթեց իր բոլոր երեւույթներով: Ստեղծվեց առաջին «Ղարաբաղ» կոմիտեն, հետո՝ երկրորդը, երրորդը: Վերջին «Ղարա-

բաղ» կոմիտեն երկար գոյատեւեց: Տպավորությունն այն է, թե մարդիկ առաջնորդվում էին միայն էմոցիաներով: Դա այնքան էլ ճիշտ չէ: Իհարկե, ամբողջ ժողովրդի մեջ կար ազգային էմոցիա՝ կապված ղարաբաղյան խնդրի հետ: Մենք նաեւ բարդույթ ունեինք այդ հարցում, եւ յուրաքանչյուրս այն ավելի սուր էր ընկալում, քան անձնական որեւէ հարց: Դա ժողովրդին միավորող հարց էր: Հասարակության մեջ ազատության ձգտում կար: Այդ ամենը կուտակվել էր, բայց, որպես դրոշ, Ղարաբաղի խնդիրն էր պարզած: «Ղարաբաղ» կոմիտեում քննարկումները էմոցիաների վրա կառուցված չէին: Ես բավական շատ կարդացել էի, ուսումնասիրել նախորդ դարի սկզբի պատմությունը, մեր պարտություններն ու հաղթանակները: Ինձ վրա մեծ տպավորություն էր թողել դաշնակցական Դարբինյան-Չիլինգարյանը: Հետաքրքիրն այն է, որ դաշնակցական ղեկավարներն ամենախելոք մտքերը գրեցին պետությունը կորցնելուց հետո: Շատ կարեւոր են մարդու ոչ թե օպերատիվ ժամանակաշրջանի մտքերը, այլ այն, որն արդեն ավարտվել է: Ես այդտեղից շատ բան վերցրի եւ փորձում էի «Ղարաբաղ» կոմիտեում դրանք օգտագործել: Ինձ համար շատ մեծ նշանակություն ունեին Ռաֆայել Իշխանյանի գաղափարները, որոնք կապված էին նույն աղբյուրի հետ: Իմ վախը եւ ընդհանուր դասն այն էին, որ էմոցիոնալ ազգային քաղաքականությունը հանգեցնում է պարտությունների: Ուզում էի «Ղարաբաղ» կոմիտեում ընդգրկել այնպիսի մարդկանց, ովքեր ավելի պրագմատիկ էին՝ Լեւոն Տեր-Պետրոսյանին, Բաբկեն Արարքցյանին, Դավիթ Վարդանյանին... Ինձ համար նշանակություն ուներ այն հանգամանքը, որ նրանք ազգային մտածողության, ազգային շարժման որոշակի փորձ ունեին, եւ նրանց մեջ ազգային էմոցիայի հետ առկա էր պրագմատիզմը: Կարդալով հեղափոխությունների պատմությունը՝ միշտ վախեցել եմ այն երեւույթից, որ հեղափոխության ժամանակ մարդկանց մի շերտ է լինում, որոնք իրենց կյանքի նախորդ շրջանում անհաջողակ են եղել, իրենց ձգտումներին չեն հասել եւ դրանում մեղադրում են հասարակությանը, ու հեղափոխության միջոցով ուզում են վրեժ լուծել այն հասարակությունից, որն իրենց մերժել է: Դեռ չեմ խոսում այն մարդկանց մասին, ովքեր, եթե մի տեղ իշխանություն կա, վազելով կգան: Մի պահ ուզում էինք ազատվել Իգոր Մուրադյանից, չնայած նա էր առաջին դրոշակակիրը եւ առաջին ամենահամարձակ քայլեր անողը: Պատճառն այն էր, որ առանց մյուսների հետ խորհրդակցելու, չնայած իմ ու Ռաֆայել Ավետիսովիչի հետ բավական շատ խորհրդակցում էր, ինքնուրույն քայլեր էր անում, որոնք մենք վտանգավոր էինք համարում: Մանավանդ, ինձ համար պարզ չէր, թե ինքը կողքից ինչ ազդեցությունների տակ է գտնվում:

Միշտ վախենում էի՝ հանկարծ չսկսվի կրոնական, զուտ էթնիկական կռիվ: Խորհրդային Միության, Ռուսաստանի հին քաղաքականությունը միշտ եղել է կոտորածների միջոցով հարցերը լուծելը, մանավանդ Կովկասում երկու ժողովուրդների միջեւ կրոնական, էթնիկական տարբերության վրա ընդհարումներ առաջացնելը, որից հետո իրավիճակը շտկելու համար ցանկացած քայլ՝ նույնիսկ զորք մտցնելը, ուրիշների կողմից սկսվում է նորմալ համարվել: Մեզ թվում էր, թե Իգորին (թեեւ Իգորը խաղալիք չէր) համոզելով՝ այդ ճանապարհով է տարվում: Իգոր Մուրադյանից հրաժարվելուց հետո որոշեցինք, որ կոմիտեն նախագահ չի ունենալու, ղեկավարությունը կոլեգիալ է լինելու: Բայց ինչոր ժամանակ հետո տեսանք, որ առանց ղեկավարի հնարավոր չէ: Առաջարկություն եղավ, որ ղեկավարը ես լինեմ: Որոշեցինք, որ ես կկոչվեմ կոորդինատոր, ոչ թե նախագահ: Դա ժողովրդին չենք ասի, այլ ներքին օգտագործման համար կլինի: Բավական ծանր աշխատանք էր, քանի որ ես պատասխանատու էի եւ՝ քաղաքական, եւ՝ կազմակերպչական, եւ՝ ֆինանսական, եւ՝ ռազմական խնդիրների համար, որոնցից ես կամաց-կամաց ազատվում էի: Ֆինանսական խնդիրները հանձնեցի Բաբկեն Արարքցյանին, ռազմական հարցերը հետագայում՝ շատ ուշ՝ Վազգեն Սարգսյանին: Միայնակ հնարավոր չէր զբաղվել: «Ղարաբաղ» կոմիտեի նիստերը տեղի էին ունենում հանրահավաքից առաջ: Ես հազվադեպ էի ելույթ ունենում, լսողներն ասում էին, որ ելույթս վատ չէ, կարեւոր բաներ եմ ասում: Բայց հիմնական հռետորներն էին Լեւոն Տեր-Պետրոսյանը, Վանո Սիրադեղյանը, Աշոտ Մանուչարյանը: Երբ պատրաստվում էինք հանրահավաքի, որոշում էինք, թե ինչ ուղղություն ենք տալու: Ես պատկերավոր խոսք ունեի՝ «Կաթսայի մեջ մտքեր գցեք, հետո կորոշենք, թե որ միտքը ով է ասում»: Յուրաքանչյուրի խոսքի մեջ կար իր անձնական մտածողությունը, կար ընդհանուր կուրսը, որը մենք որոշել էինք, բացի դրանից՝ կային նաեւ ուրիշներից վերցրած մտքեր. այստեղ հեղինակային իրավունքը երկրորդական դեր ուներ: Ինձ ծայրահեղ իրավիճակները շտկելու իրավունք էր վերապահված: Որպես հռետոր ես չէի երեւում, բայց եթե ինչ-որ բան էր լինում, ցանկացած պահի կարող էի միջամտել: Սումգայիթի դեպքերից հետո երկու բան էր հասկանալի. մի կողմից՝ արյուն է թափվելու, որովհետեւ միայն սահմանադրական ճանապարհով հարցը չի լուծվի, մյուս կողմից՝ էմոցիաների զսպում է պետք, որովհետեւ «սումգայիթին» «սումգայիթով» պատասխանելը նշանակում է վերադառնալ այն ազգային քաղաքականությանը, որը մեզ միշտ պարտություն է բերել: Դիմեցի մի քանի հոգու. «Եթե վաղը պատերազմ լինի՝ Ղարաբաղն ու Հայաստանը մի կողմից, Ադրբեջանը մյուս կողմից, ապա ին-

չո՞վ կավարտվի այդ պատերազմը»: Բոլորի եզրակացությունն այն էր, որ եթե պատերազմ լինի, մենք կպարտվենք: Հաշվի էին առնում դիմացինի մարդկային ռեսուրսները, զինվածության ռեսուրսները, եւ տպավորությունն այն էր, որ մենք պետք է պարտվենք: Դրա հետ միասին հասկանում էինք, որ գործողությունները վերածվում են ռազմականի: Սկսվեց առաջին ջոկատների կազմավորումը: Առաջին կարեւորագույն ջոկատը, որը ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտեում, «աֆղանցիների» Աֆղանստանի պատերազմին մասնակցած հայ տղաների ջոկատն էր: Դրանով ես էի զբաղվում: Ընդհանուր խմբի ղեկավարը Սմբատ Հակոբյանն էր: Չնայած նա «աֆղանցի» չէր, բայց զինվորական էր, «Ղարաբաղ» կոմիտեի եւ ջոկատների միջնորդը կարծես լիներ, Վոժդ Միշան էր, այժմյան պատգամավոր Մխիկը, Արմենը, Կարենը, որը զոհվեց ականանետի պայթյունից... Շատ լավ, պրոֆեսիոնալ տղաներ կային, զենքին լավ էին տիրապետում: Առաջին զենքերը Ռուսաստանից բերվեցին: Նույնիսկ Երկրորդ համաշխարհային պատերազմից մնացած զենքեր էին բերում: Ռուսաստանում նաեւ զենքի առեւտուր կար, Հայաստան միշտ էլ զենք բերվել է: Մինչեւ շարժումը ես ատրճանակ ունեի: Դրսից զենքի խմբաքանակ էր գալիս Հայաստան, որը պետք է առնեինք: «Դուրսն» էլ Ռուսաստանն էր, արտասահմանից զենք չէր մտնում Հայաստան: Բաքվի դեպքերից հետո, երբ մարդկանց ձեռքը զենք ընկավ, ամեն մեկը կարծես իր համար սկսեց զինված ջոկատներ կազմել, որոնք, ընդհանուր առմամբ, վտանգավոր էին: Մի կողմից անհրաժեշտ էին, բայց մյուս կողմից կարող էր լինել մաուզերիստների շարժում՝ ոչ կառավարելի: Երբ մարդկանց ձեռքը զենք է ընկնում, իրենց անձնական շահն էլ են առաջ բրդում: Նրանց միասնական դարձնելու փորձերը հաջողություն չէին ունենում: Սամսոն Ղազարյանը «Ղարաբաղ» կոմիտեից դուրս եկավ, ասաց. «Գնում եմ միավորելու»: Վոժդն էր փորձում միավորել: ՀԱԲ-ն էր, ՀՀՇ-ի ջոկատը, երկրապահներն էին, Հանրապետություն կուսակցությունը շատ լավ ջոկատ ուներ, այնտեղ էր այն քիմիկոսը՝ Լեոնիդը, որը զոհվեց: Ես նրան շատ բարձր էի գնահատում՝ որպես զինվորական գործչի: Երբ 1990 թ. մենք ընտրությունների արդյունքում եկանք իշխանության, առաջին հարցը, որ դրվեց, բոլոր ջոկատներին միավորելն էր: Բանակ ստեղծելն այդ ժամանակ հնարավոր չէր, քանի որ գտնվում էինք Խորհրդային Միության կազմում: Եւ միակ տեղը, որտեղ օրինական ձեւով կարող էին զինված մարդիկ լինել եւ պաշտպանել հայրենիքը, ՄՀՕՋ-ն էր՝ ոստիկանությանը կից հատուկ նշանակության ջոկատը: Մենք տղաներին կոչ արեցինք մտնել այդտեղ: Շատերը մտան, մի մասը դուրս եկավ: Բայց ով դուրս մնաց, ասացինք. «Դուք այլեւս գործ չունեք,

որովհետեւ մենք միայն կանոնավոր կառույցը պետք է պահենք»: ՀԱԲ-ը փորձեց ինքնուրույն գործել: Իմ վարչապետության շրջանում գիշերը Վազգեն Սարգսյանն ու Սմբատ Հակոբյանը եկան մեր տուն, ասացին, որ դեպքեր են եղել: Ասացի. «Շենքը շրջապատեք ու գրավեք, թույլ չեմ տա որեւիցե բան»: Այդ ժամանակ իշխանությունը ամբողջությամբ իմ ձեռքում էր, նախագահի պաշտոն չկար, Գերագույն խորհրդի նախագահը Լեւոն Տեր-Պետրոսյանն էր: Հետո դեպքեր եղան, Վիտյան զոհվեց... Տարբեր խոսակցություններ կան այդ մասին, բայց այդ գործողությունները ես համարում եմ արդարացված: «Ղարաբաղ» կոմիտեի որոշ անդամների անհանդուրժողականությունը ուրիշների նկատմամբ շատ մեծ էր՝ «մենք ենք վերցրել՝ մերն է»: Ինձ համար անհանդուրժողականությունը ուրիշ հարցերում էր: Կարծում էի, որ ազգային միասնություն պիտի ստեղծենք, կառույցներից դուրս պիտի զինված ջոկատներ չլինեն: Եթե նրանք մտնեին որեւէ կառույցի մեջ, ես միայն կարող էի ողջունել: ՀԱԲ, երկրապահ, դաշնակցական... այդպիսի բաները ինձ համար բացարձակապես նշանակություն չունեին: Ոչ թե հիմա հետադարձ հայացք գցելով եմ ասում, այլ միշտ եմ այդ դիրքում եղել: Ես կարող եմ գաղափարախոսության դեմ պայքարել, բայց ազգային միասնությունն ինձ համար ամենակարեւորն է: Երբ վարչապետ էի, շատ էի ուզում զինաթափել Սարի թաղի Վրեժին, նույնիսկ մի պահ ուզում էի հրաժարական տալ, քանի որ կարգադրում էի Ներքին գործերի նախարարությանը, բայց չէին կարողանում վնասազերծել: Նա էլ գալիս էր հեռուստատեսությունը գրավելու: Ասացի. «Դուրս եմ գալիս վարչապետությունից, ինքս ավտոմատը կվերցնեմ ու կգնամ այդ հարցը կլուծեմ»: Այն ժամանակ ավտոմատ ունեի, որը ՀՀՇ-ի շենքում էր: Իգոր Մուրադյանը ինձ համոզեց. «Վազգեն, ամոթ չե՞ս անում, դու վարչապետ ես, վարչապետն ի՞նչ իրավունք ունի գնալ ավտոմատով կռիվ անել»: Ճիշտ է, իմ կողմից տղայական ոչ ճիշտ պահվածք էր, Իգորը ճիշտ էր այդ ժամանակ: Բայց կարողացանք Վրեժին էլ վնասազերծել: Իմ կարծիքով, դա մեծ նշանակություն ունեցավ, որովհետեւ Ադրբեջանում ու Վրաստանում այդ վիճակը, երբ զինված ջոկատներ կային, որոնք կառույցների մեջ չէին, շատ երկար տեւեց: Անդրկովկասում այդ ժամանակ Հայաստանը յուրահատուկ՝ ավելի բարձր դերում էր: Ինչքան էլ հետո մենք՝ ընդդիմությունը, իշխանությանը քննադատում էինք, այնուամենայնիվ, մեր երկիրը ավելի հստակ քայլերով էր գնում դեպի ժողովրդավարություն, կարգավորվածություն, օրենքների կատարում, քան Ադրբեջանն ու Վրաստանը, քանի որ այդ երկրներում անընդհատ հեղաշրջումային էլեմենտներ էին առաջանում: Ճիշտ է, պատերազմում նրանք պարտվում էին, բայց

եղել են պահեր, երբ մենք ենք նահանջել, բայց Հայաստանի ներսում այլեւս անկառավարելի ջոկատներ չկային: Մի անգամ Ադրբեջանի վարչապետը՝ Մամեդովը, զանգահարեց ինձ: Ինչ-որ դեպքեր էին տեղի ունեցել: Նրան ասացի. «Եթե սրանից հետո սահմանին մի կրակոց էլ եղավ ձեզ վրա, ես երբեք չեմ ասի, որ դա անկառավարելի ջոկատի կողմից էր, ուրեմն ես եմ կարգադրել, դու դա հաշվի առ: Այդպիսի մանկական խաղեր չեն լինի, որ կրակոցներ լինեն, ես էլ ասեմ՝ դե, ես ի՞նչ մեղք ունեմ: Ես իրավիճակը լրիվ վերահսկում եմ: Դու էլ հասիր այդ վիճակին, որ երբ հանկարծ ես քեզ զանգեմ, չասես՝ ես ի՞նչ կարող էի անել, ջոկատներ են: Միայն այդ ժամանակ կարող ենք բանակցել սահմանների վերաբերյալ: Եթե երկրի ներսում իրավիճակը կառավարելի չէ, այդ դեպքում ինչի՞ մասին ենք խոսում, ձեր ցանկացած չոբանի հետ էլ կարող եմ այդպես խոսել, ի՞նչ տարբերություն»: 1990-91 թթ. մենք բավական շատ էինք իրար հետ հեռախոսով խոսում, երբ խնդիրներ էին առաջանում, կապ կար:

Բ. - Ի՞նչ խնդրով կարող էիր նրան զանգահարել:

Վ.Մ. - Երբ գագամուղը փակեցին, անընդհատ զանգահարում էի, գրուցում էինք այդ խնդրի շուրջ: Ինձ՝ որպես վարչապետի, առաջին անգամ Ռիժկովը հրավիրեց Մոսկվա՝ մասնակցելու վարչապետների ժողովին: Առաջինը ձայն տրվեց Մամեդովին: Նա վեր կացավ ու սկսեց խոսել Ղարաբաղի հարցի մասին: Մյուս վարչապետները, նախարարները այնպես հիասթափությամբ էին նայում, թե՝ զզվեցրեց Ղարաբաղով: Հետո ինձ ձայն տրվեց: Մտածում էի, թե ինչ պատասխան պիտի տամ: Ես որպես վարչապետ էի պատասխանելու: Որոշեցի Ղարաբաղի մասին չխոսել: Խոսեցի միայն տնտեսության մասին: Երբ ընդմիջմանը դուրս եկանք, մյուս վարչապետներն ու նախարարները մոտենում էին ինձ, ասում. «Շնորհակալություն, մենք այնքան վախենում էինք, որ դու էլ պիտի նրան պատասխան տաս, միտինգ չէ այստեղ...»: Հետո Մամեդովը մոտեցավ ինձ, ասաց. «Կներես, ես առաջինն էի խոսում, մտածում էի՝ կարող է դու խոսես՝ ես չխոսեմ, դրա համար էլ խոսեցի, թե չէ ես էլ էի կարծում, որ այստեղ Ղարաբաղի հարցի մասին խոսելը իմաստ չունի»: Էմոցիոնալ մարդ էր, վարչապետությունից հետո դարձավ արտաքին գործերի նախարար:

Մենք իհարկե պատերազմին կողմնակից չէինք, բայց պատերազմը կարծես թե թելադրված էր: Լրիվ շրջապատված էին Ստեփանակերտը, Շուշին: Վարչապետությունից հետո ես ծանր հիվանդացա: Վազգեն Սարգսյանը գալիս էր հիվանդանոց, ասում էր.

- Վազգեն, ի՞նչ անեմ քեզ համար:

- Գնացեք Շուշին վերցրեք, ֆունդամենտալ խնդիրը Շուշին

վերցնելն է:

Շուշին վերցնելիս ջոկատներով էին: Արկադի Տեր-Թադեւոսյանն էր ղեկավարում ջոկատները: Ռազմական առաջին լուրջ փորձը այդ ժամանակ ձեռք բերեցինք: Հետագայում ես ընդդիմության մեջ էի. տասը կուսակցություններ էին՝ մենք էինք, ռամկավարները, դաշնակցությունը, ԱԻՄ-ը, ՍԻՄ-ը եւ այլն: Մարտակերտում սկսվեցին պարտությունները:

Բ. - Շուշիի խնդրին ՀՀՇ-ն, անձամբ Լեւոն Տեր-Պետրոսյանը ինչպե՞ս էին վերաբերվում, կա՞ր հարց, թե վաղ է, չենք կարող:

Վ.Մ. - Լեւոնն այդ ժամանակ Իրանում էր: Երբ վերադարձավ, թեեւ մենք իրարից խռով էինք, զանգահարեցի նրան, ասացի. «Լեւոն, շնորհավորում եմ, քո նախագահության օրոք Շուշին վերցված է, դա մեծ բան է»: Ասաց. «Այդպե՞ս ես մտածում, տակից ո՞նց ենք դուրս գալու»: Նրան կարծես ավելի մտահոգում էր, թե արտաքին ուժերը ինչ կասեն դրա մասին: Որքան ինձ հայտնի է, դարաբաղցիների, Վազգեն Սարգսյանի գործողություններն այնքան էլ համաձայնեցված չէին Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: Ղեկավարությունը գտնում էր, որ Շուշին մի օր երեւի պետք է վերցնել, բայց գործողության «դաբրոն», ինչքան գիտեմ, չկար: Մարտակերտի կորստից հետո, թեեւ պատերազմ էր, ընդդիմությունը անընդհատ ցույցեր էր անում, որովհետեւ Վաղուհասից, ամեն տեղից մերոնք ետ էին գալիս, շատ ծանր վիճակ էր ռազմաճակատում: Ներսում որոշվեց առաջարկություն անել Լեւոն Տեր-Պետրոսյանին ստեղծել պաշտպանության կոմիտե, որը կղեկավարի ռազմական գործողությունները: Առաջարկը Դաշնակցության կողմից եղավ, հիմնականում Վահան Հովհաննիսյանն էր առաջ քաշում այդ միտքը: Ես համաձայն չէի, որովհետեւ մի մարմին էր ստեղծվում, որի կազմում մեծամասնությունը ընդդիմությունից էր լինելու, փոքրամասնությունը՝ կառավարությունից, Լեւոն Տեր-Պետրոսյանն էլ էր լինելու այդ կոմիտեի անդամ, հարցերը որոշվելու էին քվեարկությամբ, իսկ այդ դեպքում ունենալու էինք մեծամասնություն: Ես ասում էի, որ ոչ մի նախագահ՝ լինի դա Լեւոն Տեր-Պետրոսյանը թե մեկ ուրիշը, չի համաձայնվի, որ ինքը պատասխանատվություն կրի երկրի համար, բայց ուրիշները քվեարկելով պարտադրեն իրեն այս կամ այն քայլը անել: Ես բացառում էի, որ նա կհամաձայնվի, եւ դա անիմաստ էր: Բայց քանի որ «Դաշինքը» որոշել էր բանակցել Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ, ես էլ գնացի: Փոքր խմբով գնացինք Լեւոնի հետ խոսեցինք: Իհարկե, նա չհամաձայնվեց: Նա ինձ առաջարկեց լինել պաշտպանության պետնախարար: Ես հասկանում էի, որ դա «ինքնասպան» պաշտոն է, պարտվելու դեպքում պետք է պատասխանատվություն վերցնեի, բաց

գիտեի, որ ես այդ գործը կարող եմ անել: «Դաշինքի» նիստի ժամանակ ասացի, որ Լեւոն Տեր-Պետրոսյանի առաջարկը կընդունեմ, եթե նրանցից ոչ մեկը դեմ չլինի: Բոլորն այնպես արտահայտվեցին, որ ոչ թե ողջունում են իմ որոշումը, այլ իրենց իրավունք չեն վերապահում ինձ ետ պահել այդ քայլից: Նրանց մեջ ոգեւորություն չկար: Բայց ֆորմալ տեսակետից կարող եմ ասել, որ ես գնացի դրան՝ ունենալով «Դաշինքի» բոլոր կուսակցությունների համաձայնությունը: Լեւոն Տեր-Պետրոսյանն առաջարկեց, որ ոչ թե պետնախարար լինեմ, այլ պաշտոնակատար: Դա մի փոքր խորամանկություն էր: Եթե դառնայի պետնախարար, ուրեմն պետք է խորհրդարանից դուրս գայի: Մտածում էր, որ դրանով ինձ ինչ-որ վատություն կանի, որովհետեւ մի օր էլ դուրս կգամ այդ պաշտոնից, եւ կստացվի, որ պառլամենտից էլ եմ դուրս մնացել: Հետագա բոլոր պաշտոններում գործադիր իշխանության մեջ ձեւակերպվում էի որպես պաշտոնակատար, ինչը հնարավորություն էր տալիս մնալու խորհրդարանի անդամ: Որպես պետնախարար՝ ինձ վրա դրված էր ոչ միայն պաշտպանության գիծը, այլեւ ԴԵՊԵԿա-ն, ռազմաարդյունաբերական համալիրը՝ այդ ժամանակ գաղտնի հրամանով ստեղծված, զենքի արտադրությունը: Եվս երկու այդպիսի ծառայություն կար: Վազգեն Սարգսյանն այդ ժամանակ պաշտպանության նախարարն էր, մենք բավական լավ աշխատում էինք իրար հետ: Բայց հետո մի խնդիր առաջացավ. Լաչինում պրոբլեմ ունեցանք: Լեւոն Տեր-Պետրոսյանը Մոսկվայից հրավիրել էր գեներալ Տեր-Գրիգորյանցին, որին հանձնարարված էր բանակի ստեղծումը: Նա շատ լավ զինվորական էր, բայց տեսաբան էր եւ փորձում էր բանակը կառուցել Խորհրդային Միության բանակի հնարքներով: Միեւնույն ժամանակ պատերազմ էր, որին ավելի շատ մասնակցում էին ֆիդայիները, եւ մեծ հակասություն կար նրանց պատկերացրած բանակի ու ֆիդայիների միջեւ: Այդ ժամանակ ջոկատներ էին ստեղծվում, որոնք «Արծիվ» էին կոչվում, գնում էին ինչ-որ ժամանակ դիրքերը պահում եւ գալիս: Բանակը թղթի վրա ձեւավորվում էր, բայց դեռ որեւէ լուրջ բան չկար: Երբ Լաչինում անցքեր ունեցանք եւ չէինք կարողանում պաշտպանել, Վազգեն Սարգսյանը ջոկատներին հրավիրեց: Ես եւ նա նիստը վարեցինք պաշտպանության նախարարության շենքի դահլիճում: Հիմնականում Վազգենն էր վարում, նա էր այդ ժամանակ պաշտպանության նախարարը: Վազգենը կոչ արեց մի քանի հարյուր հոգի առավոտյան գան, որպեսզի գնան ռազմաճակատ: Առավոտյան ոչ ոք չեկավ: Դարձյալ բոլորին հավաքեցինք, խոսեցինք՝ դարձյալ մարդ չեկավ: Ես Վազգեն Սարգսյանին ասացի. «Դու պիտի դուրս գաս պաշտպանության նախարարի պաշտոնից: Եթե քո կոչով մարդիկ չեն

գալիս, ուրեմն՝ վստահությունդ կորցրել ես, ինչ-որ պատճառ կա, դու պիտի չլինես»: Նա համաձայնվեց: Ասացի. «Տեր-Գրիգորյանցին նշանակենք պաշտպանության նախարար, ես էլ՝ որպես պետնախարար, կկառավարեմ»: Ասաց. «Չէ, Տեր-Գրիգորյանցին կտրականապես դեմ եմ, պատերազմը տանուլ կտանք, նա մեր ներկա պատերազմի իրավիճակին ծանոթ չէ»: Երկուսով մտանք Լեւոն Տեր-Պետրոսյանի մոտ: Երեքով զրուցում էինք: Լեւոնը եւ Վազգենը պնդեցին, որ պաշտպանության նախարարը ես լինեմ: Ստիպված համաձայնվեցի: Պետնախարարի պաշտոնին ավելացավ պաշտպանության նախարարի պաշտոնը: Սկզբնական շրջանում ինձ համար շատ դժվար էր մտնել այդ բոլոր մանրուքների մեջ: Այլ բան է վարչապետ կամ պետնախարար լինելը եւ վերեւից կարգադրություններ անելը, այլ բան է այդ մեխանիզմներին ամբողջությամբ տիրապետելը: Այդ ժամանակ մի քանի, իմ կարծիքով, շատ կարեւոր որոշում ընդունվեց: Նախ գտնում էի, որ կադրային սպաների քանակը պետք է ավելացնել, քանի որ պատերազմը կամաց-կամաց սկսում էր մասնագիտական բնույթ կրել: Դիմեցի Լեւոն Տեր-Պետրոսյանին, որովհետեւ իմ հրամանով դա հնարավոր չէր, զինվորականները, աշխատավարձից բացի, նաեւ աստղերի համար էին գումար ստանում: Լեւոն Տեր-Պետրոսյանը ստորագրեց հրամանագիր, ըստ որի՝ աստղի համար աշխատավարձը մեր բանակում մեկուկես անգամ ավելին է, քան ռուսական բանակում: Մեկ-երկու ամիս հետո Ելցինը նույն կերպ՝ մեկուկես անգամ բարձրացրեց աստղի համար աշխատավարձը: Մարդիկ հայրենասիրությունից ելնելով ուզում էին կռվել, հայրենիքը պաշտպանել, բայց նրանք նաեւ աշխատավարձ պիտի ստանային, ընտանիք պահեին: Եթե շահագրգռվածություն չլինի, մեկ-երկու շաբաթ տանկերի տակ կպառկեն, բայց տարիներով երկարատեւ պատերազմում, եթե ընտանիքի ապահովվածությունը չլինի, շատ դժվար է կռվել: Չեմ կարող ասել, թե դա էր միակ պատճառը, բայց եւ լրացուցիչ փաստարկ էր, որպեսզի կադրային սպաներին հավաքագրեինք: Երկրորդ հարցը՝ որոշվեց, որ մենք ունենում ենք երկու բանակ, թեեւ դա տարօրինակ է: Այսինքն՝ Տեր-Գրիգորյանցը սկսում է զինակոչի միջոցով կառուցել բանակ, ընդ որում, համաձայնվեցի, որ այն Խորհրդային Միության բանակի սխեմայով լինի, քանի որ մեր բոլոր կադրային սպաները, սովորությունները կապված էին խորհրդային բանակի հետ: Եթե արհեստականորեն մտցնեինք ֆրանսիական կամ ամերիկյան բանակի սխեման, չէր աշխատի: Մյուս կողմից՝ արդեն կռված տղաներից ստեղծվում էին բրիգադաներ՝ պայմանագրային հիմունքով: Այսինքն՝ նրանք հինգ տարի ժամկետով պայմանագիր էին կնքում, ստանում, քսան հազար ռուբլի աշխատա-

վարձ, որն այն ժամանակ մեծ գումար էր, եւ հնարավորություն էին ստանում պահելու իրենց ընտանիքները: Պատերազմի հիմնական բեռը վերցնում էին պայմանագրային ծառայողները, իսկ թիկունքում ապագայի համար զինակոչի հիման վրա կառուցվում էր բանակ: Աշխատում էինք երիտասարդներին ռազմական գործողություններին մասնակից չդարձնել, թեեւ մեկ-երկու անգամ օգտագործել ենք: Եւ նրանց խղճում էինք, եւ փորձ չունեին: Մի կարեւոր հանգամանք էլ կար. նրանք կորուստներ ավելի շատ էին տալիս, քան պայմանագրային ծառայողները: Պատահում էր, որ նահանջում էին, երբ պահը թելադրում էր, բայց երիտասարդները հերոսության, թասիբի զգացում ունեին, մնում էին այդտեղ, զոհվում այն դեպքում, երբ հնարավոր էր մի քիչ նահանջել, հետո նորից հարձակվել: Իսկ ի՞նչ էր կատարվում Բաքվում: Նրանք զինակոչիկներին էին օգտագործում, եւ նրանցից ամեն մեկի զոհվելը մեծ ալեկոծություն էր առաջացնում ծնողների շրջանում: Հաջորդ որոշումը հետեւյալն էր. ես ասացի, որ երկու՝ Հայաստանի եւ Ղարաբաղի առանձին բանակներ ունենալը ճիշտ չէ: Չէի ասի, թե բանակը դրանով իսկապես կդառնար միասնական, քանի որ ղարաբաղցիները, լինելով առաջին ճակատում, շատ անգամ սեփական որոշումներն էին ընդունում: Բայց ֆորմալ տեսակետից՝ գործողությունները հաստատվում էին միասին, հոգեբանական լիցք էր տալիս միասնական լինելու հանգամանքը: Ես առաջին անգամ ռազմաճակատ գնացի փոքր ջոկատով, երբ վարչապետությունից դուրս էի եկել, բայց դեռ պաշտպանության նախարար չէի: Սմբատ Հակոբյանն էր, Հայրապետյան Ռուբիկը (Նեմեց), «աֆղանական» ջոկատի մի հատվածն էր: Գնացինք Մարտակերտի կողմերը: Գրքերում կարդացած, պապիս պատմած պատկերներն առաջին անգամ տեսա: Այդքան վիատված, հուզված երեւի երբեք չեմ եղել, որովհետեւ Մարտակերտի ժողովուրդը որ փախչում էր անտառի միջով, ծառերի ճյուղերին մնացել էին հագուստներ, մանկական խաղալիքներ... Ամբողջ դաշտում չթաղված դիակներ կային, որոնցից հոտ էր գալիս: Առաջին անգամ տեսա, թե ինչ է նշանակում գաղթը: Մտքումս երդվեցի, որ ամեն գնով ամեն ինչ կանենք, որ Մարտակերտը վերցնենք: Երբ պաշտպանության նախարար էի, Մարտակերտը վերցնելու հարցում ինձ համար էական նշանակություն ուներ իմ աչքով տեսածը: Այդտեղ մեզ վրա ուղղաթիռներով հարձակվեցին, մեկը մի հերոսություն արեց, մյուսը մի ուրիշ բան՝ դրանք երկրորդական հարցեր են: Հետագայում որպես պաշտպանության նախարար Ղարաբաղում եղա Քարվաճառի գործողությունից առաջ: Ես ասացի, որ քարտեզին այդքան լավ չեմ տիրապետում, պետք է գործողությունից առաջ ինքս տեղանքը տեսնեմ, որ-

պեսզի քարտեզով կողմնորոշվեմ: Խմբով գնացինք: Դալիբալթայանն ասաց. «Մտնենք իրենց տարածքը՝ Քելբաջար»: Մոնթեն էր, Ամարասի Արթուրը: Նրանց հետախուզությունը գնում էր, որ մենք կարողանանք մտնել: Ոտքով բավական խորացանք ապագա ռազմական գործողությունների գոտում, որպեսզի տեսնենք, թե ինչն ինչոց է: Զինվորականների համար միգուցե դա այնքան կարեւոր չէր, նրանք քարտեզով ամեն ինչ շատ լավ պատկերացնում էին: Ադրբեջանի նախագահը միանգամից հայտարարեց, որ Հայաստանի պաշտպանության նախարարը եկել է Ղարաբաղ, մեծ աղմուկ բարձրացրեց, ինչն, իսկապես, քաղաքական տեսակետից մի քիչ մարսվող չէր: Հեռուստատեսությունից նկարահանում էին, ասացի. «Բոլոր կադրերը, որոնցում ես կամ, հանեք»: Հիմա Մոնթեի մասին ֆիլմեր են ցույց տալիս, որոնցում Մոնթեն քարտեզով ինչ-որ մեկին բացատրում է, թե ինչ են անելու: Մոնթեն կադրում կա, ես չկամ: Երկու անգամ այդպես եղել է, բայց ես այդքան մեծ կարեւորություն չեմ տվել: Պատահել է՝ գնացել ենք Լաչին, գնդակոծության տակ ընկել, բայց ես զինվորական չէի, որը խրամատից ելնում է ու զորքը իր ետեւից տանում: Այդպիսին Մոնթեն էր, Սամվել Բաբայանը, Աշոտ Բեկորը, բազմաթիվ այդպիսի մարդիկ կային: Ինձ ավելի հետաքրքրում էր աշխատանքի բաժանումը, օրինակ՝ Սերժ Սարգսյանը հիմնականում զենք-զինամթերքի հարցերն էր կոորդինացնում, ռազմավարություն մշակում:

Բ. - Սերժ Սարգսյանի դերը ո՞րն էր:

Վ.Մ. - Սերժ Սարգսյանը լավ կազմակերպիչ էր, բայց ոչ ռազմական գործողությունների կազմակերպիչ: Նա լավ աշխատում էր քարտեզով, լավ տիրապետում էր թիկունքային աշխատանքին, սպառազինության հարցերին:

Բ. - Ձեր ներկայացուցիչն է՞ր:

Վ.Մ. - Չէ, Ղարաբաղում եռյակ կար՝ Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը եւ Սամվել Բաբայանը: Սամվել Բաբայանը անմիջական գործողություններ մշակող եւ առաջին դիրք գնացող մարդ էր՝ բավական կարեւոր դեր կատարելով: Սերժ Սարգսյանը, Ղարաբաղի պաշտպանության նախարար լինելով, հիմնականում զբաղված էր զենք-զինամթերքի, թիկունքային, հագուստի, ուտելիքի հարցերով, մասնակցում էր գործողությունների մշակմանը, քարտեզով շատ լավ էր աշխատում: Ռոբերտը ընդհանուր ղեկավար էր, բայց բանակում ռեալ ուժը Սամվել Բաբայանին էր պատկանում:

Բ. - Կոմանդոսը ի՞նչ դեր ուներ:

Վ.Մ. - Երբ ես եկա պաշտպանության նախարարություն, Կոմանդոսն արդեն չկար: Ես նրա նկատմամբ շատ մեծ հարգանքով էի լց-

ված: Լսել ու կարդացել էի նրա մասին, բայց անձամբ չէի ճանաչում: Ես նույնիսկ նրան առաջարկեցի Լաչինում ստեղծել ճակատի պես մի բան, եւ նա Լաչինի ղեկավարությունը ստանձնի: Բայց չուզեց: Այդ պահին, երբ ես նրա հետ խոսում էի, մի քիչ կոտրված էր, բավական խռոված: Ուզում էի նրան օգտագործել, բայց զգացի, որ այդ պահին հնարավոր չէ: Ինձ համար նա ինչ-որ ձեւով մոռացվեց, եւ գնացինք առաջ:

Մարտակերտում Պուշկին յալը եւ Հեռուստաաշտարակի բարձունքը վերցնելուց հետո արդեն Մարտակերտը բռիդ մեջ է: Երեկոյան ժամը իններին զանգահարեցի Լեւոնին, ասացի.

- Շնորհավորում եմ, Պուշկին յալն էլ ենք վերցրել:

- Դա ի՞նչ է:

- Հեռուստաաշտարակն արդեն վերցրել ենք, այսինքն՝ առավոտյան հետախուզությունը կմտնի Մարտակերտ:

- Վազգեն, այդ պրոբլեմի տակից ո՞նց եք դուրս գալու:

- Դա պրոբլեմ չէ, իսկապես ամենապատճառաբանված գրավումն է, որովհետեւ Մարտակերտը մերն է եղել, մենք ետ ենք վերցնում:

Չեմ կարող ասել, թե Լեւոնը հայրենասեր մարդ չէր, բայց Լեւոնի մեջ մի բան կար, այն, որ պետք է արագ ինչ-որ համաձայնության գալ Ղարաբաղի հարցում՝ մի բան կորցնելով, մի բան շահելով: Բայց միջազգային ներկա իրավիճակում հող գրավելը հեռանկարային ճանապարհ չէ: Նա շատ էր հաշվի առնում դրսի կարծիքը:

Մենք պատերազմի ժամանակ Ղափանի գործողությունը սկսեցինք: Ղափանը հարվածների տակ էր: Ժողովուրդը հողից պատ էր կառուցել: Մի գեներալ կար, կոլոտ մարդ էր, դիվիզիայի հրամանատար է եղել խորհրդային բանակում: Նրա հետ հայերեն խոսեցի, տեսա, որ չի կարողանում, սկսեցի ռուսերեն խոսել, բայց ռուսերեն ավելի վատ էր խոսում: Ասացի. «Ռուսերեն չխոսելով՝ դու ո՞նց ես դիվիզիայի հրամանատար եղել»: Ասաց. «Ես ժամանակ եմ ունեցե՞լ լեզու սովորեմ»:

Միեւնույն ժամանակ գաղտնի բանակցություններ էին ընթանում Ստոկհոլմում: Թվում էր, թե ուր որ է հարց է լուծվում, ու հանկարծ ադրբեջանցիները սկսում են ինքնաթիռներով ռմբակոծել Վարդենիսը: Իմ մեջ շատ հստակ էր այն տպավորությունը, որ Ադրբեջանը որոշել է ռազմական ճանապարհով հարցը լուծել, եւ նրա համար բանակցությունները՝ գաղտնի թե բացահայտ, միայն շիրմա են, որի ետեւում, համոզված է, հարցը կլուծի: Դրա համար էլ ես չէի մտածում, թե ապագայի համար որն է ճիշտ, որը՝ սխալ: Մի բան ինձ համար հասկանալի էր, այն է՝ պատերազմում պետք է հաղթել, որպեսզի բանակցությունների արդյունքում լինի խաղաղություն: Երբ եկա պաշտպանության նախարարություն, զգում էի մարդկանց հսկայական ձգտումը. ուզում են հաղթել եւ՛ ղարաբաղցիները, եւ՛ հայաստանցիները: Եթե այդ էներգիան չլինի, ոչինչ չի ստացվի, նույնիսկ եթե հանճարեղ ռազմական գործիչներ, նախարարներ կան: Այդ էներգիան չէր սպառվել, պետք էր դրան ճիշտ ուղղություն տալ:

Բ. - Լեւոն Տեր-Պետրոսյանը մի պահ ուզում էր Քարվաճառը զիջել, սկսեցին տներն այրել...

Վ.Մ. - Քելբաջարի գործողությունից առաջ Դալիբալթայանը եկավ ինձ մոտ, ասաց. «Պարոն Մանուկյան, Քելբաջարը վերցնելուց հետո մենք զինվորականներով պիտի մնանք, որպեսզի Իստիսուի առողջարանին ձեռք չտան, այն դառնա Պաշտպանության նախարարության առողջարանը»: Արտաքին ճնշումը մեծ էր: Լեւոն Տեր-Պետրոսյանի մեջ միաժամանակ երկու էլեմենտ կար: Մեկը՝ ուզում էր համաչափ լինել աշխարհում տեղի ունեցող պրոցեսներին, մյուսն էլ անձնական էր, ուզում էր հարգված ղեկավար համարվել աշխարհում: Երբ նա ինձ պաշտպանության նախարար նշանակեց, ասացի.

- Լեւոն, Արեւմուտքը քաղաքական գործիչներին գնահատական է տալիս, ասենք՝ հարյուր միավոր, եթե երեսուն միավորից ցածր ունես, արդեն համարվում ես Սադամ Հուսեյն, եւ քո պետությունն էլ վտանգի տակ է հայտնվում: Հիմա դու նրանց միավորներով ութսուն տոկոս ունես, բայց այդ ութսուն տոկոսով մենք պատերազմը չենք շահի: Դու արհեստական ձեւով տոկոս ես կուտակում, բայց, ընդհակառակը, թող Արեւմուտքին դուր չգա, սակայն դու պիտի դառնաս ամբողջ ժողովրդին մոբիլիզացնող: Թող այդ միավորները դառնան քառասուն, վաթսուն, բայց մենք հաղթենք: Լեւոնն ասաց.

- Չէ, Վազգեն, իմը ութսուն է, ես կդարձնեմ հարյուր:

- Այդ դեպքում ես ինձ վրա կվերցնեմ մինչեւ քառասուն, երեսուն միավոր իջնելը...

Բանակցությունների ժամանակ ես ինձ պահում էի որպես կոշտ զինվորական, որը հարվածներ է վերցնում դրսից: Բայց դա օգնում էր, որովհետեւ հնարավոր չէ, որ բոլորն ուզեն Արեւմուտքին դուր գալ, եւ մենք կարողանանք պատերազմում հաղթել: Բայց այդ խաղը կար: Լեւոնը Հայաստանի ներսում այլ բան էր ապահովում, ես՝ այլ: Քելբաջարի վրա ճնշումը շատ մեծ էր՝ այնտեղից դուրս գալու համար: Նույնիսկ իմ թիկունքում Լեւոնը բանակցում էր զինվորականների հետ, մի մասին համոզել էր: Հիմնականում դեմ եղավ Ղարաբաղի ղեկավարությունը՝ Ռոբերտը, Սամվել Բաբայանը: Լեւոնը նույնիսկ ստիպված Ղարաբաղ գնաց, որպեսզի նրանց համոզի: Միեւնույնն է, չհամոզվե-

ցին: Ղարաբաղի պատերազմը հաղթել առանց Քելբաջարի հնարավոր չէր: Այդ դեպքում հիշեցնեմ Արծվաշենը: Օրինակ՝ մեղադրում էին, թե Արծվաշենը բաց ենք թողել, բայց դա իմ օրոք չէր, ինձնից առաջ էր: Սակայն ես գտնում էի, որ Արծվաշենը պաշտպանելը հնարավոր չէ: Կողքի բոլոր սարերը՝ այսինքն Արծվաշենից տասն անգամ մեծ տարածք պիտի վերցնեինք, որպեսզի կարողանայինք պաշտպանել: Այնպես չէ, որ ցանկացած անկլավ կարող ես պաշտպանել: Նույնը Ղարաբաղում: Ղարաբաղի մեջքը Քելբաջարն էր, չունենալով Քելբաջարը՝ Մարտակերտն էլ չես կարող վերցնել ու պահել, ընդհանրապես, ամբողջ Ղարաբաղը պրոբլեմներ էր ունենալու: Հետագայում ինչ բանակցություններ էլ ընթանան, ինչ կորուստներ էլ լինեն, եթե Լաչինն ու Քելբաջարը չպատկանեն Ղարաբաղին, ապա Ղարաբաղը դատապարտված է:

Կարծիք էր ստեղծվել, թե մենք հաղթել ենք, որովհետեւ մեզ ռուսներն են օգնել: Դա սուտ է: Ռուսաստանը մեզ համակրանքով էր վերաբերվում, բայց այն, ինչ մենք նրանից ստանում էինք, մոտավորապես նույն չափով Ադրբեջանն էր ստանում: Ադրբեջանն առանց այն էլ քսան անգամ ավելին ուներ, քան մենք: Բայց քաղաքական տեսակետից մեզ համար իսկապես պարտնյորություն էր: Ռուսական զորքը պատերազմի ժամանակ բացարձակապես ոչ մի մասնակցություն չի ունեցել: Նույնիսկ կազակներ էին եկել, երբ ես պաշտպանության նախարար էի: Հրաժարվեցի նրանց ծառայությունից: Կռվում է նա, ում սիրտը վառվում է այդ հողի համար: Վարձու զինվորներով այդ հարցերը չեն լուծվում: Նույն կերպ Ադրբեջանի կողմից վատ էին կռվում չեչենները, որոնք գալիս էին այդտեղ ռազմական փորձ ձեռք բերելու: Այսինքն՝ հաղթանակը իսկապես մերն է լինելու: Նաեւ կարծիք էր ստեղծվում, թե ադրբեջանցիները վատ կռվող են: Դա այնքան էլ այդպես չէ: Ֆիզուլու մոտ մի քանի գնդեր կային, որոնք շատ լավ զինվորներ էին, եւ եթե Ադրբեջանի կառավարությունը ավելի լավ կազմակերպեր, մենք ավելի շատ պրոբլեմներ կունենայինք: Պետք չէ արհամարհանքով վերաբերվել հակառակորդին, դա էլ շատ կարեւոր է:

Բ. - Խոսենք Ադրբեջանի հյուսիսում՝ Դաղստանի կողմից երկրորդ ճակատ բացելու մասին:

Վ.Մ. - Ես այդ մասին չեմ կարող մանրամասն խոսել, որովհետեւ մինչեւ հիմա համարել եմ պետական գաղտնիք: Մենք այդ ժամանակ շատ մեծ նշանակություն էինք տալիս Վրաստանում եւ Ադրբեջանում ապրող ժողովուրդներին, Կովկասի ժողովուրդներին՝ լեզգիներին, ալաններին, օսերին, դաղստանցիներին: Մենք բոլորի հետ ունեինք հարաբերություններ, գաղտնի, ռազմական համագործակցություն:

Միայն այդ ճանապարհով կարող էինք Անդրկովկասում լինել ուժեղ: Հյուսիսային օպերացիան շատ կարեւոր էր, որովհետեւ հյուսիսային օպերացիայի ժամանակ կտրվում էին բոլոր կոմունիկացիաները: Նույնիսկ ռուսական թերթերից մեկում՝ «Կրասնայա զվեզդա»-ում, հուշող հոդված տպվեց. «Վազգեն Մանուկյանը որոշել է հյուսիսային օպերացիա անել, պիտի գնան կոմունիկացիաները բռնեն....»: Իսկապես շատ գրավիչ է: Ինչ-որ ժամանակ շատ ուղղություններով կարելի էր գնալ, բայց պատերազմի ժամանակ փոշիացումն էլ ճիշտ չէ, միշտ պետք է ունենալ գլխավոր ուղղություն, դրան պետք է հասնել: Ես կարծում եմ, որ դա շատ կարեւոր գործողություն կլիներ, մի տեղ պետք էր վերջացնել եւ սկսել դա: Ինձ համար միշտ շատ տպավորիչ են եղել Հիտլերի օգնականի հուշերը, թե Հիտլերը միշտ ասում էր, որ ինքը երբեք չի կրկնի իր նախորդների՝ Առաջին համաշխարհային պատերազմում գործած սխալները եւ երկու ռազմաճակատով չի կռվի, թեեւ նրան վերջում պարտադրվեց կռվել երկու ռազմաճակատով: Մենք Վրաստանի հետ կապված խնդիրներ ունեինք: Երբ կոտրում էին մեր գազամուղները, խնդիր կար ճանապարհները բացել Բաթումիով՝ նավթ ստանալու համար: Խնդիրներ ունեինք Նախիջեւանի հետ: Զուգահեռ ճանապարհներով գործում էինք, բայց միշտ պիտի լինի գլխավոր ուղղություն: Այդ ուղղությունը պիտի վերջացնել, հետո անցնել մյուսին: Գլխավոր ուղղությունը սկզբում Քելբաջարն էր, հետո՝ Աղդամը՝ մինչեւ գետը հասնելը:

Բ. - Ադրբեջանը հոգեբանորեն չէր կարող դիմանալ երկրորդ ճակատի գոյությանը, Ադրբեջանին մեկ ուղղությամբ հաղթել չէինք կարող:

Վ.Մ. - Այդ ուղղությամբ աշխատում էր նաեւ պաշտպանության նախարարությունը: Դա շատ կարեւոր սկզբունք էր: Ես միայն մի բանի համար եմ ցավում: Լեւոն Տեր-Պետրոսյանը ինձ կանչեց, ասաց. «Ոչ ոք չի իմանում, թե դու ինչքան մեծ գործ ես արել, ժամանակը կանցնի, այդ մասին կխոսեն, բայց հիմա պիտի դուրս գաս»: Այդ ժամանակ ես նաեւ դրսից ջոկատների էի զինում, ինչպես նաեւ՝ Կովկասի տարբեր տեղերում: Դա էր, կարծես թե, պատճառաբանում կապը դաշնակցականների հետ: Իսկ ինձ համար Դաշնակցություն թե ՀՅԴ հարցը բացարձակապես նշանակություն չուներ: Լեւոնին ասացի. «Ինքս հրաժարական չեմ տա, դու ինձ կարող ես հանել, ես դրա դեմ ոչ մի քայլ չեմ անի»: Պայմանավորվեցինք: Ես մի շաբաթ հետո պիտի գնայի Ֆրանսիա ստուգումների եւ երբ վերադառնայի, նա պիտի հրամանը տար: Ես դեռ այնտեղ էի, նա հրամանը տվեց: Ես Տեր-Գրիգորյանցին կանչեցի, ասացի. «Որպես գաղտնիք ասեմ, որ ես այլեւս պաշտպանության նախարար չեմ լինելու, երեւի քեզ վրա կդրվեն այդ պարտականու-

թյունները»: Օրինակ՝ բացատրում էի, որ լեզգիների ղեկավարը գա, ինչ պիտի խոսի, աբխազների հետ ինչպես պայմանավորվի: Հատուկ բաժին ունեինք: Ասաց. «Այդ ի՞նչ գլխացավանք է»: Իմ դուրս գալուց հետո փակվեց, որովհետեւ ես՝ որպես պաշտպանության նախարար, նաեւ ազգային-քաղաքական գործիչ էի, իսկ զինվորականի համար, զինվորական գործից բացի, մյուս խորամանկությունները նշանակություն չունեին: Բացի պաշտպանության նախարարությունից՝ կային այլ կառույցներ, որոնք, իմ կարծիքով, շատ օգտակար եւ լուրջ աշխատանք էին կատարում: Աշոտ Մանուչարյանն էր աշխատում՝ իրենց կառույցով: Մի մասնագետ, որի անունը չեմ ուզում հիշատակել, ասաց. «Անդրկովկասը մի քիչ փոքր է երեք պետության համար, երկու պետությունները գոնե մեկին իրար մեջ պիտի անեն»: Իրար մեջ արվողը կարող էին լինել Վրաստանը կամ Ադրբեջանը, որովհետեւ դրանք բազմազգ պետություններ են:

Երբ 1992 թ. որոշեցինք առաջին անգամ մայիսի 28-ին Հանրապետության հրապարակում զինվորական շքերթ կազմակերպել, Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ մյուսները ինձ համոզում էին, որ անկախության օրը ոչ թե մայիսի 28-ն է, այլ սեպտեմբերի 21-ը, քանի որ ՀՀԾ-ն ուզում էր իրենով անել: Ես մայիսի 28-ն էի համարում անկախության օրը ոչ թե նրա համար, որ Դաշնակցությանն էի սիրում, այլ 1960-ական թվականներից ընկերներով միշտ մայիսի 28-ին ենք նշել անկախության օրը: Մայիսի 28-ին շքերթ արեցինք, եւ ես առաջին անգամ չէի կարողանում ելույթ ունենալ: Այնքան էի հուզվում: Առավոտյան զարթնելով՝ կյանքում առաջին անգամ զգացի, որ կարող է բանավոր ելույթ ունենալիս շփոթվեմ: Ելույթս գրեցի: Զինվորները կանգնած էին, պաշտպանության նախարարը զեկուցեց, ես ելույթ ունեցա: Իմ կարծիքով՝ լավ էլ ելույթ էր: Ելույթը վերջացրի, ամբողջ զորքը հրապարակում կանգնած էր, պիտի շարժվեին: Տանկեր չէինք բերել, որ ասֆալտը չփչացնեն, բայց տեխնիկան պիտի անցներ: Լռության մեջ բոլորս իրար էինք նայում: Հիշեցի, որ ես պիտի ասեմ՝ ուռա՛, նրանք էլ գոռան՝ ուռռա՛, ու նոր շարժումը սկսվի: Բայց քանի որ թղթի վրա չէի գրել «ուռա», զավեշտ ստացվեց, ամբողջ հրապարակում լռություն էր՝ մինչեւ ես հիշեցի, որ պիտի «ուռա» ասեմ:

Ղափանի գործողությունը որ սկսեցինք, մի քանի ժամվա մեջ մոտ տասը բնակավայր վերցրինք: Միշտ ձեւ էր արվում, եւ իրականում այդպես էր, որ ղարաբաղցիներն են միշտ առաջ գնում, իսկ այստեղ Հայաստանը բացահայտ գնաց առաջ: Վտանգ կար, որ կմեղադրեն ագրեսիայի դրսեւորման մեջ, բայց ստիպված էինք այդպես վարվել, որովհետեւ Ղափան քաղաքը այլ կերպ հնարավոր չէր պաշտպանել:

Զոհեր ունեցանք, ռմբակոծեցին, խաղաղ բնակչությունից մարդիկ մահացան, բայց վերցրինք: Դրանից հետո Գերագույն խորհրդի փակ նիստ եղավ: Ինձ ինչ ասես՝ ասացին, որովհետեւ այդ գործողությունը համաձայնեցված չէր Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ քաղաքական ղեկավարության հետ:

Ռոբերտ Քոչարյանը եւ Սամվել Բաբայանը կարծում էին, որ Քելբաջարի գործողությունը ամենակարեւորն է, եւ դրանում փորձում էին ինձ համոզել: Ասում էի. «Մի՛ համոզեք, ես արդեն համոզված եմ»: Մի անգամ ես ու Լեւոն Տեր-Պետրոսյանը խոսեցինք Քելբաջարի գործողության շուրջ: Հետո ես Ռոբերտի հետ էլ խոսեցի, առաջարկեցի այդ հարցը Անվտանգության խորհրդի նիստում ներկայացնել: Անվտանգության խորհրդի նիստում այդ հարցը քննարկվեց, բավական քարկոծվեցինք, ես նույնիսկ ստիպված ասացի. «Մենք չենք մասնակցելու, միայն Ղարաբաղի բանակն է մասնակցելու: Բնական է, որ Քելբաջարը չեն կարող վերցնել, բայց գոնե կանհանգստացնեն»: Երբ բացատրում էի, թե ճակատը ինչքան է նեղանում, Անվտանգության խորհրդում շատերի կողմից կարծես թե չէր հասկացվում: Բայց հետո Հայաստանի բանակն էլ մասնակցեց: Հայաստանի բանակը որ մասնակցեց, դա «վերեւից» իջավ: Արեւմուտքի համար շատ կարեւոր էր՝ Հայաստանն է՞լ է մասնակցելու, թե՞ միայն Ղարաբաղը: Անվտանգության խորհուրդը որոշել էր՝ թող Ղարաբաղը գործողությունն անի, բայց Հայաստանը չմասնակցի: Քլինտոնը նույնիսկ իր օգնականին էր ուղարկել, որպեսզի տեսնի՝ Հայաստանից գնացել են, թե ոչ: Ուղղաթիռ հատկացրինք, պտտվեց այդ սարերի վրա, հետո զեկուցագիր էր գրել, որի պատճենը ես ձեռք բերեցի: Օգնականը Քլինտոնին գրել էր, որ Հայաստանի կողմից հարձակում չի եղել: Հայաստանի բանակի՝ Ադրբեջանի տարածք մտնելը միշտ համարվում էր ագրեսիա: Ղարաբաղի բանակի առաջխաղացումը՝ անկախ նրանից հայաստանցիներ կային, թե չէ, համարվում էր ինքնապաշտպանություն, ազգային-ազատագրական պայքար: Քաղաքական ընկալումների մեջ տարբերություն կար:

Պատմում է Լեւոն Գեւորգյանը: Զրույցը վարեց Բակուր Կարապետյանը. 14.03.2006 թ., Էջմիածին: Մուտքագրեց Անահիտ Ասատրյանը:

Լ.Գ. - Ծնվել եմ 1960 թ. Նախիջեւանում: 1960 թ. ընտանիքով տեղափոխվել ենք Հայաստան՝ Մասիսի շրջան, որտեղ մինչեւ օրս էլ ապրում եմ: Ավարտել եմ Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտը: Հիմնականում զբաղվել եմ պարաշյուտային սպորտով, հետո շարունակել եմ աշխատել որպես մարզիչ՝ հրահանգիչ-պարաշյուտիստ: 1979-81 թթ. ծառայել եմ խորհրդային բանակում: Ծառայությունից հետո աշխատել եմ ԴՕՍԱԱՖ-ի «Աէրոկլուբում»: Սովորելու ընթացքում եղել եմ Հյուսիսային բեւեռում: «ՍՊ-28», «ՍՊ-27» հատուկ կայաններում աղետ էր տեղի ունեցել, սառույցը ճեղքվել էր: Գնացել էինք որպես փրկարարներ: Պարաշյուտով իջել ենք, ցույց տվել բուժօգնություն եւ հոգեբանական օգնություն: Հիմնականում ծառայել եմ Հատուկ նշանակության ջոկատում, դեսանտային զորքերում, եղել եմ ավագ հետախույզ: Երբ զորացրվեցի, աֆղանական պատերազմը դեռ շարունակվում էր: Հայաստանում ստեղծեցինք պատանի դեսանտայինների ակումբ: Սովորեցնում էի կրակել, լողալ, հետախուզություն, քարտեզագիտություն, ինժեներական գործ, իսկ հիմնականում՝ պայթեցման գործը: Նրանց պատրաստում էինք որպես սովետական կարգերի ապագա զինվորներ: Մինչեւ Խորհրդային Միության փլուզումը մասնակցել ենք մի քանի մրցույթների: Զինվորական ձեռնամարտից եւ կրակային մարտից գրավել ենք առաջին տեղը: Հեղաշրջումից հետո պատանի դեսանտնիկների ակումբը փակվեց: Վաթսուն-յոթանասուն երիտասարդ տղաներ կային, որոնք բանակ չէին գնում, քանի որ հայկական բանակ գոյություն չուներ: Որպեսզի այդ տղաները չցրվեն, դիմեցի Վազգեն Սարգսյանին: Բացի դրանից՝ Երեւանում բացվել էր «Մարմնակրթական երիտասարդական միությունը»: Իմ աշակերտներից Վարդանն ու Անդրանիկն էին այդ երեխաների հետ պարապում: Նրանց միացրի իմ տղաներին, եւ Սմբատ Հակոբյանը խումբը կոչեց «Ազգային լեգեոն»: Կային սովետական եւ հայրենասիրական ոգով դաստիարակված տղաներ: Մի փոքր տարբերություն կար նրանց մեջ,

թեկուզ բնավորության որոշ գծերի առումով, քանի որ տարբեր կերպ էին մտածում: Վազգենը գումար տրամադրեց, որպեսզի շարունակենք նրանց սովորեցնել: Տղաների հետ գնացինք Ջերմուկ, գործնական պարապմունքներ անցկացրինք: Ունեինք ուսումնական, նաեւ մարտական ավտոմատներ: 1992 թ. առաջին խմբին՝ մոտ քսանհինգ հոգու, ուղարկեցինք Ստեփանակերտ: Մինչ այդ եղել ենք Գորիսում եւ Շուռնուխ գյուղում: Այնտեղ ահավոր կրակոցներ չկային, դիրքերն էինք պահում, բայց կարծես երկրորդ գիծ լիներ: Ադրբեջանցիները Հայաստանի սահմանի վրա այդքան շարժ չէին անում, մեկ-մեկ մտնում էին գյուղերը, բայց հիմնականում ահավոր շարժ չկար: Այդ տղաներին անձրեւի տակ, ձյան, քամու ժամանակ սովորեցնում էինք, ու նրանք պատրաստ էին: 1992 թ. փետրվարին գնացինք Ստեփանակերտ: Նրանց հետ ես էի եւ հրահանգիչ Գեւորգյան Կարենը: Մենք դաշնակցության հետ մի տեղում էինք մնում, թեեւ անընդհատ տեղից տեղ էինք գնում, քանի որ կամ մեր տեղը գիտեին, կամ թվում էր, թե մեզ հետեւում էին, «Գրադը» անընդհատ այդ տեղի վրա էր աշխատում: Հետաքրքիր էր, որ աղմուկ բարձրացավ, թե Հայաստանից Ստեփանակերտ հատուկ նշանակության ջոկատ է եկել՝ Խոջալուն վերցնելու համար: Կարծում եմ՝ պատճառն այն էր, որ տղաները սովոր էին առավոտյան ժամը վեցին արթնանալ եւ, քանի որ այդտեղ ջուր չկար, մինչեւ գոտկատեղը մերկ վազում էին մինչեւ Կարկառ գետը, լվացվում ու վազելով ետ գալիս:

Խոջալուն վերցնելու երկու փորձ եղավ: Առաջինը մարտի 23-ին էր, Խոջալու չմտանք, գնացինք ու ետ եկանք, ինչի պատճառը ես խորությամբ չգիտեմ: Մեր խմբին ուղարկեցին Խոջալու, որպեսզի հետախուզություն անցկացնենք: Տելեօբյեկտիվով ֆոտոապարատ ունեինք, հիմնականում դիրքերը նկարեցինք, Կարենն էր նկարում: Մեզ հետ Աֆղանստանում կռված տղաներ կային՝ Նելսոնն ու Խաչիկյան Արթուրը: Մենք Նորագյուղի մոտ նստած նկարում էինք,եւ Նելսոնը, որն առաջինը ուղղաթիռները տեսավ, ասաց. «Տղե՛ր, թռանք, ուղղաթիռները գալու են»: Ասացի. «Հնարավոր չէ, մինչեւ այսօր ուղղաթիռները չեն եկել ու գյուղը ռմբակոծել, այդպիսի բան չի եղել», թե. «Չէ՛, փախնենք, շուտ հեռանանք այստեղից»: Երկու ուղղաթիռները պտտվեցին, սկզբում խփեցին սեւանցիների դիրքերին, շրջվեցին մյուս կողմը կրակեցին եւ եկան դեպի մեզ: Մեր խրամատը մինչեւ ծունկն էր փորած, ուստի այն ապաստարան չէր կարող ծառայել: Տղաների կեսը դեպի աջ գնաց: Ես տեսնում էի, որ ինչքան էլ գնան, ուղղաթիռը կհասնի նրանց: Հասակով մեկ կանգնեցի ու սկսեցի ուղիղ գծով վազել: Մտածում եմ՝ կամ օդաչուն էր խմած, կամ ես էի արագ վազում, եւ կրակաձերթերը ինձ չէին հասնում: Վերջում օդաչուն երկու «Նուրս» արձա-

կեց, մեկը աջ կողքովս անցավ, մյուսը՝ ձախ: Բախտս բերեց, որ Նորագյուղում՝ դեպի Խոջալու, ջերմոց ու պահեստներ կային: Հրթիռը պահեստի պատը ծակեց, ու ես, ինչքան ուժ ունեի, ինձ գցեցի այդ անցքի մեջ: Եկան ռմբակոծեցին, գնացին: Իսկ լուսանկարները տվեցինք գեներալ Դալիբալթայանին: Մարտ 26-ի լույս 27-ի գիշերը գործողությունը սկսվեց: Ամեն ջոկատ ուներ իր ուղղությունը: Մեր ուղղությունը օդակայանի ճանապարհն էր: Մտանք օդակայան, Ադրբեջանական դրոշը իջեցրինք, հայկական դրոշը կախեցինք, բայց թարս էինք կախել, քանի որ մութ էր, ու բան չէր երևում: Խաչաձև խրամատ կար՝ վերևը ծածկած, որ թուրքերն էին կառուցել: Տարբեր կողմերից դուրս էին գալիս ու խփում: Մոտ կես ժամ մեզ այդտեղ պահեցին: Նռնակներով շշմեցրինք եւ վեց հոգու գերի վերցրինք: Մտնելու ժամանակ լուսանկարիչ Կարենին խփեցին: Խառը պահ էր, չհասկացանք, թե ինչպես եղավ: Գնացին հետախուզության, ետ դառնալիս խփել էին:

Բ. - Խոջալուի խաղաղ բնակչությանը կոտորելու խնդրի մասին ի՞նչ կասեք:

Լ.Գ. - Աֆղանստանում տղաները փորձ էին ձեռք բերել: Եթե քաղաքացիական հագուստով մեկը կողքովդ անցնում է, նա անպայման կտրուկ շրջվելու է ու ետեւից կրակի: Նույն վիճակն այնտեղ էր: Զինվածներից ոչ բոլորն էին զինվորական համազգեստով, կային քաղաքացիական հագուստով մարդիկ, բայց եւ ձեռքներին զենք կար, եւ ինքնաբերաբար չես նայում՝ այդ պահին նրա ձեռքին զենք կա՞, թե՞ չէ: Կարմիր խաչի պահանջները այդ խառը իրավիճակում հնարավոր չէր կատարել: Խոջալու մտնելու պահին լուսաբաց էր, տեսադաշտը լավ երևում էր, ուրեմն՝ սուտ է: Եթե կանայք, երեխաներ լինեին, եթե սպանված էլ լինեին, ուրեմն՝ միամիտ կրակոցների տակ են ընկել, տեխնիկա էր աշխատում, նռնականետ, այլ միջոցներ: Խոջալուն գրավելու համար, որպեսզի հակառակորդը ուժեղ դիմադրություն ցույց չտա, իմանալով, որ քաղաքացիական բնակչություն կա, դեպի Աղդամ գետի փեշով ճանապարհ էր թողնվել, որ բնակիչները հեռանան: Հնարավոր է եւ երկրորդ տարբերակը. հակառակորդը թույլ չէր տալիս, որ Խոջալուից որեւէ մեկը դուրս գա: Խոջալուի գործողությունից մի օր առաջ մենք հետախուզություն ենք անցկացրել: Տեսանք, որ երկու ուղղաթիռ իջան Խոջալուում, մոտ մեկ ժամ հետո նորից բարձրացան: Այնտեղ ֆիրմային մեքենաներ կային: Մենք հեռադիտակով տեսնում էինք այդ ամենը: Գյուղը գրավելու ժամանակ այդ մեքենաները չկային: Պարզ էր, որ պաշտոնավոր անձանց մեքենաները ուղղաթիռներով տարել էին, իսկ խաղաղ բնակչությանը չէին թողնում դուրս գալ Խոջալուից: Հավանականությունը մեծ է, որ նրանք իրենց ժողովրդին գնդակահարած լինեն նահանջի ժամանակ, որպեսզի չնահանջեն, այլ

դիմադրություն ցույց տան: Իսկ ադրբեջանցիները կեղտոտ բնավորություն ունեն, որ մեջքերը խուճապ է ընկնում եւ փախչում են, այլեւս հնարավոր չէ դեմն առնել: Ես իմ փորձից եմ ասում: 1994 թ. մեր դիմաց մոտ վեց հարյուր մարդ կար, իսկ մենք ընդամենը յոթանասունութսուն հոգի էինք: Հինգ հոգով ետեւից ենք մտել ու կրակել: Դիմացից կրակում էին, ետեւից կրակում, ու խուճապ էր սկսվել: Ինձ համար շատ զարմանալի էր, որ այդքան լավ զինված զինվորները կես ժամում գյուղը թողեցին ու փախան:

Բ. - Խոջալուի գործողության ժամանակ հրամանատարներից ու՞մ եք հանդիպել, ո՞վ էր հիմնականում ղեկավարում:

Լ.Գ. - Դալիբալթայանն էր, Արկադի Տեր-Թադեւոսյանը, բայց, որքան ես գիտեմ, հիմնականում ղեկավարում էր Դալիբալթայանը: Տղաները հինգ տոննա տրոտիլ պայթուցիկ նյութ են լցրել վագոնի մեջ ու հրել դեպի Խոջալու՝ մոռանալով ֆիթիլը վառել: Պիտի մտներ Խոջալու ու պայթեր, ինչը նշանակում էր գործողության սկիզբը: Ռուսների հետ նստած էինք, հարցրին.

- Ի՞նչ վագոն է:

- Իմ կարծիքով՝ սա պայթող վագոնն է,- ասացի ես:

- Ի՞նչ է, գժվե՞լ եք,- ասաց նրանց հրամանատարը:

Ու զրահամեքենաները միանգամից ետ քաշեցին: Եթե պայթեր, Ստեփանակերտում ապակի չէր մնա, էլ չեմ խոսում Խոջալուի մասին, այնտեղ կռվելու կարիք էլ չէր լինի: Չէին էլ իմացել, թե ինչքան պիտի դնեն: Երկրորդ վագոնը բաց թողեցին, որի մեջ պայթուցիկ նյութի քանակը քիչ էր: Մինչեւ գործողության վերջը ամեն վայրկյան սպասում էինք, որ առաջին վագոնը հիմա կպայթի:

Խոջալուի գրավումից հետո մեր ջոկատով մտանք Շուռնուխի դիմաց գտնվող Յուխարի Ջիբիխլի գյուղը: Մեյթազը մի անգամ գրավել էինք, երբ ետ քաշվելու հրաման եղավ: Ճիշտն ասած, կոմեդիայի էր նման: Հակառակորդն այնքան էլ պատրաստ չէր, մենք էլ լավ վիճակում չէինք, բայց գյուղը գրավելը հեքիաթի պես ստացվեց: Վազգեն Մանուկյանը ինձ ամերիկյան ակնոց էր նվիրել: Շատ սիրուն համազգեստ ունեի, կարծես կինոյում նկարահանվելու համար լիներ: Մենք միշտ հետախուզության էինք գնում, դիտակետեր սարքում, նայում էինք նրանց շարժը, թե ինչ է կատարվում: Կարող է գիշերը կամ ցերեկը մտնեին Շուռնուխ, մենք միշտ հետեւում էինք դիտակետերից: Մի օր հետաքրքրությունից դրդված՝ ես մի քիչ շատ առաջ գնացի, անտառով իջա՝ տեսնելու, թե վերջիվերջո դրանց դիրքերը որտեղ են: Անտառում խրամատի մեջ երկու հոգու հանդիպեցի: Քարի ետեւը ավտոմատով նստած նայում էի: Երբ ինձ տեսան, ես փախա: Անտառը այն ժամանակ մեծ էր: Հանդիպեցի նրանց երկրորդ դիրքին: Երբ նրանք ինձ

նկատեցին, այդտեղից էլ փախա ու բարձրացա ծառը: Շուռնուխ մտնելիս աջ կողմում, «գազի պոստ» էինք ասում, մի մեծ ծառ կա, որի վրա բարձրանալիս՝ ամբողջ գյուղը երեւում էր: Նկատեցի, որ տասը րոպե հետո գյուղում ահավոր շարժում սկսվեց, ամբողջ զորքը խառնվեց իրար, ադրբեջանցիները նստեցին մեքենաներն ու հեռացան գյուղից: Կապվեցի մերոնց հետ, ասացի. «Տղե՛րք, եկե՛ք, մտնում եմ գյուղը գրավեմ»: Չասացի, որ նրանք փախել են: Տղաներն ասացին. «Հո գի՞ժ չես, ի՞նչ ես անում»: Ասացի. «Հիմա մտնում եմ գյուղ»: Մտա գյուղ, հասել էի առաջին տան մոտ, տղաները հարցրին.

- Ու՞ր ես:

- Արդեն գյուղում եմ:

- Ետ արի:

- Չէ, ետ չեմ գա,- ասացի ես,- չե՞ք հավատում, հեսա՝ առաջին տունը վառում եմ:

Առաջին տունը վառեցի, զորքը եկավ, վերջին տունն էլ վառեցի: Հեքիաթի նման էր: Ասում են՝ մենակ գյուղ ես գրավել: Ես մենակ չեմ գրավել, գյուղում մարդ չի եղել, ադրբեջանցիներն էին խուճապի մատնվել: Ինձ տեսնելով՝ մտածել են, թե ես մենակ չեմ, երեւի հսկա զորք է իրենց վրա հարձակվում: Ըստ երեւույթին, միայն իմ հագուկապը նրանց վախեցրել էր: Մենք Յուխարի Ջիբիխլին 1992 թ. դեկտեմբերի 10-ին գրավեցինք: Հակառակորդը երեսունվեց զոհ է տվել, մի հոգու էլ գերի ենք վերցրել: Բայց գյուղի բնակչության կեսը փախել էր, կեսը չէր հասցրել փախչել: Գյուղի վրա լուսադեմին էինք հարձակվել:

Բ. - Լեզգին այդտե՞ղ էր վիրավորվել:

Լ.Գ. - Այո, ես նրան վիրահատել եմ նորմալ, մարդկային ձեւով, ճղել, փամփուշտը հանել եմ, հետո վերքը կապել եմ: Թուրք կնոջը կանչել եմ, որ իրենց վիրավորին տանի: Գիշերը գյուղի ետեւից շրջանցեցինք: Նրանց դիրքերից երկու հոգի ելան մեր դեմը, երկուսին էլ խփեցինք. պատերազմ է՝ կամ նրանք պիտի խփեն, կամ դու: Ներքեւում նորից երկու հոգու խփեցինք ու ելանք: Հակառակորդը շրջանաձեւ պաշտպանություն ուներ: Կանչեցի Նելսոնին ու Հովիկին: Նրանք մեզ նկատել էին, գնդացրորդը կրակում էր իմ ուղղությամբ, բայց չէր կպչում: Ես զարմանում էի, մտածում էի՝ աստծո պահածն է, փամփուշտները իմ կողքին գետինը քանդում էին, բայց ինձ չէին կպչում: Հովոյին ուղարկեցի աջ՝ ասելով. «Կրակելով իջնում ես դեպի ձորը ու, եթե կարող ես, գլուխդ պահիր»: Գիտեի, որ այդպիսով հակառակորդի ամբողջ ուշադրությունը շեղում էի նրա վրա: Նրանք շրջվեցին Հովոյի կողմը: Ես գնացի դեպի գերեզմանները, սկսեցի սողեսող մտնել նրանց դիրքերը: Գերեզմաններից մեկի մոտ թուրքի զինվորական շորեր հագա, մտա նրանց խրամատները, սկսեցի խրամատներով գնալ ու հերթով

խփել: Սողալու պահին Ռուբոն՝ իմ գնդացրորդը, ասում է. «Հլա ես բճի տղուն նայիր, փախչում է»: Մուկուչն ասում է. «Չկրակե՛ս, հարյուր տոկոսով մեր Լյովան է»: Ես նրանց սովորեցրել էի, թե ինչպես պետք է սողեսող գնալ, եւ շարժումներից արդեն գիտեին, որ ես եմ: Խփելով հասա գնդացրորդին, նրան խփեցի, օգնականը շրջվեց, նրան էլ խփեցի, բայց վիրավորվեց: Այդպես վիրավոր փորձում էր զենքը բարձրացնել: Ասում եմ. «Պետք չէ, հանգիստ պառկիր, քեզ կվերցնենք եւ մեր վիրավորների հետ կփոխենք»: Բայց մեկ է, զենքը բարձրացնում էր, ստիպված նրան էլ խփեցի: Հետաքրքիրն այն է, թե ինչու գնդացիրը ինձ չէր կարողանում խփել. «ԿԱՊԵՎԵՏԵ» էր, նշանահատիկը լարերով էր սարքած: Իջա ներքեւ, զորքը եկավ, տղաները լցվեցին խրամատները: Իջա ներքեւ, «ԲԵԷՄՊԵ»-ն էր, «ԱԳԵԷՍ»-ի, «ԷՍՊԵԳԵ»-ի արկերը: Ճանապարհը նրանք չէին կարողանում անցնել, այդտեղ հիմնականում «ԷՍՊԵԳԵ» ու «ԱԳԵԷՍ» էր տեղադրած, քառակուսիները իրենց դիմաց դրած, նշանառությունը տալիս էին եւ ճիշտ այդ գծով ինչ մեքենա կամ մարդ անցներ՝ խփում: Բայց նրանց ուշադրությունը այն կողմն էր, հիմնական զորքի հարձակումը հետեւից չէին սպասում, չնայած հետեւում արդեն կռիվ էր գնում: Վեց հոգի նստած էին: Մոտեցա, զգացի, որ նրանք անզեն են, միայն «ԱԳԵԷՍ», «ԷՍՊԵԳԵ» են նրանց մոտ: Երկու անգամ կրակեցի, ասացի. «Ձեռքերդ բարձրացրե՛ք, հանգիստ հանձնվեք, ես չեմ ուզում ձեզ սպանել»: Մտածում էի, թե իմ տղաները ինձ հետ կլինեն, բայց որ տեսա ետեւը մարդ չկա, մենակ եմ, սիրտս կանգնեց: Փորձեցին փախչել, երկուսին տեղում սպանեցի, մեկը վիրավորվեց, երկուսին էլ ներքեւում խփեցի, մեկն էլ փախավ: Վիրավորին վերցրի, նրա մոտ շատ սուր դանակ կար, դոշը ճղեցի, փամփուշտը հանեցի, նորից կապեցի: Ես հիմնականում գերի չէի վերցնում, ավելորդ բեռ ինձ հետ քարշ չեմ տվել, վիրավոր գերուն քարշ տալը ինձ համար պրոբլեմային է եղել: Մենք քանակով շատ չենք, իսկ այդ գերուն Շուռնուխ տեղափոխելու համար չորս հոգի էին պետք: Առաջին բուժօգնությունը ցույց տվեցինք: Այդ տղան կիսառուսերեն էր խոսում, բողոքում էր, որ իրեն զոռով են բերել:Դե, հո չէր ասելու, թե եկել է մեր դեմ կռվելու: Նա լեզգի էր: Բաքվից հարավ գտնվող թալիշական շրջանից էր, որտեղ բունտ էին արել, տանկերով գալիս էին դեպի Բաքու: Պատմեց իր կյանքից, ասաց, որ քույրեր ունի: Հիմնականում ասածն այն էր, որ իրեն զոռով են բերել, ու չի ուզում կռվել: Նույնը թուրք կինը ասաց: Կինը սկզբում խաբվեց, չմտածեց, որ մենք հայ ենք, կարծում էր թուրք ենք, որովհետեւ ես նրան թուրքերենով կանչեցի. «Քույրի՛կ, արի այստեղ»: Բարձրացավ վերեւ, ասացի. «Սա ձեր զինվորն է, տարեք ձերոնց մոտ, այս տղան գոնե այստեղ չմեռնի»: Հրաժարվեց: Զարմացա: Մենք էլ ուզում էինք նրանց օգնել, որ գյուղ իջեցնեն: Մենք հետո իմա-

ցանք, որ այդ կնոջ ամուսինը տանը վիրավոր պառկած էր եղել: Կինը հիսուն տարեկան կլիներ: Իսկ զինվորը քսան տարեկան էր: Քիչ անց տեսանք՝ այդ ադրբեջանուհին էշին նստած հեռանում է դեպի յուրայինների դիրքերը: Ոչ ոք չխանգարեց: Նա ոչ միայն լեզգի զինվորին, նույնիսկ իր ամուսնուն չտարավ իր հետ: Հայուհին այդպես չէր վարվի:

Գյուլիբերդի վերեւի դիրքերում մնալով՝ յոթ օր ու գիշեր չէինք քնել, երկու հարյուր հոգուն փոխարինել էինք վաթսուն հոգով: Տղաները շատ երիտասարդ էին: Ճիշտ է, կոփվել էին, իրենց գործը գիտեին, բայց դե երեխաներ էին, եթե նրանց գլխին մարդ չլիներ, վտանգավոր էր: Յոթ օր դիրքերից չէի իջել, անընդհատ գնում-գալիս էի: Հակառակորդը անընդհատ փորձում էր ետ վերցնել այդ տարածքները, որովհետեւ նոր էին զիջել: Հատուկ նշանակության ջոկատը Աշոտ Պետրոսյանի գլխավորությամբ ետ քաշվեց այդտեղից, եւ դիրքերը հանձնեց մեզ: Լենինականցիներ էլ կային, ետեւն էին նստած՝ իբրեւ պահուստ. թե ինչու, այդպես էլ չհասկացա: Մայիլյան Վարդանի խումբն էլ մեր ձախ թեւն էր պահում: Աջ թեւը լրիվ ազատ էր, գնում հասնում էր յեսիմ ուր: Նոր էինք տեղավորվել, հետեւից հարձակվեցին: Հատուկ նշանակության ջոկատը դեռ մեզ հետ էր: Սուրճ էինք ուզում խմել, այդ պահին գնդացիրը սկսեց աշխատել: Սողեսող փախանք: Հետեւից էին խփում: Ծանր կացություն ստեղծվեց: Կամ պիտի հակահարձակվեինք, կամ խփեինք: Վեց հոգով, թփերի տակով առաջանալով, հարձակվեցինք: Ծառի տակ նստած երկու հոգով գնդացրով կրակում էին: Չհասկացա, թե ինչ կատարվեց ինձ հետ. թեեւ շատ հեշտ կարող էի կողքից խփել, բայց ձեռքս չգնաց: Խփեցի գնդացրին, նրանք փախան՝ իրենց իրերը թողնելով: Զգացինք, որ դեպի մեր կողմն են փախչում, եւ ոչ թե թուրքերի: Սովորության համաձայն՝ նրանց իրերի տոպրակը բացեցինք՝ տեսնելու, թե ինչ ենք մեզ հետ վերցնում: Երկու հատ սրբիչ էր, շոկոլադ, կոնյակ, երկու հաց եւ այլն: Ասացի. «Լավ էլ ապրում են թուրքի ծնունդները»: Մուկուչն ասաց. «Հրամանատա՛ր, վրան գրած է Ջիվան»: Փաստորեն, մերոնք են եղել, փառք աստծո, ոչ մեկին չվնասեցի: Յոթերորդ օրն էր լրանում, թշնամին անընդհատ հարձակվում էր: Հաշվում էինք՝ մոտ հազար «Գրադի» ու տանկի արկ էին արձակել: Հիմնականում տանկն էր աշխատում: Մեր բախտը բերել էր, որ ականանետ չկար: Յոթերորդ օրը լրացավ, իջա գյուղ՝ ոտքերս լվանալու: Խրամատներում ահավոր է, անընդհատ քայլում ես այս ու այն կողմ, մեկին քնից արթնացնում ես, մյուսին զգուշացնում, սննդի հարց լուծում եւ անվեջ հազար ու մի այլ խնդիր լուծում: Հենց հասա գյուղ, ռացիայով կապվեցին թե՝ մերոնք նահանջում են: Մտածեցի. «Ինչպե՞ս կարող է պատահել, որ նահանջեն»: Մեզ հետ մի խումբ էլ կար, նրանք էին նահանջել. Երրորդ մասի տղաներն էին, հետագայում նրանցից Մարտակերտում տասնյոթ հոգի զոհվեցին: «Արաբոյի» հետ գնացին, նրանց հետ էլ զոհվեցին: Երկու դիրք հանձնել էին, ետ քաշվել: Մեր տղաների մեջ սիսիանցիներ էլ կային: Բարձրացա վերեւ: Նելսոնն ասաց. «Տղերքը նստած են, բայց պահելն անհնար է, տանկերով հարձակվել են»: Երկու տանկերով էին, մեկը աջ կողմից՝ սարի վրայից էր խփում, մյուսն էլ ձորով մտել, հետեւից էր խփում: Թուրքերն արդեն մեր առաջին եւ երկրորդ գծերի վրա դիրքավորվել էին: Սովետաշենի հատուկ նշանակության ջոկատի տղաներն էին այդ դիրքերը վերցրել, մենք իրավունք չունեինք դրանք ետ տալու, նրանք էին շատ արյուն թափել, եթե ետ տայինք, ուրեմն ապրելու իրավունք չունեինք: Ես, Նելսոնը, Հովոն սկսեցինք առաջ գնալ: Հանգիստ չէինք գնում, թռչում էինք այստեղ-այնտեղ, որ չնկատեն եւ խփեն: Եթե կողքիդ կրակում են, պարզ է, որ քեզ տեսել են, ուրեմն՝ պիտի թռչել: Այդ ժամանակ տանկը մեզ խփեց, հողախառն վերցրեց գցեց այն կողմ, սակայն արկը բեկորային չէր: Շրջվեցի, ասացի.

- Նելսո՛ն, խոսի՛ր:

- Ի՞նչ խոսեմ, թռչում ես էստեղ, թռչում ես էնտեղ:

- Ա՛յ տղա, չեմ թռչում, տանկի արկն է թռցնում:

Տանկն արդեն մեր հետեւից էր խփում: Նելսոնն ասաց.

- Շրջափակման մեջ ենք ընկել:

- Հետեւդ նայիր, մեր տղաները նստած են, ուրեմն՝ մենք շրջափակման մեջ չենք, տանկն էլ շատ առաջ չի գնացել:

Շրջափակման մեջ հայտնվում են այն ժամանակ, երբ չորս կողմից են փակում, իսկ եթե հետեւը բաց է, եւ կարող ես նահանջել, ուրեմն շրջափակում չէ: Զգացի, որ երկրորդ խրամատում հինգ հոգի կան: Ես միշտ մեջքիս նռնակ էի կապում ու տասը-տասնհինգ հատ ունեի իմ իրերի պարկում, տղաներին էլ էի բաժանում: Սողեսող գնացի, ու առաջին դիրքը նռնակներով վերցրինք: Մոտենում էինք երկրորդ դիրքին, Նելսոնին ուղարկեցի, որ մարդ կանչի եւ փամփուշտ բերի: Մնացինք ես ու Հովոն: Այդ պահին զգացի, որ խրամատի միջից մեկը հեռադիտակով նայում է: Գեներալ էր, բայց եւ զգացի, որ փորձ չունի: Հեռադիտակով նայելիս չզգաց, որ մարմնով մեկ կանգնել, խրամատից դուրս է եկել: Ինձնից մոտ երեսուն մետր հեռու կլիներ: Ես թփի տակ նստած էի, փորձեցի ավտոմատով կրակել, բայց փամփուշտ չկար մեջը: Մեջս վախ ընկավ, բայց հիշեցի, որ ես ավտոմատի տակ փողատակի նռնականետ ունեմ եւ դրանով խփեցի: Նելսոնն այդ պահին փամփուշտ բերեց, լիցքավորեցի ու թռա փոսի մեջ: Այդ մարդու կեսն էր մնացել, սիրտը թպրտում էր, մնացել էին սպայական պայուսակը՝ քարտեզով, ու զենքը: Չեմ հիշում, թե զենքը ինչ եղավ, բայց փաստաթղթերը գործողության ավարտից հետո տվեցի Ֆիլիքս Գզողլյանին:

Այդ պահին Նելսոնը գոռաց, թե ետեւից տանկով խփում են, հետեւակն էլ մտնում է: Ինքս էլ չիմացա ինչու, ձեռքս խրեցի սրտի մեջ, արյունը քսեցի դեմքիս: Ես ոչ ծխում էի, ոչ խմում, արգելված էր, այնպես որ՝ ինչ-որ բանի ազդեցության տակ չէի: Թփերի տակ նստած էինք, Նելսոնին ասացի. «Դու գնա փամփուշտ բեր ու տղաներին ասա՝ թող դիմադրեն, հետեւակը գալիս է, թող հիմնականում աջ թեւը պահեն, տանկը ձախից է մտել, բայց աջ թեւի մասին թող չմոռանան, կարող է այդտեղ գբաղեցնում են, եւ մյուս կողմից են մտնում»: Նրանք անընդհատ աջից էին մտնում: Ես հասա տանկին, այն կանգնած տեղից կրակում էր: Ինձ համար զարմանալի էր, որ տանկի ետեւում, կողքերը, նույնիսկ երկու հարյուր մետր այն կողմ մարդ չկար, հետեւակ չկար: Հատուկ նշանակության ջոկատում տղաներին սովորեցրել էի, որ կարելի է պառկել տանկի տակ, տանկը վրայովդ կանցնի, ու կարող ես ետեւից նռնակ գցել: Թփերի տակով սողալով հասա տանկին: Հակատանկային նռնակ գցեցի, ընկավ ուղիղ դիմացը: Որ պայթեց, փողը սկսեց անընդհատ պտտվել: Հասկացա, որ խլացել են: Մի նռնակ էլ տանկի ետեւը գցեցի, որպեսզի լյուկը բացեմ: Մեջս արդեն ինքնապաշտպանության բնազդ էր արթնացել: Կարող էի հանգիստ սպասել, մինչեւ նրանք դուրս գային, ու նոր միայն խփեի: Բայց չսպասեցի: Ձեռքի նռնակը միանգամից գցեցի բաց լյուկի մեջ ու փախա: Մոտ երեսուն մետր հեռացել էի, տանկը սկսեց վառվել, մեջը եղած արկերը պայթեցին ու աշտարակը շպրտվեց քառասուն մետր հեռավորության վրա: Հետաքիքիրն այն էր, որ երբ իջանք ներքեւ, ամեն մեկն ասում էր, որ ինքն է խփել տանկը: «Գրադի» աշխատողներն ասում էին, թե իրենց արկն է խփել, բայց ինչպե՞ս կարող էր «Գրադը» ձորի մեջ խփել: Դրանից մի օր առաջ Գզողլյան Ֆելիքսի հետ գիշերը զրուցում էինք, ասաց. «Տանկ խփելու համար քսանհինգ հազար ռուբլի են տալիս, ինքնաթիռ խփելու համար՝ երեսուն հազար»: Երբ տանկը վառեցի, բարձրացա վերեւ, միայն նրանք էին, իսկ օգնություն չէր եկել, քանի որ մտածում էին, թե նահանջում ենք: Սմբատը մոտեցավ, ասացի. «Մոտ չգաս, թուրքի արյուն եմ քսել դեմքիս, կլվացվեմ, հետո կմոտենաս», թե. «Չէ՛, արի քեզ պիտի պաչեմ»: Ֆելիքսին ասացի. «Տանկը վառվեց, քսանհինգ հազարը քեզնից ուզեմ, պարոն գեներալ»: Մինչեւ այսօր չի տվել: Հակոբ Կամարի գյուղը գրավելուց հետո թուրքերը գրահամեքենաներով եկան, նույն կերպ նռնակը գցեցի գրահամեքենայի մեջ, բայց չվառվեց: Ուզում էին առգրաված տեխնիկան քշել բերել, բայց թույլ չտվեցի, որ տղաները մտնեն մեջը, մտածեցի՝ ետեւում կանգնած գրահամեքենան կխփի, երբ առաջ քշեն: Արեգասարի վրա էլ ենք երկու-երեք տեխնիկա խփել: Բայց ձեռքով խփել եմ միայն այդ «ԲԵԷՄՊԵ»-ն ու տանկը: Մանվել Գրիգորյանն ասաց. «Ձեռքով տանկ

ե՞ս վառում»: Ասացի. «Չէ, միամիտ է եղել»: Իմ տղաներն են ինձ շատ օգնել, շատ գործ են արել: Սկզբում չէի թողնում առաջ գնան, մտածում էի՝ ոչ ոք ամուսնացած չէ, երեխա էլ չունեն: Հետո կամաց-կամաց զգացի, որ՝ չէ, վազելով անցնում են ինձ, արդեն կարելի էր նրանց հավատալ: Հայրենասիրությունը նրանց մեջ այլ կերպ էր: Ցավալի է, որ այդ երեխաները, դպրոցական նստարանը թողած, եկան կռվեցին, այդքան բան արեցին, բայց այսօր աշխատանք չունեն:

Գյուլիբերդի դիրքերը պահելիս մեզ փոխարինեցին Հակոբի «Սերոբ աղբյուր» , «Արծիվ-5» , Սիսիանի Ազոյան Աշոտի ջոկատները, Հոկտեմբերյանցի Կորյունը: Այդքան խմբեր միանգամից եկան՝ այդ նույն դիրքերում մեզ փոխարինելու համար: Մի օրվա մեջ առաջին հրամանատարին ծանոթացրի դիրքերին: Երեք օր ես նրանց հետ մնացել եմ այդ դիրքերում, բացատրել, թե որ կողմից պիտի կրակել, որ կողմից պաշտպանվել, թուրքերը որտեղից են հարձակվում: Հետաքրքիրն այն էր, որ իջնում էի ներքեւ, հինգ րոպեն մեկ մեկը գալիս էր, թե՝ ես հրամանատարն եմ, ինձ դիրքերին ծանոթացրու: Երեք անգամ բարձրացել ու նրանց ծանոթացրել եմ դիրքերին: Երրորդ անգամ որ բարձրացա, տեսա՝ մի դիրքի վրա յոթ հոգի նստած էին: Ասացի՝ «Տղե՛ր, սխալ եք նստել, ամեն մի դիրքում երկու կամ երեք հոգի պիտի լինի, ինչքան քիչ լինեք, այնքան լավ, պիտի ռեզերվ պահել»: Պիտի գայինք Երեւան: Հասանք Շուռնուխ, գիշերը տագնապ տվեցին. «Քեզ շուտ կանչում են, տղաներից մի քանիսին վերցրու, արի»: Սկզբում ասացին՝ գնացեք Գորիս: Ես տասնյոթ հոգու վերցրի՝ գնդացրորդ, նշանառու, նռնականետ, ավտոմատավորներ: Գորիսում ասացին, որ պիտի գնանք Լաչին, ճանապարհին էլ ասացին՝ Կոռնիձոր, Կոռնիձորից էլ ուղարկեցին մեր նույն դիրքերը: Բայց արդեն դիրքերը մերոնք հանձնել էին, առաջին գծից ետ էին քաշվել: Իմ տղաներին սկսեցի դիրքավորել: Նույնիսկ մարդ կար՝ հենց իրենց հրամանատարներից մեկը, ինձ խաբեց, ասաց. «Լյով, հեսա իջնում եմ ներքեւ տանկերը վերցնեմ, գամ»: Ու գնաց: Իր տղաներն էլ ասացին. «Մեր հրամանատարը որ այստեղ չէ, մենք մնում ենք՝ ի՞նչ անենք»: Դիրքերում մնացի այդ երեխեքի հետ: Տասնյոթ հոգով նորից դիրքերը պահեցինք: Մեր եւ թուրքերի դիրքի արանքում երկու դիակ էր մնացել: Առաջինը մոտ էր, քաշեցինք բերինք, երկրորդը թուրքերի դիրքից մոտ քսան մետր ներքեւ էր: Հարցնում ենք, ասում են՝ մերը չի: Բայց ուղղությունը մերն էր: Մտածում էինք՝ միգուցե նրանք են հարձակվել, այդ մեկը առաջ է եկել, մերոնք խփել են: Քննարկում էինք՝ մերոնցի՞ց է, թե չէ: Մի կին մոտեցավ, ասաց՝ մեր տղերքից է: Երկրորդ թե երրորդ գիշերն էր, որոշեցինք դիակը բերել: Ես էի, Նելսոնը, Հովոն: Մուկուչին ու Էդոյին նշանակեցի գնդացրորդ եւ խնդրեցի՝ որտեղից որ կրակ տեսնեն, պատասխանեն

եւ մեզ հանկարծ չթողնեն այնտեղ: Իջանք, զենքը վերցրինք, ձեռքս տարա գրպանը, երկու հազար ինը հարյուր հիսուն ռուբլի էր: Սպիտակցի տղա էր, կնոջ ու երեխաների նկարներն էին գրպանում, «արծիվների» թուղթն էր: Երբ բերեցինք, նրանց հրամանատարի առաջին հարցն էր՝ զենքը ու՞ր է: Նելսոնին ասացի՝ զենքը տուր: Հրամանատարը թե՝ ջեբը պիտի փող լիներ: Կարծես կվալտով գլխիս տային: Դիրքերը պահելու ընթացքում տանկերով անընդհատ խփում էին: Մեր կողքի ջոկատների մեջ խուճապ առաջացավ: Բոլորը գալիս Վարդանի ու Ցուլի կողքով անցնում էին, Վարդանն ասում էր. «Տղե՛ր, արագ էլի, մենք էլ գանք, թուրքերը լցվել են... Ցու՛լ, թող անցնեմ, բայց մի մոռացիր, թե Լյովան ինչ էր ասել»: Ասում է՝ ի՞նչ է ասել: Թե. «Ասել է՝ ով նահանջում է, գնդակահարեք»: Ու բոլորը մնում էին իրենց տեղում՝ հասկանալով, որ իրավունք չունեն ետ քաշվելու: Իմ ջոկատում չորս հոգի ավելացան: Բոլորը փախել էին, գնդացրորդներից երկու հոգի նստել էին: Սկզբում կարծեցի թե թուրք են, բայց հասկացա, որ գնդացրի ուղղությունը հակառակորդի կողմն է ուղղված: Բաքվեցի տղաներ էին՝ Դեդը եւ Վյաչեսլավը: Ասացի. «Որ բոլորը փախել են, դուք ինչու՞ եք մնացել»: Ասացին. «Մենք ու՞ր փախչենք, Բաքվից փախանք՝ հերիք է էլի»: Այդ տղաները եկան իմ ջոկատ: Դեդը 1994 թվին Մարտակերտում զոհվեց, բայց Սլավիկը ողջ է:

Բ. - Դուք տեղյա՞կ եք Մարտակերտի անհաջող գործողությանը, երբ տղաները զոհվեցին:

Լ.Գ. - Չէ, մենք այդ ժամանակ տուն էինք գալիս, նրանց հանդիպեցինք Գորիսում: Ես առաջին հայացքից զգացի, որ անպատրաստ էին, խամ էին՝ թեկուզ նրանց դեմքի արտահայտությունից, խոսելուց, շարժուձեւից, հագուկապից: Եռամսյա հավաքների ժամանակ տղաներին որ բերում էին Մարտակերտ, ես նրանց շարում էի, անցնում շարքերի միջով եւ ասում. «Հիվանդ ունե՞նք, հիվանդներին երեք օր ժամանակ եմ տալիս, ինչպես ուզում եք, բուժվեք ու շարք կանգնեք»: Եվ երեք օր հետո, երբ պատրաստվում էինք ինչ-որ գործողության, դարձյալ շարքերի միջով անցնում էի եւ ամեն անգամ երեք հոգու շարքից դուրս հանում՝ նայելով նրանց դեմքի արտահայտությանը: Բացառվում է, որ մարդու մեջ վախ լինի, եւ նա կենդանի մնա: Ստեփանավանցի մի տղայի շարքից դուրս էի հանում, ասաց.

- Ես դուրս չեմ գա, փեսայիս հետ պիտի գնամ:

- Տղա՛ ջան, դու պիտի շարքից դուրս գաս,- ասացի ես:

- Չէ,- համառեց նա:

Այդ տղան գնաց ու էլ ետ չեկավ, զոհվեց: Մի ուրիշ տղայի էլ, չեմ հիշում, թե որտեղից էր, ասացի, որ դուրս գա շարքից, թե. «Չէ, տղերքի հետ պիտի գնամ, մի քիչ գեղձերս են ցավում, բայց ոչինչ»: Այդ

տղան էլ գնաց ու զոհվեց: Նայում էիր աչքերին ու զգում, որ արդեն մահացած մարդ է: Իսկ այդ տղաներին որ Գորիսում տեսա, զգացի, որ կեսից շատը պատրաստ չէր կռվելուն: Իսկ եթե զինվորը պատրաստ չէ, իզուր է նրան ռազմի դաշտ տանելը:

1994 թ. Մարտակերտում ես Մանվել Գրիգորյանի դեկավարության տակ եմ եղել: Ինձ համար Մանվելի հետ ծառայելը, կռվելը շատ պարզ, հանգիստ է եղել: Ես պահանջել եմ նրանից, նա տվել է՝ ինչ ուզել եմ: Եթե նա հրաման է տվել, ես նայել եմ, թե ինչ հրաման է, ու կատարել եմ: Հնարավոր է, շեղումներով եմ կատարել, բայց կատարել եմ: Օրինակ՝ ասել է՝ Լյով, ա՛յ, այս ճամփով պիտի մտնես այս գյուղը, ասել եմ՝ լսում եմ, բայց այդ ճամփով չեմ մտել գյուղ:

Բ. - Չայլուի գործողությանը եղել ե՞ք:

Լ.Գ. - Մենք Չայլուի վրա չենք հարձակվել, հարձակվել են դարաբաղցիները՝ մեծ սխալներով: Ես մենակաբանում եմ որպես այդ գործի մեջ ներգրավված զինվորական: Նույն սխալ հարձակումը եղել է Տափկարակոյունլուի վրա: Ցերեկը դաշտով չես կարող գյուղ գրավել, քանի որ տեխնիկա, գնդացիրներ են աշխատում: Երբ ինձ ուղարկեցին Մանվելի մոտ, ես չգիտեի, թե ուր եմ գնում: Պահեր կային, որ կռվողներին ահավոր նեղացնում էին: Մենք մեր ջոկատով՝ քսան հոգով, հետախուզության գնալիս առանց խոսելու իրար շատ լավ հասկանում էինք՝ ձեռքի շարժումներով, դիմախաղով, թե ով պիտի պպզի, ով առաջ գնա: Չեմ ուզում խորանալ. ֆինանսական պահ էր, թե սոցիալական հարցեր էին: Օրինակ՝ երբ դուրս էինք գալիս, ետ դառնում, տեսնում էինք՝ բոլորի տանը փայտ կա, մեր տանը չկա: Խոսքս միայն մեր տան մասին չէ, ընդհանուր վիճակի մասին է խոսքս: Մարդիկ գնում, տասնյոթ օր մնում, ետ էին գալիս: Պատահել է, որ մեզ ուղարկել են Լաչին ու Մալխալաֆ եւ ամենավտանգավոր ուղղությունն են հանձնել մեզ, քանի որ տանկերով կարող էին հանգիստ գալ մեզ վրա: Տասնյոթ օրվա փոխարեն՝ երեք ամիս ենք մնացել այնտեղ եւ դիրքը պահել: Պահելու խնդիր ես այլեւս չեմ ունեցել, որովհետեւ թուրքը բնավորության կեղտոտ գիծ ունի: Ասված է՝ մեղվի բույնը չբզբզես՝ մեղուն դուրս չի գա: Դիրքավորվել ենք, նրանք սկսել են ահավոր ձեւով կրակել: Նելսոնին, որը լավ գնդացրորդ էր, ու Անդոյին էի գնդացրի մոտ նշանակել: Ասել էի. «Հենց տեսնեք հարձակվում են, նոր միայն կկրակեք, փամփուշտը հենց այնպես կրակում եք՝ ի՞նչ անեք, արկղով հանել դրել եք սարի վրա, նստել»: Այդ դիրքը մենք պահել ենք: Զգույշ էինք լինում միայն գիշերները: Ցերեկները հանգստանում էինք, որսի էինք գնում, հիմնականում նապաստակ էինք խփում, մի անգամ էլ աղվես ենք բռնել: Կողքի դիրքերի վրա անընդհատ հարձակվում էին, նրանք կրակում էին, մերոնք կրակում էին առանց հրամանի: Այդ գծի ընդհանուր հրամանատարը

գեներալ-գնդապետ Միքայել Հարությունյանն էր: Հետո Դալիբալթայանը եկավ, մենք դեռ այնտեղ նստած էինք: Ասացի.

- Հերիք է, մենք արդեն դուրս ենք գալիս:

- Ո՞նց թե:

- Հա՛, գրել եք տասնյոթ օր, բայց ինչքան ժամանակ է՝ այստեղ ենք:

- Մի քիչ էլ համբերեք, կգան փոխարինելու,- ասաց գեներալը:

Բայց դե ուշացնում էին: Գզողլյան Ֆելիքսն էր եկել փոխարինելու, ասաց. «Մենք շատ գոհ ենք»: Ասացի. «Դե թուղթ տվեք, որ դուք մեզնից շատ գոհ եք»: Թուղթը՝ նրանց կնիքով, բերեցի նախարարություն՝ ասելով. «Մենք չափից շատ ենք ծառայել, բոլորը մեզնից գոհ են, էլ ի՞նչ եք ուզում, թողեք գոնե հանգստանանք»: Վազգենն ասել էր, որ երկրորդ օրը պիտի ետ գնանք, ես էլ ասում էի. «Գոնե մի քիչ հանգստանանք, երեխեքը խելքի գան, նոր կգնանք: Ավելի լավ է դուրս գանք բանակից»: Արդեն բանակ էր ստեղծվում, գումարտակներ, գնդեր էին կազմավորվում, ասում էինք. «Դուրս գանք, մեզ համար զբաղվենք, աշխատանք գտնենք, ընտանիք պահենք»: 1993-ի դեկտեմբերն էր, տղաներից մեկը եկավ (ոչ իմ տղաներից), ասացի. «Յան տվեք մեզնից, դուք ձեր գործը, բանակը ունեք, ձեզ համար կռվեք»: Ասաց. «Կռիվը սկսվել է, խուսափո՞ւմ ես»: Վիրավորական էր: Մինչ այդ մարտ չկար, չգիտեինք, որ հարձակվել են:

Հարյուր քսան հոգով դուրս եկանք ուղիղ Մարտակերտ: Հրամանատարը Մանվել Գրիգորյանն էր: Մեր դիրքն այնպիսի տեղ էր, որ բոլորը նահանջում էին, մենք էլ խաբար չէինք, որ նահանջ է: Առաջին հերթին խրամատներ փորել տվեցի: Բոլորին խրամատավորեցի, ասացի. «Ձայն չհանեք, ոչ մեկդ չկրակեք, ով կրակեց, գլուխը ջարդելու եմ». թեեւ կյանքում զինվորներին մատով կպած չկամ: Լուսաբացին նույն պատմությունը կրկնվեց, երբ նրանց հրամանատարը սկսեց հեռադիտակով նայել: Նրանք մեզ չէին տեսնում, մենք լավ դիրքավորվել էինք, Հակոբ Կամարիի վերեւն էինք: Երբ հրամանատարը բարձրացավ ու սկսեց հեռադիտակով նայել, ասացի՝ սպասե՛ք, չկրակե՛ք: Էլի դոշով դեմ էր տվել: Հրամանատարին խփեցի, մնացածներն արդեն ոչխարի սուրուի պես փախչում էին: Նրանք ետ քաշվեցին: Լուսաբացին հրաման տվեցի, որ հարձակվեն: Երկու-երեք անգամ հարձակվել էին գյուղի վրա, չէին կարողացել վերցնել: Հինգ հոգով իջանք. ինձ հետ Փիլոյան Անդոն էր, Գուգոն, Հրոն, Նելսոնը: Թուրքերի դիրքի ետեւի կողմից մտանք: Հասարակ տրամաբանություն է. որ կրակում ես ետեւից, զգում են, թե դիմացից ու ետեւից խփում են, փախչում են: Կեսը փախան: Երեւանի գումարտակի տղաները սկսեցին մեզ վրա կրակել: Ես գոռում էի, որ չկրակեն: Գնդացրորդը մեզ վրա էր աշխատում, բայց համոզված էի, որ մերոնք են: Գոռացի, գոռացի, պատասխան չկար,

ասացի. «Անդո՛, ես դրան գցելու եմ»: Գնացինք առաջ, մոտավորապես պատկերացրինք, թե ուր ենք ընկել, եւ ինչ է կատարվում: Ճանապարհին մեր տեղացի ուղեկցորդները կորան: Հասանք վառված գրահամեքենայի տեղն ու կանգնեցինք՝ մոտավորապես պատկերացնելով, որ ճակատային գիծը այդտեղ է: Հակոբ Կամարին գրավելուց հետո նստեցինք գծում: Բերեցին «եռամյաներին»: Այդտեղ էլ 1994-ի հունվարի 17-ին ձեռքից վիրավորվեցի: Ես մի հիմար սովորություն ունեի. ամառ-ձմեռ թեւքերս ծալում էի, որպեսզի հանգիստ լինեի: Բարձրացել էի սարի վրա, հեռադիտակով նայում էի: Զգացի, որ դիպուկահարի օպտիկական նշանոցը ընկավ աչքիս: Միանգամից ավտոմատը վերցրի ու կրակեցի, ճշգրիտ տեղը գիտեի, թե որ թփի տակ է: Իմ ու նրա կրակելը մեկ եղավ: Կպավ ձեռքիս, ավտոմատը ձեռքիցս թռավ, ես գլորվեցի, որ նորից չխփի: Տեսա որ արյունահոսում եմ: Ավտոմատիս պոչի վրա միշտ ներարկելու դեղ էի պահում, թույլ թմրանյութ էր, անունն էլ հիմա չեմ հիշում: Ձեռքս ռետինե ժգուտով կապեցի ու իջա ներքեւ, գոռացին՝ Լյովային խփել են, ասացի՝ ինձ չեն խփել, հանգիստ նստեք ձեր տեղում: Ինձ տարան բուժկետ: Դեղի ազդեցությունն անցել էր ու սարսափելի ցավ էի զգում, գոռում էի. «Գոնե փամփուշտը հանեք»: Ղարաբաղցի բժիշկը ասաց. «Չոփը կոխել է մեջը, եկել ասում է՝ պուլյա է»: Այդ պահին ձեռքս գցեցի լանցետին, մտցնելն ու փամփուշտի դուրս գալը մեկ եղավ: Վախից թե ցավից սեղմել էի: Ուզում էի գնալ, չկարողացա: Երկու օր էր անցել, Մանվելն ասաց. «Տղաները քո կարիքն ունեն, պիտի գաս»: Հակոբ Կամարիի վերեւը բարձր դիրք կար, այդ դիրքը շատ հանգիստ գրավեցինք: Մերոնք կողքերը նստած էին, բայց դիրքը թուրքերի ձեռքին էր: Ես գիշերը գնացի, մերոնք արդեն հարձակվում էին դիրքի վրա: Ամբողջ զորքը ետ կանգնեցրի, տանկը, «ԷՊԷԳԵ»-ն եւ «ԱԳԵԷս»-ը կանգնեցրի, ասացի. «Ուղիղ ժամը վեցին այդ դիրքի վրա կրակում ենք»: Լուսադեմին երեք տեխնիկան միանգամից ուղղեցինք այդ սարի վրա, ինչքան դիրք կար՝ քարուքանդ արեցինք: Հանգիստ բարձրացանք դիրքը, այնտեղ միայն դիակներ էին: Տասնյոթ զենք իջեցինք այդտեղից: Այդ դիրքը որ վերցրինք, նրանք մեխանիկորեն ետ քաշվեցին: «Եռամյաներին» երբ բերեցին, Մանվելին ասացի. «Հրամանատա՛ր, չոբաններին հավաքել-բերել են: Հարցնում եմ՝ ի՞նչ ես ծառայել, թե՝ ստրոյբատ, մյուսը՝ չեմ ծառայել: Դե հիմա այդ մարդկանց հետ գնա կռիվ»: Մեր կողմից դա սխալ քայլ էր: Մանվելը հարցրեց՝ ի՞նչ ես առաջարկում, ասացի՝ սովորեցնենք, նոր տանենք: Նա մեծ հաճույքով համաձայնվեց: Այդ տղաներին սովորեցնում էինք զինվորական գործ՝ տակտիկա, կրակել: Այնքան էի այդ զինվորների հոգին կերել, Գրիգորյանը եկավ ասաց՝ դու, պատրաստ ե՞ս: Ես միշտ ավելի չափով կարագ, շաքարավազ, հաց էի ուզում նրանց համար: Առավոտյան գալիս շարվում,

գնում էին պարապմունքների, իրենց մոտ ուտում ու գալիս էին, ճաշին նորից ուտում էին, դրանից բացի՝ ես նորից էի ուզում, եւ տալիս էր: Ասացի. «Հա՛, պատրաստ ենք»: Ասաց. «Դե որ պատրաստ եք, ուրեմն գյուղը գրավենք»: Մի խոսքով՝ տղաները պարապեցին, եւ այդ գյուղը գրավեցինք:

Մինչեւ Արեգասարի գործողությունը մենք Տոնաշեն գյուղը ազատագրեցինք: Այնտեղ հետախուզության պետին՝ Իգորին, խփեցին: Մանվել Գրիգորյանը կանչեց ինձ, ասաց. «Քանի որ դու հետախույզ ես եղել, գնա հետախուզության, հետո կզեկուցես»: Գնացի նայեցի՝ ինչն ինչոց է. այդ գյուղերը կարելի էր հանգիստ վերցնել: Ասացի, որ խնդիր չկա, միայն պետք է նորմալ կազմակերպել: Երեւի հինգ հարյուր հոգի այդ գյուղում էին նստած, մոտ երկու հարյուր հիսուն հոգի՝ ետեւում. այդպես գյուղը պահում էին: Նրանց սպայական կազմը հիմնականում Թուրքիայում էր պատրաստվել: Համոզված ասում եմ, որովհետեւ գերի եմ վերցրել, եւ Թուրքիայում անցած դպրոցի բոլոր փաստաթղթերը նրանց ձեռքին էին: Թուրքիայում եթե ականանետներին, նռնականետներին պատրաստում են որպես մասնագետներ, ապա ավելի ճշգրիտ հաշվարկներով: Ես հետախուզությունից եկա եւ զեկուցեցի, Մանվել Գրիգորյանը ասաց. «Քսանհինգ հոգի վերցրու եւ գնա այնտեղ որպես ռեզերվ»: Զորքը որ գնաց, պիտի նրա ետեւից գնայինք, ճանապարհներին էլ արդեն ծանոթ էի: Ես գյուղի վերեւով գնացի: Տոնաշենի ճանապարհը լրիվ դիք ու փոսերով էր, մերոնցից կեսը իջել էին, կեսը՝ չէ: Թուրքերը վերեւից սկսել էին խփել: Այդ ժամանակ մենք՝ քսանհինգ հոգով, գյուղի վերեւի սարի վրայով էինք գնում: Մտածում էինք, որ նրանք գրավելով հավասարաչափ կգան: Կապվեցին ինձ հետ.

- Որտե՞ղ ես:

- Հրամանատա՛ր, ես առաջին գյուղը արդեն անցել եմ, երկրորդ գյուղի վրա եմ:

- Հո խելքդ չե՞ս գցել, ա՛յ տղա, դեռ առաջին գյուղը չեն գրավել, չեն էլ կարողանում գրավել:

Թույլտվություն վերցրի, որ ես մտնեմ, ասաց՝ հարց չկա: Քսան հոգուն թողեցի, որ իմ ետեւը պահեն: Հինգ հոգով իջել ենք. մի լենինականցի տղա էր, Փիլոյան Անդոն, մեկ ուրիշ Անդո, Էդոն: Մենք թուրքերի ետեւից դուրս եկանք այն պահին, երբ կրակում էին մերոնց վրա: Նրանց բոլորի հագին սպիտակ հանդերձանք էր: Կիսով չափ էին երեւում, գլխի էլ չենք կարողանում ընկնել՝ ում խփենք, որ ձայները կտրեն, հրամանատարին զինվորից տարբերել չէր լինում: Այդ պահին գնդացրորդին ասացի.

- Տեսնու՞մ ես այն մեկին:

- Չէ:

- Ո՞նց չես տեսնում, շարված են:

- Չէ,- ասում է:

- Կրակի՛ր, միայն թե ինչ-որ ուղղությամբ կրակես,- ասացի ես:

Մի քիչ առաջ թեքվող խրամատ կար, այդ խրամատի վրա էլ ես կրակեցի: Երբ Անդոն կրակեց, նրանք սկսեցին խրամատներից դուրս գալ: Մենք սկսեցինք նրանց խփել, բայց փախչելու տեղ ունեին, ամբողջ զորքը փախավ գյուղի մյուս թաղամասը: Մենք մեր տղաների դեմը ելանք, մենք էլ էինք սպիտակ հանդերձներով: Այդտեղից սնունդ վերցինք ու առաջ անցանք: Հասանք երկրորդ՝ Սողոմոնա կյուղեր կոչվող թաղամաս: Ես սարի վրայով գնացի վերեւ, ու խոսակցություն եղավ՝ «Եղնիկները» այն կողմից գալիս են, հանդիպիր նրանց: Մտածում էի՝ ոնց հանդիպեմ նրանց: Եկանք եղակեր անմարդաբնակ հին գյուղի մոտ ու «Եղնիկներին» հանդիպեցինք: Դա հայկական բանակի պարտիզանների հետ առաջին հանդիպումն էր:

Բ. - Նրանք Տոնաշենի ազատագրմանը մասնակցե՞լ են:

Լ.Գ. - Կարելի է ասել մասնակցել են, կարելի է ասել՝ ոչ: Նրանք մեզ պիտի ճանապարհը ցույց տային, բայց ինձ ուրիշ ուղղություն ցույց տվին: Այդ տարածքը գրավել էին, զգում էի, որ այդտեղ կռիվ է գնում, թոհուբոհ է: Գյուղի վերեւի մասում մինչեւ Արեգասարը մեծ սար կա, որ դուրս է գալիս դեպի լիճը, Դաստագիր գյուղի շարունակությունն է, բայց մյուս մեծ սարը մնում է ետեւում: Ես եկա գյուղի ու սարի արանքը: Սարի վրայով եկա, գիտեի, որ այդտեղ սարը վերջանում է: Նստեցի: Ներքեւում կռիվ էր գնում: Գիշերը նստած մտածում էինք, թե ինչ անենք: Ցուրտ ձմեռ էր, սառչում էինք: Եթե կրակ վառեինք, եւ թուրքերը տեսնեին, որ սարի վրա կրակ է վառվում, մեջները վախ կընկներ: Եվ քանի որ կկապվեին, կտեսնեին, որ իրենցից մարդ չկա այնտեղ, ինքնըստինքյան կմտածեին, որ հայերն են վառել: Իրարից մոտ հիսուն մետր հեռավորության վրա կույտեր սարքեցի, տղաներին հրամայեցի մի կողմ քաշվել, հնարավոր էր, որ թուրքերը ականանետով աշխատեին կրակի ուղղությամբ: Կրակը վառեցինք: Լույսը բացվեց, մերոնք դեռ կռվում էին: Կապվեցի. «Մի՛ կռվեք, մտեք գյուղ»: Գյուղում գոմեր կային, թուրքերը հիմնականում այդտեղ էին: Ճուտին ասացի.

- Դու մտիր գյուղ:

- Ես չեմ մտնի, խփում եմ դրանց:

- Ա՛յ, տղա, մի՛ խփիր, մարդ չկա, մտիր գյուղ, մի քիչ էլ մեզ այնտեղից սնունդ կուղարկես:

Լյովան՝ Ճուտը, մտավ: Գյուղը դատարկ էր, թուրքերը արանքով փախել էին մյուս գյուղը: Դա էլ ենք առանց մարտի գրավել:

Թալիշ գյուղը ազատագրելու հրաման եղավ: Պիտի Արեգասարը գրավեինք, քանի որ նրանց հիմնական բազաները այդտեղ էին: Բաժանվեցինք երեք խմբի: Նելսոնին իր խմբով ուղարկեցի Եղիշե առաքյալի վանքի ուղղությամբ: Երեք օր հետախուզություն անցկացրինք: Գնալու թույլտվություն ստացանք, որը կոչվում էր տեղազննում, բայց ոչ թե տեղազննում էինք անում, այլ հետախուզություն, որպեսզի տեսնեինք, թե տեխնիկան ու զորքը որտեղ ինչքան են տեղակայված: Գիշերը եկանք նստեցինք հենց նրանց քթի տակ: Անձրեւ էր գալիս: Մեզ հետ էր լրագրող Դեւրիկյան Վարդանը: Ես սկզբում մտածեցի, թե Եվրոխորհուրդ մտած տղա է: Ինձ ասացին՝ Դեւրիկյանին տար քեզ հետ: Նա մի քիչ նուրբ տղա էր, բայց ոչինչ: Ինձ հետ եկավ: Ասացի. «Դու կողքովս քայլիր, առաջ մի՛ գնա, եթե պետք լինի, ետ կմնաս, ես քեզ ետ կթողնեմ, դու մեզ հետ գալիս ես ոչ թե որպես կռվող զինվոր, այլ իբրեւ պատմությունը գրող»: Տեղավորվել էինք: Հենց մեր գլխի վերեւը թուրքերն էին, խոսակցությունները լսվում էին: Մի մեծ ծառ էր ընկած, ծառի տակը մաքրեցի, վրան-թիկնոցները, քնապարկը հանեցի գցեցի: Տղաները շրջանաձեւ նստած էին, ասացի. «Տղանե՛ր, ես քսան րոպե քնեմ, շատ չեմ ուզում»: Վարդանին ասացի. «Վարդա՛ն, մտիր խորքը, պառկիր, այնտեղ չոր է, նորմալ է»: Եկա, որ կողքը պառկեմ, ասաց. «Վա՛յ, իրար հետ ենք քնելու»: Չգիտեի՝ ծիծաղեի, թե ինչ անեի, ասացի. «Հա, Վարդա՛ն ջան, էսօր իրար հետ ենք քնելու»: Գործողության ժամանակ նրան ետ թողեցի: Գյուղն ու նրանց բազան գրավեցինք: Նռնականետով որ խփել էինք, փախչելիս նրանց զինվորներից մեկի ոտքն էր կտրվել: Նստեցինք, տղաներին դիրքավորեցի, Անդոն առաջ գնաց, ասացի. «Շրջանաձեւ նստեք, մի քիչ հանգստանանք ու առաջ շարժվենք»: Հակառակորդի կողմից այլեւս դիմադրություն չկար: Նույն օրվա երկրորդ կեսն էր արդեն: Կրակի վրա մի մեծ կտոր մի էր դրված: Այդ պահին մոտեցան մեզ թե՝ ի՞նչ է, ասացի՝ հեչ, մարդու միս է: Կտրեցի, Վեդիից Հրաչ կար, ասացի. «Հրա՛չ, փորձիր կամ տուր, ես փորձեմ, ասում են՝ մարդու միսը անհամ է»: Ու բոլորը մտածեցին, թե մենք իրոք մարդու միս ենք ուտում, հարցրին՝ ի՞նչ միս է, ասացի՝ տեսնու՞մ ես այն ոտքը, այ դրա միսն ենք ուտում:

Գնացինք ու կանգնեցինք: Հաղորդեցի, որ վտանգավոր գոտի ենք մտել, հիմա մեզ թիկունքից կփակեն: Մանվելն ասաց. «Ինքդ որոշիր՝ ինչպես ուզում ես, տեղում կողմնորոշվիր»: Ծառի տակ նստած էինք, լենինականցի, հոկտեմբերյանցի տղաներն էին: Նրանց տեխնիկան մոտեցավ. մի տանկ էր, «ԲԵԷՄՊ», «ԲԵԷՄԴ», եւ «ԲԵԷՈԴԵՄ»: Ասացի. «Դեռ չկրակեք, թող շատ մոտենան»: Առաջին կրակոցը «ԲԵԷՄՊ»-ի կողքով անցավ, տանկից ետադարձ թռիչք տվեց, որից տանկը ավտոմատ սկսեց կրակել, խփեց «ԲԵԷՄՊ»-ին, որը հետեւակով սկսեց

վառվել: Ամբողջ տեխնիկան կանգնեց, սկսեցին փախչել: Ով տեխնիկայից դուրս էր գալիս, խփում էինք: Այդ տարածքը գրավեցինք, գնացինք առաջ: Մոտ հարյուր քսանհինգ հոգի էինք: Նստած էինք, Հրաչն ասաց՝ ի՞նչ կուզեիր, ասացի՝ գետի ջուր լիներ, կխմեի: Ես թույլ չէի տալիս զինվորներին կուտակված ջրերից խմել: Ծառերը ճղում էինք, սակրավորի գործիքը մտցնում էինք ծառի մեջ, տափաշիշը կախում տակը, ջուրը կաթիլ-կաթիլ լցվում էր, ու խմում էինք: Ասացի՝ մի կտոր էլ հաց լիներ: Երեք օր էր՝ հաց չկար, ետեւից եկողները չէին հասցնում բերել, գյուղում ականի վրա էին պայթել: Մի խոսքով՝ խնդիրներ էին եղել, եւ սնունդը տեղ չէր հասել: Դեւրիկյանն ասաց. «Վա՛յ, ինձ մոտ հաց կա»: Ասացի. «Սուս, ձայն չհանես, ես ի՞նչ ես ասում, քանի՞ հատ կա»: Երեք հատ մեծ հաց հանեց պայուսակից: Վրան-թիկնոցը փռեցի, հավասար կտրտեցի, երեք հացը բաժանեցի հարյուր քսան հոգու միջեւ: Հրաչն ասաց. «Հրամանատա՛ր, քեզ բան չմնաց»: Ասացի. «Հրա՛չ, մարդու չասես, տես՝ ինչքան փշուր կա»: Դա էլ մեր Դեւրիկյանի հացը:

Դիրքավորվել էինք, մոտս քարտեզ չկար, մոտ տասնյոթ կիլոմետր ետ էինք գնում, որ զինվորների համար ջուր բերեինք: Հետո ձեռքս քարտեզ ընկավ, նայեցի, տեսա որ ձորի մեջ՝ մեզնից ընդամենը հիսուն մետր ներքեւ, աղբյուր կա: Գնացինք, իրոք ջուրը հոսում էր: Մերոնք ականապատել էին: Ականները հանեցինք, այդ ջրից օգտվեցինք: Եթե տեղացի լիներ, մեզ կասեր, թե որտեղ ինչ կա: Արահետներն ինքներս էինք գտնում, թե ոնց կարել է հարձակվել, գնալ: Երբ մտանք գյուղ, արդեն պարզ էր, բայց մինչ այդ քարտեզով էինք կողմնորոշվում, թե մեր առջեւում ինչ պիտի լինի՝ ճանապարհ է, ձոր է, իջնելու տեղ կա, թե չէ: Մեզ մի քիչ «Եղնիկներն» օգնեցին, Շուն Շահեն կար, նա մեզ օգնեց: Հիմնականում խնդիրներ չենք ունեցել: Հետմահու «Մայրական երախտագիտության» մեդալ ստացավ: Տղաներն իրար մեջ պատմում են, շշնջում, թե այդ տղան ոնց է մահացել: Բայց ոչ մի տեղ այդ մասին չի խոսվում: Նա թիկունքի պետն էր: Տղաների հետ դուրս է գալիս կռվի դաշտ: Ահավոր վիճակ էր, ով կարող էր, պիտի զենք վերցներ՝ դեմները պահելու համար: Նռնականետ է վերցնում, կրակելու ձեւը գիտեր, բայց փորձ չի ունեցել: Առաջին կրակոցով միանգամից զրահամեքենային խփում է: Երկրորդին խփելիս՝ զրահամեքենան է նրան խփում:

Խաչիկ անունով տղա ունեինք, մեր կողքի գյուղից էր: Ասում են՝ այնպիսի խառը վիճակ էր, որ խրամատի մեջ էր կռիվը գնում: Խչոն տեսնում է, որ ուրիշ ճար չկա, թուրքերը արդեն մեր խրամատն են մտել, երկու նռնակները քաշում է ու մտնում թուրքերի մեջ: Նման բան առաջին անգամ էի լսում, բայց այդ տղան այդ բանն արել է, ու ոչ ոք չգիտե: Մարտակերտի քարհանքում էր, 1994 թ. հունվարի 17-ին, ես

այդ օրը վիրավորվեցի, դրա համար էլ ներկա չեմ եղել:

Բ. - Ես այնտեղ 92-ի օգոստոսին եմ եղել, շատ վատ շրջան էր, մերոնք շրջափակման մեջ էին, «Աշոտ Երկաթ» ջոկատի հրամանատար Պավել Երիցյանն էր այնտեղ, այդ ուղղության հրամանատարն էր, նրան իր տղաները վիրավոր թողեցին, փախան:

Լ.Գ. - Այդ տղաները ինձ դուր չեկան իրենց պահվածքով:

...Արծվաշենը որ թողեցին թուրքերին: Ինքը որ մեկ-մեկ խոսում է՝ Արծվաշենը այսպես, Արծվաշենը այնպես... Ասում եմ. «Բերանդ փակիր, եթե դու տղամարդ էիր, դուրս էիր եկել Արծվաշեն, ուրեմն՝ այնտեղ պիտի մեռնեիր», թե. «Պահն այդպիսն էր»: Ես միշտ մտածել եմ, իմ տղաներին էլ նույն կերպ եմ ներշնչել, եւ հնարավոր չէր, որ նրանք ինչ-որ մի քայլ ետ գնային: Ես կռվում չեմ պատկերացնում այնպիսի մի անելանելի վիճակ, որ զորքով հանդերձ նահանջես: Բացառվում է դա, եթե կանգնես, մինչեւ վերջ կռվես: Միշտ ելք կա: Իմ նահանջը եղել է այն, որ ենթադրենք գյուղը գրավել եւ դիրքավորվել եմ, ռադիոյով ղեկավարությունը ասել է. «Դուք գտնվում եք հարեւան պետության վարչական տարածքում»: Եթե հարեւան պետությունն է, ինձ ինչու՞ եք ուղարկել այնտեղ: Միակ դեպքը այն է եղել, որ ես Յուխարի Ջիբիխլին եմ թողել, ետ եմ եկել, քանի որ ինձ ստիպել են:

Բ. - Արծվաշենի դեպքում հրամանատարությունն է որոշել, որ հանձնեն:

Լ.Գ. - Բայց ինչու՞ տային, եթե կարելի էր պաշտպանել: Պարզ ասեմ՝ ղեկավարությունը չի որոշել, այլ ստիպված է եղել որոշում ընդունել, որովհետեւ մեր զորքերը արդեն ետ էին քաշվել:

Բ. - Գեներալ Խաչատուրովը, որն այդ ուղղության հրամանատարն էր, ասաց. «Վազգենն ասել է՝ պիտի տանք»:

Լ.Գ. - Ես Վազգենից չեմ հավատում, մենք շատ մտերիմ էինք:

Վազգենն ինձնից ահավոր նեղացավ 1992 թ.: Մենք դիրքերն էինք պահում, Կիրովականի եւ Լենինականի ջոկատները եկան մեզ փոխարինելու: Բայց այդ փոխարինումը ոչ ընկերական ձեւով եղավ: Նրանց հրամանատարին ասացի.

- Ես ունեմ վեց արկղ զենք-զինամթերք վերեւում, երկու արկղ՝ այստեղ, երկուսը՝ այնտեղ: Եկեք այսպես անենք՝ դուք արկղերը մի հանեք վերեւ, իմ տղաներն էլ թող չիջեցնեն ներքեւ, փոխանակում կատարենք:

- Չէ, ախպե՛ր, մենք՝ մերով, դուք՝ ձերով:

- Եղավ: Տղանե՛ր, իջեցրեք:

- Չէ՛, հլա կանգնիր, պիտի էս թողես, էս թողես...

Շշմեցի: Զենքն ուզում էին իմ ձեռքից վերցնել, «ԱԳԱԷՍ» ուզեցին, «ԷՍՊԵԳԵ-9», «Ֆագոտ», նռնականետներ: Ասացի. «Ես ո՞նց կարող եմ թողնել ու գնալ, վաղը չէ մյուս օրը ետ եմ գալու»: Վիճաբանեցինք,

կապվեցի Վազգենի հետ, ասաց.

- Ո՞նց չես տալիս:

- Չէ, չեմ տալիս մինչեւ նախարարը չասի:

Գնացինք Լաչին, ասաց.

- Ի՞նչն է պատճառը, որ չես տալիս:

- Ես որ հիմա գնամ ու տամ սրանց, հետո ումի՞ց եմ ստանալու:

- Հետո կստանաս, հորդ տնից ե՞ս բերել:

- Չէ, նախարարությունից եմ ստացել, մինչեւ նախարարը չասի՝ ես ետ չեմ տա:

Նախարարը Վազգեն Մանուկյանն էր: Մանուկյանն ասաց՝ տու՛ր, ասացի՝ հարց չկա: Վազգենը ահավոր զայրացավ: Սկսեցին գրանցել: «ԴԵԾԵԿա» ուզեցին, չունեի, ինձ մոտ «Ուտյոս» էր. դա նույնն էր՝ տեխնիկայի վրա, բայց անունները չհամընկան, չտվեցի: «ԷՍՊԵԳԵ»-ն էլ գիտեի, որ չեն կարողանալու օգտագործել, փոքր լուցկու հատիկ դրեցի արանքում, ասացի. «Տեսեք, որ չի աշխատում»: Կրակեցի, չկրակեց: «ԱԳԱԷՍ»-ը թուրքերից էի վերցրել, որ քաշում բաց ես թողնում, կրակում է, իսկ որ քաշում ձեռքով ուղեկցում ես, զսպանակը խառնվում է իրար: Ասացի. «Սա էլ չի աշխատում»: Ասացին. «Որ չի աշխատում, ինչերի՞ս է պետք»: Դա դրեցի մեքենայի մեջ, տարա: Յոթ-ութ օր էր անցել, Վազգենն ինձ ետ կանչեց: Ստորագրել էին, որ զենքը տվել եմ նրանց, մի օրինակն էլ գրպանումս էր: Եկա դիրքեր, Գզողլյան Ֆելիքսն ինձ ուղեկցեց, ասաց. «Նայիր, մերոնք իջնում են»: Նայում էի՝ մերոնք այդպես չէին կարող իջնել, մերոնց մոտ ականանետ չկար, ուղղությունն էլ ուրիշ է: Թուրքեր էին, գալիս էին մեր դիրքերը, իսկ մերոնցից մարդ չկար, թողել գնացել էին, Կոռնիձորով հեռացել էին: Խփեցինք, ականանետը վերցրինք, նստեցինք մեր դիրքերում: Այնտեղից մեքենան քշեցի ուղիղ Լաչին: Վազգենենք մեքենայի վրա հաց էին ուտում: Երբ զայրացած ես լինում, աչքիդ ոչինչ չի երեւում: Վազգենն ասաց.

- Բարեւ էլ չես տալիս:

- Կներեք, չնկատեցի:

- Արի, արի, այդքան փոքր եմ էլի:

- Ինչ գամ, ասացիր՝ ես տուր, ես տուր: Տվեցի, հիմա ու՞ր է, չկա, լրիվ թողել փախել են:

Հետո Մարտակերտում հանդիպեցինք, իմացավ, որ Մանվելի հետ եմ, ասաց. «Նստիր, քեզ տանեմ»: Ասացի. «Չէ, չեմ կարող»: Ինձ շատ է օգնել, աջակցել, ֆինանսավորում էր, որ երեխաների հետ պարապեմ: Նրանցից վաթսուն հազար ռուբլի փող էի ստացել, առձեռն տվել էին՝ առանց որեւէ թուղթ ստորագրելու: Ջերմուկի հանգստյան տանը պարապմունքներն անցկացրինք: Բոլոր ծախսերի համար կտրոն ու-

նեի, մոտ հինգ հազար ռուբլի էր մնացել: Փողը թղթերի հետ բերեցի, որ հանձնեմ, ասաց.

- Ձեռ ե՞ս առնում:

- Մեկը պիտի լինի՞, որ հաշիվ տամ:

- Ոչ մի պրոբլեմ չկա, պետք չէ հաշիվ տալ:

Հետո ինձ ուղարկեց ուսումնարան, գումարտակի հրամանատար էի: Վրանների մեջ հանգստանում էինք, ես տեղյակ չէի, նա եկել էր ստուգելու: Գոռացին՝ պարոնա՛յք սպաներ: Ես էլ կոշիկերով պառկել էի, աչքերս բացեցի, տեսա՝ դիմացս կանգնած է: Լավ չէր, թե նախարարին ոնց ընդունեցի: Շրջվեց, Սերգեյ Սարգիսիչին հարցրեց՝ հը՛, ո՞նց է: Նա էլ սկսեց մի գլուխ գովել: Ձեռքը դրեց ուսին, ասաց. «Կասկածող լիներ, քեզ տղա եմ ուղարկել»: Ինչ հարցով դիմել եմ, չի մերժել, միայն թե, երբ պաշտոն են տալիս, մարդիկ փոխվում են:

Մոնթե Մելքոնյանին հանդիպել եմ 1992-ին Լաչինում: Նա իր զորքով տեղափոխվել էր «Նովոստրոյկա» կոչվող տեղը: Դրանից երեք կիլոմետր առաջ՝ Մալխալաֆում, դիրքերն էինք պահում: Հանդիպեցինք, ասաց, որ այդ ուղղությամբ պիտի հարձակվենք: Նախապես ասացինք, թե դիմացը տեղակայված հակառակորդը ինչ ունի, ինչ տեսակի զենք է օգտագործում: Ասացինք, որ «ԲԵՄՊԵ-2» կա, որը շատ է համը հանում, խանգարում է, որոշել ենք վաղը խփել: Ասաց. «Դրան ձեռք չտաք, ատիկա իմն է»: Թուրքերից մի տանկ էինք վերցրել, ետ դառնալիս տեսավ տանկը, հարցրեց, թե ինչու է այդտեղ կանգնած: Ասացի.

- Տանկ է էլի, լավն է՞:

- Հա:

-Դե որ լավն է, քեզ նվեր եմ տալիս:

Նրա մոտից եկանք, տանկը արդեն չկար, տարել էին: Եկանք տղաների մոտ, տասը լիտրանոց տարայով կոնյակ էր գտել, թափեց ջրի մեջ, որ չխմեն: Տրամադրություն չուներ, չէր սիրում, որ զինվորները խմում էին: Նա մեզ հետ հավասար ելավ սարը: Ամեն հրամանատար չէր բարձրանում վերեւ, ներքեւում ասում էին. «Ցույց տվեք մեզ, մենք գիտենք՝ ինչ անենք»: Մոնթեն մեզ հետ բարձրացավ, ամբողջ տարածքը նայեց, ասաց. «Երեք օրից պիտի հարձակվենք»: Եկավ Հայաստան, վրդովված վերադարձավ, չգիտեմ, թե ինչ էր պատահել: Անպատվելիս միայն «ավանակ» էր ասում: Շատ մարդիկ են պատմում Ավոյից, բայց որ ուզում էինք ստուգել, թե իրոք շփվել են նրա հետ, ասում էինք՝ նրա ամենակեղտոտ բառն ասա: Եթե կարողանում էին ասել, ուրեմն հանդիպել էին:

Սողոմոնյան Նելսոնն էր նրա հետ. հիմա գնդապետ է, ինժեներական զորքերում է ծառայում, վաշտի հրամանատար էր: Մենք տարբեր

ստորաբաժանումներ էինք, եկավ ասաց. «Խխունջ ունե՞ս, երկու հատ պետք է»: Մենք խխունջ «ԱԳԱԷՍ»-ի ցինկերին էինք ասում: Տվեցի, զարմացավ թե՝ առաջին անգամ եմ տեսնում, որ մեկը խխունջ տա մյուսին: Հիմա Նելսոնը մեր ղեկավարներից է, ինժեներական ծառայությունում է:

Հայրապետյան Ռուբոն՝ Նեմեցը, սկզբնական շրջանում ջոկատներին, հատկապես մեր ջոկատին աջակցում էր թե՛ ֆինանսապես, թե՛ հոգեպես, թե՛ իր անմիջական մասնակցությամբ: Մարդիկ կան՝ չեն հավատում, որ նա մեզ հետ եղել է նույնիսկ կռվի դաշտում, նրանց թվում է, թե դահիճ է: Ես մի տեղ պատմեցի այն, ինչ հիմա ուզում եմ պատմել, երկու ամիս հետո կանչեցին ինձ, ասացին.

- Ձեր զինվորներից մեկի՝ Հայրապետյան Ռուբոյի համար մեդալ ունեք:

- Նրան տվեք, ինչու՞ եք ինձ տալիս:

- Չգիտենք, թե նա ով է:

Ասացի ով է, բայց մեդալը թողեցին ինձ մոտ, գնացին. «Մայրական երախտագիտության» մեդալ էր: Այն մինչեւ հիմա մեր տանն է, ժամանակ չեմ ունենում, որ նրան հանձնեմ: Շուռնուխում նստած էինք, ճանապարհը փակ էր: Պիտի հարձակվեինք Յուխարի Ջիբիխլի գյուղի վրա: Ռուբոն մեզ հետ եկավ տեղազննման, երբ թուրքերը գյուղ մտնեն, նայենք, թե քանի հոգի են: Համ տեղն էինք զննում, համ նրանց շարժը: Կրակոցները սկսվեցին: Վեց հոգի նստած էին մի ծառի տակ, չորս հոգի՝ ուրիշ տեղ: Առաջին արկը որ կրակեցին, Ռուբոն ասաց. «Ելնենք, այստեղից գնանք, դուրս գանք»: Սմբոն ասաց. «Լավ է, հազիվ նստել ենք, լավ էլ տեղ է»: Ռուբոն ասաց. «Այստեղից շուտ ելեք»: Հենց մենք դուրս եկանք ու անցանք մյուս թփի տակ, թնդանոթի երկու արկ խփեցին նույն ծառին, որի տակ նստած էինք: Ասացինք. «Որ կարողանում ես գուշակել, արի մեզ հետ տանենք»: Միասին Մարտակերտում ենք եղել, երբ ուղղաթիռներով հարձակվում էին, զորքը նահանջում էր: Երկար չմնացինք այնտեղ: Նա մեզ հետ շատ անգամ է եղել, եւ ոչ ոք չի հավատում, որ Ռուբեն Հայրապետյանն ավտոմատը ձեռքին թեկուզ խրամատի մեջ նստել է, երբ կարող էր Գորիսից այն կողմ էլ չանցներ, այդքան հնարավորություն ուներ: Սնունդ էր հասցնում, ամեն կերպ օգնում էր, ու կռվի ժամանակ մենք ոչ սննդի կարիք ենք զգացել, ոչ ծխախոտի: Նույնիսկ ասում էինք՝ Ձմեռ պապի է մեզ համար: Գալիս էր, «Նիվայի» թափքը բացում, որտեղ արկղերով ծխախոտ էր դրած:

Պատմում են օդաչուներ Գեղամ Գաբրիելյանն (ձախից) ու Ստեփան Նիկողոսյանը: Զրույցը վարեց Բակուր Կարապետյանը. Երեւան 24.01.2006: Մուտքագրեց Անահիտ Ասատրյանը:



Գեղամ Գաբրիելյան - Ծնվել եմ 1961 թ. Շամշադինի շրջանի Չինչին գյուղում:

Արցախյան պատերազմն ինձ համար սկսվել է 1988 թ. դեկտեմբերի 3-ին: Հենց առաջին թռիչքի ժամանակ մեզ Գետաշենում ձերբակալեցին եւ տարան Կիրովաբադ: Երկրորդ օդաչուն Կարապետյան Էդուարդն էր, մեխանիկը՝ Ասատրյան Վարդանը: Մենք արդեն իջեցրել էինք բոլոր ուղեւորներին, ուղղաթիռը մաքուր էր: Խորհրդային «ՄԻ-24» տիպի «Կրակադիլ» ուղղաթիռներն էին, որ ստիպեցին վայրէջք կատարել Կիրովաբադում: Եկան ստուգելու: Երեք անձնակազմով էինք: Մյուս ուղղաթիռի հրամանատարը Գասպարյան Յուրան էր, նա Կիրովաբադում վանքի մոտ նստելուց հետո երկրորդ անգամ էր այդ քաղաքում հայտնվում: Մյուս հրամանատարը Կարատինսկին էր: Ուզում էին Յուրային անմիջապես ձերբակալել, բայց խաբեցինք նրանց, ասացինք, որ այն մեկը Կասպարով էր, նրան բռնել են, սա Գասպարյան է: Յուրային ձեռք չտվին: Խոսեցինք մեր ռազմաօդային ուժերի ղեկավարության հետ, որը Թիֆլիսում էր նստում: Նրանք ասացին, որ մեզ անօրինական կերպով են ձերբակալել, ու նրանց պահանջով մեզ տասնհինգ րոպե հետո բաց թողին:

Բ. - Ինչպե՞ս էին թուրքերը ձեզ վերաբերվում:

Գեղամ - Ոչ մի արտառոց դեպք չեղավ, չնայած մեզ շատ ագրեսիվ էինք պահում: Դեռ Սովետական Միությունը կար, զորքեր կային, պատասխանատվություն կար: Նրանք էլ էին ագրեսիվ, բայց մենք թույլ

չտվինք, որ ուղղաթիռները ստուգեն: Ուղղաթիռը ստուգեց ռուսական զորքերի մի մայոր: Նայեց, ոչինչ չգտավ, բայց ուզում էին էլի պահել, որովհետեւ թուրքերը ստիպում էին պահել մեզ, համոզված էին, որ մենք զենք ունենք: Բայց զենքը մենք արդեն թափել էինք Գետաշենում:

Սովորաբար թռիչքի էինք դուրս գալիս ամենաքիչը երկու ուղղաթիռով, որ եթե մեկին մի բան պատահի, մյուսը օգնության հասնի: Ավիացիայում ընդունված էր, որ եթե հինգ րոպե կապ չի լինում, ուրեմն ինչ-որ բան այն չէ:

Թռել ենք Նարեշտար՝ հակառակորդի դիրքերին խփելու համար: Ես էի, Ստեփանը եւ Ջամբոն: Հետաքրքիր էր, որ իմ խփելուց հետո Ստեփանի ուղղաթիռի հրթիռները դուրս չեկան: Ջամբոն լավ աշխատեց, եթե չաշխատեր, հնարավոր էր՝ Ստեփանին խփեին:

Շուշիի ազատագրման օրը Գորիսից թռանք: Ստեփանը իմ մեջքն էր պահում: Կարմիր տներ կային այնտեղ: «Շիլկան» աշխատում էր դրանց վրա: Այդ կետին խփելուց հետո մի քանի համազարկ մնում էր՝ գյուղի մեջ խփեցի: Բայց խփելուց հետո սկսեցին ինձ խփել, փակած խրամատներ ունեին, գետնի տակից դուրս եկան, սկսեցին կրակել: Գորիսի տակն էր, թուրքերը Իշխանասարի մոտ դիրք ունեին:

Ստեփան Նիկողոսյան - Ծնվել եմ 1955 թ.:

1988 թվականից թռիչքները հիմնականում դեպի Ղարաբաղ էին: Ստեփանակերտում Թաթարյանը, որը լուծում էր գազի հարցերը, ինձ ասաց. «Քեզ մի տղա կմոտենա, կարո՞ղ ես նրա խնդրանքը կատարել»: Ինձ խնդրեցին Գորիսից երկու պարկ զենք տեղափոխել: Ռուսներն այդ ժամանակ Ղարաբաղում էին: Գնացինք Գորիս, երկու պարկ զենքը վերցրինք: Քանի որ այդ ժամանակ հսկողությունը շատ ուժեղ էր, Ստեփանակերտ չհասած՝ անտառի մեջ, առանց վայրէջք կատարելու երկու մետր բարձրությունից պարկերը Սամոյենց հետ իջեցրինք:

1989 թ. վերջին Ամարասի Արթուրի խնդրանքով մի ուղղաթիռ զենք տեղափոխում էինք Ստեփանակերտ: Բայց այդ ժամանակ Ստեփանակերտ հասնելը գրեթե հնարավոր չէր: Ասել էին, որ մեզ կդիմավորեն: Ձորակում նստած սպասում էինք: Մի ժամ սպասելուց հետո տեսանք, որ ոստիկանության մեքենաներով մոտենում են: Ուղղաթիռը շարժի գցեցինք, որ փախչելու համար պատրաստ լինենք: Ավտոմատները վերցրինք, դիրքավորվեցինք, որ դիմավորենք: Բայց այդ պահին Շահնազարյան Դավիթը «Վիլիսի» դռնից կախվեց ու ձեռքով արեց, որ հանկարծ չկրակենք: Նրանց հանձնեցինք զենքը ու վերադարձանք Հայաստան:

Երբ հարց առաջացավ, որ Հայաստանին անհրաժեշտ են մարտական ուղղաթիռներ, մեզ ասացին, որ ռուսական զորքերից երկու հատ

«Մի-24» գրավենք: Ուղղաթիռները, առանց շարժիչը գործի գցելու, քաշելով զինվորների մոտից բերել ենք մեր մոտ՝ քաղաքացիական ավիացիա: Այդ ժամանակ բոլոր մարտական ուղղաթիռները պատկանում էին Խորհրդային Միությանը: Հետո նրանց օդաչուներից երկուսը այդ ուղղաթիռները թռչելով տեղափոխեցին Արզնի՝ իբր առայժմ պահելու նպատակով: Բայց հաջորդ օրը ռուսները տանկերով, զրահամեքենաներով գրավեցին Արզնու օդակայանը եւ ուղղաթիռները ետ տարան: Դրանից հետո մի ուղղաթիռ էլ բերեցինք, բայց բանակցությունների միջոցով ուղղաթիռը դարձյալ ետ վերցրին: Մեր ղեկավարությունը, չգիտեմ՝ ում երաշխավորությամբ, միջնորդությամբ, որոշեց որ պիտի գողանանք երկու «Մի-8» ռազմական ուղղաթիռներ, որովհետեւ մենք դրանց լավ ծանոթ էինք ու ավելի լիարժեք կարող էինք օգտագործել: Գնացինք Լենինական: Տեղի ջոկատը հանդիպում էր կազմակերպել ուղղաթիռային ծառայության մեծամեծների հետ, խմեցրել էին նրանց ու վնասազերծել պահակախմբին: Ես ու Գեղամը մեր անձնակազմով գրավեցինք այդ ուղղաթիռները եւ տեղափոխեցինք Երեւան: Այդ օպերացիան ղեկավարում էր Աստվածատուր Պետրոսյանը: Նա Լենինականի օդակայանի պետի առանձնասենյակում նստած սպասում էր, որ գործողությունը ավարտվի: Նրան զեկուցում են, որ ուղղաթիռները արդեն Երեւանում են: Օդակայանի պետը հարցրել էր. «Այդ օպերացիան որ սկսել եք, ե՞րբ կավարտվի, ե՞րբ եք տանելու, որ մենք էլ պրծնենք»: Ալիկն ասել էր, որ ուղղաթիռները արդեն Երեւանի մոտ կլինեն: Ես ստիպված էի հինգից տասը մետր բարձրությունից թռչել, որ չերեւա, քանի որ ուշի ուշով հետեւում էին մեր ամեն մի քայլին:

1991 թ. աշնանը թե ձմռանը առաջին անգամ ադրբեջանցիները սկսեցին գնդակոծել Իջեւան քաղաքը: Ալիկ Պետրոսյանը Հրազդանի ջոկատի հետ եկավ: Ջոկատի հրամանատարը Սասուն Միքայելյանն էր: Ես ու Գեղամը երկու ինքնաթիռով թռանք Իջեւան: Այնտեղ մեզ բացատրեցին, թե մոտավորապես որտեղից են կրակում Իջեւանի վրա եւ խնդրեցին վնասազերծել կրակակետը: Այդտեղից թռանք Ջախարլի, կանգնեցինք շրջանի մեջ ու հերթով կրակեցինք գյուղի վրա՝ մի ծայրից մյուսը: Հաջորդ օրը «Մայակ» ռադիոկայանով հաղորդեցին, թե ութ ուղղաթիռներ հարձակվել են Ջախարլի գյուղի վրա: Դրանից հետո ադրբեջանցիները եկան հայերի հետ բանակցելու, ասացին. «Մենք այլեւս չենք կրակի, միայն թե դուք չգնդակոծեք»:

Գեղամ - Մենք մի քանի տղաներ ունեինք՝ Ջամբուլատը, Նորիկը, Կարապետյան Էդոն, մեխանիկներից՝ Արայիկը, Արծվիկը, Մնացականյան Վարդգեսը: Ռազմական գործողությունների մասնակցել ենք

Շահումյանում, Նոյեմբերյանում, Գորիսում, Ղափանում, Շուշիի, Քելբաջարի օպերացիաների ժամանակ, Կարաչինարում: Չորս «Մի-24» ուղղաթիռներ էին բերել Ցխինվալիից, իբր թե պիտի գնան Նախիջեւան՝ սահմանը պահելու: Արդեն Խորհրդային Միության փլուզման տարիներն էին: Այդ ուղղաթիռները մենք բռնագրավեցինք, պահեցինք Երեւանում: Բայց անհրաժեշտ էր «օրինականացնել»՝ անլեգալ ձեւով: Ռուս ռազմական օդաչուները փախել էին, մնացել էին երկու հոգի՝ Լյոխան եւ Դիման: Նրանք մեր ընկերներն էին եւ խոստացել էին սովորեցնել «Մի-24» ուղղաթիռով թռչել: Մեր ղեկավարությանը խոստացել էին մնալ եւ աշխատել: Բայց այդպես չարին, ու հայկական տարբերակով «քցել էին» տղաներին: Մենք բարձր աշխատավարձ էինք ստանում եւ հնարավորություն ունեինք պայմանավորված գումարը մեր աշխատավարձից նրանց տալ, բայց ասացինք, որ ղեկավարությունն է տվել: Նրանցից բացի՝ մնացել էր նաեւ Մարտիրոսյան Ֆելիքս Շահենիչը՝ «Մի-8» ուղղաթիռի վրա: Նա ռուսների էսկադրիլայի հրամանատարի տեղակալն էր եւ, որպես հայ, ժամանակավորապես մնացել էր: Սերգեյ Վանցյանի հետ ես եւ Վալտերը՝ տեխնիկական գծով տնօրենը, գնացինք Մոսկվա: Օպերատիվ աշխատողը ես էի: Չորս «Մի-24» եւ երկու «Մի-8» ուղղաթիռների համար կաշառք տվեցինք ընդամենը մեկ արկղ կոնյակ եւ մի տեսամագնիտոֆոն: Հիմա այդ մարդը Մոսկվայում ղեկավար պաշտոն է զբաղեցնում: Գլխավոր շտաբում միայն գեներալներ էին, մեզ ասացին, որ Սովետական Միության քաղաքականությունը նրանք են որոշում: Մտանք շտաբ, ինը գեներալներ էին. երեքը մահմեդական էին, մեկը՝ կալմիկ, մնացածը՝ քրիստոնյա: Մուսուլման գեներալներն ասում էին. «Մենք մուսուլման ենք, բայց ձեր կողմից ենք, ինչու՞ ես դու եկել, ու՞ր է ձեր ղեկավարությունը, մենք հոգեպես ձեզ հետ ենք, ինչու՞ չեն գալիս»: Մի գեներալ կար՝ Շապշնիկովի՝ պաշտպանության նախարարի տեղակալն էր, հարցրեց.

- Ի՞նչ ես բերել:

- Կոնյակ,- ասացի ես:

- Հիմա բացում ենք, եթե կոնյակը կեղծ լինի, ոչ միայն ուղղաթիռ չեք ստանա, այլեւ այստեղից կենդանի դուրս չեք գա:

Որոշ ժամանակ անց «Մի-24» ուղղաթիռներից երկուսը «նվեր» տվեցինք թուրքերին: Այսպես կոչված նորաստեղծ բանակը անկազմակերպ ռազմական թռիչք արեց: Իջել էին Գորիսի տակ կրակելու՝ առանց կապի, առանց զգուշացնելու: Մենք այդ օրը Շահումյանից գալիս էինք: Մերոնք կրակել էին, բայց «Մի-24»-ը զրահապատ է, գնդակը կպել էր զրահին, կայծեր էին դուրս եկել, նրանք էլ կարծել էին, թե ուղղաթիռին խփել են: Ինչպես գնում, այդպես էլ նստում են թուրքերից

հարյուր մետր հեռավորության վրա: Թուրքերը երբ տեսնում են, որ հայերը կրակում են այդ ուղղաթիռի վրա, մտածում են, թե ուղղաթիռը իրենցն է, ու սկսում են ձեռքով անել: Խաչատուրը գլխի է ընկնում, նստում է ուղղաթիռը, երկու անձնակազմին էլ վերցնում ու ետ թռչում: Գորիսի տակ մի չոբան, տեսնելով, որ ուղղաթիռը թուրքերի կողմից է գալիս, մի անգամ էլ ինքն է հրացանով կրակում, բաքը ծակում է: Խաչատուրը մի կերպ իրեն գցում է Գորիսի օդակայան: Այդ երկու ուղղաթիռները թողեցին այնտեղ, թուրքերը եկան տարան, այսինքն՝ նվիրեցին նրանց:

Ղազախստանի ու Ռուսաստանի պատգամավորներին Մարտունու շրջանից պիտի հանեինք: Ելցինի ու Նազարբաեւի գալուց հետո պատգամավորները Մարտունի էին գնացել: Մարտունու մեր գյուղերի արանքում Խոջավենդ թուրքական գյուղն էր: Ճակատում մարտերը որ սկսվել էին, պատգամավորները վախենում էին: Ձենքը Մեծ Թաղլարում դատարկելուց հետո պիտի գնայի նրանց բերելու: Ինձ ասել էին, որ բնակիչներից ոչ ոքի չվերցնեմ: Հոկտեմբերյանից Եպրաքսիա կար, նա օգնություն էր հավաքում եւ բերում Ղարաբաղ, բաժանում: Եպրաքսիան իրեն գցեց ուղղաթիռի մեջ թե. «Ես էլ եմ գալիս»: Չկարողացա նրան դուրս հանել: Մեզ հետ նաեւ մի զինվորի վերցրինք: Ըստ պայմանավորվածության՝ ես պիտի վայրէջք կատարեի Մարտունու մարզադաշտում: Հայկական տասներկու դիրքեր կային, դրանցից մեկում զինվորները ճաշելիս են լինում: Ասացի, որ այդ դիրքը չի լսում: Երբ տեսնում են, որ Խոջավենդի թուրքերի կողմից ուղղաթիռ է գալիս, մտածում են, թե թուրքերինն է, ու սկսում են խփել: Այդ պահին ես իջնում էի Մարտունու մարզադաշտ, այնտեղ ռուսական զորքերը պաշտպանում էին պատգամավորների անվտանգությունը: Երբ զրահամեքենաների գնդացիրները ուղղվեցին ինձ վրա, մտածեցի, թե նրանք որոշել են ինձ խփել, հավանաբար քաղաքական խաղ է: Կրակն էլ Խոջավենդի կողմից էր գալիս: Ջամբոյի ու Բաբայան Աշոտի ուղղաթիռներին կրակահերթերն արդեն կպնում էին: Մտածեցի՝ քաղաքական խաղ է, ուզում են պատգամավորներին ցույց տալ, թե թուրքերը խփում են մեզ. մի ուղղաթիռ ոչնչացնելը մերոնց համար երկու մատին թքելու պես էր: Փախա մտա ամպերի մեջ: Եպրաքսիան ճվճվոցը գցել էր՝ վա՛յ, կպել է: Փամփուշտը մտել էր ոտքը: Ուզում էինք առաջին օգնություն ցույց տալ, չէր թողնում, թե՝ ամոթ տեղերն են, չեմ բացի: Մի զինվոր կար, ուսապարկը թեւի տակ էր դրել, փամփուշտը խրվել էր բաժակի մեջ: «Երկիր» թերթը գրեց. «Գնդակոծվել է հայկական օդանավ»: Դրանից հետո մտել էին Խոջավենդ, թե՝ այնտեղից են կրակել: Խոջավենդի հերն էլ այդտեղ անիծեցին:

Հինգ ուղղաթիռով գնացել էինք տարբեր տեղեր: Ես իբր նրանց եմ պաշտպանում, որ արանքը անցնեն, բայց հետո Իստիսուի կողմով անցանք: Ռազմական ուղղաթիռը մկան գույն էինք ներկել եւ անունն էլ «մուկ» էինք դրել: Ուղղաթիռներից մեկը նստել էր Մարտակերտում, մեկը՝ Հոռաթաղում, մյուսը՝ Մատաղիսում: Ես պտտվելով գնացի Շահումյան: Մեղրյան Շահենն ասաց, որ թուրքերի դիրքին պիտի խփենք: Մի քանի կանայք եկան, երկուսը ծծկեր երեխաների հետ էին, ասացին. «Մենք գալիս ենք»: Որոշեցինք չթռչել: Հոկտեմբերյանի ջոկատի գնդացրորդին թուրքերի դիպուկահարը խփել էր: Նրա դիակը ուղղաթիռի մեջ էինք դրել: Ջամբոն էր ու մեխանիկս, ասացի. «Չգնա՞նք խփենք», թե. «Հերն էլ անիծած, գնանք»: Խանլարի մոտով գիծն անցա, գնացի Կիրովաբադի կողմը ու հետեւից սկսեցի թուրքերի դիրքերին խփել: Թուրքերը ձեռքով ցույց են տալիս, իբր՝ հայերը այն կողմն են, այստեղ մի խփիր: Խփեցի ու փախա: Եկա, մեր ուղղաթիռները նստած էին, ասացի. «Տղե՛րք, համը հանել եմ, հիմա կգան, փախեք»: Ես նրանցից շուտ հասա Երեւան: Քսան րոպե հետո տղաները եկան թե. «Դու եկել ես մեզ պաշտպանելու՞, թե՞ առաջինը փախչելու»:

Ստեփան - 1990 թ. Բալահովիտի պահեստների պայթեցումից հետո, ըստ երեւույթին, Անդրկովկասի ռազմական ղեկավարությունը որոշեց, որ Ադդամի բազաներն էլ պիտի վերացվեն, քանի որ Հայաստանին պատկանողը արդեն համարում էին կիսավերացված: Հատկացրին «ՄԻ-8» ռազմական ուղղաթիռ՝ ռումբերով: Երկու օր դասեր անցկացրին, պատրաստվեցի, բայց, չգիտեմ, թե իրենց պլաններում ինչ փոխվեց, որոշեցին, որ ռմբակոծելն անիմաստ է: Այն քաղաքացիական ուղղաթիռի նման ներկեցինք, բայց այդպես մեզ դուր չեկավ: Ներկեցինք ասֆալտի գույնով ու սկսեցինք օգտագործել: Պարզվեց, որ «մկան» ուղղաթիռը համարյա շարքից դուրս էր եկել, նրանց պետք չէր, թողեցին մեզ, երեւի իրենք էին մեղավոր, քողարկելու համար ստից-մտից սարքել էին:

Առաջին անգամ Մարտիրոսյանը՝ զորամասի հրամանատարի տեղակալը, ինձ կրակել սովորեցրեց: Զոդից դեպի Քելբաջար՝ ադրբեջանցիները մի բազա ունեին, ինձ տարան այնտեղ սովորեցնելու: Մենք այդ բազաներին խփում էինք, նրանք երկու օր հետո վերականգնում էին:

Գեղամ - Ղափանում ես ու Ստեփանը երկու «ՄԻ-8» ուղղաթիռներով էինք: Առաջին հարվածը լավ հասցրինք: Թուրքերը նստած էին հրամանատարական կետում: «Նուրսերով» այդ կետին խփեցինք ու անցանք մյուս գյուղերին: Ղափանի օդակայանի դիմացի գյուղը շատ էր համը հանում, գնացքով գալիս կրակում էին: Ստեփանը ուզեց վե-

ռեւից խփել, հրթիռներից մեկը անցավ ընկավ մեր դիրքերի վրա: Տղաներն ասացին՝ «Մի անգամ էլ խփեք, մենք ձեզ ենք խփելու»:

Ստեփան - «Մայակն» էլ հաղորդեց, որ երկու ուղղաթիռներ գնդակոծել են հայերի եւ թուրքերի դիրքերը ու անհայտ ուղղությամբ հեռացել:

Չորս ուղղաթիռով պիտի մասնակցեինք Քելբաջարի գործողությանը, պիտի գնայինք առաջին գիծը վնասազերծելու: Երկու ուղղաթիռների անձնակազմը քաղաքացիական ավիացիայից էին:

Գեղամ - Առաջին ուղղաթիռի հրամանատարը ես էի, երկրորդ օդաչուն Նորիկն էր, մեխանիկը Արծվիկն էր: Երկրորդ ուղղաթիռի հրամանատարը Ստեփանն էր, երրորդինը՝ Ջամբոն ու Ակոպովն էին, չորրորդինը՝ Բաբայան Բորյան, որը Ստեփանակերտում զոհվեց, երբ ինքնաթիռը խփվեց, ու Խաչատուրովը, նա էլ Կազբեկի մոտ զոհվեց՝ բժիշկների հետ:

Ստեփան - Երբ հարցրինք, թե որտեղ պահենք ուղղաթիռները, զինվորականներն ասացին, որ իրենց մոտ ամեն ինչ պլանավորված է: Գնացինք, տեղը ցույց տվին՝ հենց Շուշիի տակը, ասացին, որ այդտեղից ոչինչ էլ չի երեւում: Ճիշտ է, չէր երեւում, բայց տասնհինգ րոպե հետո արտասահմանցիները եկան, նկարեցին ու գնացին:

Մեզ տեղավորեցին Ստեփանակերտում՝ ինչ-որ բարձրահարկ շենքի առաջին հարկում. այն ճաշարան էր, որը զորանոցի էր վերածվել: Երեք օր սպասեցինք, չորրորդ օրը օպերացիան պիտի սկսվեր:

Բ. - Քելբաջարի ո՞ր կողմով պիտի խփեիք:

Գեղամ - Մարտակերտից Քյալբաջար տանող նեղ մուտքի դիմաց գտնվող ֆերմայի մոտից պահում էին, այդ կետին պիտի խփեինք. մեզ ասել էին՝ ֆերմայից ձախ, հինգ հարյուր մետր վերեւ:

Ստեփան - Ամարասի Արթուրի հետ ոտքով գնացել ենք, դիրքերը նայել: Ջամբոն ասաց. «Որտեղ ասեք՝ կխփեմ, միայն թե ինձ այս սարը մի հանեք»: Զորանոցում անկողիններն այնքան կեղտոտ էին, որ բոլորս հագուստներով էինք պառկում:

Գեղամ - Պարզվում էր, որ ֆերմային պիտի խփեինք, եւ ոչ թե վերեւ: Հինգ հարյուր մետր վերեւ խփելով՝ անցանք, երրորդ ուղղաթիռից Խաչատուրովը հրթիռները արձակեց, բայց չգնացին: Երբ մենք սկսեցինք կրակել, թուրքերն էլ մեզ վրա կրակեցին: Չորրորդ ուղղաթիռը տեսնում էր, թե որ կետերն են, եւ հասկացանք, որ դրանք պիտի ոչնչացնենք: Մեզ պատվիրել էին՝ խփելուց հետո մարտի դաշտը չթողնեք, պտտվեք Հոռաթաղի վրայով այնքան, մինչեւ վերջին ուղղաթիռն էլ կգա, եւ ամբողջ խմբով կհեռանաք Սիսիան: Ասում եմ. «Բաբայան ջան, վերջին հրթիռը իմ մոտից որ թռավ, ես բնազդաբար փախչելու

եմ»: Բոլոր տղաներն էլ նույն կերպ վարվեցին, եկանք Սիսիան, չորրորդ բորտը եկավ քսանհինգ րոպե անց: Բորյան սկսեց գոռգոռալ. «Ինչու՞ հրթիռները դուրս չեկան»: Մեզ սպասարկում էին մեր տեխնիկները, նրանք հրթիռների կոնտակտները սպիրտով էին մաքրում, իսկ ռազմականի տեխնիկները սպիրտը խմել էին, կերոսինով էին մաքրել: Գնացինք Դալիբալթայանի մոտ, ասաց. «Խոստովանեք, որ վատ եք կրակում, դատի պիտի տալ ձեզ»: Տանկը դուրս էր եկել, «Ռապիրայով» խփել էին: Պարզվեց, որ տանկը մեր կրակելուց երկու ժամ հետո է դուրս եկել, դիտորդն ասում է՝ երկու ժամ մարդ չկար, դիրքերը թողել, փախել էին: Դե թող մտնեին, կես ժամ հետո դուրս գային՝ առանց մարտի: Իրենց նկարած քարտեզը դրեցի իրենց առջեւ: Սամսոնը՝ էսկադրիլայի հրամանատարը, եկավ, նա էլ նայեց, ասաց. «Որտեղ որ խաչն է, այնտեղ էլ խփել են»: Ապացուցեցի, որ իրենք են սխալ եղել:

Ստեփան - Հադրութում վայրէջքի տեղ ունեինք, բեռները դատարկում էինք այնտեղ: Այն ջոկատներին, որոնք փոխվում էին, վերցնում ու ետ էինք դառնում: Ղարաբաղում էլեկտրականություն չկար, սովորություն էր դարձել ամեն անգամ հարյուրից երկու հարյուր լիտր կերոսին դատարկել տակառների մեջ ու թողնել բնակիչներին: Հերթական անգամ բեռը դատարկելուց հետո պատրաստվում էի վերադառնալ, ձեռքով արեցին թե՝ իջիր: Ցած իջա: Մի մարդ ուղղաթիռի ակը գրկել էր ու պատրաստվում էր այդպես հասնել Երեւան: Չէր ընկնի, բայց հաստատ կսառչեր:

Ռացիայով տեղեկացրին, որ Հադրությունում շատ ծանր վիրավոր կա: Երեւանից թռա, հասա Հադրութի մոտ: Ոչ մի կերպ չէի կարողանում մոտենալ, ամպերը լրիվ ծածկել էին: Պտտվեցի, Խոջալուի, Ֆիզուլու կողմից էլ փորձեցի, ոչ մի կերպ հնարավոր չէր մոտենալ: Գիշերը մնացի Գորիսում՝ մտածելով, որ առավոտյան կհասցնեմ, եթե ծանր վիրավոր է, պետք անպայման վերցնեմ: Հաջորդ օրը՝ առավոտ շուտ, կարճ ճանապարհներով թռա: Իջա Հադրութի մարզադաշտում: Շարժիչները չանջատեցի եւ սպասեցի, որ վիրավորին բերեն: Մի «Վիլիս» եկավ, այժմյան պաշտպանության փոխնախարար Արթուր Աղաբեկյանը դռնից կախված գոռում է: Ուղղաթիռի շարժիչներն աշխատում էին, ոչինչ չէր լսվում: Գոռալով մոտեցավ ինձ: Ասացի.

- Լավ, այդքան գոռացիր, հիմա ասա ինչ որ ասում ես:
- Ինչու՞ ես եկել:
- Դուք եք կանչել, ասել եք ծանր վիրավոր կա:
- Դա չգիտեմ, բայց մենք քեզ վրա երկու «Ստրելա» ենք կրակել:
- Լավ է, որ դեռ կրակել չեք սովորել:

Գեղամ - Շահումյանում Ստեփանի ուղղաթիռը ընկնում է: Ուղեւ-

որների մեջ մի պառավ կին կար, որն առաջին անգամ էր թռչող ապարատ նստում: Ուղղաթիռի ետեւի դռները բացվել էին, այդ կինը շուռ էր եկել ու նստել էր առվի ջրի մեջ: Այդ պահին նրա տղան դուրս եկավ, պառավը ասաց. «Տղա՛ ջան, բա որ էս անտերը միշտ սենց ա նստում, խի՞ չես ասում, որ տակս մի ցելոֆան դնեմ»:

Ստեփան - Երեք ուղղաթիռով ես, Գեղամը, Մուշեղը գնում էինք Շահումյան: Կրասնոսելսկի մոտ պատահաբար մտանք ամպերի մեջ, ոչինչ չէինք տեսնում: Որպեսզի իջնելիս միմյանց չբախվենք, որոշեցինք, որ ես մի քիչ ձախ կթեքվեմ, Մուշեղը, որ մեջտեղում էր, ուղիղ կգնա, իսկ Գեղամը՝ աջ կողմով: Միշտ, երբ մտնում էինք ադրբեջանական տարածք, միացնում էինք այնտեղի հետ կապը: Որոշ ժամանակ անց Կիրովաբադի օդակայանի դիսպետչերը հարցրեց. «Ո՞վ է իմ շրջանակում»: Բայց ինչպե՞ս կարող էի ասել, թե ով, մենք անօրինական գնում էինք Շահումյան: Երբ շատ հարցնելով՝ զզվեցրեց, ասացի.

- Այդ ես եմ:

- Դու ո՞վ ես:

Էլ ձայն չհանեցի: Երբ երրորդ անգամ ասաց. «Դու իմ շրջանակի մեջ ես», ստիպված ասացի. «Հիմա դուրս կգամ, գլուխս մի տար»: Դուրս եկանք Կիրովաբադի կողմերը: Ադրբեջանի տարածքով երեք ուղղաթիռով պոչ պոչի կպած՝ ադրբեջանցիներին բարեւելով գնում էինք:

Գեղամ - Գյուղերից թուրքերը մեզ ձեռքերով ջերմորեն բարեւում էին:

Ստեփան - Բայց ինչքան մոտենում էինք Շահումյանին, այնքան վախենում էինք, որ մերոնք են մեզ խփելու:

Բ. - Հնարավոր չէ՞ր տարբերանշան դնել:

Գեղամ - Այդ դեպքում նրանք կխփեին: Մորուք Ռաֆոն լավ բան մտածեց. ռադիոկայան տեղադրեց:

Եթե թուրքը խփեր Շահենին, ինչու՞ էր «Ստրելայի» համարները ջնջում: Հինգ հատ կրակած խողովակ է եղել, հինգի համարն էլ ջնջված էին: Ջամբոյի հետ Ռաֆոն էլ է եղել, նրանց ուղղաթիռին էլ են խփել, սկզբում նա է դուրս եկել, երկու րոպե հետո՝ Ջամբոն: Ջամբոյին որ ասում են՝ մերոնք են խփել, գժվում է, ասում է՝ ինձ էլ կխփեին: Երեւի չեն իմացել, թե որի մեջ է Շահենը:

Բ. - Որքան ես գիտեմ, իմացել են, թե որի մեջ է:

Գեղամ - Ձայնագրությունը եղբայրներով պահել են. Ջամբոն ասում է. «Մեզ վրա նշան են բռնում»: Երեք կիլոմետր հեռավորությունից հրամանատարը չէր կարող տեսնել, որ իրենց վրա նշան են բռնել:

Ստեփան - Երկուս ու կես կիլոմետր հեռու «Ստրելաներն» են ընկել, տղաներն են գցել այդտեղ, իրենք ավելի մոտ են եղել:

Գեղամ - Գավառից թռիչքներ էինք կատարում դեպի Շահումյան, Գետաշեն, Մարտակերտ: Եղանակը փակ էր, Շահենը եկավ, ասաց, որ պիտի շտապ բեռ տեղափոխենք Շահումյան: Ասացի, որ այդ եղանակին հնարավոր չէ, բայց համոզեց, թե՝ Աստված մեզ հետ է: Գյուլիստանի վերեւում կարտոֆիլի դաշտն էր, այնտեղ էինք վայրէջք կատարում: Հետաքրքիրն այն է, որ երբ հասանք, ուղղաթիռի պտուտակից մոտ տասը մետր հեռավորությամբ ամպերը շրջանաձեւ ետ քաշվեցին: Իջանք, բեռը դատարկեցինք, թռանք, ու ամպերը կրկին փակվեցին:

Ստեփան - Վերին Հոռաթաղից գալիս էինք Երեւան: Ուղղաթիռում ինը հոգի էին: Ձմեռ էր: Չափարի վրայով անցնելիս սեւ կետեր նկատեցի, մտածեցի՝ ոչխարներ են: «ԿԱՄԱԶ»-ով գրոհայիններ էին, երեւի պատրաստվում էին Չափարի վրա հարձակվել: Սկսեցին կրակել ուղղաթիռի վրա: Հետո հաշվեցինք՝ հիսունյոթ անցք կար: Ինձնից ու մեխանիկից բացի՝ մյուսները վիրավորվել էին: Եկանք Երեւան, ուրիշ ուղղաթիռ ու ռումբեր վերցրինք: Վանցյանն ու Վալտերը մեզ հետ ուղղաթիռ նստեցին, ետ դարձանք նույն տեղը: Գնալ-գալը մոտ երկու ժամ տեւեց: Գիտեինք, որ մեզ անպայման կխփեն: Վանցյանը պառկել էր հատակին, ռումբերը բռնել էր ու կախվել էր դռնից: Վալտերն էլ նրա ոտքից էր բռնել: Նշան տվեցի, Վանցյանը ռումբերը գցեց: Ընկավ հենց այդտեղ, բայց մեր արտադրած ռումբերն էին, ոչ մեկն էլ չպայթեց: Վանցյանն ասաց. «Ոչինչ, գոնե վախեցած կգնան»:

Գեղամ - Պարզապես դրանց պայթուցիչները բացակայում էին:

Պատմում է Սուրեն Հարությունյանը: Զրույցը վարեց Բակուր Կարապետյանը. Երեւան, 28.12.2005: Մուտքագրեց Մարինա Բաղդագյուլյանը:

Ս.Հ. - Ծնվել եմ Հաթերք գյուղում 1964 թ.: Ավարտել եմ Հաթերքի միջնակարգ դպրոցը: 1982 թ. զորակոչվել եմ խորհրդային բանակ: 1985 թ. եկել եմ բանակից եւ ընդունվել Պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրատեխնիկայի ֆակուլտետը: Երեք տարի սովորելուց հետո՝ 1987թ., փոխել եմ հեռակա բաժին եւ գնացել հեռավոր հյուսիս: 1989 թ. հունվարին ես մեծ դժվարությամբ հասա Ղարաբաղ, քանի որ ճանապարհները փակել էին, տղամարդկանց չէին թողնում գնալ Ղարաբաղ: Երկու օրվա մեջ հասնում ենք Ղարաբաղ: 1989 թ. կեսերից սկսած՝ ադրբեջանցիները հայկական բնակավայրերից կով, ոչխար էին գողանում: Ասկերանում, Մարտակերտում քարկոծություններ էին սկսվել: 1989 թ. վերջին որոշեցինք ստեղծել ջոկատ: Քանի որ շարժումը շուտ էր սկսվել, գյուղում ակտիվիստ տղաներ կային, օրինակ՝ Գրիգորյան Բարմենը, որը դպրոցի աշխարհագրության ուսուցիչն էր, Աղաբաբյան Բորիսը եւ շատ ուրիշներ: Կանչեցինք չորս տղայի, ասացի. «Դուք ո՞նց եք նայում, եթե մեր գյուղում ջոկատ կազմենք»: Ես տղերքը թե՝ «Նորմալ ենք նայում»: Ասացի. «Դե, ամեն մեկդ մի ընկեր բերեք, ով կարող է կյանքը տալ ազգի համար»: Ու հավաքվեցինք տասնվեց հոգի: Ես, իմանալով խորհրդային բանակի կանոնադրությունը, ինչքան իմ ֆանտազիան թույլ տվեց, երդման պես մի բան գրեցի, որ մենք պետք է ծառայենք մեր ազգին:

1990թ. մեր գյուղը տվեց իր առաջին զոհը. անասնապահ Ասրյանն էր: Իրիկունը եկել էին եւ նրան քնած տեղը սպանել: Դրանից հետո իրավիճակն ավելի էր խորանում: Բայց մենք չէինք շարժվում ընդհանուրի հետ: Մենք արդեն գիշերները առանձին էինք հանդիպում: Այդ ընթացքում, երբ ես ինձ լուրջ ջոկատի հրամանատար էի համարում, գնացի Մարտակերտ՝ Շիրինյան Վիգենի մոտ: Նա տանը մենակ էր: Ասացի.

- Հաթերքի Սուրիկն եմ: Իմ անունը ձեզ ոչինչ չի ասի, բայց ես ունեմ տասնվեց զինված տղա, ութ հոգի էլ առանց զենքի տղաներ,

որոնք հետագայում կգինվեն:

- Ո՞նց, բայց ես Հաթերքում մոտիկ տղաներ ունեմ:

- Հա, ես գիտեմ, որ տղերքը ձեզ հետ շփվում են: Նրանք կիրթ, խելոք մարդիկ են, ես ողջունում եմ նրանց, քարոզչության համար շատ հարմար են, բայց նրանք չեն գնա սահման: Ես ասեմ իմ անելիքը, ձեզանից ոչինչ չեմ ուզում:

Նա բավական լրջացավ, երբ ասացի, որ իրենից ոչինչ չեմ ուզում, ուղղակի տեղյակ եմ պահում, որ էսպիսի ջոկատ կա, եթե պետք լինի, ես պատրաստ եմ համագործակցել: Ասաց՝ բարի, ու մենք բաժանվեցինք: Դրանից հետո մենք սկսեցինք մտերմանալ:

Առաջին հանդիպումներից մեկը Վագիֆ Գալստյանի հետ է եղել: Ամենապարզ մարդկանցից մեկը Վագիֆն էր: Զենք առնելու համար փող էր պետք, նա իմ աչքի առաջ իրենց տնից քսան հազար ռուբլի հանեց: 1990 թիվն էր: Մենք անվտանգության ծառայության միջոցով ռուսական բանակից զենքեր գնեցինք: Համենայն դեպս, Վագիֆը իր հնարավորության չափով օգնել է: Եվ ինքը քանի անգամ ասել է. «Տղանե՛ր, եթե ձեզանից մեկը կարող է լինել Մարտակերտի հրամանատարը, ես կարող եմ զիջել»: Լեոնիդին էլ պարզ ասել է. «Լեոնի՛դ, եթե ուզում ես, արի դու ղեկավարիր»: Լեոնիդը պատասխանել է. «Չէ, նրանք բոլորը խմում, ծխում են, ես նրանց հետ չեմ կարող: Ինձ մոտ պիտի լինեն չխմող ու չծխող տղաներ»: Ուզում եմ ասել՝ Վագիֆն իր հնարավորության մաքսիմումն արել է: Մարդու հնարավորությունը սահմանափակ է:

Բ. - Այսինքն՝ նա զգում էր, որ իր մակարդակն այնքան էլ չի բավականացնում շրջանի ընդհանուր հրամանատար լինելու համար:

Ս.Հ. - Ինչքան խորանում էր, ասում էր. «Տղանե՛ր, ես զգում եմ, որ դժվարանում եմ, պատրաստ եմ իմ տեղը զիջել, ես կմնամ մի ուրիշ պաշտոնում»: Շատ դեպքեր են եղել: Իմերեթ Գյարավանդի գրավմանն է մասնակցել: Մարաղայից ադրբեջանցիներին երկրորդ անգամ դուրս հանելիս նա մեզ հետ եկել է: Ասել եմ. «Դու մի՛ արի, դու հրամանատար ես, ես չեմ կարող եւ քեզ պահել, եւ կռիվ անել»: Բայց նա մինչեւ վերջ եկավ մեզ հետ: Վիգենն էլ հրաշք տղա էր: Նա ուներ բոլորիս միավորելու ունակությունը: Մի ժամանակ ես շատ ինքնավստահ էի, շատ գործողություններ մենակ էի նախաձեռնում եւ իրագործում: Մարդիկ տեսնում էին, եւ նրանց թվում էր, թե ես ինչ-որ ուժի տեր եմ: Բայց իրականում ես ուզել եմ ցույց տալ, որ այդ գործը կարելի է անել, եւ ես էլ ձեզ նման մեկն եմ: Գնալով ուժեղացանք, շատացանք, դարձանք քառասուն հոգանոց մարտունակ ջոկատ: 1991 թ. ապրիլից Հայաստանից եկան Երկրապահ ջոկատներ: Առաջինն իր ջոկատով եկավ Եղոյան Ռուբիկը Հոկտեմբերյանից: Դրանից հետո եկավ Հրազդանի

Սասունն իր ջոկատով՝ Աշտարակի եւ Ստեփանավանի տղերքի հետ, եկավ Սեւանի Սուրիկն իր տղաների հետ, Կոմանդոսը՝ Արկադի Տեր-Թադեւոսյանը եկավ «Սասունցի Դավիթ» ջոկատից երեք տղաների հետ: Հովհաննիսյան Ցուրան, որը հրաշք տղա էր, ֆիզիկոս, Կոմանդոսի հետ եկավ, բայց այդ ժամանակ նրանք անջատ-անջատ էին, իրար հետ լեզու չէին գտնում: Ես էի նրանց հացով ապահովում եւ ոչ մեկին չէի թողնում անտառ մտնել: Գյուղի հյուսիսային մասն էինք պահում: Ուզեցինք նաեւ կողքի գյուղի մուտքերի վրա գործողություններ կատարել: Այդ ժամանակ Գրիգորյան Մանվելը ուղղաթիռով եկավ: Նրա հետ քսանյոթ հոգի կային: Նա անմիջապես իջավ Զագլիկի տակ, որտեղից ես սկսում եմ գործողությունը: Ասացի.

- Ընկե՛ր, դու նոր ես եկել, գնա հանգստացիր, պատրաստվիր վաղվա գործողություններին:

- Չէ՛, մենք չենք եկել հանգստանալու: Բոլորս էլ պատրաստ ենք գալ:

- Ինչքա՞ն ինքնաշեն ունեք, ինչքա՞ն՝ մարտական:

- Կեսը համարյա:

- Կեսը գոնե թող մնան, մնացածը թող գնան, որովհետեւ մեր դիմաց ռուսական գումարտակ է կանգնած, շատ հնարավոր է՝ նրանց հետ ընդհարվենք:

Ես հենց դպրոցի վրա էի գնում: Ինձ հետ եկավ: Ճտանոցն անցանք, պիտի հասնեինք դպրոցի մոտ, վերեւից՝ Կոմանդոսի կողմից, մարդ եկավ, ասաց, որ առաջ չգնանք, ռուսները Ստեփանակերտից շարժվում են դեպի Ումուտլու, կարող է՝ ուժեղացնում են, խնդիրներ կունենանք: Մի կերպ ետ եկանք: Բոլորն էլ՝ Հրազդանի Սասունը, Սեւանի Սուրիկը, Եղոյան Ռուբիկի ջոկատի տղաները, Ավոն, որը մեկ ու իննսուն հասակ ուներ, հաղթանդամ տղա էր, Հրաչը գյառգյառեցի, Կամոն, Շիրազը Աշտարակից, հրաշալի տղաներ էին: Մարտակերտի կռիվներում «Արաբո» ջոկատից քսանյոթ հոգի զոհվեցին, նրանցից մեկն էլ Ավոն էր: Ճիշտ է, իրար հետ մի քիչ դժվար էին լեզու գտնում, բայց այդ մարդիկ զենքը ձեռքին եկել էին իրենց պարտքը կատարելու:

Պայմանավորվածության համաձայն՝ ամեն ամիս բոլոր սովխոզներից երկու հարյուր լիտր բենզինով, սոլյարկայով օգնում էին, որպեսզի կարողանանք շարժվել: Մի անգամ էլ գնալիս ռուսները մեզ սկսեցին հետապնդել: Նրանցից անցանք, եկանք մեր գյուղի տակ կանգնեցինք, դուրս եկանք, որ «ԿԱՄԱԶ»-ով գանք: Հաթերքից երկու կիլոմետր հեռու էինք: «ԿԱՄԱԶ» բարձրանալը հարմար չէր: Սկզբում ավտոմատը գցեցի շարժիչի վրա, որ հետո ես բարձրանամ, մեկ էլ վարորդը՝ Ժորիկը, ասաց՝ վա՛յ... ու մի երկու բառ ասաց: Դիմացս տեսա՝ ՕՄՕՆ-ականները կանգնած. մեկը փողն է ինձ ուղղում, մյուսը՝ լարում ավտոմատը: Մինչ այդ, երբ նրանք ռուսների հետ մեր գյուղ են մտել, մարդկանց բռնել տարել են Շուշի: Մեկն էլ հորեղբայրս է եղել, ազատվելուց հետո ասաց. «Եղբո՛ր տղա, թող փախիր էստեղից, այնտեղ գիտեն, որ դու ես գյուղի հրամանատարը, գիտեն, թե քանի երեխա ունես, որտեղ ես ապրում, թող փախիր, քեզ բռնելու են: Քանի անգամ գյուղ մտնեն, քեզ համար են գալու, որովհետեւ քեզ համար արդեն ասել են»: Ես էլ ասացի. «Հորեղբա՛յր, տաք-տաք ես, նոր ես դուրս եկել, սա մեր տարածքն է, ոչ մի բան էլ չի լինի: Հանգիստ եղիր»: Շուշիի բերդից դուրս եկածներից յուրաքանչյուրին մեկ-երկու անասուն էի տալիս: Ես անասունների մեծ քանակ ունեի: Հարսանիքի, քեֆ-ուրախության եւ նման դեպքերում տալիս էի: Ես երբեք չեմ պատմել այս ամենը, գրել եմ իմ հուշերում եւ պատմել եմ միայն մեր գյուղացի Աղանջանյանին, որը գրում է մեր գյուղի պատմությունը: Ճիշտ թե սխալ՝ նա տեղյակ է այդ ամեն ինչից: Ուրեմն՝ «ԿԱՄԱԶ»-ի դուռը բաց էր, ես էլ պատկերարացնում էի, որ եթե բռնվեցի, ինձ ինչ պիտի անեն: Մի մեքենա ռուսական ՕՄՕՆ-ականներ էին կանգնած: Մտածեցի. «Թող հետեւիցս խփեն, ինչ լինում է, լինի, կմեռնեմ՝ մարդավարի մեռնեմ, միայն թե չբռնեն»: Փախա «ԿԱՄԱԶ»-ի հետեւը: Վազեցի ցաքի պատնեշի ուղղությամբ, ու նրանք սկսեցին կրակել: Ես կրակոցի վրա նրանց կողմը վազեցի: Նրանք չէին տեսնում ինձ, այդտեղ փոս էր, ուստի այլ ուղղությամբ էին կրակում: Վազեցի մի հարյուր մետր ու հայտնվեցի դաշտի մեջ: Ոտքս մոշի թփին է կպնում, ու ես ընկնում եմ: Նրանց թվաց՝ ինձ խփեցին: Գոռում են՝ կպա՛վ, կպավ... Քսանհինգ-երեսուն մետր էր մնացել՝ խանդակին հասնեմ, որը ցամաքած առու էր: Մտածում եմ, հաշվում, որ ավտոմատը արդեն ցած են դրել, մինչեւ բարձրացնեն՝ երեք վայրկյան, նշան բռնեն՝ եւս երեք վայրկյան, վեց վայրկյան ժամանակ ունեմ: Որոշեցի՝ ավելի լավ է վազեմ, որովհետեւ նրանք որոշում էին՝ գա՞լ, թե՞ ոչ: Թե ինչ ուժ գտնվեց, վեր կացա, մեկ- երկու քայլ արեցի ու ինձ գցեցի առվի մեջ: Կրակեցին, չկպավ, երեւի Աստված չի կամեցել: Նրանց թվում էր՝ ես փախչում եմ: Ես չէի փախչում, կանգնած էի: Երբ նրանք տեսնում են, որ կողքի գյուղից՝ Զարդախաչից մարդիկ են իջնում, նստում են մեքենան, վարորդին՝ Պետրոսյան Ժորային, տանում են Ումուտլու: Մինչեւ ես այդտեղից դուրս եմ գալիս, գյուղում արդեն գիտեին, թե ինչ է տեղի ունեցել: Նրանք չգիտեին, որ ես չեմ բռնվել: Կինս պատմում է, որ ուզել է դուրս գալ գյուղամեջ, տեսնի՝ ինչ կա, բոլորը նրանից փախել են: Ես նրան ասել էի, որ եթե ես մեռնեմ էլ, նա գյուղամեջ չպիտի դուրս գա: Տղամարդը պիտի մեռնի, բայց կինը իրեն պիտի պահի որպես կին: Ասել եմ. «Մեռած տեղս էլ շուռ կգամ»: Կինս պատմում է, որ վախենում էր, բայց եւ ուզում էր գոնե իր հոր տուն գնալ: Ասել էին, որ ինձ էլ են տարել: Մի ժամ անցել է, մինչեւ ես ոտքով

պտտվել եմ գյուղի շուրջը, հասել գյուղ: Գյուղից տեսնում են, որ ես գալիս եմ: Ասում եմ. «Ոչինչ, Ժորիկին տարել են, հիմա կփակենք ճանապարհը, ռուսներին կգինաթափենք, կփոխանակենք նրանց հետ»: Հենց այդ ընթացքում մի զրահամեքենա է գալիս: Գալիս, շորերս փոխում եմ: Հայաստանից եկած ջոկատի տղերքը անտառում էին: Գնում եմ նրանցից օգնություն վերցնելու: Նրանց ասում եմ, որ բեռնատար մեքենաներով փակեն ճանապարհը: Առաջինը զրահամեքենան է գալիս: Մեր գյուղից բերած մոտոցիկլետի վրա մի սպայի ենք նստեցնում, ասում ենք. «Գնա, ասա՝ Ժորիկին ուրիշ տեղ չտանեն կամ էլ չսպանեն: Եթե սպանեն, բոլոր պատանդ զինվորներին կխփենք»: Նստում է մոտոցիկլետն ու գնում: Ես էլ բարձրանում եմ գյուղի անտառը:

Բ. - Գյուղում զինվորներ կայի՞ն:

Ս.Հ. - Չէ, մեր գյուղում զինվորներ չկային, ուղղակի մեր գյուղով անցնում էին Ումուտլուից Գյարավանդ, ապա Քյալբաջար: Գալիս եմ, մեկն ասում է. «Ինչո՞ւ ես ավտոմատդ տվել»: Ասացի. «Գալիս եք՝ եկեք, չեք գալիս՝ դուք գիտեք, ես գնում եմ»: Մեր «ԲԵՏԵԷՌ»-ում մի քանի ինքնաշեն նռնականետ կար: Ժայռի տակ կրակում եմ, որպեսզի ստուգեմ՝ կրակո՞ւմ է, թե չէ: Սրանց թվում է, թե մենք գործողություն ենք սկսում, զգուշանում են:

Մեր գյուղի բոլոր մարդիկ ակտիվ գործել են: Առավել եւս Ժորիկի կինը՝ Սիլվան, որ երկու չքնաղ երեխա ունի: Սկզբում բարձրացել ենք զրահամեքենայի վրա: Ութ հոգի էին, շատ ուժեղ տղերք էին երեւում: Երեք հոգու՝ մեծերին, ընտրում ենք եւ ուղարկում իբր զանգելու: Հինգ հոգու հեշտ էր գինաթափել: Մարտիրոսյան Մելսիկն ասաց. «Տանում ես սրանց, ինչ ուզում է լինի, պահում ես, որպեսզի հանկարծ դուրս չգան: Հետո ուրիշ տեղով տար, պտտեցրու, մինչեւ մենք այդ հարցերը կլուծենք»: Զրահամեքենայով բարձրանում ենք մեր գյուղի ջոկատի տղաների հետ: Կանգնեցնում եմ, ասում. «Տեսնո՞ւմ ես՝ տասը հոգի կանգնած, տասն էլ նռնականետերն ուղղած ձեզ վրա, իմաստ չունի շարժվել, դուք լսեք, ձեզ ոչ մի բան չի լինի»: Համոզելով բարձրացել եմ զրահամեքենայի վրա: Գրիգորյան Արմանը շատ լավ ռուսերեն էր խոսում, նրանց հետ մտերմացավ: Զենքերը վերցրինք, հանեցինք: Այդ պահին մի ուրիշ զրահամեքենա եկավ եւ ՕՄՕՆ-ականներով լիքը մի մեքենա: Նրանք գալիս էին, որ այդ զրահամեքենան հանկարծ չտանենք: Մենք փորձում ենք զրահամեքենան քշել, չի ստացվում, գալիս հասնում են: Մյուս «ԲԵՏԵԷՌ»-ը նորից գնում է հարեւան գյուղը՝ տեղեկացնելու, որ արդեն ութ հոգի պատանդ են, եւ զենքերն էլ մեզ մոտ են: Գյուղում պտտվեցի, բոլորին ասացի, որ գան մեր տուն, որոշենք, թե ինչ ենք անելու: Այնքան սրված էր վիճակը, որ ծերերից Իսկանդարյան Արշավիրը, որը հայրենական պատերազմի մասնակից է, ասաց. «Սուրի՛կ, այսպես չի լինի, հարկավոր է մի բան անել»: Ասացի. «Տես ինչ եմ ասում. հիմա մենք հինգ հոգի ենք, ամեն մեկիս առջեւից երկու հոգի են գնում, մեզ առնվազն տասը մարդ է պետք, որպեսզի կարողանանք ավտոմատներով մոտենալ մեքենային: Ժողովրդին ասա, որ մոտավորապես հարյուր մետրից ոչ մեկը մոտիկ չգա, կարող է կրակոց լինի՝ ձեզ էլ կպնի»: Հիմա ես մեքենայի դիմացից եմ մոտենում, Արամը՝ հետեւի կողմից, Դուշման Աշոտն էլ էր մեզ հետ, նա, դաշնակցականների տված զենքը ձեռքին, տարբեր կռիվների մասնակցել է, բայց գյուղում քիչ էր լինում: Դիմեցի ռուս զինվորներին. «Մի՛ շարժվեք, երեխե՛ք, սա ձեր կռիվը չէ, մի՛ շարժվեք, դուք մինչեւ մտածեք՝ ես ձեզ կխփեմ»: Հետեւից Արամը կրակահերթ է բացում ու ռուսերենով ասում՝ բարեկամներ, ու լավ տոնով է ասում: Նա հատուկ ջոկատում էր ծառայել: Ասաց, որ չշարժվեն: Դե, երեւի խելոք գտնվեցին նրանք: Մեր տղերքին ասում եմ՝ բարձրացե՛ք: Ավանեսյան Կառլենը բարձրանում է: Դե, Կառլենը խոպանչի տղա է, ռուսերեն խոսում է: Ու չորս կողմից բարձրանում են, սկսում ավտոմատները հավաքել: Եղբայրս նույնիսկ կոնտուզիա ստացավ. վազելով գալիս է, որ զենքը վերցնի, գլուխը երկաթին է խփում: Զինաթափեցինք եւ տեղափոխեցինք անտառ: Անտառում զինվորներին հանձնում եմ Մանվել Գրիգորյանին: Այն կողմից էլ Հրազդանի Սասունն է իջնում: «ԲԵՏԵԷՌ»-ը տալիս եմ նրանց, նրանք են տանում: Դեռ Սասունի աչքն էլ այդտեղ ճղվում է: Մարդիկ անտառում գետնափոր տնակներ էին սարքել եւ ամռանը այնտեղ էին ապրում: Ամենալավը Մանվելինն էր: Ասեմ, որ ես ոչ մի կապ չունեմ Մանվելի հետ, բայց նրա կազմակերպվածությունը եւ կարգապահությունը եղել են շատ բարձր: Նա լուրջ է վերաբերվել բոլոր հարցերին: Տղաները բոլորն էլ լուրջ են եղել, բայց դե խմել են, ծխել, թափել, իսկ նա կոկիկ էր:

Ետ եմ գալիս գյուղ, երեք պատանդ էլ հետս բերում եմ: Նրանք հեռախոսով կապվում են Ումուտլուի հետ, հայտնում, որ իրենց պատանդ են վերցրել, եթե Ժորիկին բաց թողնեն, երեքին էլ բաց կթողնենք: Յոթ զրահամեքենա մտնում են գյուղ: Ինձ ասում են, որ Ստեփանակերտից ու Միրբաշիր քաղաքից շարժվում է մեծ քանակությամբ զրահատեխնիկա: Երբ արդեն գյուղ պետք է մտնեին, ես այդ երեք հոգուն ուղարկեցի անտառ: Այդ ժամանակ նրանց մոտ ռացիա կար: Տասնյոթի Արթուրը, որը կապավոր էր, կապ է հաստատում Սերգեյի հետ, նրան էլ «յոթ երկրի թշնամի» էինք ասում: Կարողանում են կապվել Երեւանի հետ, պատմում են իրավիճակը: Սպասում ենք, որ հաջորդ օրը Հայաստանից պետք է գան: Հայաստանից գալիս է Վազգեն Սարգսյանը: Այդ օրերին եկան Գերագույն խորհրդի պատգամավոր Սմիրնովը, այլ պատգամավորներ Մոսկվետից, «Կանանց միության

խորհրդից» մի կին: Այդ պահին ռուսական հատուկ ջոկատն է շրջապատում նրանց: Վազգեն Սարգսյանն ասաց. «Սուրի՛կ, երկու հատ ատրճանակ եւ մառզեր գցել եմ մոշի թփի տակ, որովհետեւ հատուկ ջոկատը շրջապատեց, մտածեցի, որ կարող է մի առիթ ման գան, գործ սարքեն»: Այնպես էր, որ չնայած հատուկ ջոկատը շրջապատել էր, բայց մերոնք մեջներով անցնում էին: Կանչեցի տղերքին, ասացի. «Գնացեք մոշի թփի տակ պպզեք, այնտեղ երկու ատրճանակ կա, վերցրեք, տարեք մեր տուն»: Այդ պահին իջավ գեներալ Ստարիկովը: Ստարիկովն ու Սարգսյանը հեռախոսով իրար գիտեին: Ստարիկովին ասում եմ.

- Իսկ դուք գիտե՞ք, որ երեկ ձեր տղաները մի երիտասարդի են խփել:

- Ո՞նց, մահացե՞լ է:

- Դուք այստեղ գալիս նրա թաղումը չտեսա՞ք:

- Տեսա, նրա՞ թաղումն էր:

- Հա՛:

Բայց դա ճիշտ չէր: Մի պառավ էր մահացել, նրան էին թաղում: Մեռնողն էլ իբր ես եմ, ինձ նկատի ունեի: Ասում եմ, որ այդ տղային խփել են, մահացել է: Դրա համար էլ, եթե արագ չլուծվեն այս հարցերը, պատանդներին կարող է կոտորեն, որովհետեւ սարի ժողովուրդ են, այստեղ օրենքներն այնքան էլ չեն կիրառվում: Սարգսյանն ասաց. «Լա՛վ, Սուրի՛կ, հանգստացիր, սա երեւի մեր կողմից է եկել խոսելու, մի որպես, տեսնենք, թե ինչ է ասում: Այնքանը, ինչ ասել ես, հերիք է»: Սկսվում են բանակցությունները: Վիդեոկադրեր կան, եթե պետք է, կարող են տրամադրել: Այդ ժամանակ նկարահանել են Էդոն եւ մի ուրիշ տղա: Այդպես փուլ առ փուլ սկսում ենք փոխանակել: Ժորիկիս ետ ենք բերում, ուղարկում ենք Երեւան, բուժվում ու ետ է գալիս: Ասում էր. «Ես չեմ կարող նստել»: Մի երիկամը չուներ, մյուսն էլ լավ չէր աշխատում: Ուր գնում էինք, ասում էր. «Չէ, ես էլ պիտի գամ»:

Զինվորներին գինաթափելուց հետո որոշում ենք Իմերեթ Գյարավանդը գրավել, քանի որ Չափարի վիճակը լուրջ էր: Չափարցիք ասում էին, որ այդպես այլեւս հնարավոր չէ ապրել, ՕՄՕՆ-ականները, ռուսները լիքն են, իսկ գերավանդցիք գալիս, անասուններ են գողանում... Երկու անգամ փորձել ենք: Ես մեր կողմից էի գնում: Ամբողջ մեր ենթաշրջանի ջոկատները իրար հետ մոտիկ էին. Մորուք Ռաֆոն էր, Վաղուհասի ջոկատն էր... Բոլոր գյուղերն իրենց ջոկատներով մասնակցեցին: Երկու անգամ չստացվեց: Երրորդ անգամ ասացի. «Կլինի՞, ես ձեր մոտից փորձեմ»: Չափարի հրամանատարը Գրիգորյան Հովիկն էր: Գալիս եմ Չափար, տեսնում՝ տներն իրար կպած, ասում եմ. «Այստեղ խնդիր չկա: Հրամանատարներին բոլորին հավաքեք»: Սեպ-

տեմբեր ամիսն էր: Ասացի. «Վեցն անց կես երեք «Ալազան» խփում է այս տարածքի վրա, երեքից հետո «Ալազանը» խփում է գյուղի կենտրոնի վրա»: Նստեցինք, տեղի տղաների հետ որոշեցինք: Չափարի երիտասարդները իրենց լավ դրսեւորեցին: Բաժանվեցինք խմբերի: Յուրաքանչյուրս իր դիրքն ուներ: «Ալազանը» երկու արկ կրակում է ու լռվում, մեջը վառվում է, չի աշխատում: Ականանետը երկու արկ խփում է, էլ չի կարողանում աշխատել: Ես իմ տղաների կեսին պահում եմ որպես կրակային օգնություն, կեսին վերցնում եմ ինձ հետ, եւ Չափարի տղերքի հետ մտնում ենք: Տեսնում էի, որ թուրքերն իրենց տան կտուրների վրա հրացան են դնում: Ես նրանց տների մոտ էի արդեն, ոստիկանները ավտոմատներով էին: Մի տուն մտանք, թուրքի տուն էր, բայց մարդ չէր ապրում: Մենք չգիտեինք, որ այդտեղ ոչ ոք չկա: Շրջապատեցինք: Առաջինը Հովիկն ու Գրիգորյան Դավիթը բարձրացան: Առաջ շարժվեցինք: Առջեւից գնում եմ ես, հետեւից՝ Առուշանյան Հրայրը, աջ կողմից՝ Ավանեսյան Գեւան, իսկ հետեւից՝ մյուս տղաները: Առաջ գնացի ու նռնակը գցեցի այնտեղ, որի վրա կասկածում էի: Արել եմ այնքան, ինչքան իմ երեւակայությունը թույլ է տվել այդ ժամանակ: Դա իմ առաջին լուրջ գործն էր, առաջին անգամ գյուղ գրավելը: Առաջին տունը գցեցինք, մտանք, այդտեղ երկու թուրք սպանվեց: Ժորիկը մեկին խփել էր, եկավ, թռվռում էր:

- Ա՛յ տղա, պպզի՛ր,- ասում եմ,- ի՞նչ ես պարում:

- Խփել եմ:

- Լավ ես արել, այս կողմ արի:

Ուրախությունից շոկի մեջ էր: Հենց երրորդ տունը վառեցինք, զրահամեքենաները դուրս եկան, սկսեցին մեզ վրա կրակել: Բլուր կար: Որոշեցինք այդտեղից իջնել, մյուս կողմից մտնել: Եկանք, տեսնեմ՝ ներքեւից դեռ չեն մտել: Ռուսների կրակելու ժամանակ Չափարում մեր երկու գոմերը վառվել էին: Ասում եմ.

- Ինչո՞ւ չեք մտել:

- Թուրքերը մեջն են:

«Փեթակ» առեւտրի կենտրոնի տնօրենին՝ Գրիգորյան Վարուժանին, ասացի.

- Դու ինձ հետ արի:

- Հա, ես քեզ հետ կգամ:

Վարուժի հանդեպ կասկածներ կային, մտածեցի՝ ոչինչ Հովիկի հորեղբոր տղան է:

Գնացինք: Այդ մասից մտանք, առաջին տան վրա նռնակը գցեցի, եկանք այն կողմ: Պատուհանին ծխախոտի տերեւներ էին փռած, չգիտեինք, որ այդտեղ պատուհան կա: Ասացի. «Նախ պպզեք: Ծուխ անող եմ գցել»: Պպզեցինք, ամբողջ ապակիները թափվեցին մեզ վրա:

Բոլորս այդտեղ կկոտորվեինք: Նռնակը գցելուց հետո մտանք, տեսնենք՝ կողքի սենյակից մեկը կրակը հանգցրեց ու մտավ մյուս սենյակը: Մեր սոլյարկան վերջացել էր: Վարուժին ասացի.

- Կարո՞ղ ես գնալ, մի բաք էլ բերել:

- Հիմա գնամ բերեմ:

Վարուժը գնում է, բերում: Մտնում ենք, տեսնում՝ փախան դրանք: Երեւանի գործարանում պատրաստած երկու նռնակ չէին պայթել: Բոլորս դուրս եկանք, երկու որպեսից պայթեց: Այդտեղից դուրս եկանք, ներքեւից դեռ չէին մտել: Գնացի, ասացի. «Արա՛, չեք ամաչո՞ւմ, ինչո՞ւ չեք մտել»: Այդ ժամանակ Չափարի, Հոռաթաղի, Վաղուհասի տղաները իրար հետ մտնում են: Այդ օրը այդքանով վերջացրինք: Արդեն գիշեր էր, զրահամեքենան մեզ վրա կրակում էր: Երկրորդ օրը նույն մարտավարությամբ մտնում ենք, ամբողջ թաղամասը գրավում: Գետավանում Դուզուման Միշա կար, նրա տղան՝ Թամրազյան Հենրիկը, Գետավանի հրամանատարն էր: Նրա անունը թուրք էր: Կինը մինչեւ հիմա էլ մեզ հետ կապ ունի, ապրում է Գետավանում, թուրք աղջիկ է: Այդ թաղամասը վառելիս նրան ասացի. «Արի՛, քո ձեռքով այդ տունը վառիր»: Գալիս է, իր ձեռքով վառում: Տան հետեւը թուրքերն էին, դիմացը՝ մենք: Այդ ընթացքում մեզ հետ էին Հովհաննիսյան Յուրան եւ Գրիգորը՝ իրենց տղաների հետ: Նրանք Կոմանդոսին չլսեցին, եկան ինձ հետ: Նույնիսկ փամփուշտ էինք ուզել, ասել էին՝ չունենք:

Բ. - Ինչպիսի՞ն էր Կոմանդոսի վերաբերմունքը այդ գործողության հանդեպ:

Ս.Հ. - Ասում էր. «Ես այդպիսի հրաման չունեմ, ես չեմ կարող թույլ տալ»: Ասում էի. «Ա՛յ մարդ, էս գյուղացիք չեն կարողանում ապրել: Լավ, եթե հրաման չունեք, դուք մի խառնվեք, ես կանեմ»: Հովհաննիսյան Յուրան ասաց. «Ես չեմ կարող սպասել, ես գալիս եմ, Սուրի՛կ»: Յուրան գալիս է, նրանց ասում եմ. «Տղանե՛ր, եկեք ես ձեզ թողնեմ բլրի վրա՝ Չափարի տակ, դուք չմտնեք: Ձեզ մի բան կլինի, ես ինձ վատ կզգամ: Դուք որ այստեղ ինտենսիվ կրակ բացեք, կրակը ձեզ վրա կվերցնեք, մենք այն կողմից կմտնենք: Դա մի էլեմենտ է, որն ինձ պետք է»: Այդ ընթացքում նրանց տղաներից մեկը սխալմամբ ետ է թեքում զենքը, ու երկու գնդակ Յուրայի ոտքին են կպնում: Արդեն գյուղը գրավել էինք, երբ ասացին, որ Յուրան վիրավորվել է: Ես ինձ շատ վատ զգացի, հրամանատար տղա էր: Այդ օրվա կռիվը վերջացած էր: Որոշեցինք հաջորդ օրը ավելի մեծ մասշտաբով հարձակվել: Յուրային վերցնում բերում եմ մեր գյուղի հիվանդանոցը, որն ամենամեծն էր: Ոչ մի տեղ քաղաքի զուգարան չկար: Այդ տղային պետք է նստեցնեինք զուգարան: Հորեղբայրս ուներ: Տարանք այնտեղ, վիրակապ արեցինք: Լավ էր, Աստծուց էր, երկու փամփուշտն էլ փափուկ մսով

էին անցել: Մի քանի ժամ չանցած՝ ասացին, որ Չափարում հինգ հոգու խփել են: Թուրքերը ռուսների օգնությամբ անցնում են Չափար գյուղի հետեւը: Այնտեղ մնացած մեր տղերքը՝ Հոռաթաղից, Հարությունագոմերից, մտածել են՝ մութ է, ի՞նչ պետք է լինի: Մերոնք մի քիչ ետ են գնում: Թուրքերը ռուսների ուղեկցությամբ անցնում են, յոթ հոգու խփում: Այդ որ լսում եմ, միանգամից գնում եմ Զարդախաչի հետեւով, որպեսզի կրակը ինձ վրա վերցնեմ, եւ նրանք ետ դառնան: Կրակը վերցնում եմ ինձ վրա, նրանք ետ են դառնում, նորից գալիս եմ Չափար, տեսնում եմ այդ զոհերին: Ասում են, որ մի տեղ էլ զոհված մարդ կա: Գնում եմ, շրջապատում, այդ զոհին հանում եմ: Ասում եմ. «Ուրեմն՝ փրթում ենք գյուղացիներին»: Ու արդեն գյուղացիք փախչում են: Ասացի. «Թող փախչեն, փախչողների վրա մի՛ կրակեք, ինչքան փախչեն, այնքան քիչ կկռվեն»: Վագիֆն էր՝ Մարտակերտի բոլոր տղաների հետ միասին, Մարաղայի հրամանատար Ռոման էր իր ընկերների հետ, Վայքի Բալուջեցի Գարիկն էլ էր մասնակցում, նրան Հաչաբաշ Գարիկ էինք ասում, Մորուք Ռաֆոյի հետ եկավ, Նավթալյան Արմենն ու Վլադիմիրն էին՝ իրենց ջոկատներով: Բոլորը գալիս են, պայմանավորվում ենք: Ասում եմ. «Ես կենտրոնով գնում եմ դեպի դպրոց, ներքեւից գալիս է Նավթալյան Արմենի ջոկատը, Ռոմայի տղերքը»: Ռոմային ասացի. «Եթե կարելի է, դու հետեւից կգաս, որովհետեւ այնտեղ պետք է արագ շարժվել»: Նա ծանրաքաշ տղա էր, հրամանատար էր: Վագիֆին էլ ասում եմ. «Դու հրամանատար ես, նստիր Չափարում: Ես ինչ ասում եմ՝ լսեք, ամեն ինչ նորմալ կլինի»: Այդ ժամանակ ռացիա չկար մեր ձեռքին: Որոշել էինք՝ հենց հասնենք, ուղիղ ճանապարհի վերեւը կրակենք՝ որպես ազդանշան, որ մենք ենք: Մի ժամ անցած՝ երեք հատ կրակեցինք, հետո՝ հինգ-վեց հատ լուսածրող փամփուշտ: Միշտ մի փամփշտակալ դրանցից էինք պահում իրար ազդանշան տալու համար: Նայում եմ՝ աջ կողմից կրակ չկա, բայց արդեն մյուս թաղն եմ մտել: Ութ ՕՄՕՆ-ական տղաներին արնաթաթախ շորերով քարշ տալով տարել են: Մարդ չէր մնացել, բայց երեւում էր, թե ինչ է կատարվել այնտեղ: Անցել էինք մյուս թաղը, տները վառելով գնում էինք: Նավթալյան Արմենն ասում է. «Ա՛յ տղա, Սուրիկն ասել է, որ պետք է այս ժամին մտնեք, ինչո՞ւ չեք մտնում: Այդ տղան կիմանա, թե աջ կողմից մենք ենք: Կշրջափակեն, կխփեն տղային»: Հետո պատմեց. «Մի ժամ անցել է, չեմ կարողանում ուղարկել»: Ասել է. «Չափարցի տվեք»: Չափարցուն վերցնում է, ասում. «Ես գնացի, ով ուզում է, թող հետեւիցս գա»: Մենք արդեն մոտենում էինք դպրոցին, նրանք մտնում են, լուսածրող գնդակով կրակում են: Ես հասկանում եմ, որ աջ կողմից նրանք հասել են այդ տարածքը: Արդեն հանգստացա: Վլադիմիրը պետք է գյուղի վերեւը պահեր, որ հանկարծ Աղդաբանից օգնու-

թյան չգային: Օպերացիան այդպես վերջացավ: Այդ ընթացքում համարյա բոլոր տներում թուրքերը թեյ էին խմում: Տղաները բոլորն էլ ոգեւորված էին: Մտանք մի տուն, այնտեղ հրացան կար: Ասացի. «Ձենքից բացի՝ ուրիշ բան չեք վերցնում»: Մեր տղաներից մեկի ձեռքը կպնում է մահճակալին, ձեռքի ինքնաշեն հայկական ավտոմատը կրակում է ուղիղ Մելսիկի սրտին: Մելսիկը չոքում է, չի ասում՝ վայ, մամա, ասում է՝ վա՛յ, Սուրի՛կ, մեռա: Տեսանք, որ մահամերձ է, թուրքերը տրակտոր ունեին, շարժիչը գործի գցեցինք, այդ տրակտորով հանեցինք: Այդտեղ երկու հոգու մենք կորցրինք: Հետո կանչեցին, գտանք: Եթե Մելսիկը չմահանար, կարող է մեզ բոլորիս կոտորեին: Չորս զրահամեքենա թաքցրել էին դպրոցի հետեւում, ոչ մի տեղից չէին երեւում: Մենք էլ գիտեինք, թե այդտեղ ռուսներ չկան: Առավոտյան հեռախոսով ասացին, որ Հատուկ ջոկատը բարձրանում է դեպի մեր կողմը: Վլադիմիրը վերեւից իջնում է, ասում. «Մի քանի հոգու որ ճամփին եք թողել, կոտորել, ես էլ պիտի գյուղ մտնեմ»: Ասում եմ. «Օրը ցերեկով մի քիչ հարմար չէ», թե. «Չէ, դրանց հերն եմ անիծել»: Մտնում է, մի քանի տուն վառելուց հետո զգուշացնում ենք, որ Հատուկ ջոկատը բարձրանում է: Թողնում են, ետ դառնալիս չեն հասցնում, շրջադարձի վրա հանդիպում են Հատուկ ջոկատին: Խփում են «Ուրալին», փախչում: Ոչ մի բան չի լինում: Բոլորս փրկված էինք: Հատուկ ջոկատն էլ փրփրած էր, նրանց թվում էր, թե իրենց վրա ենք գնում: Հատուկ ջոկատը եկավ, շրջանի առաջին քարտուղարը՝ Վահան Գաբրիելյանը եկավ: Շորերս փոխեցի, կոկիկ հագնվեցի, այն ժամանակ սիրուն, համակրելի, մազերս էլ թափված չէին, ջահել, նորավարտ երիտասարդ էի: Ոչ ոք չէր պատկերացնի, որ ես կարող եմ կռվող լինել: Գալիս եմ, մասնակցում եմ այդ ժողովին որպես ակտիվ տղա: Կատակ եմ անում, ասում եմ. «Էս փողակալը ի՞նչ է, էդ գնդիկներից կտա՞ք»: Ասում եմ.

- Կարո՞ղ եմ մի հարց տալ հրամանատարին:

- Հա:

- Ես այստեղ փոքր մարդ եմ, փոխանցում եմ, որ ձեր տղաներին ասեք՝ նրանք ձեզ վրա չեն կրակելու, դուք մի կրակեք, բայց եթե կրակեք, նրանք էլ ձեզ վրա են կրակելու:

- Մենք ոչ մեկի վրա չենք կրակելու, բայց եթե փորձեք կրակել, մենք կջնջենք այդ գյուղը:

- Գիտե՞ք, նրանք էլ նույնն են ասել, եթե փորձեք կրակել, նրանք էլ կջնջեն ձեզ: Որպեսզի չվիճաբանենք այստեղ, ես փոքր մարդ եմ, դուք ասեք ձեր պայմանները, ես կփոխանցեմ նրանց:

- Թող նրանք մեր ճանապարհը չկտրեն, մեզ վրա չկրակեն, մենք էլ նրանց վրա չենք կրակի:

- Բարի,- ասացի ես:

Խոսակցությունն այդպես վերջանում է: Բերում են այդ գյուղում մի վաշտ են թողնում, մի գումարտակ էլ՝ Իմերեթ Գյարավանդում: 1991 թվի սեպտեմբերի կեսին էր: Մեզ մոտ գալիս է Գալստյան Ժաննան: Ասաց, որ հարցեր կան, մենք պետք է նրանց հետ համաձայնության գանք: Ժաննան հինգ օր մնում է մեր տանը, ամեն օր գնում ենք բանակցությունների: Ես հանդես եմ գալիս որպես վարորդ, որ Հատուկ նշանակության ջոկատի համար կասկածների տեղիք չտամ: Ժաննան ապրի՛, ես նրան շատ եմ մեծարել: Հետագայում Ժաննան Ասկոլկա Աշոտի հետ մասնակցել է կռիվներին, համենայն դեպս, նա այդ ժամանակ բավական մեծ գործ արեց: Մեր տանն էր քնում: Հաթերքից Չափար յոթ կիլոմետր է: Մեր տանը զրուցելիս ասաց, որ երեխաներից մեկը բժշկական համալսարանում է սովորում: Կինս էլ դեռ հարցրեց. «Դուք այդքան մեծ երեխաներ ունե՞ք»: Ժաննան ասում է. «Հա, ուզում էիք խանդե՞լ ինձ»: Ծիծաղում անցնում ենք:

Արդեն ռուսների հետ բանակցություններ են գնում: Արդեն մեկ ամսից ավելի է՝ նրանք այդտեղ են, եւ խոսակցություն կա, որ դեկտեմբերին նրանց պետք է հանեն: Գալիս եմ, նրանց ասում.

- Ձեզ հանելու են, եթե դուք մեզ լավ վերաբերվեք, մենք էլ ձեզ լավ կվերաբերվենք:

Ես նրանց առաջ հանդես էի գալիս որպես միջնորդ: Այդ ընթացքում այնտեղ մի թուրք՝ Փարմանը, խոզ էր պահում: Մեր տղաները գնում են այդ խոզերը բերելու: Ռուսները նրանց շրջապատում են: Ես արդեն ստիպված շորերս հագնում եմ, գալիս, ասում եմ. «Հրամանատարին ասեք իջնի»: Հրամանատարը իջնում է, նրան ասում եմ.

- Քեզ տասնհինգ րոպե ժամանակ եմ տալիս, եթե դուք ձեր շրջափակումը չեք բացում, ձեր վաշտին կփրթեն: Դու գիտես, որ ես ձեր ներքին խոհանոցը քեզանից լավ գիտեմ:

Այս տղան, անունը Սաշա էր, գլխից բռնում է.

- Դու՞ էլ ես նրանց հետ:

- Ես նրանց հետ չեմ, այլ նրանցից մեկն եմ, հրամանատա՛ր:

Հետո, երբ տեսավ իսրայելական զինվորական բաճկոնս, համազգեստս, որ իրենցից լավն էր, ասաց. «Հինգ րոպե ժամանակ տուր ինձ»: Նստում է զրահամեքենան, թռնում Գյարավանդ գյուղը: Արդեն տեսնում ենք, որ շրջափակումը բացեցին: Մերոնք դուրս են գալիս: Ասացի. «Հիմա արդեն դու գիտես՝ ես ով եմ: Ինչ ունես՝ ավել-պակաս, փողը տալիս ենք, դու էլ մեզ կտաս մեզ պետքական բաները»: Մինչ այդ՝ հաշտության հաստատման ժամանակ, ես մարդ էի ուղարկել: Ասացի. «Այստեղ կռվողները ասում են, որ փողով գործ կա, դու նրանց լսիր, ինչ ասում են՝ լսիր: Ջահել տղա ես, կգնաս ձեր տուն, մի տասը հազար էլ փող կտանես, ի՞նչ վատ կլինի»: Համաձայնվեց: Ասաց. «Ախ-

սախկալներ բերում եմ սահմանը»: Ծերակույտը եւ ռուսների գումարտակն մնացել Իմերեթ Գյարավանդում: Սահմանը կպած էր: Եթե մենք ելնում՝ հազար ռուբլի ենք տալիս, եթե իրենք են խփում՝ հազար հինգարյուր ենք տալիս: Փողերը ես եմ տալիս: Ստեփանակերտից էլ տալիս: Այստեղից էլ շատ կազմակերպություններ ինձ օգնել են: Ս.Սարգսյանն ու Պարույր Հայրիկյանն էլ են օգնել, կառավարությունի հերթին, այդ ժամանակ՝ 1991թ., ձեւավորված կազմակերպության կար Հայաստանում:

Հինգ հոգ խփեցինք, ծերերն էլ թողեցին դուրս եկան: Դեկտեմբերի 21-ին, ռուսական զորքը դուրս է գալիս, Պաշտպանության նախարարությունը մարդ է ուղարկում ինձ մոտ, ասում, որ նրանց հանկարծ չզինաթափենք, նրանք գալիս են Ստեփանակերտ, եթե զինաթափենք, ավելի կբարձրանա, մնացածն էլ չեն տա:

Ես էլ ծրակներ էի դրել: Այդ ժամանակ ես պաշտոնապես հրամանատար չի, բայց գյուղի ջոկատի տղերքը ինձ՝ որպես հիմնական կռվողի, լսում էին: Բոլորին հավաքեցի, ասացի՝ այսպիսին է դրությունը: Տղերքը՝ «Չէ՛, կտանեն, մեզ այդ էլ չի մնա»: Ասացի. «Չէ, տղանե՛ր, ես մարդ եկել է, մենք մի գործ ենք անում: Ես պատասխան եմ տալու»: Նեղանում վախենում եմ: Ես գիտեմ, որ Սերժ Սարգսյանն է դա ինձ ասել, մարդ ուղարկել: Ասում եմ. «Չէ, պետք է անենք այնպես, ինչպես ասեն, որովհետեւ դա Ղարաբաղի մասշտաբով է, ոչ միայն մեր տարածքն»: Նրանց ապահովության համար տանում եմ, այդ տեղերով անց եկացնում: Եվ այդ օրը հարձակվում ենք, Իմերեթ Գյարավանդը հողնեք սարքում: Այդ օրը ռուսները դուրս են գալիս, մենք մտնում ենք, ազատ գյուղը վառում ենք: Իմերեթ Գյարավանդի գրավումը այդպես էլ վերանում է:

Այդ ժամանակ ասացին, որ Զագլիկի վիճակը վատ է: Մենք այդտեղից միանգամից գնում ենք Զագլիկին օգնության: Այդ մի տարվա մեջ ես համարյա տանը չեմ եղել, ցերեկը երբեք գյուղում չեմ եղել, ես հաճախ քնելիս Չափարում Գրիգորյան Հովիկենց տանը: Հովիկի մայրը ավելի շատ իմ առաջ է հաց դրել, քան իր տղաների:

Բ. - Չլդրանից Վոլոդյա Ղուլյան կար, ջահել տղա էր, ջոկատ է կազմակերպել: Ծանո՞թ ես նրան:

Ս.Հ. - Չլդրանում նստած էր Նավթալյան Արմենը: Չլդրանի հրամանատարներից մեկը չլդրանցի Սերգեյն էր, մյուսը Նավթալյան Արմենն էր, իր տղաները, ու նաեւ Միերիկն էր: Ես շատ եմ գնացել նրանց օգնության:

Բ. - Դա առաջին երիտասարդական ջոկատն էր:

Ս.Հ. - Եթե ինչքան գնացել եմ նրանց օգնության, այնտեղ եղել են չլդրանցի Սերգեյը: Կարող է հետո ես հանդիպել եմ նրանց, երեւի...

Հա՛, ջահել, սիրուն-սիրուն տղա էր: Բայց նա երեւի հետո է եկել:

Բ. - Նա փոքր էր, չէր կարող ավելի շուտ գալ:

Ս.Հ. - Երբ սկսվեցին 1992 թ. լուրջ կռիվները, Նավթալյան Արմենենք թողեցին գնացին Մարտակերտ, մնացին Սերգեյն ու Միերը: Այնտեղ երկու ձեւի ջոկատ կար, մեկը ենթարկվում էր Արմենին, մյուսը՝ Կարապետյան Արկադիին:

Բ. - Սա ենթարկվում էր ուղիղ Ստեփանակերտին:

Ս.Հ. - Իմիջիայլոց, Ագոյին 1991 թվականից ենք ճանաչում: Շատ հետաքրքիր դրվագ եղավ, թե ինչպես եմ ես Սերժ Սարգսյանի հետ ծանոթացել: 1991 թիվն էր, արդեն ջոկատը՝ կազմավորված, շտաբը՝ դրած: Մեկ էլ գյուղի վերեւում ուղղաթիռ իջավ ու թողեց փախավ: Տղերքին ուղարկեցի, ասացի. «Ես հետո կգամ, տեսեք՝ ի՞նչ եղավ, ո՞վ եկավ, ի՞նչ գնաց»: Եկան, ասացին. «Սուրի՛կ, եղել են ավտոմատներ, ահագին զենք, բայց այդ տարածքի ժողովուրդը թալանել է, ոչ մի բան չկա»: Գյուղի ջոկատից բացի՝ ամեն թաղ ուներ իր պաշտպանական ջոկատը: Նրանք պահում էին գյուղի մատույցները, որպեսզի թուրքերը գողություն չանեն: Զարդախաչի, Գետավանի, Զագլիկի դիրքերում էին կանգնում, մեր գյուղի վերեւը՝ սարն էին պահում. դա, կարելի է ասել, աշխարհազորն էր անում: Նրանց կանչում եմ, ասում.

- Բոլոր զենքերը բերեք այստեղ, շո՛ւտ, մինչեւ մի ժամը հավաքած լինեք, թե չէ խնդիրներ կլինեն:

Այն ժամանակ տասնհինգ ավտոմատ չկար, դեռ սկիզբն էր, զինվորների զինաթափման գործընթացը չէր սկսվել: Հավաքում, ամեն ինչ բերում են՝ բացի մի հեռադիտակից, որը չեն գտնում: Բայց մի տասնհինգ հատ ավտոմատ է լինում, արկղերով փամփուշտներ: Երեւի առաջին ամենախոշոր բեռն էր: Ուրիշ տեղ չեն կարողանում կանգնեցնել, բերում են մեր գյուղ: Ասացին, որ Կարապետյան Արկադին է գալիս: 1991թ. սկիզբն էր: Ես Սերժ Սարգսյանին չէի ճանաչում: Վալերա Բալայանն էլ եկավ, ակնոցով տղա էր, էլի դաշնակցական: Այդ երեքն էին: Սերժ Սարգսյանը մի ընտիր վարորդ ուներ՝ Լյովան, Դոնալդ Լյովա էինք ասում, շատ ճարպիկ տղա էր: Եկան, գյուղում ծանոթացանք: Ասաց. «Ձենք եմ բերել ձեզ մոտ, դա պետք է հաղորդ ուղարկվի: Հաղորդում վիճակը շատ վատ է: Դուք խնդիր չունեք, բայց այնտեղ իրավիճակը շատ բարդ է»: Ասացի. «Խնդիր չկա, մինչեւ կես ժամը ամեն ինչ կլինի տեղում»: Ասացի, որ բերեն շտաբ: Շտաբն այնպիսի տեղ էի ընտրել, որ ոչ մի տեղից մեքենա չկարողանա մոտենալ: Արդեն կապի նոր միջոց ունեի, Հոռաթաղի, Գետավանի, Մարտակերտի հետ թաքուն կապեր ունեինք: Արդեն բավական կազմակերպված էր կատարվում այդ ամենը: Գնացի, ասացի մի հատ սուրճ դնեն: Խմեցինք: Մեկ էլ զենքերը բերեցին՝ տասնհինգ հատ ավտոմատ եւ այլն:

Ցուցակով նայեցին՝ ամեն ինչ տեղն էր: Ասաց.

- Բայց մեզ գյուղում ասել են, որ ամեն ինչ տարել են, ոչ մի բան չկա:

- Ոչինչ: Չեն իմացել, որ տարել են, ասել եմ՝ բերել են:

Ստեփանակերտի տղաների վրա բավական լավ տպավորություն թողեցինք: Ստեփանակերտի հետ այդքան էլ շատ կապեր չունեինք:

Շատ ապրանքներ գալիս էին մեզ մոտ: Սկսեցի առնչվել Սերժ Սարգսյանի հետ, քանի որ նրանք գալիս էին որպես երկրապահ, կապը լինում էր միայն Սարգսյանի միջոցով:

1992թ. հուլիսի 2-ն էր, մեկ էլ մի կարմիր «Նիվա» եկավ: Բարեւեցինք: Ասաց.

- Ինձ ուղարկել են, որ օգնեմ այս տարածքում:

- Շատ բարի:

Ծանոթացանք:

- Ամարասի Արթուր,- ասաց նա:

Ես լսել էի այդ անունը: Ասացի, որ կարող է տեսել եմ, բայց չեմ հիշում: Արդեն լուրջ կռիվներ էին գնում: Կոմանդոսը ինձ տանկ էր խոստացել: Տանկիստ էի ուղարկել, մի տանկ պետք է սարքեին, տային եւ երկու նռնականետ: Ճանապարհներիս երեք տանկի վտանգավոր ուղղություն ունեի, բայց մեզ մոտ ընդամենը երկու նռնականետ կար: Նրան ասացի, որ մնա Գետավանում, ես գնամ բերեմ, գամ: Գնում եմ Մարտակերտ, վաթսուն հոգու ուղարկում եմ օգնության, յոթը զոհվում են: Ճիշտն ասած՝ վաղուհասցիներին Կոմանդոսն էր կանչել: Հուլիսի 2-ի երեկոյան գալիս են ինձ մոտ: Իմ շտաբը Գետավանում էր: Ասում է. «Սուրի՛կ, ի՞նչ ես մտածում, մենք Կոմանդոսին ասել ենք, որ քսանյոթ հոգով գալիս ենք օգնության»: Հունվարին Վազգեն Սարգսյանի հետ եկել էին Ստեփանակերտ, Կարապետյան Արկադիին նշանակել էին ամբողջ Ղարաբաղի հրամանատարը: Նաեւ ամեն շրջանի, տարածքի համար ընտրեցին հրամանատարներ: Մեր տարածքի համար վեճ է լինում, թե ում նշանակեն: Հարցրին Սերժ Սարգսյանին, ասաց. «Այնտեղ Սուրիկից լավ ոչ ոք չի լինի»: Ագոն էլ ասաց. «Նա արժանի է, եթե ինքն է, ոչ մի խնդիր չկա»: Բոլոր հրամանատարների ընտրության դեպքում տարակարծություններ եղել են: Ես իմ տեղը առաջարկել էի Մորուք Ռաֆոյին: Վազգեն Սարգսյանը, չգիտեմ՝ ինչ պատճառներով, ասաց. «Նրան ընդհանրապես չեմ ուզում տեսնել»: Հարցրեց, թե էլ ինչ թեկնածու ունենք: Վագիֆի թեկնածությունը ես եմ առաջադրել, հաստատել են որպես շրջանի հրամանատար: Երբ առաջադրվեց իմ թեկնածությունը, բոլորը ասացին. «Թող Սուրիկը լինի»: Ու ես դարձա հրամանատար:

Երբ գնացել էի Մարտակերտ օգնության, ինձ կանչեց Գզողյան

Ֆելիքսը: Մարտակերտի շտաբը այսօրվա գինկոմի շենքն էր: Երբ մտնում եմ շտաբ, Արտյուշա Հարությունյանը՝ գինկոմը, խոսում է.

- Ո՞ւր ես գնում, այստեղ մարդ չպետք է մտնի:

- Սա մեր շտաբն է, ես էլ եկել եմ Կոմանդոսի մոտ:

- Կոմանդոսը մարդ չի ընդունում, հանգստանում է:

- Լսի՛ր, ընկե՛ր, դուք ինձ չեք ճանաչում, ուղղակի կանչեք Կոմանդոսին:

- Հանգստանում է, չեմ կարող:

- Ա՛յ ընկեր, կռվի ժամանակ ի՞նչ հանգստանալ:

Սամվել անունով թիկնապահ ուներ, լենինականցի տղա էր, այդպես որ ասացի, գնաց, որ նրան կանչի: Ասում է.

- Բա դու ո՞վ ես:

- Դու գլխավոր հրամանատարն ե՞ս:

- Ես այստեղի գլխավոր հրամանատարն եմ:

-Հ յուսիսդ ո՞վ է պահում:

- Ինչո՞ւ, այնտեղ էլ է՞ կռիվ գնում:

- Կներես, դու գլխավոր հրամանատար ես չէ՞: Դու չգիտե՞ս, որ այնտեղ էլ է կռիվ գնում: Ես Սուրիկն եմ Հաթերքի, ես այդ տարածքի հրամանատարն եմ, եկել եմ Կոմանդոսի մոտ կարեւոր հարցով:

- Լավ, հիմա կգա, կխոսես:

Հանգստացավ, մի քիչ կոպիտ ստացվեց մեր զրույցը, բայց մարդը զինվորական է, հասկացավ, որ այդպես չպետք է խոսել: Կոմանդոսը արագ եկավ, փաթաթվեց եւ արտասվեց, ասաց.

- Այս ի՞նչ է կատարվում այստեղ:

Այդ ժամանակ քսաներկու հոգի «Արաբոյից» էին զոհվել, քսանյոթ հոգի Եղոյան Ռուբիկի ջոկատից:

Բ. - Ի՞նչ էր եղել, ի՞նչ դեպք էր:

Ս.Հ. - Օպերացիա էր, հակահարձակում: Պարզապես ոչ բոլոր տեղերում են կատարել իրենց խնդիրները: Աջ կողմից շատ լավ է եղել, ձախ կողմից չի ստացվել: Ասկոլկան ականապատված դաշտ էր ընկել, սահագին մարդիկ վիրավորվել էին, զոհվել: Մեղադրում էին Ասկոլկային, բայց նա ոչ մի գրամ մեղք չունի: Օպերացիան ընդգրկում էր ընդհանուր Մարտակերտի գրաված տարածքները՝ Փափռավանդի վերեւից՝ Շոռբուլախից մինչեւ Թալիշ: Մեծ մասշտաբի հակահարձակում էր: Քանի որ ես հյուսիսային տարածքում էի, օգնություն էի ուղարկում հենց Մարտակերտի մատույցներին: Այդ ժամանակ յոթ զոհը որ եղավ... Վաղուհասի հրամանատարն արդեն Բախշյան Բորիկն էր, եկավ, ասաց.

- Ի՞նչ անեմ, բա այսպիսի բան եմ արել:

- Բայց չէ՞ որ ես եմ հրամանատարը, դու ինչո՞ւ ես առանց ինձ տեղ-

յակ պահելու գնացել Կոմանդոսին օգնության:

- Բա մեզ այսքան ավտոմատ է տվել, մենք էլ պարտավոր ենք նրան օգնության հասնել:

- Սա սեփական գործ չէ, չի կարելի: Հիմա դու քո տղաներին տանելու ես, մտնելու են կռիվ, իսկ դու այդ տարածքը չգիտես: Իսկ որ ես ուղարկեմ, ես կգամ, կմշակենք այդ օպերացիան, ես էլ կմասնակցեմ դրան:

- Չէ, խոսք եմ տվել:

- Ասում եմ՝ ձեզ համար ճակատագրական է լինելու, ես գիտեմ, թե ինչպես է այստեղ կռիվը գնում: Զգույշ մնացեք: Որ ասում ես՝ գնում ենք, Աստված ձեզ հետ, բայց ես դեմ եմ, որ դուք գնաք: Եթե չգնաք, ես պատասխան կտամ դրա համար, որովհետև ձեր գնալու դեպքում ձեր գյուղի տարածքում ես մարդ պետք է նշանակեմ:

Նարեշտարի կողմն էլ էին նրանք պահում:

Հաջորդ օրը այդ ջոկատը զոհեր տվեց, նա էլ մահացավ: Գնում ենք, ետ ենք բերում, հանդիպում ենք Կոմանդոսին: Մեծ շենում է վիճակը վատ լինում: Նորից մարդ ենք վերցնում, գալիս այդտեղ: Հուլիսի 3-ն էր: Մեկ էլ Չափարի հրամանատարը կապվում է շտաբ, ասում, որ մեր գյուղի վերեւում մեծ կուտակումներ կան: Այդ ժամանակ Գզողլյան Ֆելիքսն էր եկել, ինձ կանչում է: Ես նրան ճանաչում եմ Դրմբոնի օպերացիայից, լավ տպավորություն էինք թողել միմյանց վրա, օպերացիան էլ լավ էր ստացվել:

- Շուտ արի շտաբ, շուտ հասի՛ր:

Արդեն հուլիսի լույս չորսն էր: Արթուրը մնացել էր մեր շտաբում, իսկ ես եկել էի Մարտակերտ: Գալիս հասնում եմ, որ մի քիչ հանգստանամ, ասում են, որ մեր գյուղը թողում դուրս է գալիս: Երբ շահումյանցիները մեր գյուղով էին անցել, գյուղում խուճապ էր առաջացել, երբ տեսան, թե ինչպես է ժողովուրդը գյուղը թողել դուրս եկել: Եվ արդեն այն կանգնեցնելը դժվար էր: Ես էլ այդ շաբաթ տուն չէի գնացել: Դրանից տասն օր առաջ եկել էի, ասել, որ հանկարծ Շահումյանի դեպքի կրկնությունը չլինի, քանի մեքենա որ կա, դրանցով գյուղացիներին կփոխադրեք, բայց դեռ դրա կարիքը չկա, եթե ինչ-որ բան լինի, ես Գետավանում եմ, կհասնեմ:

Մարտակերտից հասնում եմ մեր գյուղ, դեռ մի ժամ աչքս չկպած, Գրիգորյան Բարմենը զանգում է, ասում.

- Սուրի՛կ, անհնարին է պահելը, թե դու կարող ես, Գետավանը պահիր:

- Դու գյուղից բաց ես թողնում, ես այստեղ ո՞նց պահեմ:

Այդ ժամանակ շատ արկեր էին խփում գյուղի մեջ: Ասում եմ. «Թող գյուղացիք դուրս գան, գնան Ստեփանակերտ, մի քիչ կկարգավորվի,

ետ կգան»: Մեր գյուղում էր Դուշմանի ջոկատը, որը բանակի մեջ չէր մտնում: Ասացին, որ այդ ջոկատը գյուղի վերեւը պահի: Սերժ Սարգսյանն էլ էր այդտեղ, համաձայնեցրինք բոլորի հետ: Ասացի. «Թող գյուղի մատույցները նրանք պահեն, մնացածը ես կպահեմ»: Երբ Հովիկը զանգում է, ասում, որ վիճակը վատ է, ես գալիս եմ: Հիմա մեր գյուղը դուրս է գալիս: Երեխաներս գալիս են ինձ տեսնեն. տղաս ծնվել էր, առաջնեկս աղջիկ է: Տղաս հունվարի 26-ին է ծնվել: Դա էլ մի ուրիշ հեքիաթային պատմություն է: Գալիս հասնում եմ տուն, որ ավտոմատը մաքրեմ, կինս ասում է.

- Ինձ հիվանդանոց տար:

- Մի րոպե, զենքը մաքրեմ, նոր:

- Հենց հիմա կծննդաբերեմ այստեղ:

Երբ զինվորներին զինաթափել էինք, Վազգեն Սարգսյանը ինձ «ՈՒԱՉ» էր նվիրել: Հետս վերցրի հանքափորի լապտերը, այն ժամանակ գյուղում լույս չկար, եւ այդ մեքենայով կնոջս տարա հիվանդանոց: Վերցրի նաեւ զոքանչիս: Փայտ բերեցի, որ վառեն: Գնացի մորս ասեմ, որ մյուս երեխային տիրություն անի: Հետ գնացի, ավտոմատս մաքրեցի, ասացի՝ գնամ տեսնեմ՝ ի՞նչ կա-չկա»: Գնացի, գյուղի քառասուն տարվա աշխատողը՝ Ծովիկ տոտան, ասաց.

- Ընչուկփռնուկս ի՞նչ ես տալիս:

- Եթե տղա է՝ հիսուն մանեթ, եթե աղջիկ է՝ հարյուր:

- Ինչքա՞ն:

- Հարյուր:

- Վիյ ախչի, վիյ ախչի, ո՞նց, աղջկանից հետո՝ տղա, դու հիսուն ե՞ս տալիս:

- Հա, որ աղջիկ եղավ, պիտի երրորդի՝ տղայի համար էլ մտածենք:

- Դե լավ, ուրեմն հիսուն մանեթ տուր:

- Ուրեմն տղա՞ է:

Ճակատը պաչեցի, գնացի, տեսա, ասացի. «Ես արդեն ինձ փոխարինող ունեմ, դուք յոլա տարեք, ես գնացի»: Ու գնում եմ Չափար:

Հուլիսի 4-ի առավոտյան երեխաներս գալիս են ինձ տեսնելու: Ամարասի Արթուրն էլ արդեն շտաբում է, բոլոր հրամանատարները ծանոթ են, գիտեն, որ Արթուրը նշանակված է կենտրոնից մեզ օգնություն ցույց տալու համար:

Երբ գյուղացիները դուրս են գալիս, այդ պահը շատ հետաքրքիր էր: Եղբորս «Նիվայով» կինս, երեխաներս, եղբորս երեք երեխաները, քրոջս երեք երեխաները, քույրս, եղբորս կինը, գալիս են ինձ տեսնելու: Թույլ չեն տալիս, որ մեքենան մտնի շտաբ: Ես ասել էի, որ հայրս էլ գա, թողնեն մտնի շտաբ, կողմնակի մարդիկ իրավունք չունեն շտաբ մտնել: Դուրս եմ գալիս, ծիծաղելով ասում եմ.

- Հը՛, թողնում եք, փախչե՞ք:

- Չէ, գնում ենք Դրմբոն:

Ասացի. «Լավ, ուր ուզում եք, գնացեք, թեկուզ Ստեփանակերտ, երեխաներին կարող եք ուղարկել Երեւան, հո փողոցներում չե՞ք մնա: Ամեն ինչ լավ կլինի»:

Տանը մի հատ ավտոմատ կար, կինս ոչինչ չէր վերցրել տնից, միայն ավտոմատն էր բերել: Այդպես էլ գնում են նրանք:

Լույսը բացվում է: Մի ջոկատ կար, «կոոպերատիվ դաշնակ» էին ասում նրանց, քսանյոթ հոգով գալիս են՝ Կոմանդոսի գրությամբ՝ «Նրանց գինեք, ձեզ օգնություն»: Ասացի՝ ինչ լավ է: Գետավանի տարածքն անհարմար էր: Նրանց տարանք, տեղավորեցինք: Հետախուզությունն ասում է, որ ինը հատ տեխնիկա գալիս է Գետավանի վրա: Չափարից զեկուցում են, որ յոթ հատ տեխնիկա գալիս է Չափարի վրա: Վերեւից ասում են, որ սարի վրայով էլ են գալիս: Մտածում եմ, որ, ոչինչ, մերոնք այնտեղ կանգնած են: Բոլորին տեղավորեցինք, առաջ եկանք Չափարի վրա: Արթուրի ներկայությամբ քսանյոթ նոր ավտոմատներ տալիս եմ նրանց:

1992 թ. մարտին կազմակերպել եմ բանակ. դեռ Ղարաբաղի Գերագույն խորհուրդը բանակի կառուցման մասին օրենք չէր մշակել: Ես էլ գնում եմ Զինկոմ, ասում, որ առաջին զինակոչին քսան հոգի մեր գյուղից կգան, երկրորդ զինակոչին՝ տասնքանի հոգի Կոճղոտից, եւ այդպես բոլոր գյուղերից տղաներ կբերեմ: Զինկոմը, երեւի Նանագյուլյան էր ազգանունը, ասում է.

- Այդպիսի կապ չկա, ես չեմ կարող զինակոչ անել:

- Վաղը գալու եմ, եթե բժիշկները նստած քննություն անցկացնելիս չլինեն, նրանց օրինական չտանեն, բոլորիդ գյուղելու եմ:

Դե, վախից էլ ի՞նչ, ինձ էլ գիտե... Բերում զինակոչ եմ անում, բժշկական քննություն եմ անցկացնում: Սա բողոքում է: Երկրորդ զինվորականչն էլ անում եմ: Իմ իմացածով՝ Սերժ Սարսգսյանին ասում են. «Գնա, տես՝ ո՞վ է այդ «բեսպրեդելը», որ, մենք դեռ օրենք չհանած, ինքը զինվորականչ է արել: Մենք այդպիսի որոշում չունենք, որ տասնութ տարեկաններին զինակոչենք»: Գգողլյան Ֆելիքսը գալիս է, տեսնում՝ Գետավանում զորանոցս դրած (Արթուրը տեսել է), ԿՊՊ-ն դրած, հերթապահը կանգնած, զորանոցի պահպանությունը դրած. փոքր, կոկիկ զորանոց է: Գալիս է, ասում.

- Սուրի՛կ, այս ի՞նչ ես արել:

- Ի՞նչ եմ արել:

- Ավտոմատով գնացել ես զինկոմին ստիպել:

- Ա՛յ ցավդ տանեմ, արի մտնենք ներս, հետո կխոսենք:

Մտնում ենք, տեսնում է զորանոցը, քնելու տեղերը, համազգեստ-

ները, սապոգները, ասում. «Լավ, բան չկա ասելու, գնացինք: Քեզանից շատ բան ունենք սովորելու: Կգնամ, բոլորին կուղարկեմ այստեղ, թող գան, տեսնեն՝ ինչ է կատարվում այստեղ»: Ես էլ ասացի. «Էս տասնութ տարեկան երեխաները կամ հավ պիտի գողանան, կամ ծխախոտ ծխեն: Ես նրանց սովորեցնում եմ կռվել, բայց կռիվ դեռ չեմ տանում»: Իրոք, ես նրանց սովորեցրել եմ, բայց կռվի չեմ տարել: Արդեն երեսունից ավելի տղաներ կային, այդքանն էլ պիտի գային, պատրաստում էինք նրանց տեղերը, որ բերենք:

Հիմա անցնում եմ այն պատմությանը, երբ զենքերը տվեցինք «Կոոպերատիվ դաշնակներին»: Աշոտ Երկաթին նշանակել էին այդ ջոկատի հրամանատարը, բայց նրա տղաները չեն: Մի «ԿՌԱԶ»-ով եւ մարդատար մեքենայով էին եկել:

Բ. - «Աշոտ Երկաթ» խմբի հրամանատարը Պավելն էր:

Ս.Հ. - Պավելը Շամշադինից էր, ընտիր տղա էր, դա ուրիշ խումբ էր, իսկ այս Աշոտը Երրորդ մասից է, ուղղակի նրան Կոմանդոսը նշանակեց այդ ջոկատի հրամանատար:

Վերջը, Արթուրին ասում ենք, որ էլ բան չունենք անելու: Խոսում ենք, մեկ էլ տեսնենք՝ երկու մեքենաներ վզգալով անցան շտաբի կողքով: Ասում եմ՝ ե՞ս ինչ էր: Խաբար արեցին, որ այն տղերքը, որոնք դիրքերում կանգնած էին, թողել փախել են: Կանչեցի տասնութ տարեկաններին: Իսկանդարյան Սամվելին նշանակել էի երիտասարդների հրամանատար: Ասացի՝ «Շու՛տ, հինգ րոպեում պատրաստ լինեք, թռեք այն տեղերը, որտեղ նրանք էին կանգնած»: Տարանք, կանգնեցրինք, ես եւ Արթուրն էլ՝ որպես հրամանատարներ, բարձրացանք ամենաբարձր տեղը: Ծիծաղելով խոսում ենք, Արթուրն ասաց. «Չորս հետիոտն են գալիս», ասացի. «Դրանք սակրավորներն են, թող մոտենան, հենց հասնեն ականին՝ խփե՛ք»: Դրանց խփեցինք: Մեկ էլ դիմացից ինը հատ տեխնիկա դուրս եկավ. առջեւից՝ «ԲԵԷՄՊԵ-1», հետեւից՝ տանկ, հետո՝ չորս փողանի «Շիլկա», «Ուրալի» վրա «ՁՈՒ-23», հետո էլի «ԲԵԷՄՊԵ-2»... Ասացի՝ չխփե՛ք: Ես եւ Արթուրը մի նռնականետողի մոտ ենք, մեկն էլ ներքեւը՝ փողոցի վրա էր: Նրանք էլ գիտեին, թե մենք գետի մյուս ափին ենք, կրակելով գալիս են: Ասացի, որ նրանք մեզ չեն կարող գտնել: Երբ առաջինը ուղիղ տեղ հասավ, ասացի՝ խփե՛ք: Խփեցին, չկպավ: Երկրորդը խփեցին՝ երկուսն էլ կպավ: Ասացի. «Դե հերթով խփե՛ք»: Տանկին խփեցինք՝ ծուխ հանելով փախավ: Շիլկան էլ ծուխ հանելով փախավ: Նռնականետը կամ թրթուրին պիտի կպնի, կամ աշտարակին, շարքից դուրս բերի: Դրանք փախչում են, մնում է միայն հետեւակը: Էս տասնութ տարեկաններին ասում եմ՝ դե կոտորե՛ք: Կոտորում են, գնում զենքերը վերցնում: Էս երեխեքն ասում են. «Բա որ այսքան հեշտ է կռվելը, ինչո՞ւ մեզ չես թողել»: Այդ պահին զա-

նգում են, ասում, որ մեր գյուղը թուրքեր են մտնում: Ասում եմ.

- Ո՞նց թե մեր գյուղը թուրքեր են մտնում, մենք Գետավանում...

- Քո եղբայրն է խոսել, ասել է, որ ինքը թողնում դուրս է գալիս, - ու կոպիտ շարունակեց,- հերդ էլ ոտքով գալիս է, կարող է թուրքերը բռնեն:

Ես մեքենաներ ունեի, տվել էի իմ տեղակալների վարորդներին, որ իրենց ընտանիքներին հանեն: Այդտեղ թուրքերը փախչում են արդեն: Արթուրի հետ գալիս ենք, նստում, որ որոշենք՝ ինչ անենք: Մտնում են Չափար: Նրանց կոտորում են, դուրս հանում: Չափարցիներն էլ են ընտիր կռիվ անում, գետավանցիներն էլ: Մի խոսքով՝ մենք թուրքերին այդտեղից հետ ենք տալիս: Հետախուզությունն ասում է, որ այն մեքենաները փախել են մինչեւ Չարեքտար, այդ կողմից այլեւս խնդիր չունենք: Չափարի կողմից ճնշումն ուժեղացնում ենք: Գալիս են, կոտորվում են, փախչում. եւ այդպես՝ երեք անգամ:

Երբ ասում են, որ մեր գյուղը թուրքեր են մտել, Արթուրին ասում եմ. «Դու մնա այստեղ, ես գնամ գյուղ»: Տասնութ տարեկաններին եմ իջեցնում եւ յոթ հոգու լավ կռվողներից: Այդ պահին գալիս է Հոռաթաղի Մորուքն իր տղաներով: Ասացի.

- Մորու՛ք, գյուղը, ասում են, թուրքեր են մտնում, ես գնամ գյուղ, դու ձեր տղաներին բեր այստեղ, ճանապարհը փակեն, հետո մի բան կանենք:

- Մենք պատրաստ չենք եկել, նռնականետերը գյուղում են:

- Գնա հաղորդիր, թող գան:

- Լավ, հիմա կորոշենք:

- Ես գնում եմ, ժամանակ չունեմ:

Իմ գնալուց հետո նրանք թողնում գնում են իրենց գյուղը եւ չեն էլ գալիս: Արդեն պետք է բարձրանամ գյուղի վրա, մեր հարեւանը՝ Դանիելյան Սերգեյը, ասում է.

- Սուրի՛կ, մի՛ բարձրացիր, թուրքերը գերեզմանոցի վերեւն են:

- Ո՞նց, պապան, մաման դո՞ւրս են եկել:

- Նրանք անցել են, նրանք շուտ են դուրս եկել:

- Բա եղբայրս գյուղում է մնացել:

Եկանք, որ բարձրանանք, չկարողացանք: Գրադի Ժորան կապի մեջ էր, ասացի.

- Ժորա՛, քարտեզ չկա մոտս, բայց ձեր գյուղից այսքան հեռավորության վրա խփիր:

Երկու արկ խփեց, երրորդ արկն ընկավ ամբոխի մեջ, որտեղից ոչ ոք չշարժվեց: Նա վերեւից խփում է, ես գալիս եմ, մտնում գյուղ: Մի ջահել երեխա էշը նստած գալիս էր, եթե դուրս գար, թուրքերը կտեսնեին: Երկու տղաներին՝ Արտաշին ու Ստյոպային, ուղարկեցի, որ

տղային իջեցնեն: Գնում են, բերում, այդ տղան էլ՝ «Էշս մնաց, էշս մնաց»: Երեխա է, էլի: Ասում եմ.

- Իրիկունը դուք որտե՞ղ եք եղել:

- Ես ու քո ախպերը գյուղում ենք եղել:

- Բա ո՞ւր է ախպերս:

- Գնացել է դեպի գյուղի վերեւը:

Ես էլ անհանգիստ էի: Գալիս ենք գյուղ, առաջին տներն ենք մտնում, ասում եմ. «Տղե՛րք, շարքով գնանք, իմանան, թե թուրքեր ենք»: Գյուղի մեջ արդեն թուրքեր կային: Շարքով գնում ենք, այն կողմից գոռում են.

Ու տեսնում եմ նրանց, մոտ հինգ հարյուր մետրի վրա են: Ասում եմ. «Ուրեմն՝ շո՛ւտ հետ դարձ, հանգիստ հետ ենք դառնում, իբր գնում ենք տների վրա»: Հինգ հոգի մի ուղղությամբ են կանգնել, երկու հոգի՝ այլ ուղղությամբ: Մեր գյուղացի մի տղա քնած էր մնացել, նրան են հանում: Ես չգիտեի, որ տատս գյուղում է մնացել, չեմ պատկերացրել: Մտածել եմ, որ գյուղացիները դուրս են եկել, տատս էլ հետևերը կլինի, մանավանդ, որ բենզին, սոլյարկա եղել է: Գալիս եմ, ասում.

- Դյադ Ժորա, երկու հատ տեխնիկա է կանգնած, տանկ, կարո՞ղ ես խփել:

- Դե ասա՝ խփեմ:

Նա մեր գյուղը լավ գիտեր, ասացի.

- Նայիր, գոմի վրա կանգնած եմ, նայում եմ, դու խփի՛ր, ես կասեմ՝ աջ, թե ձախ:

- Նայի՛ր, խփում եմ:

Ձայնը չեմ լսում, սիրտս խփում է, քրտնեցի: Մեկ էլ քսան մետր այն կողմ որ պայթեց, ես ալիքից ընկա:

Բ. - Հաուբիցո՞վ էր խփել:

Ս.Հ. - Երեւի հաուբից էր, որովհետեւ ձեռքս չպահեց, գոմի կտուրից ընկա, հարմար չէի բռնել: Նա զգաց.

- Սուրիկ, Սուրիկ, Սուրիկ...

Ռացիաս մնացել էր կտուրի տակ, ես ընկել էի գետնին: Բարձրացա, ասում եմ.

- Դյադ Ժորա, հինգ մետր ցածր լիներ, գլուխս կտաներ: Նորմալ է ամեն ինչ, հիսուն մետր բարձրացրու:

Խփեց երկու տեխնիկայի մեջտեղը: Թուրքերը փախան: Ես գյուղի տակն եմ, նրանք վերեւն են: Ասացի. «Մի տասնհինգ մետր՝ կամ աջ, կամ ձախ»: Խփեց, տեխնիկային բան չէր անում: Կանչել եմ, ասում եմ. «Կոմանդոսին գտիր, ասա թող այդ տանկերը ուղարկեն ինձ մոտ, երկու տանկ, ու ես գյուղը ետ վերցնեմ: Այստեղ ընդամենը հինգ տանկ է, սա ի՞նչ է, ես կվերցնեմ»: Ասացին, որ օգնության չսպասեմ: Ասկոլ-

կան դեռ կապի մեջ էր, ասում է. «Սուրի՛կ, ես գալիս եմ ձեր գյուղի վրա»: Ասացի. «Աշո՛ւտ, մի՛ արի գյուղի վրա, թուրքերի ձեռքին է, Մեծ շենով դուրս արի»: Այդտեղից էլ դուրս է գալիս, թե չէ պիտի գար եւ դեմ առներ դրանց: Երեկոյան ժամը 12-ն է, Արթուրն ինձ ասում է.

- Սուրի՛կ, դու՛րս արի գյուղից, Սուրի՛կ, ես քեզ հրամայում եմ, դուրս արի:

-Արթու՛ր, ցավդ տանեմ, բա դու ինձ հրամայում ես, ես մեր գյուղից ո՞նց դուրս գամ:

- Ցավդ տանեմ, ես նշանակված եմ որպես ներկայացուցիչ, բայց ես այդ իրավունքն ունեմ: Լսի՛ր ինձ:

- Չէ, չեմ դուրս գա, մինչեւ ես գյուղը չվերցնեմ, դուրս չեմ գա:

- Ա՛յ տղա, դո՛ւրս արի, քեզ ասում եմ:

- Չէ, Չափարը պահո՞ւմ են:

- Առայժմ հա, բայց Հովիկն ասել է՝ էլ չեմ կարող պահել:

-Երբ որ Հովիկն ինձ հետ խոսի, ես կասեմ:

Կանչում է Հովիկին: Հովիկն ինձ ասում է.

- Սուրի՛կ, անհնարին է պահելը:

Վաղուհասի հետ խոսում են՝ անհնար է, մեղք են տղերքը:

Արթուրը բացատրեց, որ բոլորը կկոտորվեն: Ասացի. «Լավ, կես ճանապարհը մեքենա ուղարկեք, գալիս եմ»: Գիշերվա ժամը 3-ն էր: Մեքենայով եկանք այդտեղ, խելք խելքի տվեցինք: Երկու հատ տանկ ուղարկեցին մեզ մոտ. մեկը Մարտակերտի Տոլիկն էր, մյուսն էլ ստեփանակերտցի տղա էր:

Պատմում են Մարտակերտի հիվանդանոցի բուժաշխատողներ Միլետա Հովհաննիսյանը, Ելենա Վերդյանը, Արմեն Պատաշյանը, Լարիսա Այվազյանը, Ռոզա Հարությունյանը: Զրույցը վարեց Բակուր Կարապետյանը. 21.10.2005, Մարտակերտ: Մուտքագրեց Մարինա Բաղդագյուլյանը:

Միլետա Հովհաննիսյան (բժշկուհի) - Անընդհատ ռմբակոծում էին «Գրադով», «Ալազանով», հետո ինքնաթիռների գրոհը ստիպեց, որ մենք հիվանդներին տեղափոխենք ավելի ապահով տեղ: Ապահով էր համարվում հիվանդանոցին կից շինության նկուղը: Մարտակերտում մնացած բնակիչները, նաեւ հիվանդները օգնում էին բուժաշխատողներին: Պարկերը ավազներով լցնում էինք, դասավորում շինության պատերի տակ, որ ներսում գտնվողները ռմբակոծության ժամանակ չվնասվեն: Աշխատում էինք նկուղային պայմաններում: Հիմնականում վիրահատական ծառայությունն էր գործում: Որոշ տեղերում արդեն կռիվներ էին սկսվել:

Լենինավանի, Մարաղայի, Թալիշի դեպքերն եմ հիշում: Իրենց լեզվով ասած՝ «բոյի» ավարտից հետո հրամանատարները գալիս էին իրենց ջոկատի վիրավորներին այցելության: Հիշում եմ՝ Վլադիմիրն ասաց. «Չվախենաք, թուրքը Մարտակերտ չի մտնելու: Որ թողնենք, մինչեւ կարուսելները գան, ոչի՞նչ...»: Կարուսելը Մարտակերտի մուտքն է: Լեոնիդ Ազգալդյանը ավելի խիստ էր: Շատ հավասարակշռված էր եւ կազմակերպված, իսկական հրամանատար էր: Իսկ երբ զրուցում էիր նրանց հետ, շատ զարգացած, բարի մարդու տպավորություն էին թողնում: Հարցնում էինք. «Վլադիմի՛ր, ինչպե՞ս եղավ Մարաղայի կռիվը», նա թե. «Կուփի-կուփի ընելավ թուրքերին Մարաղայից հանալընք»:

Ոտքից վիրավորվել էր նրանց ջոկատի փարիզեցի Հովսեփը: Բեկորային վերք էր: Փաթաթեցինք ոտքը: Վիրաբույժն ասաց, որ երկու օր պետք է մնա հիվանդանոցում: Նա ասաց. «Ամոթ է, ես այս վերքի համար մնամ հիվանդանոցում, ջանըմ: Ես կաղալով էլ կարող եմ նորից գնալ կռվելու»: Երբ բռնագաղթել էինք Ստեփանակերտ, այնտեղ հանդիպեցինք Հովսեփին, ասաց. «Մի՛ վախեցեք, նորից կգնանք Մարտակերտ»: Հետագայում Հովսեփին ես էլ չեմ տեսել:

Ելենա Վերոյան (բուժքույր, տնտեսուհի) - Մարաղայի կռիվների ժամանակ վիրավորվել էր նաեւ Մարաղայի ջոկատի հրամանատար Ռոմա Կարապետյանը: Պառկած էր նկուղում: Մեջքից էր վիրավորվել:

Արմեն Պատաշյան (բժիշկ) - Միշիկ անունով մի մարդու կինը մահացել էր տանկի արկի բեկորի հարվածից, իսկ երեխային վիրավոր բերել էին մեզ մոտ: Ձախ ձեռքը կտրված էր: Ես չեմ մոռանում այդ երեխայի՝ լաքած եղունգներով ձեռքը: Աղջիկը միանգամից որբացավ եւ հաշմանդամ դարձավ: Հիմա այդ աղջիկը ապրում է, նա մի ձեռք ունի:

Սեւսուլան, Ցարմջա գյուղերը շրջափակման մեջ էին: Կածանով գիշերները այդ գյուղերի բնակիչներին հանում էինք:

Մենք հազարավոր վիրավորների ենք օգնել, փրկել: Նրանց մեծ մասը վերադարձել է մարտի դաշտ:

Միլետա Հովհաննիսյան - 1988 թվականի փետրվարին էր, Բակուր Կարապետյանը եւ Մոսունց Սլավան եկել էին հիվանդանոց՝ Աղդամի թուրքերի հարձակումներից վիրավորվածներին նկարահանելու: Որպեսզի գաղտնի լինի նկարահանման խմբի գալը, պահակին՝ Մուխի դայուն, ասացի, որ դուռը բաց թողնի, ինքը գնա տուն: Մոխրաթաղից Ղահրամանյան Վովային կանչեցի, որը գոտկատեղի շրջանում վնասվածք ուներ: Հետո այդ նկարահանումները տեսել ենք: Դա «Քարե պատերազմի» շրջանն էր:

Մարաղայի դեպքերի ժամանակ պատանդներ էին վերցրել գյուղից: Գնացել էին տրակտորի կցասայլով վիրավորներին բերելու, ականի վրա պայթել էին, գոհվել: Նրանցից մեկի անունը Գյոզալ էր: Հետո վիրավորները մեզ մոտ՝ նկուղում, բուժվում էին: Բնակիչները արյուն էին տալիս վիրավորների համար, ուտելիք էին բերում: Հետո եկան եւ ասացին, որ տանկերը մտել են Մարաղա: Մնացինք մկաղած: Աթայան Պավլիկը մեր բժիշկն էր: Հիմա նա այստեղ չէ, բայց պատերազմի օրերին նա մեծ գործ է արել: Օհանյանը վիրահատություն էր անում: Որոշեցինք նրանց չասել թուրքերի՝ Մարաղա մտնելու մասին, որ հանգիստ վիրահատությունը վերջացնեն: Վիրավորները հիմնականում Շահումյանից էին: Պավլիկը եկավ, սկսեց երգել «Արյունոտ դրոշ» երգը: Բոլորս հուզվել էինք: Հավաքվել էինք սեղանի շուրջը: Մարաղայեցի Գյոզալը վեր կացավ անկողնուց, մոտեցավ, մեզ գրկեց, խնդրեց. «Մեզ չթողեք այստեղ...»:

Լարիսա Այվազյան (վիրահատարանի բուժքույր) - Ինձ հետ էր աշխատում նաեւ Գալստյան Լյուդմիլան, որը վիրահատարանի քույր էր: Նրա եղբայրը՝ շրջանի պաշտպանության ընդհանուր հրամանատար Գալստյան Վագիֆը, զոհվելել էր ականի պայթյունից: Լյուդմիլան վիրահատարանում էր: Չէինք ուզում գործի պահին նրան ասել այդ մասին: Ասացի. «Լյուդմիլա՛, դուրս արի, ես քեզ կփոխարինեմ»: Երբ վիրավորներին բերում էին, բժիշկ Օհանյանն ասում էր, որ ում վիճակը ծանր է, շտապ վիրահատարան տանեն: Մի վիրավորի տարել եմ դիահերձարան՝ կարծելով, թե նա մահացած է: Վիրահատության կեսից եկան ասացին, որ նա կենդանացել է, ձեռքերը շարժում է: Շահումյանցի այդ հիվանդին բերել ենք, վիրահատել, եւ նա լավացել է: Հետագայում նա եկել է մեզ այցելության:

Ռոզա Հարությունյան (վիրակապող բուժքույր) - Մարաղայից մի տղամարդու էին բերել: Նա ցնորվածի պես պատմում էր, թե ինչպես են իր ծնողներին, կնոջը թուրքերը կոտորել: Նա այդ ամենը լողավազանում թաքնված է տեսել: Հարցրինք. «Բա ինչո՞ւ չես դուրս եկել», ասաց. «Ավտոմատներով շրջապատել էին, եթե ես դուրս գայի, ինձ կսպանեին»:

Վեց ամիս ես եւ Լարիսան տուն չենք գնացել: Չգիտեինք՝ երբ է մթնում, երբ՝ լուսանում: Պատուհան չկար, ժամացույցով էինք իմանում ցերեկն ու գիշերը:

Միլետա Հովհաննիսյան - Հիշում եմ մարաղացիների հետ կապված պատմությունը: Այդ ընտանիքը շատ ողբերգական պատմություն ունի: Հարսներից մեկին դրել էինք վիրահատական սեղանին: Այդ աղջիկը ինձ կանչեց թե՝ «Բժշկուհի, ինձ սրսկեք, թող մեռնեմ: Ավելի լավ է մեռնեմ, քան հիշեմ՝ ինձ հետ ինչ է կատարվել»: Այդ ավազակները

ծաղրուծանակի էին ենթարկել նրան: Նա ամաչում էր բժիշկներից, որ իր մարմինը այդ վիճակում պետք է տեսնեին: Ինձ ասաց. «Խնդրում եմ, ասա, թող շորերս հագիցս չհանեն, ինձ սրսկեք, ես մեռնեմ»: Ես այդ դեպքը չեմ մոռանում:

Ելենա Վերդյան - Մարաղայի թեժ կռիվների ժամանակ մեր շտապ օգնության քույրերից մեկը՝ Ռիման, արկից վիրավորվել էր: Ամաչում էր, որ Օհանյանը մոտենար, վերքը մշակեր: Արցախ Բունիաթյանը եւ Ռադիկ Առուշանյանը օգնություն ցույց տվեցին: Օհանյանը շատ անհանգիստ էր: Նրա տղան՝ Խոսրովը, կռվի դաշտում էր: Այդ պահին էլ անընդհատ վիրավորների էին բերում, Օհանյանը չէր կարողանում կենտրոնանալ: Հետո ասացին, որ Խոսրովը գլխից վիրավորվել է:

Միլետա Հովհաննիսյան - Պատերազմի տարիներին նկուղում անցկացրած օրերը մեզ համախմբել են: Դրանից առաջ յուրաքանչյուրն իր բաժանմունքում էր աշխատում, բայց նկուղային պայմաններում բոլորս միասին էինք աշխատում: Մի տուն էինք դարձել: Դժվարությունը մոտեցնում է մարդկանց: Ռիման՝ բուժքույրը, Ներքին Հոռաթաղ գյուղից էր: Թուրքերի գյուղից «Ալազանով» խփում էին: Երեխաները բակում խաղալիս են լինում: Երեխաներին հավաքում է, տեղավորում նկուղում: Վերջում ինքն է մտնում: Բեկորը մեջքից խփում է նրան:

Ռոզա Հարությունյան - Երբ ռմբակոծում էին, բուժքույրերով իրար գրկում էինք, հավաքվում մի անկյունում: Ցղայնանում էին. «Ինչ եք մի տեղ հավաքվում, որ մի բան լինի, բոլորիդ միանգամից կկոտորի: Ցրվեք տարբեր անկյուններ»:

Միլետա Հովհաննիսյան - Նկուղում աշխատելու տարիներին ռմբակոծում էին «Գրադի» հրթիռներով: Այդ ժամանակ ռուսական ջոկատը ինտերնատում էր, ես նրանց հիշում եմ: Շատերը Աֆղանստանում էին ծառայել: Սեւսուլանի այգիներում դեպքեր էին կատարվում: Հետո պատմում էին, որ նրանց հերը անիծեցին:

Հրթիռակոծությունները, արկերի պայթյունները սովորական էին դարձել: Արկի պայթյունից հետո վեր էինք կենում, շարունակում գործը, կարծես ոչինչ էլ չի պատահել: Անվախ էինք դարձել, թող բարձր չհնչի, հայրենասիրական ոգի էր մտել մեր մեջ: Մարտակերտում մարդ չէր մնացել, բոլորը դուրս էին եկել: Միայն հիվանդանոցն էր մնացել: Մենք չէինք կարող գնալ, տղաները դիրքերում էին, կռիվներ էին գնում:

Պատերազմի առաջին օրերին թյուրիմացություններ շատ են եղել, տղաները պատրաստ չէին պատերազմին: Նախապատրաստվածություն չկար, այդ պատճառով շատերն են տուժել: Հիշում եմ՝ կարմիրավանցիների ջոկատը խիստ տուժել էր, շատ վիրավորներ կային: Ավթանդիլյան Էդիկը, որը գրախանութում էր աշխատում, ծանր վիրավորվել էր: Պետք է ուղղաթիռները գային, որ ծանր վիրավորներին տեղափոխեինք: Էդիկին շտապ օգնության մեքենայով ես տարա Վերին Հոռաթաղի հիվանդանոց: Երեխաներն ու կինն էլ էին նրա հետ: Վերին Հոռաթաղի հիվանդանոցում խուճապ էր, բոլորը փախչում էին, շունը տիրոջը չէր ճանաչում: Կազմակերպեցինք հիվանդների էվակուացիան: Դուրս եկա: Արկը խփում էր: Դիմացի լեռնալանջին աչքիս առաջ Զարդախաչի շենքերը օդ էին բարձրանում: Ճանապարհի վրա խառնված էին մեքենաները, անասունները: Ես մի ավտոբուս կանգնեցրի, Հայաստանից եկած զինվորականներ էին: Խնդրեցի, որ օգնեն, վիրավորներին տեղափոխեն: Համարյա իրար գլխի դասավորեցինք, տարանք Դրմբոնի դպրոց: Էդիկը մահացավ: Ես չէի կարող նրան թողնել անտեր: Դուրս եկա, որ մեքենա գտնեմ, Էդիկին տեղափոխենք Կուսապատ: Գյուլաթաղում «Գրադից» երկու ամուսիններ էին մահացել, նրանց համար Կուսապատի դպրոցի բակում երկու փոս էին փորել: Նրանց տղան ծնողների դիակները մեքենայով տարել էր, այդ փոսը մնացել էր: Էդիկին Ագոյի մեքենայով տարան, այդ փոսում թաղեցին: Այդ խառնաշփոթի ժամանակ կարողացանք կազմակերպել, վիրավորներին էվակուացնել, դիակները թաղել:

Ելենա Վերդյան - Ուժեղ կռիվների ժամանակ, երբ թուրքերը հասան Երրորդ սովխոզ կոչվող տեղամասը, մենք ուզում էինք բարձրանալ Կուսապատ: Գիշեր էր, լույս չկար, անձրեւոտ, եղանակ էր, քամի էր փչում: Մի կերպ բուժքույրերով հիվանդներին տեղափոխեցինք Կուսապատի դպրոց, որտեղ իբր մի քիչ ապահով էր: Երբ լուսացավ, իմացանք, որ ինքնաթիռով Ավան կոչվող տեղամասը ռմբակոծել են: Շուրայի կիսամեռ վիճակում տեղափոխեցին Կուսապատ: Բոլոր բժիշկները, քույրերը պատրաստվում էին վիրահատության: Արյուն էր պետք: Բժիշկ Հովհաննիսյանն ասաց՝ ես կտամ, եւ ձեռքը մեկնեց: Շատ չարչարվեցին, բայց չկարողացան Շուրայի կյանքը փրկել: Բերել էին նաեւ Թալիշի կոլխոզի նախագահին՝ Արարատին:

Միլետա Հովհաննիսյան - Երեւանում բնակվող թալիշցիները Օհանյան Վանիկի ղեկավարությամբ կամավորական ջոկատ էին կազմակերպել: Նրանց ջոկատի վիրավորներին բերել էին Կուսապատ: Երբ բռնագաղթել էինք Երեւան, թերթում մի նյութ կարդացի՝ «Թալիշի արծիվը» վերնագրով, եւ իմացա, որ Օհանյան Վանիկը զոհվել է: Շատ քաջ տղաներ էին: Ամեն ինչ անում էինք նրանց փրկելու համար: Դոնոր չկար, որովհետեւ բնակիչներ չկային, մենք՝ բուժաշխատողներս էինք դոնորները:

Լարիսա Այվազյան - Չլդրանից տեղափոխվել էինք Ալաշան տե-

դամաս: Ժողովուրդն այդտեղից թողել փախել էր: Դեռ չէինք հասցրել մաքրել, ասացին, որ վիրավորներին բերում են: Երեսուն-քառասուն վիրավորներ էին: Վիրահատության սեղանը դրեցինք: Չգիտեինք՝ որտեղ լվացվել: Մարտիրոսյան Աշոտի թեւը ուսահոդից կախված էր: Նրան վիրահատեցինք: Օգանիսյանը կանչում էր. «Շո՛ւտ, արագացրե՛ք, ծակե՛ք, սիստեմա միացրե՛ք»: Մենք էլ դեռ սպիրտի տեղը չգիտեինք: Այդ ամբողջ օրը ես վիրահատարանից դուրս չեմ եկել: Մոտ քառասուն վիրահատություն ենք արել:

Միլետա Հովհաննիսյան - Ալաշանում չնայած քիչ մնացինք, բայց շատ ծանր օրեր էին: Ներքեւից պաշտպանություն չկար, վերեւից՝ անհայտ էր, չէինք կողմնորոշվում, թե ինչ է կատարվում: Մարտակերտից փախած բնակիչները տեղավորվել էին Ալաշանի նախկին պիոներական ճամբարի սենյակներում: Երբ գնացել էինք, ամբողջ անտառով մեկ ափսեներ, շորեր էին թափված: Ժողովուրդն այդեղից էլ էր փախել: Ես եւ Ագոն՝ մեր վարորդը, նույնպես մաքրում էինք տարածքը, որ կարողանանք վիրավորներին ընդունել: Լարված օրեր էին: Վիրահատարանը լիքն էր վիրավորներով: Երկու-երեք հոգով էինք աշխատում: Միացնում էի կաթիլայինները, հետո մտնում վիրահատարան: Սանիտար չկար: Մի քույր էր, մի բժիշկ: Ասացի. «Ես իմ գործը վերջացրել եմ, հիմա էլ սանիտար եմ, ինչ ասեք՝ կանեմ»: Երբ հրահանգները կատարում, վերջացնում էի, ասում էի. «Հիմա էլ խոհարար եմ»: Շրջապատից ուտելիք էինք հայթայթում, որպեսզի կարողանանք մեր գոյությունը պահել: Շատ դժվար էր, կապ չկար, չգիտեինք, թե հետո մեզ ինչ է սպասում: Նոր վիրավորներ բերեցին: Ծածկոցներ չկային, մենք մեր ծածկոցները տվեցինք նրանց, մի քանի գիշեր չքնեցինք: Տարիներ անց՝ բռնագաղթից հետո, Երեւանում էի: Ավտոբուսի մեջ մեկը կանչում է՝ բժշկուհի՛, բժշկուհի՛: Ժամանակավոր աշխատանքի էի տեղավորվել, աշխատանքի էի գնում: Ետ նայեցի: Կապույտ աչքերով տղա էր, դեմքը ծանոթ էր: Ասաց. «Բժշկուհի,Տիգրանն եմ...»: Ավտոբուսի աշխատողին ասում է. «Դուք չգիտեք՝ նա ով է»: Ասում եմ. «Ա՛յ տղա, կամաց», նա թե. «Ես այն տղան եմ, ում դուք թեյ տվեցիք, ձեր ծածկոցը գիշեցիք»:

Լարիսա Այվազյան - Ալաշանի դեպքերից մի քանի օր հետո ուժեղ կռիվներ եղան Պուշկեն յալում: Երեք-չորս օր հետո Ալաշան բերեցին չորս զոհ, որոնք մարտակերտցի տղաներ էին՝ Ավագյան Յուրան, Քաջիկը, որ Հեռուստաաշտարակի մոտ էր զոհվել, Ռայնիսը, Նորիկի տղան՝ Ավոն: Բժշկուհին վազեց, որ իմանա՝ ովքեր են զոհերը: Լաց ու կոծ բարձրացավ:

Միլետա Հովհաննիսյան - Ալաշանում դեղորայքի պակասը շատ էր

զգացվում: Իսկ վիրահատության սեղանը մնացել էր Կուսապատում: Դժվար էր աշխատելը: Գլխավոր բժիշկը՝ Օհանյանը, ասաց, որ անպայման պետք է վիրահատության սեղան բերենք: Գնացինք, որ բերենք վիրատության սեղանը: Երբ հասանք Կուսապատի վերեւը, Սամսոնը, որը կուսապատցի էր, ասաց. «Տեսեք՝ թուրքերը մեզ նկատել են, որ մենք մեքենայով իջնում ենք, կարող է հանկարծ խփեն»: Չվախեցանք, գնացինք: Դիրքերը մոտ էին՝ Դամռլուի գերեզմանների մոտ՝ Կուսապատի տակ: Կուսապատի դպրոցում հրետանի կար: Ռուս Սանյան ականանետով խփեց: Հետո իմացանք, որ մերոնք են: Գնացինք, վիրահատության սեղանը, մյուս իրերը հավաքեցինք, տարանք Ալաշան: Մինչեւ գյուղից դուրս գալը Սամսոնն ասաց. «Եկեք, մեր տնից մի քիչ «թալան» տանենք, շորերից, մյուս իրերից վերցրեք, այնտեղ պետք կգան»: Հիմա, երբ հիշում եմ այդ ամենը, մտածում եմ, որ ամեն ինչ էլ հնարավոր էր, որ պատահեր, բայց այդ ժամանակ անվախ ոգի էր մտել մեր մեջ: Շատ ծանր օրեր են քաշել բուժաշխատողները: Երեւի ոչ մի ուրիշ բնագավառի աշխատող բարոյական տեսակետից այդքան չի տուժել, որքան բուժաշխատողները պատերազմի ժամանակ:

Հոսպիտալը ժամանակավորապես տեղակայված էր Չլդրանում: Ադրբեջանական ինքնաթիռները գալիս էին եւ ռմբակոծում: Բայց այդ ինքնաթիռները կարծես գրաֆիկով էին ռմբակոծում: Նունիսկ կատակում էինք՝ «Եկեք շուտ գործերը վերջացնենք, ինքնաթիռների գալու ժամանակն է» կամ անհանգստանում էինք, թե ինչու են ուշանում: Տարբեր տեսակի ռումբեր էին գցում: Եթե կասետային ռումբ էր, դուրս գալ չէր կարելի, ծանր ռումբի դեպքում հարկավոր էր դուրս գալ: Պատահում էր, որ ասում էինք. «Ինչ լինում է՝ լինի, դուրս չենք գալիս, մնում ենք շենքում»: Հոսպիտալը հիվանդանոցի շենքում էր տեղակայված: Դրսում թոնիր կար: Ավթանդիլյանը՝ վիրաբույժը, ութսուն տարեկան կլիներ, քանդել էր այն, մեծացրել, թե. «Մտեք այդ փոսը»: Ինքնաթիռը եկավ: Մեզ հետ էր նաեւ բժիշկ Բունիաթյանը, Ավթանդիլյանը, Վոլոդյան՝ ռենտգեն-տեխնիկը, Լարիսան: Հիվանդանոցի պատի տակ պառկեցինք: Բեկորը կպավ Բունիաթյանի գլխին: Ասում էինք. «Բժի՛շկ, Դուք արդեն կոնտուզիա եք ստացել, պետք է գնաք թոշակի»: Ծիծաղում էինք:

Չլդրանից դուրս խոտի դեզեր կային: Երբ ինքնաթիռը գալիս էր, եթե վիրավորներ չէինք ունենում, գնում, մտնում էինք դեզերի մեջ: Այդ տարածքը Բախչուտ էին ասում: Ամենաշատը Լարիսան էր վախենում, լացում էր: Նրա համար էինք գնում դեզերի մեջ պատսպարվելու, թե չէ մենք սովորել էինք: Գիտեինք, որ պետք է վազենք ինքնաթիռի թռիչքին հակառակ: Գլուխներս դեպի երկինք բարձրացրած՝ փախչում էինք:

երեխաներն էլ էին սովորել: Պատերազմից հետո նրանց Ծաղկաձոր են տարել: Երկնքում ինքնաթիռ է երեւացել: Ճամբարում դարաբաղցի երեխաները գոռացել են՝ օ՛դ, եւ փախել:

Սումգայիթցի փախստականները պատմում էին, թե ինչպես են իրենք պաշտպանվել: Պատմում էին, որ սեւ պղպեղ էին պահում, որ երբ թուրքերը գան, դուռը ջարդեն, լցնեն աչքերին: Եռացրած ջուր էլ էին պահում, կացին... Մի անգամ Մաղավուզից կանչ ունեի: Մաղավուզցի մի մարդ պատմում է, որ կացինը սրելիս թոռնիկը եկել է թե.

- Պապի՛, կացինը ինչո՞ւ ես սրում:

- Սրում եմ, որ թուրքը գա, դրանով խփեմ:

- Պապի՛, մի դանակ բերեմ, դա էլ ինձ համար սրիր, որ թուրքը գա, ես էլ խփեմ:

Մի դանակ է բերել, պապը սրել է, տվել թոռանը, ասել. «Տար, դիր բարձիդ տակ»: Գիշերվա կեսին լացի ձայն են լսում: Երեխան էր լացում: Ասում են. «Ինչո՞ւ ես լացում», երեխան ցույց է տալիս դանակի շեղբը, թե. «Թուրքը մեղք է, որ գա, այս կողմով չեմ խփի, կոթով կխփեմ»:

Լարիսա Այվազյան - Ցեխի ձոր տեղամասում հոսպիտալն էր տեղակայված: Գրիժա ունեի: Աղջիկներն ասացին, որ ես խնդիր ունեմ: Բժիշկ Բախշյանը եկավ, նայեց, ասաց. «Ա՛յ աղջիկ, ֆիդրոմա ունես»: Ինձ վիրահատեցին: Հինգերորդ օրը կանգնել եմ վիրահատության: Ինձ չէր կարելի ծանրություն բարձրացնել, բայց ես ուշադրություն չէի դարձնում, ամեն գործ էլ անում էի:

Չլդրանից մեկ օրով գնում ենք Դրմբոն: Որպես հիվանդանոցի աշխատողներ՝ օգնում էինք հոսպիտալի աշխատողներին: Առավոտյան ժամը իններին մտել եմ վիրահատարան, լուսադեմին՝ ժամը հինգին, դուրս եմ եկել: Օհանյանն ասաց, որ մի քիչ հանգստանանք: Ինքը պառկել է, հանգստացել: Եկել, տեսել է՝ ես դեռ աշխատում եմ, գիպս եմ սարքում:

Արմեն Պատաշյան - Մի մարդու էին բերել, որը կրծքավանդակի ձախ կողմից վիրավոր էր: Վիրահատողը բժիշկ Օհանյանն էր, ես ասիստենտն էի: Բացեցինք կրծքավանդակը: Սրտի թաղանթն էլ էր վնասվել: Օհանյանը ռիսկ արեց եւ կարեց վիրավորի սրտի թաղանթը: Օհանյանն ասում էր, որ ինքը զգում էր, թե ինչպես էր իր ձեռքերի մեջ այդ մարդու սիրտն աշխատում:

Մի տղայի էին բերել, որը տանկի բեկորից էր վիրավորվել: Բեկորը խփել էր դեմքին, երեսի մի մասը չկար: Վիրավորներ շատ էինք տեսել, բայց այդպիսի վերք ոչ ոք երեւի չի տեսել: Ջահել բուժքույրերը վախենում էին: Վիրավորը ջահել, սիրուն տղա էր: Առաջին օգնություն ցույց

տվեցինք, ուղղաթիռով ուղարկեցինք Երեւան: Այդ տղան փրկվել է:

Մեր վարորդներն էլ հերոս տղաներ են. Սարգսյան Սամսոնն էր, շատ մեծ գործեր է արել, Մնացականյան Լյովան էր, Ղազարյան Վիտալիկը, Միշիկը, Ագոն, Բաղունց Ռաֆիկը: Այդ տղաները ե՛ւ վարորդ էին, ե՛ւ սանիտար: Վիրավորներին դուրս բերելու համար մեքենայով այնպիսի տեղեր էին քշում, որտեղ նույնիսկ ոտքով կվախենայիր գնալ: Պետք էր լինում՝ արյուն էին տալիս:

Վիտոն մեքենայով գնացել էր վիրավոր բերելու, ճանապարհին ականանետով խփել էին: Երբ վերադարձավ, մեքենայի վրա ութ հարյուր ծակ ենք հաշվել: Ապակիները ջարդված էին: Նրանք հասցրել էին դուրս գալ: Պատկերացնում էինք, որ եթե նրանք դուրս թռած չլինեին, մարմնի որ մասը վիրավորված կլիներ, ծիծաղում էինք: Վախ չկար:

Օմարի լեռնանցքում մեքենան ձյան մեջ էր խրվում, չէր կարողանում բարձրանալ մինչեւ մեր ճամբարը: Մեքենայի յուղը սառչում էր: Մեքենայի տակ կրակ էին վառում, որ շարժիչը տաքանա:

1992 թվականի օգոստոսի վերջն էր: Վաղուհասի մոտ գտնվող Կարմիր քար դիրքում կռիվներ էին գնում: Շատ բարդ դիրք էր, անտառներ էին եւ սարեր: Սարսափելի մարտեր էին: Թուրքերը գրոհում էին: Մենք գնացել էինք առաջին գիծ՝ օգնության: Մեզ հետ վերցրել էինք նաեւ մի բուժքրոջ: Սկզբում չէինք ուզում նրան վերցնել, թե.«Ա՛յ աղջիկ, դա քո տեղը չէ»: Բայց նա եկավ: Ես նրան վիրավորների առաջին խմբի հետ ետ ուղարկեցի: Բերեցին Միրզոյան Գիրոյին, որը փոխարինել էր Վլադիմիրին ու Ազգալդյանին, ու ջոկատի հրամանատարն էր: Նա վիրավորվել էր թեւատակից, երակներն էլ էին կտրվել, նյարդաթելերն էլ, եւ ռետինե բինտ դնելու հնար չկար: Մի կերպ ենք արյունը կանգնեցրել, ցավազրկել: Հիմա նրա ձեռքն այնքան էլ լավ չի աշխատում, բայց նա մինչեւ վերջ կռվել է, նույնիսկ երբ վիրավոր էր:

Երբ Մարտակերտը վերցրել էինք, մեր տղաներից Արայիկ Ղուկասյանը Մարտակերտ մտնելիս «Ուրալով» ականի վրա պայթեց: Երկու ոտքերի ոսկորները ջարդվել էին: Այդ տղայի ոտքերը չկտրեցինք, փրկվեց: Նրան առաջին օգնություն ցույց տվեցինք, հետո ուղղաթիռով ուղարկեցինք Երեւան: Շատ տանջվեց: Տասից ավելի անգամ նարկոզ են տվել, վիրահատել: Ճիշտ է, այդ տղայի ոտքերը լիարժեք չեն գործում, բայց նա ի՛ր ոտքերով է քայլում:

Պատմում է Վլադիմիր Վարդանովը՝ «Հատուկ նշանակության խումբ» ջոկատի հիմնադիր-հրամանատարը: Զրույցը վարեց Բակուր Կարապետյանը. 08.02.2006, Երեւան: Մուտքագրեց Անահիտ Ասատրյանը:

Վ.Վ. - Երբ 1989 թ. սկսվեցին ռազմական գործողությունները, Հայաստանում մեր ուժերը բաժանվեցին ուղղությունների: Բաղդասարյան Գեւորգը նշանակվեց հյուսիսային թեւի կոորդինատոր, ես կցվեցի որպես ժամանակակից պատերազմի կամ պարտիզանական մեթոդների մասնագետ: Ես ԽՍՀՄ «ԳՌՈՒ»-ի 12-րդ բրիգադայում եմ ծառայել, մարտական փորձ ձեռք եմ բերել Աֆղանստանում, արաբական երկրներում, Աֆրիկայում փրկարարական գործողության եմ մասնակցել: 1989 թ. դեկտեմբերին Վանո Սիրադեղյանն ու Սամվել Շահինյանը ինձ հանձնարարեցին Սովետական Միության հատուկ նշանակության խմբերում ծառայություն անցած հետախույզ-դիվերսանտների ջոկատ հավաքել: Ջոկատը կազմավորվեց հունվարի սկզբին: Մի ամիս հետո զգացինք, որ այն քողարկելու խնդիր է առաջանում: Այդ պատճառով ստեղծվեց «Խալդի» ջոկատը: Այն ֆիկտիվ բնույթ էր կրում, ու նրա կազմում պիտի քողարկվեր «Հատուկ նշանակության խումբը»: Բայց ջոկատի տղաների ոգին այնքան բարձր էր, որ չէին կարողանում ֆիկտիվ շապիկը կրել, ուստի եւ 1990 թ. գարնան սկզբին նրանք առանձնացան:

Բ. - Լեգենդի խնդիր կար:

Վ.Վ. - Լեգենդ պարտադիր պետք էր: Մի ուրիշ խնդիր էլ կար. հետախուզության գնալիս ու ետ դառնալիս մենք թշնամու տարածքում անցնում էինք աննկատ, իսկ ճակատը չէինք կարողանում անցնել, որովհետեւ մեր գյուղացիները, ինքնապաշտպանությունից դրդված, շատ լավ էին պահում սահմանը, եւ մենք միշտ հարվածի էինք ենթարկում մերոնց: Այդ պատճառով էլ ստեղծեցի ջոկատ, որը մեզ կարող էր աջակցել հետախուզության գնալիս: Դիլիջանի Վահրամ Պահլավունու անվան ջոկատն էր, որի հրամանատարը իմ տեղակալն էր՝ Մարտիրոսյան Լյովան: Նա, ջոկատի օգտին հանձնարարականներ կատարելուց բացի, Դիլիջանի մոտոհրաձգային ճյուղը օգտագործելու էր նաեւ

տը: Դրանից էր կախված ողջ Հադրութի ճակատագիրը: Մենք սկսեցինք պատրաստվել Տողի ազատագրման գործողությանը: 1991 թ. հոկտեմբերի 30-ին գործողությանը մասնակցում էին Մանվելի տղաները, Արթուր Աղաբեկյանը, Սամվելի եղբայրը՝ Կարոն, Աշոտ Բեկորը, տեղի ջոկատները: Մենք հետախուզություն անցկացրինք: Կարեւոր էինք համարում հակառակորդին հանկարծակիի բերելը: Խորհրդային զորքերի պարենավորման հարցը ամբողջությամբ ադրբեջանցիների վրա էր: Բայց այդ զինվորները, սերժանտներն ու սպաները ավելի լավ էր քաղցած մնային, քանի որ այլեւս չէին հանդուրժում ազերիների լկտի արարքները, ֆաշիզմը: Դժվար էր հավատալ, որ մարդը մարդուն կարող է այդպես վերաբերվել: Ազերիները հիսուն հոգի էին, մերոնք եւս հիսունն էին: Մենք պատրաստ չէինք կռվել գումարտակի դեմ: Բայց ռուսները շոկի մեջ էին: Ինձ խնդրեցին իրենց հետ գնալ Ֆիզուլի եւ հանդիպել ադրբեջանցիների հետ: Նրանք ապահովել էին իմ անվտանգությունը: Ես ադրբեջանցիներին ասացի, որ հեռանան Հադրութից: Բայց պատասխանեցին, թե այդ մենք պետք է հեռանանք:

Դրությունը վատ էր Սարուշեն գյուղում: Այնտեղ զինվորներ կային: Ադրբեջանցիները վիրավորել էին զինվորի ոտքը եւ բարդել մեզ վրա: Նրանք ուզում էին իրավիճակը սրել: Սպասում էին ամրանան, որպեսզի հարձակման անցնեն: Բայց մենք վերցրինք բարձունքը եւ Սարուշեն գյուղը:

Ստեփանակերտի շուրջը վտանգավոր դրություն էր ստեղծվել: Հակառակորդն ուժեղացրել էր Կրկժանի, Ջանհասանի, Քյոսալարի դիրքերը, փորձում էր գրավել Քարինտակը, այնուհետեւ դուրս գալ Ստեփանակերտը Ղարաբաղի հարավային շրջաններին կապող ճանապարհը: Մենք պետք է նրանց ծրագիրը խափանելու միջոցներ գտնեինք: Դրա համար առաջին հերթին պետք էր ազատագրել Կրկժանը եւ դուրս գալ «26-ի» բարձունքը: Այնտեղ սկզբում հրամանատարը Չիթչյան Վալերին էր, այնուհետեւ՝ Սեյրան Օհանյանը, իսկ վերջում՝ Յուրա Հովհաննիսյանը: Ինչու՞ 26: Կրկժանի ազատագրման գործողությանը մասնակցել են 26 ջոկատներ, իսկ 26-րդը պահեստազորն էր, որը հաջող գործողությունից հետո շարժվեց դեպի այդ կարեւոր բարձունքը: Եվ նրանց անվանեցին «26»:

Այդ ժամանակ Ադրբեջանը դիվանագիտական ճանապարհով կարողացավ հասնել այն բանին, որ խորհրդային զորքերը ետ քաշվեցին Ստեփանակերտից, որպեսզի իրենք անցնեն հարձակման: Այդ իրավիճակում կարեւոր դեր կատարեցին Արթուր Փափազյանը, Յուրա Հովհաննիսյանը, Վալերի Քոչարյանը, Ժաննա Գալստյանը, Վալերի Բալայանը: Փափազյանը ռադիոկապով խաղ էր սկսել՝ իբր մենք պատ-

ռաստվում ենք հարձակվել: Վալերի Քոչարյանը այնպիսի փամփուշտներ էր ստեղծել, որոնք շատ բարձր ձայն էին հանում, Աշոտ Խաչատրյանը մեկ այլ բան էր հնարել: Տաղանդավոր տղաներ շատ կային: Հակառակորդը որոշել էր հարձակվել Քարինտակի վրա, բայց մենք պատրաստ էինք դիմակայել: Այնտեղ Անուշավանի տղաներն էին, որոնք հրաշալի կռվում էին: Մանվելի ջոկատից հինգ հոգի օգնության եկան նրանց եւ ստեղծեցին պաշտպանական շրջան: Ադրբեջանցիները նման հանդիպում չէին սպասում: Երբ առաջին զրահամեքենան պայթեց, Աշոտ Բեկորի եւ մյուսների արձակած փոթորկալի կրակը ստիպեց հակառակորդին ետ քաշվել՝ մարտի դաշտում թողնելով իննսուն դիակ: Մենք առաջարկեցինք նրանց վերցնել դիակները, բայց հրաժարվեցին: Մեր վիճակը լավացավ, եւ պետք է շարունակեինք ազատագրել Ղուշչուլարի, Մալիբեյլուի կրակակետերը: Մեզ հաջողվեց ճեղքել Ստեփանակերտը շրջապատող օղակը: Բայց մենք պետք է կարգավորեինք վառելանյութի խնդիրը, որը կարելի էր լուծել Հայաստանի հետ անմիջական կապի միջոցով:

Մենք ուսումնական կենտրոնում նախապատրաստում էինք տղաներին, որոնք խնդրում էին իրենց ընդգրկել բանակում: Բայց զենքը չէր հերիքում: Հաջորդ գործողությունը պետք է ավելի բարձր մակարդակով կազմակերպեինք: Պարզվեց, որ Ղարաբաղի տղաները տաղանդավոր հրամանատարներ են: Նրանց տաղանդը երեւում էր հատկապես տակտիկական հարցերում, երբ ցանկացած իրավիճակից դուրս գալու փայլուն ելք էին գտնում: «Ադմիրալ» կար, որը Խոջալուի գործողության ժամանակ ծանր դրության մեջ ընկավ, հայտնվեց հակառակորդի երկու խմբավորումների արանքում: Բայց համարձակ որոշում ընդունեց ու շարժվեց առաջ: Արդյունքում հակառակորդը հայտնվեց շրջափակման մեջ:

Կազմվել էին չորս խմբավորումներ, որոնք շարժվում էին տարբեր կողմերից: Շտաբում էին Ֆելիքս Գզողլյանը, Վալերի Հարությունյանը, Իսրայելյանը, մասնակցում էին հրետանավորներ, սակրավորներ, համալիր կազմում կային նաեւ ականանետներ, թնդանոթներ, ռեակտիվ հրետանի: Բայց ամենակարեւորը մարդկային գործոնն էր: Ղարաբաղի տաղանդավոր ժողովուրդը պատրաստ էր մեռնել հանուն իր ընտանիքի, գյուղի, հայրենիքի: Նրանց ղեկավարելը միայն հաճույք էր: Եղած ուժերով Շուշիի վրա գրոհելը խելագարություն էր: Բայց մեր հաջողության մեջ յուրաքանչյուրն իր ներդրումն ուներ: Լոս Անջելեսից հայտնի օրթոպետ Վարդգես Նաջարյանը խոստացավ «Ալինկո» ռացիաներ ձեռք բերելու հարցում օգնել մեզ: Նա հարյուր հատ ուղարկեց: Իհարկե տասը հատը Երեւանում խոշոր ղեկավարները յուրաքանչյուրին, բայց իննսուն հատը մեզ հասավ: Բայց ամենակարեւորը մարդիկ են: Ես տեսել եմ իրենց զավակներին հողին հանձնող ծնողներին եւ հասկացել, որ այդ ժողովուրդը անպարտելի է: Հայրը հասկանում էր, թե ինչի համար է իր որդին զոհվել, եւ կզոհվի նաեւ երկրորդ որդին... Մենք պետք է հուշարձան կանգնեցնենք դարաբաղցի զինվորի համար եւ ասենք. «Ահա թե ով է պատերազմում հաղթել»: Այդ պատերազմում որեւէ կուսակցությանը առանձնացնելը արդարացի չէ եւ իմաստ չունի, քանի որ բոլորն են մասնակցել:

Բ. - Ինչպե՞ս եք մեկնաբանում Խոջալուի բնակչության եղեռնի մասին ֆիլմերը, որոնք ցուցադրվում են Ադրբեջանի հեռուստատեսությամբ:

Կոմ. - Ցանկացած գործողության ժամանակ չի կարելի ամբողջությամբ շրջապատել թշնամուն: Խոջալուում մնացել էին մեծխեթցիները, որոնք բնակչության ամենաաղքատ մասն էին կազմում, գնալու տեղ չունեին, իսկ ունեւորները վաղուց հեռացել էին: Նրանց մի մասին գերի վերցրինք եւ փոխանակեցինք Կարմիր խաչի «Հուշարձան» կազմակերպության միջոցով: Մի մասն էլ հեռացավ: Ադրբեջանական կողմում նրանք ընկել էին յուրայինների ծուղակը, եւ նրանց միջեւ փոխհրաձգություն է եղել: Մենք այնտեղ ուժեր չունեինք: Մեր ջոկատները ամբողջությամբ մասնակցում էին Խոջալուի ազատագրմանը: Բայց նրանք չեն ուզում հասկանալ: Այդ դեպքը նրանց տարածքում էր: Այնտեղ երեք հարյուր մարդ կար, բայց նրանք սկզբում գրել էին 400, այնուհետեւ՝ 1000, իսկ վերջում՝ 1200: Եվ հեռուստատեսությամբ ցուցադրելով՝ իրենք իրենց հետ չար կատակ խաղացին:

Բ. - Շուշիի գործողությունը նախօրոք ինչպե՞ս էր մտածված եւ ինչպե՞ս եղավ:

Կոմ. - Մենք պետք է ոչնչացնեինք կրակակետերը: Ստեփանակերտից մոտ հինգ հարյուր մետր բարձր սարահարթից, «Գրադներով», հրետանիով, զրահամեքենաներով, տանկերով, շուրջ հազար երկու հարյուր զինված մարդկանցով, 37-րդ աֆղանական գումարտակով՝ նրանք շատ ինքնավստահ էին: Ստեփանակերտի ողջ բնակչությանը նկուղներն էին քշել: Տների յոթանասուն տոկոսը ռմբակոծությունից վնասվել էր: Մեր բոլոր՝ վաթսունից ավելի ջոկատները դիմեցին մեզ. «Ե՞րբ ենք ազատագրելու Շուշին»: Մեծ քանակությամբ զինամթերք էր անհրաժեշտ: Ծրագիր էր կազմվել: Շուշիի պաշտպանական շրջանը ամբողջական համալիր էր: Այն քարտեզի վրա նման էր արծվի, որ մի թեւը ձգվում էր մինչեւ Ջանհասան ու Քյոսալար, մյուս թեւը՝ Լիսագորսկ: Ընդհանուր ձգվածությունը երեսունհինգ կիլոմետր էր: Որոշել էինք Լիսագորսկի ճանապարհը Լաչինի ուղղությամբ բաց պահել:

Շուշիի գործողության ժամանակ երկու ամենակարեւոր ուղղությունները հսկում էին Վալերի Չիթչյանը եւ Արկադի Կարապետյանը՝ Ագոն: Ստեղծվել էին հինգ խմբավորումներ: Չորսը պետք է հարձակվեին, իսկ հինգերորդը ռեզերվ էր, այն գլխավորում էր Քսանվեցի Յուրան, նա պետք է զարգացներ հաջողությունը: Քյոսալար - Ջանհասան ուղղությամբ ծանր վիճակ էր ստեղծվել:

Ադրբեջանցիները երկու սխալ թույլ տվեցին: Նրանք չէին հավատում, որ մենք Շուշին կվերցնենք: Երկրորդ սխալը՝ մեր խայծը կուլ տվեցին: Մենք մի քանի անգամ Շուշիի վրա հարձակվելու մասին հայտարարություն արեցինք, բայց ամեն անգամ ցուցադրաբար հետաձգեցինք: Այդպես արեցինք ապրիլի 24-ին, մայիսի 5-ին: Տեսնելով մեր զորքերի առաջխաղացումը Քյոսալարի ուղղությամբ՝ Շուշիից շտապ գումարտակ ուղարկեցին այնտեղ: Վալերի Չիթչյանի եւ Ագոյի խմբերին միացան Սեյրան Օհանյանի խումբը եւ Սամվել Բաբայանի օգնական խումբը: Այն, ինչ նրանք արեցին, վեր էր մարդկային կարողություններից: Մանրակրկիտ գործողություն մշակելու ժամանակ չունեինք: Մենք կարող էինք շրջապատել Շուշին եւ պաշարել այն, բայց քառասունութ ժամում այդ անմատչելի բերդը գրավելը դժվար էր ծրագրել: Ես չէի սպասում, որ նման բան կլինի: Բայց ահա Աշոտ Բեկորը զեկուցեց, որ ինքը արդեն Շուշիի բանտի տարածքում է, հետո զեկուցեցին Չիթչյանը եւ Ագոն:

Բ. - Դուք տեղյա՞կ էիք, որ Միլի Մեջլիսի՝ մայիսի 12-ի ընտրություններից առաջ Մութալիբովը եւ Էլչիբեյը իրենց օգնական ուժերին Շուշիից կանչել էին Բաքու:

Կոմ. - Շուշիում հինգ խմբավորում կար: Դրանք ժողճակատի ուժերն էին, բանակի ստորաբաժանումը, Ներքին գործերի նախարարության ուժերը: Ես ճանաչում էի հրամանատարներին: Նրանք մեկը մյուսին չէին լսում, նրանց միջեւ քաղաքական գզվռտոց էր: Բնական է, որ նախիջեւանցի Էլչիբեյին օգնություն էր պետք: Նրանց համար կարեւորը իրենց դիրքերը ամրապնդելն էր՝ անգամ Շուշին կորցնելու գնով: Հետո Շուշիի հարցում իմ կատարած դերի շուրջը անառողջ խոսակցություններ էին պտտվում: Դա դուր չեկավ Լեւոն Տեր-Պետրոսյանին: Աշոտ Մանուչարյանն էր շատ դժգոհ: Ես ինքս նրանց չէի հասկանում: Իսկ Վանո Սիրադեղյանը անկեղծորեն ուրախանում էր: Շուշիի հաղթանակը ամենախոշոր նվաճումն էր: Մենք հասկացանք, որ ուժեղ ենք եւ կարող ենք հաղթել թշնամուն: Ես վերադարձա Ստեփանակերտ: Հանկարծ հայտնեցին, որ Հատուկ գնդի հրամանատար Կարապետյանը եւ Վագիֆ Գալստանը պայթել են ականի վրա: Պետք էր շտապ այնտեղ մեկնել, եւ ուղարկեցին ինձ ու

գեներալ Արթուր Հարությունյանին:

Մենք ըստ ուղղությունների կազմեցինք Մարտակերտի պաշտպանության ծրագիրը: Բայց մեր ծրագիրը ձախողվեց խուճապահար նահանջի եւ Շահումյանի բնակչության բռնագաղթի պատճառով: Շնորհիվ այն բանի, որ այնտեղ նաեւ սլավոններ էին ապրում, ռուսները թույլ չտվեցին, որ եղեռն լինի: Մեր զինված ուժերը խուճապահար դուրս եկան այնտեղից:

Բ. - Նրանք կարո՞ղ էին դիմակայել հակառակորդի ճնշմանը: Գեներալ-գնդապետ Դալիբալթայանն ասաց, որ այնտեղ զենքի եւ ռազմամթերքի այնպիսի պաշար կար, որով կարող էին դիմակայել:

Կոմ. - Չէին կարող: Հետո ասացին, թե Արկադի Տեր-Թադեւոսյանն է դրանում մեղավոր:

Բ. - Նա ինձ այդպիսի բան չի ասել:

Կոմ. - Այնքան տանկեր եւ զրահատեխնիկա կային, նաեւ օդից էին ռմբակոծում: Դիվիզիայի բոլոր հրամանատարները ընդգրկված էին, նրանց պարգեւատրում էին խոստացել, մի մասը ստացավ, մի մասը՝ ոչ: Մարտակերտից վերջինը ես եմ հեռացել: Բայց հակառակորդը դեռ այնտեղ չէր:

Բ. - Պատմում են Հատուկ գնդի տղաների կատարած դիակապտությունների մասին, դա ճի՞շտ է:

Կոմ. - Գնդի կորիզը առողջ էր, բայց այնտեղ կային ավազակաբարո մարդիկ, որոնք դիտավորյալ խուճապ էին առաջացնում եւ դիակապտությամբ զբաղվում:

Բ. - Եվ դա Մարտակերտն ու շրջանի հարթավայրային բնակավայրերը թշնամուն հանձնելու գնով: Պատմեք «Արաբո» ջոկատի կորուստների մասին:

Կոմ. - Այնտեղ ծուղակ է եղել: Մենք հակահարձակման ծրագիր էինք մշակել, բայց նրանք ծուղակն ընկան: Այդպես չպիտի լիներ, ինչոր մեկը մեզ դավաճանեց: Դավաճանություն էր: Գործողությունը ամբողջությամբ ձախողվեց: Աշոտ Բեկորը ականապատված դաշտ էր ընկել:

Բ. - Այս ամենը վկայում է այն մասին, որ գործողությունը նախապատրաստված չէր նաեւ հետախուզության առումով:

Կոմ. - Հասկանու՞մ եք, մերոնք պայթել էին ականի վրա: Նույնը եղավ Վագիֆի եւ գնդապետ Կարապետյանի հետ, Քսանվեցի Յուրան Մարտակերտեւմ պայթեց ականի վրա:

Բ. - Դուք ճանաչու՞մ էիք Լեոնիդ Ազգալդյանին:

Կոմ. - Նա գիտնական էր եւ հայրենասեր: Ինքնուրույն քաղաքականություն էր վարում, չէր ընդունում ոչ ՀՀՇ-ին, ոչ Դաշնակցությանը:

Բայց ԱՍԱԼԱ-ից Հովսեփ Հովսեփյանի միջոցով ինձ հետ կապ էր պահպանում: Պարզ է, որ նրան վերացրին, ո՞վ արեց՝ պարզ չէ: Հանգամանքները շատ մութ են: Նրան ճանաչում էի դեռ Երեւանում, երբ Աշոտ Նավասարդյանի հետ ստեղծում էին «Հայ բանակը»: Երբ ես Մարտակերտում էի, պատասխանատու էի այն գոտու համար, որտեղ նա էր Վլադիմիրի ջոկատի հետ: Ես նրա մոտ չէի գնում, որովհետեւ այնտեղ ամեն ինչ կարգին էր: Իսկ Մորուք Ռաֆիկը ոչ մեկին չէր ենթարկվում, բայց Դաշնակցությունից էր: Երբ հանդիպում էինք, ջերմ գրկախառնվում էինք, եւ իմ մասին ասում էին, թե իբր դաշնակցական եմ: Ես Դաշնակցության դեմ ձեռք չեմ բարձրացրել:

Կարծում եմ, որ Շահումյանի եւ Մարտակերտի անկման մեջ մեր որոշ ղեկավարներ շահագրգռվածություն ունեին, քանի որ այդպես շուտափույթ հանձնել Մարտակերտը... Ես Կուսապատից ամեն ինչ պարզ տեսնում էի: Վայրկենական, առանց իմ հրամանի, Մարտակերտը լքեցին:

Պատմում է Արկադի Կարապետյանը (Ագո): Զրույցը վարեց Բակուր Կարապետյանը. 20.02.2006, Երեւան: Մուտքագրեց Անահիտ Ասատրյանը:



Ա.Կ. - Ծնվել եմ 1958 թ. Ստեփանակերտում:

Ազատության գաղափարները որեւէ ազգի մեջ մի մարդու մենաշնորհը չեն: Ես էլ էի լցվել դարերով եկած ազատության գաղափարներով՝ ծնողների, միջավայրի, գրականության, մեր մեծերի պատմածների շնորհիվ: Ես՝ որպես մի երիտասարդ, որը մտածում էր, թե ինչպես կարելի է ազատ ապրել, եկա այն եզրակացության, որ մենակ ազատ ապրել չի լինում, պիտի միջավայրդ նույնպես ազատ լինի: Ուղիներ էի փնտրում, թե ինչպես կարելի է ազգովի ազատ լինել: Իմ միջավայրում փնտրում էի ինձ նման մտածող տղաների եւ գտա: Ղարաբաղում երկու միտում կար, դրանցից մեկն էր՝ ներսում փնտրել ազատության ճանապարհները, ինչպես մեր խումբն էր անում: Խմբում Ղուլյան Աշոտն էր՝ Բեկորը, Սարգսյան Աշոտը՝ Ֆիզիկ մականունով, Բաբայան Թելմանը Դահիրազ գյուղից: Սկզբում միայն մենք էինք, հետո սկսեցինք ընտրել մեզ նման մտածող այլ մարդկանց: Կային մարդիկ, ովքեր Հայաստանի հետ կապ ունեին եւ, այսպես ասած, հույսը դրսի վրա էր, օրինակ՝ Հադրութի խումբը՝ Արթուր Մկրտչյանը, Էմիլը, Բաբայանը, կապված էին Հայաստանի, Զորի Բալայանի, Իգոր Մուրադյանի հետ: Մենք նրանց հետ կապեր հաստատեցինք ընդհատակի ուշ շրջանում՝ 1987 թ. երկրորդ կեսին: Սկզբում կապ հաստատեցինք Սուրեն Այվազյանի հետ, հետո՝ Իգոր Մուրադյանի ու Զորի Բալայանի: Սերգեյ Շահվերդյանին ուղարկեցինք Զորի Բալայանի մոտ, Հակոբին՝ Սուրեն Այվազյանի: Մեր հույսը մեզ վրա էր, քանի որ մինչեւ Հայաստանի հետ կապվեինք եւ իմանայինք՝ ինչ անել, իրավիճակը կարող էր փոխվել: Այնտեղ հարցին ուրիշ տեսանկյունից էին նայում, մենք՝ ուրիշ: Պետք է սկզբում այստեղ կազմակերպեինք, ուժեղ լինեինք, որպեսզի մեր հարցերը ինքներս կարողանայինք հասկանալ եւ լուծել: Մեր խմբի ղեկավարը ես էի: Նախաձեռնեցի Ղարաբաղում գործող բոլոր ընդհատակյա կազմակերպությունների միավորումը: Ասկերանի խումբը ղեկավարում էր Սլավիկ Առուշանյանը: Այդ խմբում էին Բաղարայի Կարենը,

որը կոմսոմոլի քարտուղար էր, Կոմիտասը: Մարտունիում Վոլոդյան էր ղեկավարը, Կամոն էր խմբում: Մարտակերտում Շիրինյան Վիգենն էր, Վազիֆը: Սկզբում հատկապես մարտունեցիները շատ զգուշավոր ընդունեցին եւ՝ առաջարկը եւ՝ ինձ: Մանավանդ այդ տրամադրությունը պահում էր Բագրատ Ուլուբաբյանի եղբայրը: Ի վերջո հավատացին, որ ես գործակալ չեմ: Ստեղծեցինք ընդհանուր կազմակերպություն, եւ ես դարձա գլխավոր կոորդինատորը: Կազմակերպությունը անուն չուներ, ինչպես մեր խումբը: Դա 1987 թ. հոկտեմբեր - նոյեմբեր ամիսներին էր: Երբ առաջին եւ երկրորդ պատվիրակություններին ուղարկեցինք, մեր միավորվածությունը ուժեղացավ, ամրապնդվեցին կապերը: Տասնվեց տարեկան էի, երբ երդվեցի, որ Ղարաբաղը պիտի միանա Հայաստանին, հետո իմ հասակակից տղաների հետ խոսեցի: Եղան մարդիկ, որոնք ընդգրկվեցին ընդհատակյա խմբում, բայց դուրս եկան, քանի որ չհավատացին, թե այն կարող է լավ բանի հանգեցնել, մեզ չմատնեցին, բայց դուրս եկան խմբից, եւ մարդիկ էլ կային, որոնք մնացին, բայց ծախեցին:

Ղարաբաղով մեկ ստորագրահավաք կազմակերպեցինք: Առաջին ցուցակում, որը տարանք Մոսկվա համոզելու երկրի ղեկավարներին, որ այս մարդիկ ուզում են Ղարաբաղը միանա Հայաստանին, քառասունութ հազար ստորագրություն էր: Դեմիչեւը՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալը, ասաց, որ մենք հանրաքվեն անցկացրել ենք, մնացել են տեխնիկական հարցերը: Երբ գնում էինք Մոսկվա, ես եւ իմ ընկերները համոզված էինք, որ մենք այլեւս ետ չենք գալու, ամենաքիչը չորս տարի պիտի նստենք:

Բ. - Ինչպե՞ս եք առաջին հանրահավաքը կազմակերպել:

Ա.Կ. - Այդ հանրահավաքին մի ամիս պատրաստվել ենք: Մոսկվայից եկանք հունվարի 11-ից 13-ն ընկած ժամանակահատվածում եւ սկսեցինք պատրաստվել:

Բ. - Ո՞ր պատվիրակությունն էր, Վաչե Սարուխանյանը ձեզ հետ է՞ր:

Ա.Կ. - Չէ, Վաչեն մեզնից հետո գնաց: Առաջին պատվիրակությունում Մարտունու Կամոն էր, Հադրութից Աբրահամյան Էմիլը, Իգոր Մուրադյանը, որը հետո մեզ հետ էլ գնաց: Նրանք ոչ ոքի հետ չկարողացան հանդիպել, միայն թուղթը հանձնեցին, որին ոչ մի նշանակություն չտրվեց: Միջազգային հարաբերությունների բաժնի ընդունարանում դրա վրա չնայեցին էլ: Մենք երկրորդ պատվիրակությունն էինք՝ տասներեք հոգով, եւ այնտեղ մեծ գործ ծավալեցինք: Հայ ուսանողներին ոտքի հանեցինք եւ բունտ արեցինք կենտկոմում: Բաժնի վարիչը մեզ ընդունեց, բայց դրանով չբավարարվեցինք: Մեծ աղմուկ բարձրացրինք, եւ Դեմիչեւը մեզ ընդունեց: Բայց մինչ այդ Գերագույն խորհրդից տարբեր մարդիկ ընդունեցին: Ահագին մարդկանց հետ

հանդիպեցինք՝ թե հայ, թե ռուս, Շահնազարովին, Ենիկոլոպովին, Սրապյանցին, Մոսկվայի հայտնի հայերին տեսանք: Մեզ հետ էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Վազգեն Բալայանը՝ Սոս գյուղից: Լավ, պարզ տղա էր, թեւ մի քիչ անգրագետ էր: Սկզբում, երբ մեզ ոչ ոք չէր ուզում ընդունել, նրան ասացինք. «Դու ընդհանրապես մի խոսիր, միայն Գերագույն խորհրդի՝ կրծքիդ ամրացված նշանը դեմ տուր, վկայականդ հանիր, դրան նայելով՝ դռները բացվում են»: Հասարակ մարդկանց «Ռոսիա» կամ «Մոսկվա» հյուրանոցում չէին ընդունում, բայց Վազգենի վկայականով մեզ հաջողվեց: Նաեւ Մոսկվայի հայերը մեզ օգնեցին, բայց կարեւորը Վազգենն էր ու մեր «հուլ-բույը»: Ես եւ Արմոն, որը դասատու էր, «Ռոսիա» հյուրանոցի նույն համարում էինք մնում: Իգորի հետ իր համարում զրուցում էինք, թե զանգելու ենք Ամերիկյան դեսպանատուն, որպեսզի մեզ ընդունեն: Այդ մասին Իգորը ընդամենը երկու հոգու հետ խոսեց հեռախոսով, դրանից անմիջապես հետո Սրապյանցը զանգեց. «Մի՛ գնացեք, ես կենտկոմի հետ կխոսեմ»: Իգորը հարցրեց՝ դու՞ ինչ գիտես: Ում հետ որ խոսել էր, նրանք Սրապյանցի հետ կապ չունեին, այսինքն՝ մեզ լսում էին: Մենք չէինք էլ ուզում գնալ, մեր նպատակը այդ չէր, պարզապես նրանք մեզ հետ էին խաղում, մենք՝ նրանց հետ: Մեզ հետ էին Մարտունուց Շահրամանյանը՝ Հայրենական Մեծ պատերազմի վետերան, Սլավիկ Առուշանյանը, որը Ասկերանի շրջկոմի բաժնի վարիչ էր: Սլավիկը միշտ զգուշացնում էր, թե մեզ խելոք պահենք, քանի որ նկարում են, հետեւում են: Առաջարկում էր գնալ Լենինի դամբարան, Հեղափոխության թանգարան: Լենինի դամբարան չուզեցինք գնալ, բայց Հեղափոխության թանգարան գնացինք, մանավանդ որ մոտիկ էր: Թանգարանի մոտ Անհայտ զինվորի հուշարձանն էր, եւ երկու զինվոր էին կանգնած: Սլավիկն իր կոմունիստի շարժուձեւով եկավ, թե՝ դիմացը կանգնենք, մենք էլ շատ անհոգ եկանք: Շահրամանյանը բարձրացավ աստիճանների վրա, ձեռքը տնկեց ու՝ «Հա՛յ Հիտլեր», որը Առուշանյանին իսկական «նվեր» էր: Ռուսները երեւի չհասկացան՝ ինչ կատարվեց, թե շոկի մեջ էին, ոչ մի արձագանք չեղավ: Սլավիկը ետ եկավ, բոլորիս զոռով, հրելով տարավ Հեղափոխության թանգարան: Թանգարանում շատ արագ պտտվեցինք ու ետ դարձանք: Եկանք Ղարաբաղ: Դեմիչեւը զանգեց Կեւորկովին, ասաց. «Ոչ մի ճնշում չլինի այդ մարդկանց նկատմամբ»: Մեզ ամեն քայլափոխի հետապնդում էին, լսում, ցույց էին տալիս, որ հետաքրքրվում են, մեր նյարդերի հետ խաղ էին անում, բայց չէին բռնում: Թաղայինն էր գալիս մեր տուն, ասացի. «Մի անգամ էլ գաս, լավ չի լինի, գործ չունես ինձ հետ»: Մարտունու խմբից Լորիկը եւ ես Բեղվի Վալոյի մեքենայով Հայաստանից թռուցիկներ ու պաստառներ բերեցինք, որոնց վրա գրված էր. «Ղարաբաղը մերն է»: Դրանք Իգոր Մու-

ռադյանից վերցրինք: Ճանապարհներն այդ ժամանակ բաց էին, պոստեր չկային: Իջեւանից անցանք, Ադրբեջանի տարածքում՝ Ղազախում, պոստ էր կանգն: Ոստիկանները ավտոմատներով զինված էին, մեզ կանգնեցնում էին: Արդեն մոտենում էինք: Մութն էլ ընկնում էր, չէր երեւում, եթե մոտենայինք, ոչ առաջ կարող էինք քշել, ոչ ետ: Վալոյին ասացի՝ քշի՛ր անցիր: Անցանք, Աղստաֆայի պոստում պետավտոտեսուչը կանգնեցրեց: Մեծ փորով ոստիկանը մոտեցավ, ասաց.

- Ինչու՞ այն պոստում չեք կանգնել:

- Մութ էր, չենք տեսել:

Իմ ու Լորիկի ձեռքին մեր վկայականներն էին, ասացինք՝ կոմսոմոլի աշխատողներ ենք, թե՝ մեքենան ստուգեմ, ասացինք՝ ստուգիր:

Մեքենայի պարունակության մասին ասացինք, որ կոմսոմոլի կոնֆերանսի համար ենք տանում: Բախտներս բերեց, որ ոստիկանը թուրք էր, ոչ ռուսերեն կարդալ գիտեր, ոչ հայերեն, նայեց-նայեց, ոչինչ չհասկացավ, վարորդին կանչեց: Վալոյին ասացի. «Ինչքան փող ուզի՝ կտաս»: Մտածում էինք, թե հինգ ռուբլի կվերցնի, բայց տասը ռուբլի էր վերցրել:

Եկանք ու սկսեցինք պատրաստվել հանրահավաքին: Երբ Մոսկվայից եկանք, ժողովուրդը միանգամից ակտիվացավ, ովքեր այն ժամանակ էլ ակտիվ էին, շատ էին հետաքրքրվում, շահագրգռված էին: Ես տարբեր դիրեկտորների հետ խոսեցի, N159 Պրոֆտեխուսումնարանի տնօրեն Վլադիկի ու Սիրգոյան Մաքսիմի հետ եմ խոսել: Մարդկանց բացատրում էի, որ վախենալու բան չկա: Ղեկավարները նույնպես սկսեցին կամաց-կամաց ակտիվանալ: Բոլոր գործարաններում մեր տղաները աշխատում էին, թե կոնկրետ քանի մարդու կարող են բերել միտինգի: Կային մարդիկ, ովքեր ասում էին, թե ամբողջ գործարանը կարող են հանել միտինգի: Ասում էինք. «Այդպես չէ, կարող ես հանել քսան մարդ՝ ասում ես քսան»: Կոնկրետ թվեր էին պետք, որպեսզի իմանայինք՝ միտինգը կստացվի, թե ոչ, հազար հոգի կան՝ լավ է, եթե ոչ, պիտի շարունակենք աշխատել: Պատրաստվում էինք փետրվարի 15-ին հանրահավաք անել: Ժամկետների առումով լավ չէինք հասկացել իրար: Փետրվարի 13-ի առավոտյան գնացի Ասկերան, որպեսզի ասկերանցիների հետ ճշտեի, թե ինչպես ենք անելու, ինչպես են գալու: Առուշանյան Սլավիկն ասաց.

- Միտինգ չե՞նք անում:

- Չէ, միտինգը վաղը չէ մյուս օրն է:

- Չորս հարյուր հոգու բերել ենք Պետաչոկի դիմաց, հեսա պիտի սկսենք:

- Գնա ժողովրդին հանգստացրու, թող սպասեն, հիմա մի բան կանեմ:

Երկու ժամում պտտվեցի բոլոր գործարաններում, տղաներին ասացի, որ այնտեղ ինչքան մարդ կա, բերեն, որպեսզի մտնենք հրապարակ: Գնացի ինստիտուտ, ուսանողներին ոտքի հանեցի: Հետո մտածեցի, որ տեխնիկումը հայկական է, այնտեղ ոգին բարձր կլինի: Գնացի այնտեղ, ասացի. «Գնացինք», թե. «Պաստառը արդուկենք ու դուրս գանք, պատրաստ ենք»: Միանգամից հավաքվեցինք ու գնացինք՝ սկզբում ուսանողներով: Ես ելույթի չէի պատրաստվել, չէի որոշել, թե ով եւ ինչ պիտի խոսի, քանի որ մեր նախատեսած օրվան դեռ երկու օր ժամանակ կար: Հասցրեցի Խորհրդային Միության սահմանադրության բրոշյուր վերցնել ձեռքս, ու բարձրացանք: Ուսանողներով կանգնեցինք Պետաչոկի եղեւնու տակ: Մեր դիմաց ելան Մովսիսյան Զավենն ու Արմեն Իսագուլովը, թե՝ այս ի՞նչ եք անում... Սովորական կոմունիստական քարոզչություն էր: Ուսանողները թեւաթափ եղան: Ես էլ մեջքերը վազվզում էի՝ տեսնելու, թե ով ոնց է, ինչ տրամադրություն է տիրում: Ես, Սահմանադրությունը ձեռքիս, անցա առաջ, ասացի. «Մենք իրավունք ունենք այս հանրահավաքն անելու, ահա՛, գրված է, մեզ մի՛ խանգարեք»: Ասելուց հետո առաջ գնացի ու ժողովրդին ասացի՝ եկե՛ք: Ուսանողները լցվել էին հրապարակում: Ես գլուխս կորցրել էի, չգիտեի՝ ինչ ասել: Ասկերանցիներն էլ եկան, մոտ հազար մարդ կար: Ու ժողովուրդը սկսեց գալ: Աշոտը կոնդենսատորներ բերեց: Պետք է ինչ-որ բան ասեինք, բայց ի՞նչ ասեինք: Դրությունը փրկեցին Աֆանասյան Գրիշան ու Արաքսյան: Գրիշան բարձրացավ քաղկոմի դիմաց՝ Լենինի արձանին կից սարքած ամբիոն ու սկսեց խոսել: Նա փիլիսոփայության դասախոս էր, մի քիչ խոսեց, հետո Արաքսյան գոռգոռալով եկավ ու անցավ իր ընտանեկան հարցերին: Այդ ժամանակ ասացի, որ հերիք է, քանի որ հանրահավաքը այլ՝ սոցիալական հարցերի էր վերածվում: Արաքսյային ասացի, որ մի կողմ անցնի, ու սկսեցի ժողովրդին պատմել, թե ես ով եմ, ինչ ենք անում, Մոսկվայում Դեմիչեւն ինչ ասաց, որ Հայաստանին միավորվելը ռեալ իրողություն է, ասացի, որ էքստրեմիստները մենք չենք, այլ նրանք՝ ցույց տալով շենքի կողմը՝ Կեւորկովին...

Բ. - Իսկ ժողովուրդը ինչպե՞ս էր արձագանքում, միացման մասին խոսու՞մ էին, թե դեռ ոչ:

Ա.Կ. - Այո, իհարկե:

Առաքելյան Գառնիկ - Ժամը ուղիղ 14:45 էր, հրապարակում մոտ 1500 մարդ կար, բոլորը, ձեռքերը վեր պարզած, «Միացում» էին գոռում:

Ա.Կ. - Ես նախօրոք «Շուշվա ուգլում» գտնվող «Ռեմկոնտորայի» տնօրենի՝ Բաղդասարյան Ռոբերտի հետ խոսեցի, պաստառները նրանց սարքել տվեցի: Այդ խումբը ղեկավարում էր Սերժը՝ Խախլատի

մականունով, նա արտադրամասի վարիչ էր: Նրանք պիտի հրապարակի մոտ գտնվող դատախազության շենքի անկյունում սպասեին ու, իմ նշանի համաձայն, մտնեին հրապարակ եւ պաստառները բացեին: Երբ արդեն ելույթ էինք ունենում, մարդ ուղարկեցի Սերժիկի մոտ: Նրանք եկան պաստառները բացեցին, ու դարձավ իսկական միտինգ:

Ինչը արագացրեց ասկերանցիներին:. Փետրվարի 12-ին Ղարաբաղ էր եկել Ադրբեջանի կոմկուսի երկրորդ քարտուղարը՝ Կովալենկոն, որպեսզի ամենուրեք կուստնտակտիվ անցկացնի, իբր մենք նման բաներին դեմ ենք: Կովալենկոն կպավ Մաքսիմ Միրզոյանին, երեւի խորհրդային իշխանության հին մեթոդի համաձայն, երբ մեկին պատժում էին, որ մյուսներին դաս լինի: Մաքսիմ Միրզոյանը պաշտպանվելու համար սկսեց խոսել եւ իրեն ներկայացրեց որպես շարժումը բարձրացնող: Բայց ես Մաքսիմին լավ եմ ճանաչում. եթե Կովալենկոն նրան չկպներ, նա չէր վեր կենա ու խոսեր: Իսկ Կովալենկոն Մաքսիմին սարքեց ամբողջ խռովության ղեկավարներից մեկը: Ընդ որում, Մաքսիմը շատ մեղմ պաշտպանվեց, բայց հասկանում էր, որ եթե չպաշտպանվի, կկործանվի: Դրա համար ասկերանցիները արագացրին այդ պրոցեսը, տարերայնորեն ստացվեց: Եթե Կովալենկոն չգար, հանրահավաքը փետրվարի 15-ին էինք անելու: Երբ անցկացնում էին կուստնտակտիվը, ես քաղխորհրդի մուտքի մոտ կանգնած էի, ղեկավարներից ում հետ որ խոսել էինք, նորից նրանց հետ խոսում էի:

Բ. - Ինչքա՞ն տեւեց հանրահավաքը:

Ա.Կ. - Չեմ հիշում, բայց մարդիկ արդեն աշխատանքից վերադառնում էին ու, նաեւ հետաքրքրությունից դրդված, գալիս էին հրապարակ:

Բ. - Քեզանից հետո ելույթ ունեցողներ եղա՞ն:

Ա.Կ. - Ոչ, չեղան: Ես կոմսոմոլի հրահանգիչ էի, Մուսաելյան Մարատը միտինգի գիշերը Բաբայան Էդիկին, որը մեզ մոտ էր աշխատում, ուղարկեց մեր տուն՝ ասելով, որ Կեւորկովն ինձ կանչում է: Ասացի. «Գնա ասա, որ քնած եմ»: Էդիկը գնաց, ետ եկավ, թե՝ Մարատը խնդրում է: Համաձայնվեցի, քանի որ Մարատը լավ տղա էր, չէի ուզում նրա համար ծանր վիճակ ստեղծել: Գնացի կուսմարզկոմ ու Մարատի հետ բարձրացա Կեւորկովի մոտ: Կեւորկովը ոնց որ ծեծված շուն լիներ: Նա միշտ դոշը դեմ տված, գոռոզ մարդ էր, բայց այդ պահին ինձ հետ հանդիպողը պարզապես մի ծերուկ էր: Ասաց.

- Այդ միտինգը դու՞ ես կազմակերպել:

- Չէ:

- Ինչպե՞ս թե՝ չէ, իսկ այդ պաստառներն ո՞վ է գրել:

- Դե, մեր ժողովուրդը ունակ է, տեղում գրել են:

- Չէ, ես հո գիտեմ, որ դու ես:

Ջղայնացա, ասացի.

- Հա՛, ես եմ արել, իրավունք ունեմ՝ արել եմ:

- Իսկ գիտե՞ս՝ թուրքերը հավաքված սպասում են, որ հարձակվեն Ղարաբաղի վրա, նրանք մարդկային լեգու չեն հասկանում, Ղարաբաղը գերեզման են սարքելու:

- Լսիր, գիտե՞ս ինչ, ասա, թող գան:

Կեւորկովը հուսալքվեց, ասաց.

- Միայն մի բան եմ խնդրում, վաղը միտինգ չանես:

- Լավ, տղամարդավարի խոսում ենք, վաղը չեմ անի, բայց հաջորդ օրը անելու եմ: Քեզ՝ որպես մեր ղեկավարի, հարգում եմ, այդպես լա՞վ է:

-Այո՛:

Երբ դուրս եկանք, Մարատն ասաց. «Ես նրան երբեք այդ վիճակում չէի տեսել»:

Փետրվարի 14-ին միտինգ չարեցինք, իսկ 15-ին արեցինք: Փետրվարի 15-ին երրորդ պատվիրակությունը վերադարձավ, որոնց կրկին ես էի ուղարկել: Նրանց Ղարաբաղից Բեղլի Վալոյի մեքենայով տարել եմ Երեւան, մեքենայում նստել էին Ժաննան, Քնարիկը, որը պատգամավոր էր «Ղարմետաքս» կոմբինատից: Պատվիրակության կազմում էին Գուրգեն Գաբրիելյանը՝ Ծիտիկը (ես վատ իմաստով չեմ ասում «ծիտիկ», պարզապես ժողովուրդն է նրան այդպես ասում, ինձ էլ Դաշնակ Ազո են ասում, բայց ես դաշնակցական չեմ), Հրաչ Բեգլարյանը, Վարդան Հակոբյանը, երկու պատգամավոր կանայք, Սարուխանյան Վաչեն: Երբ Ադրբեջանով գալիս էինք Հայաստան, բոլորը սուս էին: Ես Հրաչ Բեգլարյանի ու Գուրգեն Գաբրիելյանի հետ նույն մեքենայում էի, լուռ ու մունջ գալիս էինք, հենց Հայաստանի սահմանն անցանք, Գուրգենը սկսեց երգել: Փետրվարի 15-ին մեքենաների շարասյունով գնացինք նրանց դիմավորելու, նրանք Երեւանից ավտոբուսով էին գալիս: Դիմավորեցինք օդակայանում, Խոջալուն անցանք, ուզում էինք շուտ գնալ: Նրանց բերեցինք հանրահավաքի, ու սկսեցին խոսել: Գուրգենը լավ, հռետորական ոգով խոսեց՝ ժողովրդին «վառեց»: Հրաչյան էլ էր լավ խոսում, տեղից թռնում էր, ասում՝ մա՛հ թուրքերին: Փետրվարի 20-ին որոշեցինք փաստաթղթերով ձեւակերպել, բայց պատգամավորների կեսին, թեեւ հիմա բոլորը «հերոս» են, ծեծելով ենք բերել դահլիճ, նույնիսկ մեկին, որը մարզկոմի աշխատող էր, սեղանի տակից ենք հանել, այն էլ կինն է ասել՝ վեր կաց, գնա ձայն տուր: Մարդ կար, որին բառացիորեն ծեծել ենք: Ժողովուրդը կանգնեց, ու որոշումը ընդունվեց: Մեծ սխալ է փետրվարի 20-ը շարժման օր ընդունելը: Դա շարժումը ոչ թե ժողովրդին, այլ իրենց վերագրելու համար է: Բայց շարժումը սկսեց ժողովուրդը փետրվարի 13-ին, եւ եթե պատգամավորներին «կլիգմա» չանեին, այդ որոշումը չէր ընդունվի:

Բ. - Դու տեղյակ էի՞ր, ո՞նց ես պատկերացնում Ասկերանի բախումը, որ թուրքերը Աղդամից տասնհինգ հազարով եկան:

Ա.Կ. - Իհարկե տեղյակ էի, կրակոցները պատմությունը շուտ վերջացրին, թե չէ մենք Ստեփանակերտից պատրաստ էինք գնալ:

Բ. - Ովքե՞ր էին կրակողները:

Ա.Կ. - Մեկը Ջաբին էր, իմ կարծիքով՝ ճիշտ է արել:

Առաքելյան Գառնիկ - Ձենքով շատ մարդ է եղել, գնդացիր ենք ունեցել՝ Ղարաբաղում առաջին գնդացիրը, որը գողացել էինք դպրոցից, բայց այն չի կրակել:

Ա.Կ. - Շարժման սկիզբը բոլորը ուզում են ներկայացնել որպես տարերային շարժում, որպեսզի ասեն, թե իրենք են կազմակերպել: Ոչ մի բան տարերային չի եղել, ամեն ինչ կազմակերպված եւ հսկողության տակ էր, ու միշտ զուգահեռ կառույցներ են եղել: Ստեղծվել էր ինքնապաշտպանության շտաբը, որի ղեկավարը Ռազմիկ Պետրոսյանն էր: Այն զուտ կոմունիստական սիստեմով էր ստեղծված, այսինքն՝ կոլխոզի կամ գյուղսովետի նախագահը ջոկատի հրամանատարն էր, ինչքան տղամարդ կար, գրված էր, իբր նրանք ջոկատ են, ասենք՝ ֆերմայի վարիչը այդ ֆերմայի ջոկատի հրամանատարն էր: Բայց դրանք ոչինչ չէին ներկայացնում իրենցից:

Առաքելյան Գառնիկ - Նույնիսկ օգնության չէին գնում, գյուղում սպասում էին:

Ա.Կ. - Զուգահեռ կառույց կար, որը մենք էինք, այն տղաները որոնք նորմալ պատրաստված, կազմակերպված էին եւ զենք ունեին: Ասկերանում Գառնիկենք շուտ են հասել, մեզ մինչեւ ասացին, որ հավաքվենք... Կապի խնդիր կար, հեռախոսային խոսակցությունները լսում էին, մեջտեղում խոչալու կար... Եթե կրակոցները չլինեին, մենք կգնայինք Ասկերան ու կռվի մեջ կմտնեինք: Թուրքերը ետ գնացին, մենք ամբողջ ժողովրդով չեկանք, որ չբռնվենք: Ով որ պետք էր՝ եկավ նայեց, գնաց:

Բ. - Ինչու՞ են քեզ ասում Դաշնակ Ագո:

Ա.Կ. - Ղարաբաղում առաջին հինգ դաշնակցականները մեր ընդհատակյա խմբից էին ես, Ղուլյան Աշոտը՝ Բեկորը, Սարգսյան Աշոտը, Հակոբը, Գենան: Մի ժամանակ Վարանդն էր, բայց ինձ Վարանդը չի ընդունել: Պատմեցին, թե դաշնակցականները ինչ դեր են ունեցել ազգի պահպանման գործում: Հավատացի: Ես հիմա էլ այն կարծիքին եմ, որ նրանք մեծ դեր ունեն ազգի կայացման գործում, շարժման մեջ էլ շատ մեծ դեր ունեցան, առաջին մեծ քանակությամբ զենքերը նրանք բերեցին, բայց իհարկե մեծ վնաս էլ հասցրին, բերում հասցնում էին գագաթնակետին ու գիտակցված մի մեծ սխալ էին գործում: Ստեղծվեց դաշնակցական խումբ, նրանք համարյա մի տարի մեզ օգնեցին:

Ես երկու անգամ Մարուխյանին հանդիպեցի, նա ինձ հարցրեց, թե ինչքան գումար է անհրաժեշտ Ղարաբաղի պաշտպանության համար: Հաշվեցի, թե ամեն ձորակում ինչքան ավտոմատ ու փամփուշտ է պետք, ասացի՝ միլիոն ու կես: Ասաց, որ կլինի, բայց չեղավ: Մյուս տարի հանդիպեցինք, ես նրան ասացի. «Դու սուտ ասացիր»: Զարմացան, թե ես ոնց եմ Մարուխյանի հետ խոսում: Ասացի. «Նա ինձ խաբեց, ես էլ գնացի ամբողջ Ղարաբաղին խաբեցի»: Իմ խոսքերից ազդվեցին: Մի շաբաթ անց առաջին զենքերը տվեցին՝ 11 միավոր զենք: Հետո խումբը մեծացավ, մեզ օգնեցին՝ ոչ իրենց ուժերի չափով, բայց այդքանից էլ գոհ էինք: Երբ նորմալ կազմակերպություն դարձավ, անհրաժեշտ էր մեկը, որը Դաշնակցության անունից խոսեր: Այդ գործը ես հանձն առա, բոլորն էլ գիտեին, ի՞նչ պիտի թաքցնեի, բայց ամեն տեղ Դաշնակցության անունից խոսում էի: Այդպես էլ ինձ կնքեցին՝ Դաշնակ Ագոն:

Բ. - Առաջին ջոկատների մասին պատմիր:

Ա.Կ. - Ջոկատներ ստեղծելը շատ հեշտ էր, քանի որ բոլորն ուզում էին կռվել: Երիտասարդների շրջանում շատերն էին հասկանում, որ առանց զենքի չի լինի: Բայց պետականություն եւ պետական մտածողություն չունեինք, ընկերություն էր, ֆիդայություն, իսկ ֆիդայությունը 1990 թ. ավերիչ էր մեզ համար: Մարդիկ տարերայնորեն հավաքվել էին: Մենք՝ որպես հին ընդհատակյա կազմակերպություն, որքան հնարավոր էր, մարդկանց մեր շուրջը հավաքեցինք: Երբ խոսելը դարձավ անպատժելի, բոլորը վեր էին կենում խոսում, եւ մարդիկ չգիտեին՝ ում ետեւից գնան: Ձենքը հիմնականում մեր ձեռքին էր, մյուսների մոտ մեկ-երկու հատ կար, ամեն մի գյուղում մի հատ լիներ, թե չէ: Իսկ հիմա բոլորը խոսում են, թե զենք էին ուղարկում: Ղարաբաղում զենք չկար, եթե ուղարկում էին, ուրեմն՝ այստեղից-այնտեղից ճարած հրացան: Ստեղծեցինք ընդհատակյա կոորդինացիոն խորհուրդ, որը բանակի հիմքն էր. Աղայան Սամվելն էր, Մուրադ Պետրոսյանը եւ ես: Սկզբում գլխավոր կոորդինատորը Մուրադն էր: Որոշեցինք մեր լուրջ եւ երեւացող կառույցը ավելի ֆորմալ կազմակերպել: Առաջարկեցի Ռազմիկ Պետրոսյանին ընդգրկենք խմբում, բայց Մուրադը դեմ էր: Համոզեցի: Ռազմիկին կանչեցինք, նա էլի իր երգը երգեց, Մուրադը ջղայնացավ, եւ այդպես էլ չստացվեց: Մինչեւ լայնամասշտաբ պատերազմական գործողությունները Ռազմիկը առանձին փոքր ջոկատ ուներ, ոչ մեկի հետ չէր միանում: Բանակի հիմքը դարձավ կոորդինացիոն խորհուրդը: Դաշնակցությունը մեծ քանակությամբ զենք ուղարկեց, ինչի պատճառով մենք հետո Դաշնակցության հետ պրոբլեմներ ունեցանք, քանի որ նրանք ասում էին՝ զենքը պիտի տաք դաշնակցականներին: Ես բոլորին հավասար էի զենք տալիս, դրա համար էլ չէին զգ-

ում, որ նրանք այդպիսի պայման են դրել: Օրինակ՝ Ղազանչի գյուղը թուրքերի մեջ էր, ու ժողովուրդը պատրաստ էր կռվել: Հենց այդ գյուղից էլ սկսվեցին ներկուսակցական բախումները: Միանգամից այդ օրերի չափանիշներով բավական քանակությամբ զենք տվեցի, այդ թվում՝ հինգ միավոր «Կալաշնիկով» ավտոմատ, որպեսզի գյուղացիներն իրենց վստահ զգային եւ գյուղից չգնային: Հետո ես դարձա կոորդինացիոն խորհրդի գլխավոր կոորդինատորը, այնուհետեւ նշանակվեցի հրամանատար: Մեր ընդհատակյա բանակում վեց հարյուրից ավելի զինվոր կար: Մենք պաշտպանական երկու համակարգ ունեինք. մեկը՝ մարդիկ գնում էին աշխատանքի, իսկ երեկոյան գնում էին դիրքեր եւ պաշտպանում իրենց գյուղը ու այդ գյուղից ոչ մի տեղ չէին գնում, եւ ունեինք զինվորներ, որոնք տեղից տեղ էին գնում, պատրաստ էին ցանկացած տեղ գնալ, կռվել ու մեռնել: Այն իսկական բանակի կառուցվածք ուներ՝ ավտոծառայությունով, հրետանիով, կապի ծառայությունով, շտաբով: Մեզ միշտ պատկերացրել են որպես ջոկատ, բայց մենք ջոկատ չենք եղել, այլ նորմալ, ընդհատակյա բանակ: Որպեսզի ցույց տայինք, որ ջոկատներ չենք, սկսեցինք դասակներ կազմել, որոնք հետո վերածվեցին վաշտերի: Երբ լայնածավալ գործողությունները սկսվեցին, զինվորների քանակն ավելացավ, վաշտերը մեծացան:

Բ. - Ի՞նչ հետաքրքիր գործողություններ եք արել:

Ա.Կ. - 1991 թ. սեպտեմբերին ես եւ Վազգեն Սարգսյանը պայմանագիր ստորագրեցինք, որ Ղարաբաղի բանակը Հայաստանի բանակն է եւ մենք Հայաստանի կառավարության հաշվեկշռի մասն ենք կազմում: Պայմանագրի երկրորդ կետը վերաբերում էր Սամվել Բաբայանին: 1991 թ. մայիսին ես Սամվել Բաբայանին ինձ տեղակալ նշանակեցի: Մինչ այդ տեղակալ չունեի, հրավիրել էի Աշոտին, բայց նա հրաժարվել էր:

Բ. - Սամվել Բաբայանը ինչո՞վ էր աչքի ընկնում, որ նրան տեղակալ նշանակեցիք:

Ա.Կ. - Նա այն եզակի մարդկանցից էր, որ իր եղբորն անգամ կարող էր ուղարկել դիրքեր, իհարկե, չեմ ասում, թե բոլորին նույն աչքով էր նայում:

Բ. - Ի՞նչ ակցիաներ եք արել:

Ա.Կ. - Ակցիաներ շատ ենք արել: 1990 թ. հարձակվել ենք Ղարադաղլու գյուղի վրա, Քելբաջարի գործողությունն ենք արել, շարասյանն ենք խփել, 1991 թ. «Կոլցո» գործողության ժամանակ Խանձաձորը տասնհինգ րոպեում վերցրինք, չենք թողել, որ թուրքերը վերջին երեք գյուղերը վերցնեն, պաշտպանություն ենք կազմակերպել, մեքենաներ ենք խփել, թուրքերի ենք գերի վերցրել, Սարիշենում, Հադրութում «վիշկան» խփեցինք, Շահումյանում մարդ էինք ուղարկում դիրքեր, Ինջա գետը մենք շահումյանցիների հետ պահեցինք: Աղայան Սամվելի խումբը՝ հինգ հոգի, միշտ Հայ Բարիսում նստած էր: Թնդանոթներով երբ շարժվեցինք դեպի Քարին տակ գյուղը, ռուսները, տեսնելով այդ, տարածքից քշեցին գյուղի վրա հարձակվող թուրքերին: Այդպես փրկել ենք Քարին տակ գյուղը: Դա 1991 թ. փետրվարին էր՝ «Կոլցո» գործողության ժամանակաշրջանում: Բերդաձորում ենք պաշտպանություն կազմակերպել... 1991 թվականը ավելի հագեցած էր, բայց 88, 89, 90 թվականներին էլ ենք գործել:

Բ. - Խոջալուի գործողությանը երբ Կոմանդոսը եկավ, ի՞նչ հարաբերություններ ստեղծվեցին:

Ա.Կ. - Կոմանդոսը եկավ 1991 թ. օգոստոսին, մոտ վաթսուն զինվորով իջավ Վաղուհաս: Ընդ որում, հրաման էինք ստացել՝ ոչ մի ռազմական գործողության չմասնակցել: Չափարի կռիվը եղավ, գյուղը մեր բանակն է պահել, ոչ թե ինչ-որ ջոկատներ: Այսինքն՝ չափարցիները, վաղուհասցիները գնացել էին, Հաթերքի ջոկատը գնացել էր:

Բ. - Հաթերքի ջոկատը ձեր բանակի կազմո՞ւմ էր:

Ա.Կ. - Սուրիկն էր, Դուշման Աշոտը (Ստեփանյան)... ու՞ր պիտի փախչեին: Բանակը մեր, դաշնակցականների ձեռքին էր, իսկ Լեւոն Տեր-Պետրոսյանը ուզում էր դաշնակցականների ձեռքից վերցնել: Ամեն ինչ անում էին, որ փոխվի, զենք, փամփուշտ, ոչինչ չէին տալիս, որպեսզի մեզ վարկաբեկեին: Խոսքս 1991 թ. վերջի մասին է, երբ նրանք ամեն ինչ պետականորեն կարող էին անել: Մորուք Ռաֆոյի նման մարդկանց ուղարկում էին, որ բանակը քանդեն: Բայց միեւնույնն է, նրանց ենթարկեցնում էինք մեզ: Բայց եկավ այն պահը, երբ առանց պետական աջակցության լայնածավալ պատերազմ չէինք կարող տանել: Այդ պատճառով ես հրաժարվեցի, որպեսզի նշանակեն այնպիսի մարդու, որին ՀՀՇ-ն զենք կտար: 1991 թ. Կոմանդոսը եկավ, թուրքերը հարձակվել էին Չափարի վրա: Գյուղում մարդ չէր մնացել, ժողովուրդը փախել էր, տղաներն են պահել՝ մեր բանակը: Ինձ հայտնեցին, որ Չափարում կռիվ է, եւ փամփուշտ չկա: Մեր փամփուշտը միշտ շատ քիչ էր: Մի քանի արկղ փամփուշտ վերցրի ու գնացինք Չափար: Ես էի, Ժաննան, Դոնալդը: Մի պահ, երբ փամփուշտները լրիվ վերջացել էին, օգնության հասավ Արարատի Գրիգորը՝ Շերիֆ մականունով, նա հիմա ներքին գործերի նախարարի տեղակալն է: Յոթ հոգով եկան օգնության, Կոմանդոսի՝ գործողություններին չմասնակցելու հրահանգին չլսեցին, եւ այդ գյուղը փրկվեց: Եթե նրանք չհասնեին, տղաները պիտի ստիպված դուրս գային, որովհետեւ փամփուշտ չունեին: Գյուղում էլ մարդ չէր մնացել, միայն տղաներն էին, ու մի քանի պառավներ: Կոմանդոսին հարցրի.

- Ինչու՞ չես մասնակցում:
- Վազգենից հրաման ունեմ՝ գործողությունների չմասնակցել:
- Իսկ ինչու՞ ես եկել...

Նա գնաց: Հետո ես Վազգենի հետ խոսեցի, ասաց, որ Կոմանդոսը մեզ պետք է որպես շտաբի պետ, որպեսզի գրագիտություն մտցվի, գործողություններ ծրագրվեն: 1992 թ. հունվարին ես հրաժարական տվեցի: Այսպիսի քայլեր էին անում. 1991 թ. նոյեմբերին Ռոբերտը գնաց Երեւան, նրան հարյուր երեսուն թե հարյուր յոթանասուն միավոր ավտոմատ տվեցին: Բերեց, որ ցույց տա ժողովրդին, թե այդ զենքը ինքն է բերում: Ճիշտ է, ես այդ զենքը նրա ձեռքից վերցրի: Հետո Լեոնարդ Պետրոսյանը գնաց: Մեկին հարյուր յոթանասուն միավոր են տվել, մյուսին՝ հարյուր երեսուն, միասին երեք հարյուր միավոր զենք են բերել: Ճիշտ է, այդ զենքերը ես էի տնօրինում, բայց ուզում էին ինձ հասկացնել՝ «Եթե դու մնաս, զենք չի լինի»: Միեւնույնն է, Ղարաբաղը կպահեինք, բայց զոհեր շատ էին լինելու, եւ ես ստիպված հրաժարական տվեցի: Վազգենին համոզեցի, որ իմ փոխարեն Կոմանդոսին նշանակի, քանի որ նա կադրային սպա էր: Իսկ մեր ժողովուրդը հավատում էր, որ եթե կադրային սպա է, ուրեմն ճիշտ որոշում կընդունի: Ես դա զգացի, երբ ժողովներ էի անում: Վանքում, Հաթերքում ժողովներ արեցի, ժողովուրդն ինձ կասկածանքով էր նայում՝ էս երեխեքը մեր գլուխն ուտելու են: Կոմանդոսը մեզ պետք էր, որպեսզի ասեինք՝ «Գնդապետն ասել է՝ վե՛րջ»: Աֆղանստանում կռվել էր:

Բ. - Աֆղանստանի հետ կապ չուներ:

Ա.Կ. - Չգիտեմ, համենայն դեպս, այդպես էր միֆը: Հայրենասեր մարդ էր:

Բ. - Խոսենք Շուշիից:

Ա.Կ. - Շուշիի վրա գրոհելու համար մի քանի անգամ ենք նախապատրաստվել: Կան ֆորմալ թղթեր, կա իրականություն, եւ կա այսօրվա պատմածը: Իրականությունն այն է, որ ինչ պլան գծել են, մեծ հաշվով ոչ մի դեր չի խաղացել, ես նկատի ունեմ՝ շտաբերում: Չգիտեմ՝ Դալիբալթայանը ինչ դեր է ունեցել, միգուցե նա պլանը գծել է ու տվել Ստեփանակերտին: Հրամանատարներն էին հավաքվում՝ Կոմանդոսը, Սամվել Բաբայանը, Սերժ Սարգսյանը, Ֆելիքս Գզողլյանը, մտածում էինք, թե ինչ անենք:

Բ. - Ո՞վ ինչ դեր ուներ այդտեղ:

Ա.Կ. - Հոգուս մեղք չանեմ: Սերժ Սարգսյանի դերը նոմինալ էր, Երեւանի «ստավկան» Սերժն էր, բենզին, փամփուշտներ, պահածոներ բաժանել, ում տալ, ում չէ՝ Սերժի ու Ռոբերտի միջոցով էր անում ՀՀՇ-ն: Իրականում պատերազմական իրավիճակում լուրջ դեր են ունեցել Կոմանդոսն ու Սամվել Բաբայանը: Այդ ժամանակ Սամվել Բաբայանին դաշտային հրամանատարներն ավելի շատ էին լսում: Իհարկե, Կոմանդոսը հեղինակություն ուներ, նրան սիրում էին: Հայաստանից եկած ջոկատները Կոմանդոսին ավելի շատ էին լսում, քան Սամվելին, բայց տեղացի հրամանատարների ճնշող մասը Սամվելին ավելի շատ էր ընդունում, ավելի շուտ՝ դարձյալ բենզինով, փամփուշտով կարողանում էր ենթարկեցնել: Պլանը գծվել է Կոմանդոսի գլխավորությամբ: Չգիտեմ, թե Դալիբալթայանը ինչ է գծել: Ուղղությունները պարզ էին: Շոշից մինչեւ Զառիսլու ամբողջ հետախուզությունը ես էի կազմակերպում, իմ զորքերն էլ էին այնտեղ: Իմ ուղղությունն էր Շոշը, Կարմիր գյուղը եւ Սգնեքը: Այդ երեք գյուղի ջոկատներն էին՝ Շոշի Աբոյի հրամանատարությամբ, Ռուսլանի տասնհինգ տղաները՝ հետախուզական խումբը, Դաշուշենից տասնհինգ հոգի՝ Վիլենի գլխավորությամբ, Քռասնի գյուղից տասնհինգ հոգի, այդ ջոկատի հրամանատարը Բալայան Վալերան էր, նա ստեփանակերտցի էր, բայց ծնողները Քռասնի գյուղից էին: Ջոկատում ստեփանակերտցիներ էլ կային: Դա աջ ուղղությունն էր: Ռուսլանի հրամանատարության տակ այդ ջոկատներն էին եւ «Մոստ» կոչվող խումբը, որի հրամանատարը Վիլենն էր, որը հիմա Ղարաբաղի ավտոծառայության պետն է: Այդ չորս ջոկատներն էին: Առաջին վաշտը՝ Բեկորի հրամանատարությամբ, դաշնակցականներն էին՝ երեք խումբ, որից մի խումբը (պարսկահայ Հրանտն էր) պահեստազոր էր՝ քսանհինգ հոգով, Արարատի Գրիգորը՝ Շերիֆն էր՝ Արարատի ջոկատով, իմ գվարդիան՝ քառասուներկու հոգի: Շուրջ երեք հարյուր մարդ ունեի: Շոշ տանող ավտոճանապարհի վրա վիրավորների համար բուժկենտրոն էինք տեղադրել: Երկու «ԲԵԷՄՊԵ» ունեի, մի «ԲԵԷՄՊԵ-1», որը տվյալ մարտական գործողության համար անպիտան էր, այդ պատճառով էլ ուղարկել էի Չիթչյանի ուղղությամբ: «ԲԵԷՄՊԵ-2» ունեի, որը հասցնում էր թուրքերի ուղղությամբ կրակել, բայց նշանառության հեռավորությունը նորմալ չէր հասցնում, թուրքերին ավելի շուտ վախեցնում էինք դրանով, քան ինչ-որ այլ օգուտ էինք տալիս, կամ թուրքի տանկը որ կրակում էր, մեր տանկն էլ որպես պատասխան էր կրակում: Մի «ԿՍ-19» ունեինք՝ առանց նշանառության, Շոշի Վիտոն էր կրակում: Նորմալ արկեր չունեինք, երկաթի կտորներ էին, որոնց ամբողջ իմաստն այն էր, որ խփում էր բանտի պատին եւ ձայն էր հանում, մենք էլ ուրախանում էինք, թե չէ ոչ մի վնաս էլ թուրքին չէր տալիս: Ես ու Աշոտը մայիսի 6-ին եկանք Կոմանդոսի մոտ, ասացինք. «Եթե մեզ հրետանի չտաս, չենք կռվելու: Թուրքերի դիրքերը միայն մենք ենք տեսնում, մի հրետանիով կարող ենք շատ արագ բոլոր հարցերը լուծել»: Համաձայնվեց: Ըստ ծրագրի՝ մեր ամբողջ հրետանին փակ դիրքերից էր գործում, ռուս էր հրամանատարը: Միայն մեր կողմից էին դիրքերը երեւում, ուղղորդող

չկար: Կոմանդոսին ասացի. «Եթե արկը կես մետր բարձր թռչի, կընկնի մեզ վրա, այս ի՞նչ եք անում, մեզ մի հրետանի տուր»: Մի տանկ տվեց: Տանկը հասավ Դաշուշեն, շարժիչը փչացավ, տանկը մնաց այդտեղ: Մյուս օրն արդեն ուշ էր, որ գնայինք ասեինք՝ չենք կռվելու: Այդպես էլ գնացինք կռվի: Բայց այդ տանկը եթե մնար, մենք շատ արագ Շուշին կվերցնեինք, քանի որ թուրքերը իրենց ամբողջ զրահատեխնիկայով մեր աչքի առաջ էին: Նրանք մեզ հրետանիով, տանկով, «Գրադով» ուզածիդ պես խեղճացրին: Բայց նրանց «Գրադից» ոչինչ չհասկացանք: Ասում էին՝ հրամանատարը ռուս էր, երկու փաթեթ կրակեց, վերջին փաթեթը խփեց Շուշիի գերեզմանոցի վրա ու փախավ: «Մոստ» ջոկատում Բակոն էր, Ամուլյան, պլանքաշներ, կարգին տղաներ էլ կային: Շուշիի վերջին ոլորանի բարձունքում թուրքերն ամրացել էին, համ քաղաքն էին պահում, համ ամբողջ ճանապարհը: Պետք է նրանց ուշադրությունը «Մոստ» ջոկատի կրակոցներով շեղեինք: Իսկ մյուս երեք խմբերը Ռուսլանի հրամանատարությամբ պետք է բարձրանային, ճանապարհը կտրեին, նրանց թիկունքը մտնեին, կեղծ տպավորություն ստեղծեին, թե այս կողմից իրենք գալիս են: Ռուսլանը դուխով տղա էր, առաջ ընկած վազել է, մի պահ շրջվել է, տեսել՝ ետեւից մարդ չկա, մենակ է մնացել: Տղաները կապվեցին մեզ հետ՝ հրամանատարը չկա: Կապվեցի Ռուսլանի հետ.

- Որտե՞ղ ես:

- Հասել եմ ճանապարհին:

- Բա խումբդ ու՞ր է:

- Չգիտեմ:

- Ա՛յ տղա, դու հրամանատար ես, բաեւիկ չես, վազել գնացել ես, ետուիցդ չեն հասցրել գալ:

Գնացել հասել էր խփված տանկի տեղը: Տանկիստին Ռուսլանն է փրկել: Տանկիստը շոկի մեջ դուրս է եկել, թուրքերն անընդհատ գնդացիրով կրակել են, բայց չեն կարողացել խփել: Ռուսլանը նրան քաշելիջեցրել է ճանապարհի տակ: Կենտրոնական մասում իմ տղաներն էին, Աշոտի վաշտը, դաշնակցականները: Դեպի բանտն էին գնում, տանկի խփված ճանապարհը, ավտոճանապարհը:

Բ. - Իսկ Հունոտի կիրճով բարձրացել ե՞ն:

Ա. Կ. - Ես տասնմեկ հոգուց բաղկացած հատուկ խումբ եմ ստեղծել՝ Շոշի Աբոյի գլխավորությամբ, իմ ջոկատի հրամանատարը Արմենն էր, ֆուտբոլիստ ունեինք, մականունը Պուշկին էր, նրանք հենց առաջին գիշերը մտել են Շուշի: Երկու աշտարակ կար, դրանց արանքով են մտել: Բոլորն ասում են՝ մենք ենք սկզբից մտել Շուշի, այդպես չէ, առաջինն այդ մարդիկ էին: Թուրքերը չէին սպասում, անմիջապես օգնության եկան, տղաներին Շուշիից հանեցին: Կապվեց. «Ուժերը

շատ անհավասար են, փամփուշտներս էլ վերջանում են, ի՞նչ անեմ»: Ասացի. «Ետ արի, քաղաքից դուրս մի լավ տեղ դիրքավորվիր, տղաներին մի՛ կոտորիր»: Ետ նահանջեց ու դիրքավորվեց պատերի տակ: Պուշկինը շատ հումորով տղա էր, դուրս էր գալիս, քամակը թուրքերին ցույց տալիս, նրանք էլ սկսում էին կրակել, նռնակ գցել, «դավադիտ» էր արել թուրքերին: Աշոտն էլ բանտն էր գրավում, վիրավորվեց այդտեղ: Ես Շոշում էի, այդ ամենը ծրագրում ու պատրաստում էի: Ռուսլանը Դաշուշենով պիտի գար: Նա ինձնից հեռու էր, բայց կապը պահում էինք: Ռուսլանի հետ վաղուց ընկերներ էինք, նա պատասխանատվության զգացում ուներ, մեր բանակի առաջին թիկունքի պետն էր՝ իմ տեղակալը: Նա առաջինը դուրս եկավ՝ ժամը 2:30, երբ առաջադրանքը ստացավ: Ես բարձրացել էի Շոշ գյուղի վերեւը, դիմավորեցի Ստեփանակերտից եկող տղաներին: Աշոտն էր՝ իր վաշտով, դաշնակցականները: Մինչ այդ շոշեցիները Շոշում նստած էին: Բոլորին իջեցրի Շոշ գյուղը, մինչ այդ ճանապարհի վրա շարեցի, մի քիչ հետները խոսեցի: Հետո բոլոր հրամանատարներին տվեցի իրենց առաջադրանքները, եւ մայիսի 7-ի գիշերը՝ ժամը 2:30, անցանք գրոհի: Դուշման Վարդանը դրանից մի օր առաջ մոտոցիկլով պետավտոտեսչության դիմաց խփում է, ընկնում ու ոտքը վնասում, սկսում է կաղալ: Դիլխոր էր, որ չի կարող մասնակցել Շուշիի գործողությանը, շատ էր ուզում, բայց թույլ չէինք տալիս: Տեսա, որ կարող է դրանից հոգեկան խանգարում ստանալ, ասացի. «Արի որպես ինձ տեղակալ, ես տեղակալի կարիք ունեմ, հանկարծ ինձ խփեն, ո՞վ է ղեկավարելու ամբողջ մարտը»: Ուրախացավ: Անցանք գրոհի: Ուշանում էինք: Այնտեղ ճանապարհ կար, անցանք ու այդ ճանապարհով գնացինք: Ես էի, Վարդանը, իմ վարորդը, աբովյանցի չորս գինվորներ՝ 17-18 տարեկան, որոնք մի օր առաջ էին եկել, դեռ կրակել չգիտեին, բայց ուզում էին կռվել: Ասացի. «Լավ, մեզ հետ եկեք, ինձ նայեք, ինչ որ անեմ, նույնը դուք կանեք»: Ես առջեւից էի գնում, այդ երեխաները մեջքս գալիս էին՝ հանկարծ ականի վրա չպայթեն: Դուշմանը կաղալով ինձնից առաջ վազեց:

Ասում եմ.

- Կանգնի՛ր:

- Չէ, ես որ պայթեմ՝ ոչինչ, դու իրավունք չունես:

Նա վազում էր, ես՝ նրա ետեւից, այդ տղաներն էլ՝ իմ ետեւից: Ես մի քիչ լավ չէի զգում, երեք գիշեր չէի քնել, չէի կարողանում նորմալ շարժվել: Հետաքրքիր էր, որ թուրքերը ոչ մի ական չէին դրել, այնքան վստահ էին: Մի ականանետ էր դրված, տեսնում էի, որ կրակում էր մեզ վրա, բայց չէր իմանում՝ որտեղ, հենց այնպես կրակում էր: Անունն ի՞նչ էր՝ չեմ հիշում, այժմյան դիվիզիայի հրամանատարը՝ Կյաժը, ականանետող էր, մեկ-երկու հատ խփեց, նրանք փախան: Բարձունքների

առաջին շարքը համարյա առանց կռվի վերցրինք: Այդտեղ գիշերը պառկեցինք՝ մի քիչ հանգստանայինք: Կապվեցի մյուսների հետ՝ տեսնեմ, թե ով որտեղ է հասել: Տղաներն ամենքն իրենց ուղղությամբ առաջ էին գնում: Պառկած էի, գարշահոտ էր փչում: Երբ լույսը բացվեց, տեսանք, որ թուրքերի դիրքում ենք: Քանդած, սաղավարտները, ծանր իրերը մի կողմ շպրտած, որ թեթեւ փախչեն: Լավ խրամատներ չէին, բայց դե սար է, լավ խրամատ հնարավոր էլ չէր փորել: Առաջին օրը շատ դժվար էր: Ժամը մոտ 2-3-ին փամփուշտները վերջանում էին: Թուրքերը կատաղի դիմադրում էին: Ես «Ալինկո»-ով կապվեցի շտաբի հետ, որ փամփուշտ ուղարկեն, բայց չէին պատասխանում: Չդիմացա, սկսեցի հայհոյել: Կապի պետը՝ Արթուրը, ասաց.

- Ինչու՞ ես հայհոյում:

- Ուրեմն դու ինձ լսում է՞իր, ասա, որ փամփուշտ ուղարկեն:

Հրամայել էի զեկուցել, թե յուրաքանչյուրի մոտ որքան փամփուշտ է մնացել: Երբ մեկական տուփ փամփուշտ էր մնացել, ասացի. «Առանց ինձ ոչ մի գինվոր ոչ մի փամփուշտ չկրակի: Դիրքավորվում եք, ոչ մի քայլ ետ չգաք, եթե մի քայլ էլ ետ եկաք, Ստեփանակերտն էլ, Ղարաբաղն էլ հանձնում եք: Ամեն մեկդ դիրքավորվեք ու սպասեք»: Փամփուշտները բերեցին: Հետո վիրավորներին իջեցրինք: Ութ զոհ տվեցինք այդ մարտի ժամանակ: Հասել էինք ճանապարհը, այն փակել էինք: Թուրքերը, որ այն դիրքն ունեին, փախել էին: Եկան մտան ֆերմաների մեջ: Տղաները, որոնք մնացել էին առանց Ռուսլանի, էյֆորիայի մեջ էին՝ գերոգեւորված վիճակում էին, ասացին՝ գրոհենք ու զենքերը վերցնենք: Չգացի, որ նույնիսկ չէին ուզում լսել: Ասացի.

- Մի՛ գրոհեք:

- Չէ, բան չկա, հրամանատար:

Չգացի, որ, միեւնույնն է, գրոհելու են, ասացի. «Փորձեք, տեսեք՝ ինչ կա»: Բայց ի՞նչ փորձել: Հարձակվում են ֆերմայի վրա, թուրքերը կատաղի դիմադրում են: Երկու զոհ են տալիս, Վիլենն է վիրավորվում՝ ավտոգումարտակի հրամանատարը: Հիմա էլ գոռում են, թե՝ օգնեք: Կապվեցի «ԲԵԷՄՊԵ»-ի հետ, որն ուղարկել էի Չիթչյանի ուղղությամբ: Հրամանատարը Միրզան էր: Ասացի, որ խփի, տղաներին օգնի: Նա քշում է, խփում, մտնում է ֆերման, տեսնում՝ մարդ չկա: Թուրքերն էլ, խուճապի մեջ ընկած, փախել էին: Բանակ ստեղծելիս իմ քարոզներից մեկն այն էր, որ մեր նպատակը թուրք սպանելը չէ, այլ մեր հողը ազատագրելը: Այս սկզբունքին դեմ գնալով՝ տղաները զոհվեցին: Եթե թողնեին թուրքերը հանգիստ հեռանան, իրենք չէին զոհվի: Գիշերը՝ մինչեւ ժամը 4:30 չկռվեցինք, բոլորս էլ հոգնած էինք՝ մենք էլ, թուրքերն էլ: 4:30 Կոմանդոսի հրամանով մտանք քաղաք: Համարյա դիմադրություն չկար, փախել էին, այստեղ-այնտեղ մի քանի կրակոցներ էին: Հեռադիտակով նայում էի, թե Բեկորը բերդում ոնց է կռվում: Կարծես կինո լիներ: Ճանապարհի վրա մեզ հետ գրեթե միաժամանակ դուրս եկավ վեցերորդ վաշտը, որը շատ գործ արեց: Հրամանատարը Ծառն էր՝ Կարենը, բայց ոչ ֆորմալ հրամանատարը նրա տեղակալն էր՝ Սեգոն, նա էր մարտը ղեկավարում: Բարձունքից թուրքերը փախան: Սրանք լավ պահում էին ճանապարհը, հնարավոր չէր գլուխ բարձրացնել: Երբ մենք մտանք, նրանց ետեւը փակեցինք, փախան եկան ֆերմա, ճանապարհը բացվեց: Չիթչյանի ամբողջ ուղղությունը միանգամից բացվեց: Ճանապարհը վեցերորդ վաշտի հետ միասին ենք փակել, նրանք մյուս կողմից էին բարձրացել: Թուրքերը չէին էլ սպասել նրանց բարձրանալուն, համարյա մագլցելով են բարձրացել, նրանք վստահ էին, որ այդտեղից հայ չի գալու: Ղայբալուի ուղղությամբ թուրքերը չէին սպասում, թե կարող է մենք գրոհենք, որովհետեւ այնտեղ մի պարսատիկով էլ կարելի էր պահել: Երբ բարձրացան, արդեն ուշ էր:

Բ. - Սեյրան Օհանյանը ո՞ր ուղղությամբ էր:

Ա.Կ. - Ջանհասանի ուղղությամբ: Յուրան իր խմբով պահեսային ուժ էր այդտեղ, բայց իմաստ չուներ պահեստային ուժ պահելը:

Բ. - Իսկ ետեւի ճանապարհը՝ դեպի Լաչին, ո՞վ էր պահում:

Ա.Կ. - Լիսագորի ուղղությամբ Բաբայան Սամվելն էր, Զառիսլուի ուղղությամբ Ժիրոն էր (Ժիրայր Սեֆիլյան-խմբ.) «աֆղանցիների», սղնախցիների հետ: Քարինտակցիները Հունոտի ձորից պիտի բարձրանային:

Բ. - Անձամբ դու ե՞րբ ես մտել Շուշի:

Ա.Կ. - Ես շատ ուշ եմ մտել՝ մայիսի 9-ի առավոտյան, լույսը բացվել էր: Տղերքը մտել էին Շուշի, ասացին. «Կամանդիր, այնտեղ թուրք չկա, Շուշին մերն է»: Ուզում էի գնալ, չէի կարողանում, ոտքերս առաջ չէին գնում: Քիչ էր մնում լաց լինեի՝ բոլորը գնան Շուշի, ես չկարողանամ...

Բ.Կ. - Շուշին ո՞վ վառեց, ինչու՞:

Ա.Կ. - Որ սկսեցին այստեղ-այնտեղ վառել, տղաներին հավաքեցի, ասացի. «Գնացեք տեսեք՝ ով է վառում»: Ես Շուշիում էլ զոհ տվեցի՝ ֆուտբոլիստ Ադամյան Աշոտը, Ստյոպի աչքը հանեցին:

Մինչ Շուշիի ազատագրումը խոշալուի գործողության պլանը գծում են, քարտեզի վրա նշում.«Առաջին վաշտ՝ կենդանի ուժի եւ գինտեխնիկայի կորուստ՝ տասնհինգ տոկոս, երկրորդ վաշտ՝ քսան տոկոս...»: Մինչեւ զեկուցողը՝ գեներալ Դալիբալթայանը, կհասներ երրորդ վաշտին, երրորդ վաշտի հրամանատար Իվեսին Աշոտը դիմում է գեներալին. «Լսիր, քո ասելով ստացվում է, որ չորս մարտից հետո Ղարաբաղում մարդ չի՞ մնալու»: Գեներալ Դալիբալթայանը հայրենասեր է, բայց խորհրդային բանակի կանոնագրքով էր շարժվում, որը ղարա-

բաղյան պատերազմի հետ ոչ մի կապ չուներ:

1992 թ. հունիսի 9-ին Ցվետանա Պասկալեւայի հետ օդակայանում հանդիպեցի: Ճիշտն ասած, ես չէի ուզում թռչել: Ցվետանան ասաց, որ Վլադիմիրը սպանվել է: Ես, Վլադիմիրը, Աշոտը մանկուց շատ մոտ էինք: Նստում եմ ուղղաթիռ, գալիս իջնում Աղաբեկալինջի գլխին: Թաղմանը հասնում եմ: Թաղումից հետո Վագիֆը, Լեոնիդը, ընդհանուր հրամանատարները գալիս ասում են. «Ագո՛, դու պիտի գաս, մեզ ղեկավարես, եթե չգաս, Մարտակերտում կատաստրոֆա է»: Ասացի. «Համաձայն եմ, բայց պիտի Ստեփանակերտի ղեկավարությանը տեղյակ պահեմ, չասեն՝ ինքնագլուխ է գործում»: Հունիսի 12-ին արդեն վերադարձել էի: Վագիֆին կանչեցի. «Այս ճակատի ընդհանուր հրամանատարը ես եմ, դու չես»: Վագիֆն ուրախացավ. «Ա՛յ դու ապրես...»: Վագիֆին չէին լսում, օրինակ՝ Վլադիմիրը նրան չէր լսում: Վագիֆին ինձ տեղակալ նշանակեցի, ու սկսեցինք պատրաստվել: Մայրաքաղաքային գունդն էր այնտեղ, Գրիգոր Գրիգորյանը՝ ՊԱԿ-ի պետի տեղակալը... Մարդկանց գինում էի եւ ուղարկում: Ահագին զենք-զինամթերք էր ուղարկվում: Ինձ մոտ երեք թնդանոթ, երեք «Գրադ» կար, հարյուր քսան գրադի արկ ուղարկեցին, մի քանի զրահամեքենա, 600-700 զինվոր ունեի: Բոլորն իրենց դիրքերում էին, նորմալ պահում էինք: Վերջը կռիվը սկսեցինք: Շահումյանցիները եկան, ժողովրդի մեջ խուճապ առաջացրին: Թալիշեցիներն էլ էին փախել: Եկան հասան Մաղավուզ, Մաղավուզում էլ էր խուճապ: Շահումյանից «Տիգրան Մեծ» ջոկատը եկավ Մաղավուզ՝ շատ ծանր վիճակում:

Ուժեղ կռիվ գնաց Չայլուի համար: Թուրքերին ջարդեցինք, առաջին վաշտն էր՝ Աշոտը եւ Լեոնիդը: Սկզբում հարձակվել են տանկերով: Զրահատեխնիկայի վրա ռուսներ են եղել: Չայլվեցիները նահանջել էին, Աշոտին ու Լեոնիդին ուղարկեցի այնտեղ: Աշոտը մի ճակատն է պահել: Հետո ռուսները մտնում են գյուղ, վերեւից տեխնիկան էր խփում: Թուրքերը էշ-էշ, առանց տեխնիկայի մտնում են գյուղ, Աշոտը սրանց կոտորում է: Ռուսները շուռ են տալիս, որ Չայլուի ետեւը մտնեն: Լեոնիդը գնում երեք տանկ է խփում, երկուսը խփվում մնում են տեղում, երրորդի աշտարակն է ծռվում, բայց մեխանիկը ողջ է մնում, փախչում է: Թալիշեցիները երբ խուճապ են առաջացնում, դրա ազդեցության տակ լեհինավանցիները փախչում են: Ռադիոկապի աշխատողը մտնում է եթեր եւ ասում, որ թուրքերը Լեհինավանը վերցրել են: Ասում վերջացնում է, ռացիան գցում, փախչում է: Այնտեղ մի նոր տանկ կար, տանկի հրամանատարը կադրային սպա էր՝ կապիտան, ամբողջ ձորը՝ Չայլուից Լեհինավան, ղեկավարում էր: Դիք տեղ էր, հնարավոր չէր անգամ մի մուկ անցնելու դեպքում այդ տանկով չկարողանային խփել: Սրանք ուրախացած տանկը գցում են փոսի մեջ: Տանկը էլ չի կարողանում դուրս գալ, թողնում են փախչում: Առաջին վաշտը դեռ Լեհինավանը պահում էր, այդ տղաները լուր չունեին, որ լեհինավանցիները փախել են: Ոչ թուրք կար, ոչ կռիվ, ոչ ետեւում մարդ՝ ի՞նչ իմանային: Այդ վիճակն է եղել: Մարալյան Սարով գյուղից մի ջոկատ է գալիս: Հայաստանից ջոկատ կար՝ շուրջ քսան հոգի: Լեհինավանցիները որ փախչում են, ռուսները տանկերով գալիս են Մարալյան Սարովի վրա: Հայաստանցիները տանկը տեսնելուն պես փախչում են: Նռնականետ կար, ոչ «ֆագոտ» կար, ոչ հրետանի: Ռուսներն էլ առաջ չեն գալիս: Լեոնիդն այնտեղից խփում էր: Երբ ռուսները Չայլուի վրա են եկել, նրանք շուռ են գալիս գնում Թալիշ, խմբավորվում, գալիս Մատաղիսի վրա: Մատաղիսում Մայրաքաղաքային գունդն էր, նրանք էլ այնտեղից էին փախչում: Թե ինչ եւ ինչպես է եղել, չգիտեմ, ինձ հետ չեն կապվել: Թուրքերը սկսում են շրջապատել Չայլուն:

Բ. - Վագիֆն ու Կարապետյանը այդ ժամանակ զոհվում են:

Ա.Կ. - Այո՛: Թալիշեցիները եւ լեհինավանցիները ռացիայով խուճապ են գցում, եթերում ամեն ինչ լսվում էր: Մաղավուզցիների մի խումբ՝ մոտ քսան հոգի, Քաջարանն էին պահում: Նրանք էլ այդտեղից են վեր կենում, գնում տուն: Ճակատը բաց է մնում: Մարտակերտցիների մի խումբ կար, նրանց էլ զենք չէին տալիս: Տասնհինգ հոգի էին, եկան ինձնից զենք խնդրեցին: Ասացի. «Որ զենք տամ, կգնա՞ք Քաջարանը պահեք»: Ասացին. «Հարց չկա, ինչ ասես՝ անում ենք»: Զենքը տվեցի նրանց եւ ուղարկեցի Քաջարանի ճակատը պահելու: Կապվեցի Լեոնիդի հետ.

- Հը՛, ո՞նց է:

- Հրաշալի:

- Հրաշալի չի, նորմալ նահանջում ենք, գյուղը թողնում ենք, բայց ժողովրդին հանեք, դուրս եկեք:

-Չէ, մեզ այստեղ լավ ենք զգում:

- Ա՛յ տղա, լավ զգալով չէ, կռիվ է գնում, ձեզ ետեւի կողմից կտրում են, ես էլ ուժ չունեմ ուղարկելու: Նահանջում եք, գալիս Երրորդ սովխոզ, որը հավաքատեղի է: Ոչ բնակիչ կթողնեք այդտեղ, ոչ զինվոր կորչի, եթե զինվոր կորավ, ու սկսեցինք փնտրել, խայտառակ կլինենք: Գիշերը դուրս կգաք: Մի տանկիստ կար, ասաց.

- Հրամանատա՛ր, գնա՞մ այն տանկը բերեմ:

- Հա՛, բայց դու տանկիստ ե՞ս:

- Հա՛, մեխանիկ եմ:

Գնում եւ բերում է այն տանկը, որը չէին կարողանում փոսից հանել: Չայլուից Հատուկ գնդի մի տանկ գնում է Մատաղիս օգնության: Ճանապարհին շարժիչը փչանում է, եւ տանկը մնում է այդտեղ: Այդ տղային ասացի. «Կարո՞ղ ես տանկը ետ բերել, քանի դեռ թուրքերը չեն

հասել»: Այն գիշերն էր, երբ տղաներին ասել էի, որ դուրս գան: Ասաց՝ բերեմ: Գնում է ու սկսում տանկը վերանորոգելը: Այդ պահին մի զրահամեքենա է գալիս՝ վրան ռուսներ նստած:

- Հա՞յ ես:

- Հա:

- Հիմա թուրքերը կգան:

Էդ շան տղի ասելուց մի քանի վայրկյան հետո մի ձիավոր թուրք է գալիս: Այդ տղան շատ լավ թուրքերեն էր խոսում: Թուրքի հետ խոսում է, նա գնում է: Տղան մտնում է լյուկը, քանի որ թաքնվելու ուրիշ տեղ չուներ: Երբ մութն ընկնում է, տանկից դուրս է գալիս, ոտքով գնում, խառնվում տղաներին ու գալիս:

Մարտակերտում ռուսների մի տանկ մեզ լավ նեղում էր: Առաջադրանք եմ տալիս, որ այդ տանկը խփեն: Գնում են նայում, ինֆորմացիան տալիս, բայց տանկը դեռ խփում էր. ցերեկները խփում էր, գիշերները հանգստանում: Կարեւորը՝ թուրքերը տանկին չէին մոտենում, կարծես տանկը գաղտնի զենք էր: Տղաներից մեկը գնում է, տանկը խփում-վերացնում, անձնակազմին կոտորում, մեկին վիրավորում ու բերում: Այդ օրը Կոմանդոսը եկել էր մեզ մոտ: Միասին այդ վիրավոր թուրքին հարցաքննում էինք: Կոմանդոսի հետ Ալիկ Պետրոսյանն էր, գեներալ Հարությունովը, Լեոնիդ Մարտիրոսովը: Դաշտային հրամանատարները հավաքվում են շտաբում: Կոմանդոսը հարցնում է, թե ինչ պիտի անենք: Ասում եմ. «Պետք է ստեղծենք երեք պաշտպանական գծեր. մեկը՝ ջրատարով, երկրորդը՝ նախալեռնային գոտիով, հաջորդը՝ լեռներով ու Մարտակերտով: Ասում եմ, որ առաջին երկուսը եթե հանձնենք, կամրանանք երրորդ գծում: Մարտակերտցիները բողոքում են, թե ոչ մի թիզ հող չենք զիջի: Բացատրում եմ, որ սա մարտավարություն է, քանի որ առաջին գիծը պահելու դեպքում զոհեր շատ կունենանք: Տեսա, որ դաշտային հրամանատարները ինձ չեն վստահում: Նման իրավիճակում, երբ ինձ չէին վստահում, ես չէի կարող պատասխանատվություն վերցնել: Միայն ՀՀ զինկոմ Հարությունովն ասաց, որ իր կարծիքով Արկադի Կարապետյանը ճիշտ է: Ես դուրս եկա շտաբից ու հեռացա՝ ամեն ինչ թողնելով Արկադի Տեր-Թադեւոսյանին եւ մյուսներին:

Բ. - Դուք կարծում եք, որ հնարավո՞ր էր Մարտակերտը պահել:

Ա. - Թե՛ զինվածությամբ եւ թե՛ զորքի մարտունակությամբ մենք կարող էինք պահել Մարտակերտը, եթե, իհարկե, մարտավարական կոպիտ սխալներ թույլ չտայինք: Ամբողջ ճակատով՝ Թալիշից մինչեւ Մարտակերտ, հարձակում են պատրաստում, որը ոչնչով արդարացված չէր: Դա էլ պետք է բերեր լուրջ անհաջողության: Աշոտ Ղուլյանը վեց զինվորով ոտքով հասել է Մատաղիս, որ մի քանի դիրք պահի: Այդ

օրը «Արաբո» ջոկատին առաջ են մղում: Աշոտենք դեռ տեղ չէին հասել, երբ «Արաբո» ջոկատը նախօրոք պատրաստած ծուղակի մեջ է հայտնվում ու կոտորվում: Աշոտը հետագայում ինձ պատմել է, թե տղաները ինչպես են երկակի գնդացրային կրակի տակ հայտնվել: Աշոտին օգնության են կանչել, սակայն Աշոտի ուժերը Ժիրայր Սեֆիլյանի հետ են եղել, ուստի, օգնել չէին կարող:

Գառնիկ Առաքելյան - Մանվելի տղաներից քսանչորս հոգի գոհվել էին այդտեղ:

Ա.Կ. - Ըստ երեւույթին, տղաները չեն հանձնվել, սակայն եւ դիմադրելու հնարավորություն չեն ունեցել: Պարզ է, որ ավտոմատներով զրահամեքենայի գնդացրային ու թնդանոթային կրակի դեմ ոչինչ անել չէին կարող: Իսկ մեր տանկերը, անտառում պատսպարված, փորձ էլ չեն արել օգնության գալ:

Բ. - Ըստ երեւույթին, գործողությունը լիարժեք նախապատրաստված չէր եղել, տեղեկություն չեն ունեցել, հետախուզությունը լիարժեք չի գործել կամ ընդհանրապես չի գործել:

Պատմում է Արթուր Ալեքսանյանը: Զրույցը վարեց Բակուր Կարապետյանը. 3.08.2005թ., Վահագնի թաղամաս: Մուտքագրեց Անահիտ Ասատրյանը:

Ա.Ա. - 1981 թվականն էր, Բաքվում Ադրբեջանի Խորհրդային Հանրապետությանը հանդիսավոր կերպով պիտի հանձնեին հերթական շքանշանը: Լեոնիդ Իլյիչ Բրեժնեւը այն հանձնեց Հեյդար Ալիեւին: Ու ժողովից հետո սկսվեց տոնական համերգը: Մշակույթի, արվեստի գործիչներ, խմբեր էին հրավիրված տարբեր հանրապետություններից: Մենք էլ էինք հրավիրված՝ որպես ԼՂԻՄ-ի խումբ: Նաիրա Ալավերդյանն էր մեր խմբի մենակատարը, ու նա պետք է ինչ-որ հայկական երգ երգեր: Լայն հարթակ կար, նախօրոք պատրաստում են, գործիքները դնում վրան, ում հերթը գալիս է՝ գործիքները վերցնում են, գնում կանգնում բեմին: Մեզանից առաջ Բաքվեցի երգչուհի Զեյնաբ Խանլարովան էր ելույթ ունենում: Երգեց, մենք պատրաստ նստած էինք: Երբ ավարտեց, եկավ կանգնեց իմ դիմաց, ու ոտքը իբր պատահաբար կպավ մեծ թմբուկի ոտքին: Դիտմամբ աչքերիս նայեց ու խնդալով անսպասելիորեն տրորեց թմբուկի ոտքն ու գործիքը փլվեց: Ծանր գործիք էր, որի վրա չորս-հինգ հատ մեծ թմբուկներ էին դրված: Միանգամից ջարդվում է ոտքը, թմբուկները փլվում են: Սպասում էի, որ Նաիրուհին պետք է ասեր՝ ելույթ չենք ունենում, հետո թողնենք ու գնանք: Ակնհայտորեն դիտավորյալ էր արել Զեյնաբը, որը չէր ցանկանում, որ ԽՍՀՄ էլիտայի առջեւ Ղարաբաղի հայկական ինքնավարությունը երեւար:

Եկավ մեր հերթը, հավաքվեցինք: Ամենադժվարը ինձ համար էր, որովհետեւ իմ գործիքն էր ջարդվել ու տարածվել բեմով մեկ: Բայց մի թմբուկով էլ ստացվեց, ու ես համարձակվեցի ամբողջ համերգի նվագը մի թմբուկով կատարել: Դժվար էր, հարվածային գործիքների մի ամբողջ համալիր էր, կոլեկտիվի ականջը սովոր էր դրան՝ ձայներով, ռիթմերով: Եվ պատկերացրեք՝ էդ ամեն ինչը մի փոքր թմբուկով ենք տանում: Բայց փայլուն նվագեցինք մեր համարը: Կարծեմ «Շողոտ-շաղոտ» երգն էր: Մի բիս էր գնում, ծափահարություններ: Դուրս եկանք:

Հիմա ու՞մ գնաս ապացուցես, որ հատուկ են արել: Ո՞ւ մ բողոքես, կամ ո՞վ կհավատա, որ ժողովրդի կուռք Զեյնաբը այդպիսի բան է արել:

Բ. - Համերգի ժամանակ նայում էի՞ք Բրեժնեւի, Ալիեւի արձագանքին:

Ա.Ա. - Դիմացը՝ առաջին շարքում էր նստած Ալիեւի հետ: Տարբեր տեղերից էլ մարդիկ կային: Մեր ելույթի ժամանակ Ալիեւը Բրեժնեւի ականջին ինչ-որ բան էր ասում: Այդ ժամանակվանից ես սկսեցի հասկանալ հայ-թուրքական հարաբերությունները, նրանց միջեւ լարվածության պատճառները: Մինչ այդ շատ միամիտ էի, իսկական ինտերնացիոնալիստ էի, ուշադրություն չէի դարձնում իմ էությանը, հայ լինելս մի երկրորդական բան էր: Ոչինչ չէի հասկանում, որովհետեւ ինֆորմացիա չունեի, դպրոցս էլ ռուսական էր: Անընդհատ համերգների էի, դպրոցում այդ մասին չէի իմացել:

Բ. - Նաիրան ո՞նց է այդ դեպքը ընդունել:

Ա.Ա. - Շատ վատ, դա պատվի հարց էր:

Բ. - Քանի՞ հոգի էիք խմբում:

Ա.Ա. - Դե, քսանհինգ հոգի կայինք, մեծ խումբ էր՝ երեք թառ, քանոն, ուդ, երգեհոն, կիթառներ, կլառնետ, ամեն ինչ ունեինք: Շատ ընտիր երաժիշտներ էին: Հայի իմ առաջին թասիբի զգացողությունն այդտեղ է եղել: Մինչ այդ ինչ որ եղել է, չէի հասկանում, միայն՝ որ ազգանունս, լեզուս հայ էր:

Բ. - Էլ ովքե՞ր կային խմբում աղջիկներից, տղաներից:

Ա.Ա. - Ղեկավարը Կիմ Առաքելյանն էր, նվագող էր, կոմպոզիտոր, երգեր ուներ գրած: Մինչ այդ՝ նվագախումբը մեկ այլ պատմություն է ունեցել: Էստրադային խումբ կար՝ Գեւորգ Բարխուդարովի ղեկավարությամբ, մոտ 1972-73 թվականներին էր, տասնվեց տարեկան էի, գնում էի Ռուսաստանից եկած թմբուկահարի մոտ, պարապում: Այդ ժամանակ Բարխուդարովին բռնում են խուլիգանության համար ու նստեցնում: Պետական հանրահայտ նվագախումբը լուծարվեց:

Բ. - Ի՞նչ էր արել:

Ա.Ա. - Ինչ-որ բռնաբարության համար: Նվագախմբի ղեկավարը հինգ-վեց տարի նստեց, եկավ: Ես արդեն մեծացել էի, հասուն տղա էի: Գնացինք, դիմավորեցինք, խոսեցինք, թե ինչպես եղավ, ասաց. «Ոչ մի բան էլ չի եղել, պարզապես Բաքուն ամեն ինչ արեց, որ խումբը լուծարվի»: Որովհետեւ ԼՂԻՄ-ի նվագախումբը շատ մեծ հռչակ ուներ Սովետական Միության մեջ, շատ հաջողակ էր եւ ջազային, եւ էստրադային բոլոր ոճերում: Հայաստանից, Ռուսաստանից մասնագետներ կային մեր խմբում: Բաքուն այն խանդով էր ընդունում: Բռնեցին ինչ-որ կեղծ պատրվակով, լուծարեցին նվագախումբը, բայց պարզվեց՝ հենց

նպատակն այդ էր: Նվագախմբի ղեկավարը միշտ հայկական ծրագրեր էր մշակում: Ծրագրերը Բաքվում էին հաստատվում, ու Բաքուն միշտ պարտադրում էր, որ ծրագրում թուրքական երգեր, երաժշտություն լինի: Ինքն էլ չէր ընդունում դա: Հետագայում այդ օրկեստրի տղաներով հավաքվում, շարունակում ենք նրա սկսած գործը: Նրա հիմնադրած մշակույթը մենք շարունակեցինք:

Բ. - Դու թմբկահար էիր, քո սիրած թմբկահարը ո՞վ էր: Կա՞ր նվագ, որ քո ուղեղում անընդհատ պտտվում էր:

Ա. Ա. - Ջազ էի սիրում, ջազ էի նվագում:

Բ. - Ի՞նչ էիր սիրում շատ այդ օրերին, ու՞մ գործերը:

Ա.Ա. - Շատը ամերիկյան երաժշտություն էինք լսում, «ԲիԲի Քինգ» էինք լսում: Բաքվի դեպքից հետո հայացքներս փոխվեցին :

Բ. - Ի՞նչ մեքենայով էիք գնացել-եկել:

Ա.Ա. - Երկու «ԼԱԶ» տիպի ավտոբուսներով ութ ժամ գնում էինք այդ հինգ հարյուր կիլոմետրը: Դաժան ճանապարհներ էին:

Բ. - Գնալուց ուրախ եք գնացել, գալուց տխուր եկել:

Ա.Ա. - Գալուց, կարելի է ասել, ոչ թե տխուր, այլ վիրավորված:

Բ. - Բայց ձեր երգը լավ ընդունվեց, չէ՞:

Ա.Ա. - Դա կապ չունի, քանի որ ճնշված էինք զգում:

Հետո Բրեժնեւը մեռավ, Գորբաչովը եկավ: Օրկեստրը գոյատեւում էր, գաղտնի էինք գործում: Մի օր էլ ծանոթացա Արկադի Կարապետյանի հետ, հարցրեցի՝ ի՞նչով եք զբաղվում: 1986 թվին էր: Ասաց. «Արթու՛ր, կարո՞ղ է դու էլ ուզենաս միանալ մեզ, միասին գործ անենք»: Ստորագրությունների հավաքն էր, ասացի՝ հարց չկա: Ես, ճիշտն ասած, արդեն հոգեբանորեն պատրաստ էի, ահագին կուտակվել էր մեջս: Զգուշացրեց, որ շատ գաղտնի պիտի անենք, որովհետեւ ՊԱԿ, միլիցիա կար: Համարձակ բան արեցի, դաշինք արեցի, սկսեցի ես էլ ստորագրություններ հավաքել բարեկամներից, ընկերներից, ծանոթներից: Հետո փողի կարիք ունեինք, հարսանիքների էինք գնում, նվագում ստիպված, որ ընտանիք պահեմ: Ծախսերի համար էր պետք, բենզինի, սոլյարկայի: Հաճախ շրջաններ էինք գնում: Ես ինքս ինձ համար խումբ էի ստեղծել, հիշում եմ՝ Գոգո Բախշյանն էր, Վովա Արզումանյանը, Աբրահամ կար Հարությունյան, եղբայրս էր՝ Ալիկը: Տղերքով թաքուն ստորագրություններ էինք հավաքում, հանձնում Արկադի Կարապետյանին, նա կոորդինացնում էր աշխատանքները: Լավ մեխանիզմ էր մշակված: Էնքան շատ չէինք խորացել՝ իրար հետ ծանոթանայինք, բարեկամանայինք, ստորագրությունները այդպես բերում տալիս էինք: Հետո գիտես էդ ստորագրությունների վերջն ինչ եղավ: Երբ Ղարաբաղի պատվիրակությունը գնաց Մոսկվա ու էդպես արդեն

հայտնի դարձավ ամեն ինչ: Հետո Գուրգեն Գաբրիելյանը, մյուսները հասան Մոսկվա...

Բ. - Դու փոքրիկ պատմություն ունեիր 1967թ. հետ կապված Կրկժանի կողմերում...

Ա.Ա. - 1967 թվին երրորդ դասարանում էի սովորում, երրորդ դպրոցում: Տուն էի գալիս, մեր տունը Կրկժանում էր: «Յոլկի-պալկի» կար, դրա մոտով էի անցնում: Մեկ էլ՝ կռիվ-դավի, կրակոցներ, ժողովուրդը վազում էր, պանիկա էր: Բաց դատ էր «Յոլկի-պալկիում», այնպես որ ժողովուրդը տեսնի: Մի թուրք հայ երեխայի էր բռնաբարել, հետո անդամահատել: Ադրբեջանցու անունը Արշաբ էր, մինչեւ հիմա տպավորված է: Պիտի տասնութ տարի դատեին, բայց քիչ են տալիս: Կինն էլ բոլորի մոտ հայտարարեց, թե մի պարկ ոսկի կտա ու կազատի ամուսնուն: Ժողովուրդը կատաղում է: Երբ հանցագործին դատից հետո մեքենայի մեջ են խցկում, որ տանեն, ամբոխը շուռ է տալիս մեքենան, բենզինը թափվում է գետնին, այդ պահին էլ մեկը վառում է լուցկին, ու բռնկում է մեքենան: Միլիցիոներները սկսում են կրակել մարդկանց վրա, որ ցրվեն: Ես տեսել եմ Արշաբին մեքենայի մեջ խցկելն ու այրվելը: Այդ խուճապից վախեցել եմ: Մարդիկ վազում էին աջ ու ձախ: Մեր հարեւանները՝ Հրանտ Սարգսյանն ու Հովիկ Իշխանյանը, որ այդտեղ էին, ինձ տեսնում են, ձեռքիցս բռնում, հեռացնում են այդտեղից, քամակիս տալիս են, թե. «Գործ չունես այստեղ, շուտ տուն գնա»: Վախեցած տուն եմ գալիս, լեզուս կապ է ընկնում, անընդհատ լաց եմ լինում: Մայրս հանգստացնում է, ջուր տալիս: ՊԱԿ-ն ընկնում է մարդկանց ետեւից, սկսում քրքրել, քանի որ առաջին մեծ բողոքն էր թուրքի, օրենքի դեմ: Միլիցիոներները եկան դպրոց, ինձ էլ տարան: Խոսեցնում են՝ ինչ ես տեսել, ոնց ես տեսել: Ահագին վախեցել էի: Միլիցիոները հարեւաններից էր հարցնում՝ ո՞վ էր այնտեղ, ո՞ւմ ես տեսել, ի՞նչ էր անում: Ծնողներս խառնվել էին իրար, բողոքեցին, թե ինչ իրավունք ունեն երեխային հարցաքննելու: Մեր հարեւաններից էլ ահագին մարդու բռնեցին, նստեցրին: Հայրս, տեսնելով, որ պրծում չկա, ինձ ուղարկեց Մոսկվա՝ քրոջ մոտ: Չորրորդ դասարանը Մոսկվայում ավարտեցի: Մեկ տարի հետո արձակուրդներին եկա տուն: Հայերենը լրիվ մոռացած՝ ռուսերեն էի խոսում: Մայրս սկսեց լաց լինել, հորս բողոքեց՝ հացս «խլեբ» սարքեցիր, բարեւս՝ «զդրաստվույտե», էլ չեմ թողնի, որ երեխային տանեն: Հորաքույրս ինձ հաճույքով էր պահում: Մենք հինգ երեխա էինք, ծնողներս չէին հասցնում մեզ լավ պահել, աշխատավարձը չէր հերիքում: Հորաքրոջս ամուսինը՝ Միշա Թովմասյանը, անունով, պատվավոր սպա էր՝ շատ հարգված: Երեք երեխա ունեին եւ վատ չէին ապրում: Դպրոցն եմ հիշում, Ռուսաստանի ձյունն եմ

հիշում, առաջին անգամ այդպիսի ձյուն Ռուսաստանում եմ տեսել, կեչու անտառներն եմ հիշում: Մոսկվան շատ հետաքրքիր էր: Դա մոտ քառասուն տարի առաջ էր:

Բ. - Ռուսների հետ ընկերությունն էիր անում:

Ա.Ա. - Հորաքրոջս երեխեքի հետ էի ընկերություն անում, բայց դպրոցից ոչ մեկի հետ կապ չունեի: Մայրս չթողեց ետ գնամ: Այդպես էլ կապերս խզվեցին, կարծեմ նամակ էին գրել, բայց երկար չշարունակեցինք: Որ եկա մեզ մոտ, տեղափոխեցին 8-րդ դպրոց, որը նոր էին բացել: Շատ լավ տղերք կային այդ դպրոցում: Դպրոցից հետո ընկերներով միասին Սահմանապահ զորքերի ակադեմիա էինք ուզում ընդունվել, հրամանատար դառնալ: Բայց չընդունվեցի, Բաքվում հանձնաժողովն ինձ թույլ չտվեց քննությանը մասնակցեի: Բայց հետո էլ ամբողջ կյանքս պետք է սահմաններով զբաղվեի: Ընկերս ընդունվել էր՝ Գարիկ Ոսկանյանը, հիմա էլ Հայաստանի սահմանապահ զորքերի հրամանատարն է:

Բ. - Գանք շարժմանը, Արկադի Կարապետյանի մասին խոսեք:

Ա.Ա. - Արկադին շատ պարկեշտ, ազնիվ, գաղափարով, շատ անձնազոհ տղա էր:

Բ. - Ինչքանո՞վ էր ընդգրկված շարժման մեջ:

Ա.Ա. - Այն խնդիրը, որը պատկերացրել եւ ստանձնել է, իրականացրել է: Այդ պատճառով Արկադի Կարապետյանի հետ մտերմացանք: Ես նրա միջոցով մտա շարժման մեջ, մասնակցեցի 1986-ի ստորագրահավաքին: Որ հետադարձ հայացքով եմ նայում, ոնց որ այդ ժամանակ կայծը սկսելիս լիներ, ղարաբաղցին պատրաստ էր: Այդ ստորագրությունները հավաքելը եւ դժվար էր, եւ շատ հեշտ: Հեշտ էր այն առումով, որ ոչ ոք չէր առարկում, մեծամասնությունը հաճույքով ստորագրում էր: Ու այդ ամենը գաղտնի էր, բայց ժողովուրդը սպասում էր, որ այդպիսի ինչ-որ բան լինի, դա առիթ էր ուղղակի: Իմ բախտն էլ բերեց, որ պատիվ եմ ունեցել մասնակցել դրան:

Բ. - Լիդերներին ու՞մ էիր տեսնում:

Ա.Ա. - Մինչեւ առաջին միտինգը ոչ մի լիդեր չի եղել, ոչ ոք չի կարող գլուխ գովալ: Մարդ չի երեւացել: Ես մենակ Արկադիին եմ տեսել, ու ստորագրություն ենք հավաքել, ես էլ իմ խումբն ունեի: Մինչ այդ՝ գործարաններում էին քննարկումներ լինում: 1988-ին սկսել ենք բացահայտ հանդիպումներ կազմակերպել: Պետրոսյան Ռազմիկին եմ հիշում, Մանուչարովի հետ մինչեւ միտինգը չեմ շփվել, չեմ հանդիպել, անունն եմ լսել միայն:

Բ. - Նա 1965 թ. առաջին տասներեք ստորագրողներից մեկն էր:

Ա.Ա. - Արկադի Մանուչարովի հետ ծանոթացա առաջին միտինգի

ժամանակ: Ինքը, որ առաջին ելույթները ունեցավ, ոնց որ ամեն ինչը սկսեց նրա շուրջը պտտվել:

Բ. - Առաջին միտինգը հիշու՞մ ես:

Ա.Ա. - Ամենաառաջինը հրապարակում հավաքվեցինք: Ահագին ժողովուրդ էր հավաքվել, ու հայտնեցին, թե Կրեմլում ընդունել են մեր պատվիրակությանը ու ասել, որ ամեն ինչ լավ է լինելու, ձեր հարցը լուծելու ենք: Ինձ հանձնարարված էր, որ մարդ չկորչի: Ես մեր թաղամասից մոտ հարյուր հիսուն հոգի էի հավաքել բերել, կարծեմ մոտ երեք հազար հոգի հավաքվել էին, տեխնիկումի ուսանողներ էլ կային:

Բ. - Ո՞վ ելույթ ունեցավ, ի՞նչ ելույթներ էին, ի՞նչ տպավորություն թողեցին:

Ա.Ա. - Լավ չեմ հիշում, ոչ մի բան լավ չեմ հիշում մինչ- Սումգայիթի օրը՝ փետրվարի 28-ը: Սումգայիթի դեպքից հետո ես շտապ Արկադիին ճարում եմ, ասում է . «Պետք է լավ մտածենք՝ ինչ անենք»: Որոշում ենք շատ միտինգներ չանել:

Բ. - Բանակ գնացել ե՞ս:

Ա.Ա. - 1979 թվին եմ վերադարձել բանակից: Բաթումիում եմ ծառայել, տանկի մեխանիկ-վարպետ էի, լավ փորձ ունեի: Սիրում էի բանակը, զինվորական գործերից արյունս եռում էր: Ագոյի հետ նստեցինք՝ ինչ անենք, ինչ չանենք: Ագոն ասաց. «Ես մի քիչ փող ունեմ, սկսենք զենք առնել, տես զենք ծախող կա՞, թե չէ»: Գնում էի որսորդական զենքեր, կարաբիններ առնում: Հիմնականում սահմանամերձ գյուղերին էի բաժանում: Ձեռքի հետ էլ մի քանի ջոկատներ էինք ստեղծում: Փողի պակասություն կար: Տեղեկություն ունեի, որ Պետրոսյան Ռազմիկի մոտ շատ փող կա: Գալիս ենք Ռազմիկի մոտ, ասում՝ փող տուր զենք առնենք: Չէր տալիս, թե՝ ես փող ունեմ, ամեն ինչ էլ անում եմ: Մտածում եմ՝ փող որտեղից ճարեմ: Ապրիլ ամիսն էր, փախստականների հոսքը սկսվել էր, ու ահագին պրոբլեմներ էին առաջացել: Մի մասը Ղարաբաղ է եկել, մի մասը Հայաստան, մյուս մասը՝ Ռուսաստան: Թե՛ ապահովության, թե՛ նյութական, թե՛ բարոյական խնդիրներ կային, որ ոչ մեկին չէին կենտրոնացնում: Մտածեցի, որ կարելի է արագորեն կազմակերպություն ստեղծել:

Բ. - Բայց Ազգային խորհուրդը կա՞ր:

Ա.Ա. - Խորհուրդը ինչ-որ քաղաքական բան էր: Փախստականները քաղաքականությամբ չէին ուզում զբաղվել: Ժողովուրդը մեղք էր: Մեզ մոտ էլ թուրքերը սկսում էին տները վառել: Հայերին լցնում էին ավտոբուսները: Աղդամով, Ֆիզուլիով, Միրբաշիրով ճանապարհները փակ էին, ահագին խնդիրներ էին առաջացել: Ժաննան հարթակում էր, Ռոբերտ Քոչարյանը գնում-գալիս էր, Համլետ Գրիգորյանը, Բորիս Դա-

դամյանը, Բորիս Առուշանյանը ելույթներ էին ունենում: Իրենք խոսել գիտեն, իսկ ես իմ գործը կանեմ: Սկսեցինք մի քանի հոգու հետ «Ամարաս» բարեգործական միության գաղափարը մշակել:

Բ. - Հիմնականում ովքե՞ր էին:

Ա.Ա. - Պատկերացնում եմ, որ փողի հարցը կարելի է լուծել զենք գնելու համար: Գալիս նստում ենք Բորիս Դադամյանի մոտ, ասում, որ այսպիսի կազմակերպություն ենք առաջարկում ստեղծել: Ասացի. «Եթե համաձայն ես, կազմակերպությունը սարքենք, դու կլինես նախագահը, որպես պատգամավոր կապահովես անվտանգությունը: Խիստ բարեգործական ծրագիր ենք կազմակերպել, որպեսզի ժողովրդին, կարիքավորներին, փախստականներին օգնենք, սփյուռքից եկած օգնությունը կանոնակարգենք, կառավարելի եւ հաշվետվության ենթակա դարձնենք, եկեղեցիները վերանորոգենք, թեմի աշխատանքը կարգավորենք: Ամենակարեւորը՝ կարողանանք նաեւ զենք, զինամթերք գնել ու զինել կամավորական ջոկատներին»: Համաձայնվեց ինձ հետ: Անհրաժեշտ էր հիմնադիր համագումարը անցկացնել: Մեկ ամսում կայացավ համագումարը: Ես փոխնախագահն ու գործադիր տնօրենն էի: Հայաստանից էլ կային անդամներ՝ Գուրգեն Մելիքյանը, Ռոբերտ Ամիրխանյանը, Վերոնիկան Ֆրանսիայից էր, Ղարաբաղի շրջաններից կային՝ Հադրութից Արթուր Մկրտչյանը, Մարտակերտից Վիգեն Շիրինյանը, Շահումյանից Շահեն Մեղրյանը:

Բ. - Դադամյանի հետ հանդիպումից ի՞նչ կարեւոր, հետաքրքիր դրվագ կհիշես, իր բնույթից, բնավորությունից:

Ա.Ա. - Դադամյանը հանճարեղ մարդ էր, հանճարեղ հայ, ծնող, ղեկավար:

Բ. - Ի՞նչ դեպքեր, օրինակներ, դրվագներ կարող ես հիշել:

Ա.Ա. - Ես մի տասնհինգ հատ զենք ունեի կուտակած: Եկել էի Երեւան, մի կամավորական կար, նրա ետեւից պետք է Ջավախք գնայի: Քոչարյանը զանգեց, թե՝ վիճակը շատ վատ է, ինչ կա-չկա մի կերպ ուղարկիր: 1989 թիվն էր, չեմ հիշում, թե որ գյուղում ահագին անասուն էին տարել, չոբանին սպանել: Ասացի. «Լավ, կուղարկեմ, մի երկու-երեք օրից ես նորից կբերեմ»: Պայմանավորվեցինք: Առավոտյան Սերգեյ Վանցյանը ամեն ինչ պատրաստել էր, ինքնաթիռը պատրաստ սպասում էր, մեկ էլ զանգեցին, թե՝ ՕՄՕԼ-ը մտել է օդակայան: Զանգեցի Դադամյանին, ասացի, որ ահագին զենք ունենք, չգիտեմ՝ ինչպես տանեմ: Նա էլ ասաց՝ ես կտանեմ: Ճամպրուկները բերեցինք, դասավորեցինք կարաբիններն ու մյուս զենքերը: Եկանք օդակայան, դիմեցինք Վանցյանին՝ ինքնաթիռով ճամպրուկներն ուղարկելու համար: Վանցյանն ասաց, որ ինքը տեղյակ է եւ խնդրեց չշտապել, թող օդաչու-

ները գնան տեսնեն, պարզեն իրավիճակը, հաջորդ օրը կտեղափոխեն ճամպրուկները: Դադամյանն ասաց, որ ինքը կտանի, ոչ մի խնդիր չկա: Մեկնեց օդաչուների հետ: Խոջալուի օդակայանում իջավ, սկսեց գոռգոռալ, թե ես ինչ անօրինություններ են տեղի ունենում, ինչու են ճնշում այս խեղճ ժողովրդին: ՕՄՕԼ-ականները շփոթության մեջ էին: Այս բողոքների հետ նա զենք-զինամթերքով լցված ճամպրուկները բեռնեց մեքենան ու դուրս բերեց Ադրբեջանի հսկողության տակ գտնվող օդակայանից: Այդ մեքենայով նա գնաց Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Արկադի Վոլսկու մոտ՝ բողոքելու Ադրբեջանի իշխանությունների անօրինությունների դեմ, հանձնարարեց մեքենան տանել ուր որ հարկն է: Դադամյանի այս անձնազոհ քայլը օրինակ եղավ շատերի համար, զգացին, որ միշտ էլ կարելի է անցնել ՕՄՕԼ-ից: Ռոբերտը, մյուսները գոհ էին այս հաջող տեղափոխությունից: Սկսեցինք օգտագործել մեր մյուս պատգամավորների մանդատները, օգտագործում էինք ամեն մի հնարավորություն՝ երեխաների բարուրները, կանանց պայուսակները... Ես Երեւանում զբաղված էի զենք հայթայթելով: Ջավախքից էին օգնում, այլ տեղերից: Փողի պակասություն միշտ էլ կար: Դադամյանին խնդրում եմ շտապ Երեւան գալ: Ասաց. «Ինչքա՞ն գումար է պետք»: «Նայած հանգամանքին,- ասում եմ,- երեք հազար, քսան հազար, հարյուր հազար»: Ասում էր. «Խնդիր չկա»: Մտնում էր տարբեր հիմնարկներ, հանդիպում, ասենք, ԲԽՍՍ-ի պետերի, նախարարների, խոշոր հիմնարկությունների ղեկավարների հետ, բարեգործականի անունից փող խնդրում: Նրան հավատում եւ տալիս էին: Դադամյանը մեծ հեղինակություն ուներ երկրում: Նա ինձ վստահում էր: Բայց ես միշտ գրանցում էի, թե ումից որքան գումար է ստացել, ստացականներ էի գրում, հատուկ մատյանում գրանցում՝ կրկին ստացականներով, թե ում ինչքան գումար եմ տվել: Այս ամենը գաղտնի էր ու չպետք է երեւար, բայց կար եւ բարեգործականի երեւացող կողմը, որը բաց էր, հաշվետվություն էր կազմվում: Ստեփանակերտում հատուկ շտաբ ենք ստեղծել, որի կազմում ընդգրկել էինք Ռոբերտ Քոչարյանին, Արկադի Կարապետյանին, Մուրադիկին, Ժաննա Գալստյանին: Ես նրանց հաշվետվություն էի ներկայացնում բոլոր հարցերում: Ճիշտ է, գտնվեցին մարդիկ, ովքեր այդ ընթացքում, օգտվելով առիթից, «ձեռքերն էին տաքացնում». ես նրանց անունները չեմ ուզում տալ: Բայց շարժումը հիմնականում մաքուր էր: Ժողովրդի մեջ մտավ ջոկատների ստեղծման, անվտանգության ապահովման գաղափարը, որն, իմ կարծիքով, շատ կարեւոր էր: Գյուղացին վախենում էր զենքը ստանալ եւ պաշտպանել իր տունը, գյուղը: Դժվար էր նրան համոզել, որ իր անվտանգությունը իր ձեռքին է: Մեզ աստիճանաբար հա-

ջողվեց ջարդել վախը:

«26»-ի մարտերի ժամանակ, երբ ընդհարումները հակառակորդի հետ նոր էին սկսվել, իսկ մինչ այդ 5-րդ դիրքը հանձնել էինք թշնամուն, Սասունի ջոկատից տասը հոգու հետ բարձրացել էինք մինչեւ 5-րդ դիրք, որտեղ բավական շատ զոհեր ունեինք, վիրավորներ էլ կային: Հակառակորդի հետ մտանք մերձամարտի, սակայն դիրքն արդեն նրանց էր անցել: Հակահարձակման պատրաստվեցինք: Անտառի մեջ տասը-քսան մետրի վրա հետեւիցս մեկը գոռաց՝ շե՛ֆ, պառկի՛ր: Լոլոն էր՝ Լեւոն Մովսիսյանը՝ իմ օգնականը: Ես բանի տեղ չէի դնում, մարտն էի շարունակում: Շուռ եկա, տեսնեմ՝ մեկը օդում էսպես իջնում է: Նռնակ էին գցել: Դուրս բերեցի Լոլոյին, ուղարկեցի հոսպիտալ: Ինքս կոնտուզիա էի ստացել: Շարունակեցինք մարտը, խրամատները մաքրեցինք, դիրքը ետ վերցրեցինք, դիրքավորեցի տղաներին: Իրիկունը մի քանի հոգով իջանք Ստեփանակերտ՝ տեսնենք, թե Լոլոն ոնց է:

Ահավոր խուճապ էր: Կինոօպերատոր Շավարշ Վարդանյանը նկարահանում էր, ճակատի արխիվն էր պատրաստում: Ավտոմատը վերցրել եմ, մարտի եմ դուրս եկել: Շավարշը նկարում էր, ասաց, որ կտանի, ցույց կտա, թե ինչպես են մեր զինվորները փախչում: Եթե հանձնենք դիրքը, արդեն դուրս են գալիս Ստեփանակերտի վրա: Քարացել են մի պահ, շուռ են եկել, թե՝ ի՞նչ անենք: Յուրա Հովհաննիսյանը հրամանատարն էր, թողել են մենակ, փախել: Յուրան կապվեց: Ես այդ պահին բազայում էի, որտեղ հոսպիտալն էր, պետք է զինամթերք հասցնեի զորքին: Յուրան հայտնեց, թե տղերքը փախչում են: Վերցնում եմ ավտոմատը, առաջ ընկնում: Շավարշին ասում եմ. «Նման բաներ մի՛ նկարիր, ամոթ է, վերցրու ավտոմատը, գնանք տղաների դեմը կտրենք, որ չփախչեն»: Շավարշը նկարում էր: Զինվորները թե՝ ի՞նչ անենք, ասացի՝ կռվենք: Ականանետները հարվածում էին, արկերը պայթում էին շուրջը: Հասկանում էի զինվորների վախը: Ինքնաթիռները ռումբեր էին թափում: Կամավորական ջոկատներ էին կռվի ելել, զինվորական էլ չէին: Տարբեր մասնագիտության տեր մարդիկ էին, ի՞նչ իմանային, որ կգան ու մսաղացի մեջ կընկնեն: Վայրկյանի ընթացքում տեսնում ես՝ մեկի ոտքը չկա, մյուսի գլուխը, ձեռքը: Դրանից խուճապ էր սկսվել: Հաղթահարեցինք, անցանք հակահարձակման: Այստեղ գլխավոր դերը Քսանվեցի Յուրայինն էր: Շատ մեծ քաջություն դրսեւորեց: Տասնյոթի Արթուրը Կապի պետն էր: Սասունի՝ Հրազդանի ջոկատն էր, Սուրոն՝ Սեւանի ջոկատը, Աշոտը՝ Սիսիանի, Լեւոնը՝ Արաբկիրի, էլ չեմ ասում Ստեփանակերտի ջոկատները: Հիմնականում յոթերորդ եւ հինգերորդ վաշտերն էին: Իմը յոթերորդն էր: Արթուրն էր, Կոլյան Վարդենիսից: 26-ը մեծ ճակատն էր:

Դիմեցի Ժորա Պետրոսյանին, որն ԱԺ նախագահի պաշտոնակատարն էր, ասացի որ պրոբլեմներս մեծ են: Քսան լիտր սոլյարկա տվեց, ասաց, որ ամբողջ Ղարաբաղում հարյուր լիտր կա, քսանը ինձ է տալիս: Իհարկե գիտեինք, որ վառելիքը Շուշիի գրավման համար է պահում: Պետք է հինգ կիլոմետր ճանապարհ բացեինք, որ վիրավորներին տեղափոխեինք, հերթափոխը, զինամթերքը տեղ հասցնեինք: «26»-ի պատմությունը շատ երկար է: Թուրքերի ուժերը իրենց վրա էր վերցրել: «26»-ի մի ջոկատը Քյոսալարի, Ջանհասանի ուղղությամբ էր կռվում, որ այդտեղից թուրքերի ուժերը չգնան միանան Շուշիի ուժերին: Մեր ձախ թեւը միացել էր հիմնական ուժերին ու մտել Շուշի: Յուրան մնացել էր այնտեղ:

Մտել էինք Լաչին, ամսի 19-ին էր, Շուշիի գրավումից մոտավորապես տասն օր անց էր: Գեներալ Դալիբալթայանի հետ էի, ասում է. «Արթուր, Կենտրոնը՝ «Վաթսունմեկը», քեզ է կանչում, ռացիան վերցրու, գնա»: Լաչինը արդեն ազատագրած՝ նստած ծխում էինք տղերքով:

Նինա Հովնանյան - Չեմ գիտեր՝ երբ էր, 1992 թե 1993 թիվն էր: Պապան ֆինանսավորում էր՝ նպատակով, որ մեկ օր մը մենք՝ հայերս, պիտի այդ պատերազմի ընթացքին հաղթենք եւ ապացուցենք աշխարհին, որ ոչ թե մենք գրաված ենք մեր հողերը, այլ ազատագրած ենք, եւ փաստերը պիտի ցույց տանք աշխարհին: Հայրիկը ֆինանսավորում էր չորրորդ, հինգերորդ, վեցերորդ դարերի եկեղեցիների վերանորոգումը: Եվ ինձ ուղարկեց որպես «հետախույզ»: Պարգեւ սրբազանը ինձ դիմավորեց, ներկայացրեց ծրագիրը, թե ինչ պիտի անեն, Ղարաբաղի բարբառով Լոլոյին հրամաններ տվեց, թե ուր պիտի գնանք: Լոլոն իմ թիկնապահ-վարորդն էր, «Նիվայով» կամ էլ ուրիշ մեքենայով գնում էինք այստեղ- այնտեղ:

Բ. - Առաջին անգա՞մ էիք եկել Հայաստան, Ղարաբաղ:

Ն.Հ. - Այո, Շուշիում էինք մնում:

Բ. - Տպավորություններն ինչպիսի՞ն էին, ի՞նչ էիք տեսնում, ո՞նց էիք ընկալում, ի՞նչ երկիր էր, ի՞նչ էր կատարվում:

Ն.Հ. - Շատ հիացած էի: Առաջինը Երեւան եղած էի, բայց նրանից դուրս, բացի Գառնի, Գեղարդ, ոչ մի տեղ չէի եղած: Այդ տարիների Երեւանը ուրիշ տպավորություն էր թողնում, մութ էր, տաքություն չկար, պայմանները շատ դժվար էին, մարդկանց վիճակը շատ լարված էր: Համալսարանում իմ մասնագիտությունը Առաջին եւ Երկրորդ համաշխարհային պատերազմներում Գերմանիայի եւ Եվրոպայի հարաբերություններն էին: Ինձ թվում էր, թե այդ տարիների Երեւանը 30-ականների Բեռլինն էր: Գնացի Ղարաբաղ եւ հիացա առաջին հերթին լեռնային բնության գեղեցկությամբ: Մտանք Շուշի եւ

ուղղակի ցնցվեցա, իրոք հրաշք էր: Պատմությունը որ լսեցի՝ ոնց են Շուշին ազատագրել, հիացել էի: Այդ օրերին էլ անընդհատ Արթուրի մասին պատմություններն էի լսում՝ Արթուրը այստեղ, Արթուրը այնտեղ: Ես չէի հավատար, որ իրականության մեջ իրա պես մարդ կար, ես ուզում էի ծանոթանալ հետը: Ասացին՝ չի կարելի, ինքը իր շտաբում է: Գնացինք հասանք, ասաց. «Շտաբը այնտեղ է, դու նստիր ավտոյի մեջ, ես գնամ ասեմ»: Ասացի՝ լավ: Նստած եմ ավտոյի մեջ, նայում եմ աջ ու ձախ կողմերս, հունիս ամիսն էր, ծաղիկները լրիվ ծաղկած, խենթանալու գեղեցկություն էր: Մտածեցի, որ եթե այս մարդը իրոք այդպիսի լեգենդ է, ճիշտ չէ՞, որ ես նրա համար ծաղկեփունջ սարքեմ: Սկսեցի ծաղիկներ հավաքել: Ինքը դուրս եկավ, ես լայն ժպիտով ծաղիկները պարզում եմ, սպասում եմ, որ ինքը ինձ վրա պիտի հիանա: Փոխանակ բարեւս առնի, առաջինը հարցնում է. «Էս ծաղիկները որտեղի՞ց», ասում եմ. «Այս դաշտից»: Վատ բաներ ըսավ ղարաբաղի բարբառով: Լոլոյի գույնը թափեց: Իմ լեգենդը ծաղիկները գցեց ավտոյի մեջ, ինձ էլ գցեց ավտոյի մեջ: Միակ բանը որ հասկացա, Նյու Յորքն էր: Վռնդեց ինձ ընդհանրապես, աքսորեց ինձ: Լոլոյին ասացի. «Այս մարդը խե՞նթ է, չգիտե՞ ես ով եմ»: Ասաց. «Այդ դաշտերը, որ ծաղիկները քաղեցիր, ականապատված են»: Այդ ձեւով ծանոթացա:

Բ. - Իսկ հաջորդ հանդիպում՞ը:

Ն.Հ. - Հետո ուրիշ բան եղավ: Այցելեցինք Վանք գյուղը, գիշերեցինք Տեր-Հովհաննեսի տանը, Պարգեւ սրբազանն ասաց, որ մի քանի օր սպասենք՝ մինչեւ գնանք Երեւան: Մեկ գիշերվան մեջ աղջիկներուն սորվեցուցի թոփ խաղալ, ավտո քշել, այն ատեն ծխում էին, ես ալ ծխում էի: Մյուս առավոտ տղամարդիկը անպայման բողոքում էին իմ մասին: Պարգեւ սրբազանը առավոտ շուտ ինձ այդտեղից վերցրեց, ասաց. «Նինա ջան, մենք արդեն մի ճակատ ունենք կռվի, երկրորդ պատերազմը մի սկսիր, վերցրու կանացի իրավունքներդ ու Նյու Յորք գնա, ոչ Երեւան, ոչ Ստեփանակերտ, այլ՝ Նյու Յորք»: Հաջորդ անգամ, որ ես ու Արթուրը հանդիպեցինք իրարու, այդ նույն տարին էր՝ 93 թիվը:

Ա.Ա. - Ես վիրավորվեցի Գանձասարի, Մարտակերտի կռիվների ժամանակ: «Ղարաբաղ» կոմիտե կար, տղերքը կազմակերպեցին, փող հավաքեցին, ինձ ուղարկեցին Նյու Յորք: Ապաքինվեցի, ամեն ինչ կարգին էր, հոսպիտալից դուրս գրեցին, եւ պետք է հանդիպում լիներ: Այնտեղ նորից Նինային հանդիպեցի:

1991 թիվն էր, Ամարասի բացումն էր: Ինձ բռնել էին, որ Ամարաս եկեղեցու բացումը չանենք: Հյուրեր ունեինք Հայաստանից: ՊԱԿ-ը

արդեն գիտեր:

Բ. - Ստեփանակերտի ՊԱԿ-ն է՞ր օգնում:

Ա. Ա. - Ստեփանակերտի ՊԱԿ-ը օգնեց, բռնեցին, մատնիչները նրանք էին, Ռուսաստանում ինձ ի՞նչ էին ճանաչում: Վերջը տարան: Բերեցին Շուշիի բանտը: Կեսը քրեական հանցագործներ էին, կեսը քաղաքական գործիչներ: Ինձ ՊԱԿ-ի խուցն էին բերել: Երեք թուրք էին նստած: Բանտի պետը Հասանն էր, ասում էր. «Որ ասում էինք խելոք կաց, չէիր լսում»: Միչ այդ մի քանի անգամ բանտ էի եկել՝ ընկերոջս այցելության: Ասում է. «Գլխիդ, տես, ինչ խաղ ենք սարքելու»: Ասացի՝ կտեսնենք: Ռուսներն էին բերել, վստահ էի, որ թուրքի ձեռքը չեն տա ինձ: Ասաց. «Շորերդ հանիր»: Հանեցի: Մի տրուսիկով կանգնած էի, մեկ էլ խաչ ունեի կախած. Պարգեւ սրբազանի նվերն էր: «Խաչդ պիտի հանես»,- կարգադրեց Հասանը: «Հասան, խաչը չեմ հանի, հավատացյալ եմ,- դիմեցի ռուս գնդապետին,- ես խաչը չեմ հանելու»: Գնդապետը հարվածեց ինձ: Հայհոյեցի: Հասանը թռավ ինձ վրա: Ես հասցրեցի խաչը պոկել ու դրեցի բերանս: Սկսեցին ծեծել: Հիշում եմ, որ աչքերս մի կերպ բացեցի, հագացի, ջարդված ատամներս լցվեցին բուռս, մեկ էլ խաչը, որ կոկորդիս էր դեմ առել, ընկավ բուռս: Խաչը որ տեսա, ուշքս գլուխս եկավ, մտածեցի, որ փրկություն է եկել ինձ: Աշխարհն իմն էր՝ գիտեմ խաչի գործությունը: Շորերս արնոտ էին: Ինձ կարգի բերեցի: Խցում մարտակերտցի Նապոլեոնն էր, որին զենք պահելու համար էին բռնել: Օգնեց կարգավորել, հետո սկսեց լացել. «Բա որ քեզ էլ են բռնել, ո՞վ է մեզ տիրություն անելու»: Վեց ամիս մնացի այդտեղ: Երկու-երեք ամիս քաշքշեցին: Ես ինձ որպես հավատացյալ քրիստոնյա էի պահում, որը բարեգործությամբ է զբաղվում, եւ ուրիշ ոչինչ: Է2-Է2 հարցեր էին տալիս. «Ո՞վ է ձեր լիդերը, ո՞վ է քեզ հանձնարարություն, զենքեր տվողը»: Այդպես ինձ երկու-երեք ամիս քաշքշեցին: Մի գեղեցիկ օր քսիֆ եմ ստանում, թե մեր շտաբի տղերքը մի բան են կազմակերպել. բարձաստիճան պաշտոնյաներ են ձերբակալել, որ ինձ հետ փոխանակեն: Քոչարյանն էր փողը տվել, որ ինձ հետ կապ պահեն: Ասացին, որ շուտով ինձ պիտի ազատեն:

Բ. - Ինչպե՞ս էին կերակրում, պահում:

Ա.Ա. - Շատ վատ, ճաշը լրիվ ջուր, մեջը մի հատ կարտոֆիլ: Ես էլ հացադուլ էի հայտարարում: Տոլ Բարեկի գիրքն էր ձեռքս ընկել: Դա ինձ փրկեց:

Բ. - Այդ գիրքը որտեղի՞ց:

Ա.Ա. - ՊԱԿ-ի ռուս աշխատողը տվեց, անունը Ֆեդյա էր, լավ, բարի մարդ էր: Թուրքերը իմ պատուհանի տակ ամբողջ գիշեր շուն էին

հայեցնում, որ չքնեմ: Մեկ էլ բանտախցի մեջ ծուխ էր, անիվ էին վառում: Խեղդոց էր: Մեռնում էի այդ ձայներից, հոտից, ծխից, աչքերս դուրս էին գալիս:

Բ. - Ե՞րբ էր, ձմե՞ռ էր:

Ա.Ա. - Գարուն էր թե ամառ: Օրը եկավ, բարին հետը: Ինձ փոխանակեցին ու դրին ինքնաթիռի մեջ, օտարեցին Ղարաբաղից: Հա, իրենց ավագը եկավ՝ բանտի պետը, ՊԱԿ-ի աշխատող էր: Ասաց. «Դու այսօրվանից ազատ ես, հավաքվիր, տանում ենք»: Ասացի. «Չեմ գալիս, երկու պահանջ ունեմ: Առաջինը՝ պետք է ազատեք բոլոր քաղբանտարկյալներին: Երկրորդը՝ պիտի գնամ Շուշիի եկեղեցի, աղոթեմ: Հետո ինձ տարեք»: Սրանք գժվել են, թե. «Ի՞նչ քաղբանտարկյալ, ի՞նչ եկեղեցի: Քեզ ազատել ենք, շուտ վեր կաց, գնա»: Ասացի՝ չեմ գալիս, ու հացադուլ հայտարարեցի: Մի շաբաթ գնացինեկան: Քոչարյանը փողը տվել էր, որ ինձ շուտ ազատեն: Հինգ հազար տվել էր, գնացել ասել էին իմ պահանջների մասին: Էլի հինգ հազար ավելացրել էր, թե. «Այդ պահանջները, եթե կարող եք, կատարեք»: Ասել էին, որ տղերքին չեն կարող ազատել, բայց խոստացել էին ինձ եկեղեցի տանել: Արդեն հինգերորդ օրն է՝ ես հացադուլի մեջ եմ: Այնքան ժողովուրդ էր հավաքվել՝ քարերով: Լավ է, ինձ պահել էին, վահաններով զինվորները «կամուրջ» էին սարքել, որ ես տակով անցնեմ, ինձ քար չկպչի: Մի երկու հարյուր թուրք էին հավաքվել՝ քարերով, հայհոյանքներով: Իմացել էին, որ ինձ ազատել են՝ հերիք չէ, դեռ բերել են եկեղեցի, ու որ փող են տվել: Եկեղեցին, խորանը լրիվ կեղտոտ էին: Կոշիկներս, պիջակս հանել եմ, խորանը լրիվ մաքրել, պիջակովս սրբել եմ: Հետո ինձ դրեցին ինքնաթիռը, ուղարկեցին Երեւան, որ հետո Ռուսաստան տանեն: Վազգեն Սարգսյանն իմացավ: Տղերքը եկան «Էրեբունի» օդանավակայան: Որ իջանք, մեր ջոկատը՝ երեք հարյուր հոգի, ինքնաթիռը ձերբակալեց, ինձ հանեցին, ՊԱԿ-ի անդամներին ձերբակալեցին: Վանցյան Սերգեյի գլխավորությամբ ինձ տարան, Չարենցավանի անտառներում թաքցրին: Վեց ամիս այնտեղ մնացի՝ մինչեւ հանդարտվեց: Աշխատանքները այնտեղից էի կազմակերպում: Երբ իշխանափոխություն եղավ, ես թաքստոցից դուրս եկա: Պաշտպանության կոմիտեում աշխատեցի միառժամանակ: Հետո գնացի Ղարաբաղ: Սկզբում Քյոսալարի, հետո «26-ի» պատմությունն էր: Մի տարի ու կես անցնում է, մինչեւ հասնում ենք Շուշիի ազատագրմանն ու պատարագին: Դուք պատկերացնո՞ւմ եք իմ ուրախությունը: Ես լացում էի ու ոչ ոքի չէի պատմում, թե ինչու եմ լացում: Այդ ամբողջ պատմությունից մի տարի հետո ես գալիս եմ, Շուշիի եկեղեցում պատարագի եմ մասնակցում:

Դրանից հետո ինձ Սեյրան Օհանյանն էր հանձնարարություն տվել: Գնացել էի Լիսոգորսկի ազատագրմանը մասնակցելու: Այնտեղ մերոնք չէին կարողանում ներքեւից մտնել: Սեյրան Օհանյանն ինձ վերեւից ուղարկեց, հաջողվեց, մտա Լիսոգորսկ: Ուղիղ ժամը տասներկուսն էր: Հենց մտա, մերոնք սկսեցին «Գրադով» կրակել. ծրագրով այդպիսի հրաման է եղել: Թուրքերն արդեն փախչում էին, իմ մտնելն ավելի է արագացրել: Մերոնք սկսում են կրակել մեզ վրա: Կապը կտրված էր, մի կերպ հասկացրի, որ մենք այստեղ ենք, մի կրակեք: Մի կես ժամ հետո Կոմանդոսի միջոցով ասել եմ, որ կրակը դադարեցնեն: Դիրքավորվել ենք՝ մինչեւ ընդհանուր ճակատը եկել, հավասարվել է մեզ: Սեյրան Օհանյանն էլ եկավ այնտեղ: Հաջորդ օրը Բերդաձորի հանձնման ուղիղ մեկ տարին էր՝ մայիսի 17-ը: Ես Բերդաձորի հետ շատ էի կապված, մայրս Բերդաձորից էր: Սեյրանը ասաց. «Հանգստացիր, պատրաստվիր, որ վաղը սկսենք Բերդաձորի չորս գյուղերի՝ Հին շենի, Մեծ շենի, Կանաչ թալայի, հետո Զառիսլուի ազատագրումը, պիտի դրանք վերցնենք ու գնանք Լաչին»: Սեյրանին հայտնեցի, որ այսօր Բերդաձորի հանձնման ուղիղ մեկ տարին է, խնդրեցի՝ ես հիմա գնամ: Բերդաձորից ջոկատներ էին եկել, Հայաստանից կամավորներ էին հավաքվել: Սեյրանը թե. «Չես կարող, ծրագրով վաղն է, պետք է մնաս հանգստանաս»: Ասացի. «Խնդրում եմ, այս գիշեր անենք, էս ձորում մի տարին նշենք, թող սիմվոլիկ լինի»: Սեյրանը ընդառաջեց, ասաց՝ հարց չկա: Գիտեր, որ մարտ չի լինելու: Կարգադրեց, որ դիրքավորվելով գնամ: Գիշերը Երեւանից եկած կամավորական ջոկատների հետ մտանք Բերդաձորի չորս գյուղերը: Որ տունը մտնում էինք՝ լամպերը վառած, սեղանը գցած. մարդիկ հանդից եկել էին, որ հաց ուտեին: Լսել էին՝ հայերը գալիս են, թողել փախել էին տներից: Նստեցինք, լավ հաց կերանք, հետո դիրքավորվեցինք մինչեւ առավոտ: Առավոտյան ընդհանուր ճակատի հետ մասնակցեցինք Լաչինի ազատագրմանը: Ես վերեւից կարգավորում, ուղղումներ էի անում: Բերդաձորի դիրքը բարձր էր, ամեն ինչ տեսնում էի, Սեյրանին էլ ինֆորմացիա էի տալիս, որ ինքը ղեկավարի այդ հատվածը: Լաչինն էլ ազատագրեցինք: Մինչեւ ժամը չորսը դիմադրում էին թուրքերը: Գեներալ Դալիբալթայանին հանդիպեցի: Ես, Սեյրանը, նա լավ ուրախացանք: Ստուգեցինք՝ տղաներից ով է ողջ, ով մեռած: Դալիբալթայանը ասաց. «Արթու՛ր, լավ կլինի մինչեւ առաջ գնալը հետախուզություն կազմակերպես, ինֆորմացիա ունենանք, թե ինչ է կատարվում Զաբուխում»: Ասացի. «Չեմ կարծում, թե այնտեղ հիմա թուրք լինի, բայց դե որ հրաման է, կանեմ»: Մի հեծանիվ կար գցած, վերցրի այդ հեծանիվը, քշեցի հասա մինչեւ

Զաբուխ: Վերեւից իջնելիս տեսնում եմ փախչողի հետքերը: Հասա մինչեւ Զաբուխի կամուրջը, հաղորդեցի, որ մարդ չկա, կարող են իջնել: Ճակատի զորքը սկսեց կամաց-կամաց իջնել: Ես շարունակեցի ճանապարհս, հասա Տեղ գյուղը: Ճանապարհի մի հատվածը պայթեցված էր, այլեւս չէի կարող շարունակել: Կապվեցի, զեկուցեցի իրավիճակը, ասացի, որ եթե բուլդոզեր լինի, արագ կարելի է հարթել: Դե, այդ պահին Ի՞նչ բուլդոզեր: Տղաները եկան, սկսեցինք ձեռքով մաքրել: Արդեն Հայաստանի Հանրապետության սահմանին էինք հասել:

Եկող առաջին «Վիլիսի» հետ կապված մի հետաքրքիր պատմություն եմ հիշում: Ինձ չնկատեցին, թե չնկատել տվին՝ չգիտեմ, բայց անցան: Գեներալ Դալիբալթայանն էր մեքենայի մեջ: Գոռացի՝ չկանգնեցին, հրացանով օդ կրակեցի: Մեքենան արգելակեց: Սուրոյի մեքենան էր: Վիտոն էր, Քսանվեցի Յուրան: «Սատանի մայլումը քյանդրբազություն չեն անում, - ասացի ես, - ես էստեղ էշի պես սպասում եմ, դուք եկել, անցնում եք, որ առաջինը դո՞ւք հասնեք»: Ծիծաղեցին: Մեքենայի մեջ տեղ չկար: Նստեցի մեքենայի կապոտին, ու այդպես թեքությունն անցանք: Երեւացին զանգեզուրցիները: Աղջիկները, տղաները խմբված մեր գալուստին էին սպասում: Հենց նրանց տեսա, ուրախությունից օդ կրակեցի: Սպասողները անսպասելի կրակոցից իրար խառնվեցին, խուճապահար այս ու այն կողմ փախան: Գինով լցված տակառները աջ ու ձախ էին գլորվում: Գոռում ենք. «Մի՛ վախեցեք, մենք ենք՝ ղարաբաղցիները»: Ուշացումով հասկացել են, որ իրենց սպասած զինվորներն ենք, կրկին հավաքվել են, որ աղ ու հացով դիմավորեն ու նկարահանեն պատմական պահը: Խնդրեցին. «Ետ գնացեք, նորից եկեք, որ ամեն ինչ ճիշտ լինի»: «Կռիվ է, զինվոր ենք, հո դերասան չենք, որ մի քանի դուբլ անեք»,- ասացինք մենք ու ետ չգնացինք, չնայած զգում էինք պահի պատմական նշանակությունը»: Մայիսի 18-ին էր, Մայր Հայաստան-Արցախ միացումի պատմական օրը: Զորի Բալայանն իր գրքում գրել էր, որ ինքն ինքն ու Հենրիկ Իգիթյանն են առաջինը եկել, այդտեղով անցել: Ասում եմ. «Այդ ի՞նչ եք գրել: Այդ պայթեցված ճանապարհով ինչպե՞ս կարող էիք անցնել»: Ասում է. «Մենք ենք մաքրել»: Ասացի . «Մենք այդքան հոգով մոտ քառասուն որպե մաքրել ենք, դուք երկու հոգով ինչպե՞ս կարող էիք այդ հսկա սարերը մաքրել»:

Հաթերքի ձորակի հրամանատարն էի: 1992 թվականի աշունն էր, վիճակը այստեղ շատ վատ էր: Շուշիից, Լաչինից հետո եկա Հաթերքի ձորակ՝ ջոկատներին օգնելու: Մեր հրամանատարը Հարությունյան Սուրիկն էր: Պակաս բաներ շատ կային՝ սոլյարկա, բենզին, բժշկական

պարագաներ, փամփուշտ, ուտելիք: Երեւանից, տարբեր տեղերից ճարեցի, բերեցի: Ինչքան հնարավոր էր, դիմանում էինք: Կարողանում էինք հակառակորդի հարձակումներին դիմակայել: Բավական պինդ կանգնած էինք: Հանկարծ թուրքերը իրենց լրիվ ուժերը կենտրոնացնում են մեզ վրա: Սարսանգը եթե վերցնեին, ճանապարհը բացվում էր դեպի Ստեփանակերտ, շատ հեշտությամբ կարող էին մտնել քաղաք: Սարսանգից հետո միակ բնական պաշտպանական գիծը Գանձասարի լեռնաշղթան էր, վանքի ձորակը: Եթե մտնեին այնտեղ, մինչեւ Ստեփանակերտ հնարավոր չէր լինի պաշտպանել: Դիմադրում էինք, տեսանք, որ զոհեր ենք տալիս, մոտ երեք հարյուր զինվոր, որոշվեց Սարսանգի ձորակը հանձնել: Շատ դաժան ու ամենածանր որոշումն էր իմ կյանքում: Զինվորներին բացատրեցի, որ ետ քաշվելով ու դիրքավորվելով Գանձասարի լեռնաշղթայի վրա՝ այնտեղի ձորից կարող էինք թուրքերին ահագին վնաս հասցնել: Մի քանի ամիս շարունակ ուժասպառ կանենք թշնամուն ու կանցնենք հակահարձակման: Ռազմաճակատի գիծն անցնում էր Նարեշտարից մինչեւ Չլդրան գյուղը, ընդգրկում էր Դրմբոնը, Ալաշանը՝ մոտ տասնութ կիլոմետր: Մեր ուժերը այդքանին հերիքեց: Սկսեցինք նաեւ մեր դիրքերն ամրապնդել: Մոտ երեք ամիս մնացինք այդ դիրքերում: Թուրքերի մասին հավաստի տեղեկություններ էինք ստանում: Մենք ռադիոկապով անընդհատ լսում էինք նրանց: Երեք ամսում շուրջ վեց հարյուր մարդ էինք կոտորել: Մեր հանձնելուց հետո, ինչպես ափիս մեջ, թշնամին պարզ երեւում էր: Նշանառուների միջոցով ահագին օպերացիաներ էինք իրագործում: Գիշերը փոքր ջոկատներով մտնում էինք նրանց դիրքերը, զորանոցները ու ոչնչացնում: Սակայն թուրքերին իրենց կորուստները չէին անհանգստացնում, երեւի զինվոր շատ ունեին: Ոչեցին մեզ այդտեղից էլ հանել, մտնել վանքի ձորակը, գրավել հինավուրց մեր սրբատեղին՝ Գանձասարը: Ու Ղարաբաղի վերջը գալիս էր: Շտաբում բացատրեցի իրավիճակը, խնդրելով համալրում, զորք: Երկար զրույց եմ ունեցել Սերժ Սարգսյանի հետ: Նա ասաց, որ երեւի Երեւանից օգնություն գա, ինչքան կարող ենք՝ դիմանանք: Մի քանի ջոկատ եկան Ստեփանակերտից: Մեզ մոտ Գետավանի, Զարդախաչի, Հաթերքի, Չափարի, Հոռաթաղի, Ներքին Հոռաթաղի, Վաղուհասի, Դրմբոնի, Վանքի ջոկատներն էին: Սերժ Սարգսյանն ասաց, որ Վազգեն Սարգսյանը օգնություն է բերելու, ու այդ հույսով էինք ապրում: Մեր շտաբը վանքում էր, ու ես խցերից մեկում էի քնում, այստեղից էլ ղեկավարում էի դիրքերը: Այստեղից ողջ ճակատը երեւում էր: Հետանու լավ ուղղորդողներ, հետախույզներ ունեի: Տեր Հով-

հաննեսն էր, որի ողջ ընտանիքը պատրաստակամ էր օգնել մեզ: Ծեսմանյան Վազգենիկն էր, հարսը՝ Վարյան, Վովան: Բենիկը Տեր Հովհաննեսի հետ հետախույզ էր: Մի գիշեր հետախույզները հաղորդեցին, թե թիկունքից ինչ-որ զորք է գալիս: Դուրս ենք գալիս, նայում: Տեսնեմ՝ մի հսկա զորասյուն է գալիս: Հետախույզներ ուղարկեցի: Կարծում էի, թե թուրքերն են, մտածում էի վերադասավորել ուժերն ու անակնկալի բերել թշնամուն: Հրահանգ տվեցի ականապատել վանքի ճանապարհը: Բայց զանգեցի Ստեփանակերտ, հայտնեցի, որ թիկունքից անհայտ զորք է դեպի մեզ շարժվում: Ասացին, որ երեւի իրենց ուղարկած զորասյունն է, Երեւանից են ուղարկել, Վազգեն Սարգսյանն ու Ալիկ Պետրոսյանն են բերում: Ասում եմ՝ գոնե նախապես տեղյակ պահեիք: Հանձնարարականները վերափոխում եմ: Տղաները հաղորդեցին, որ մեքենաների վրա Հայաստանի դրոշ է երեւում: Մի քիչ հանգստացա: Երեկոյան՝ ժամը 11-ին, տեղ հասան: Մեր ուրախությունը չափ չուներ: Երեք հարյուր վաթսուն հոգի էին: Մնում էր պարզել, թե ով ինչին է ընդունակ, ինչ պատրաստվածություն ունեն: Քանի որ ճակատը շատ մեծ էր, հարյուր հոգու ուղարկեցինք Չլդրան - Կիչան հատված, որտեղ Հայկազն էր հրամանատարը: Զորախմբի մեջ հրետանավորներ կային, որոնց իննսուն տոկոսը, ինչպես Վազգեն Սարգսյանն ասաց, մարտական փորձ չունեին: Մեծ մասը կամավորականներ էին, որոնց հավաքել էին մի շաբաթվա ընթացքում: Կային, որ զենք բռնել չգիտեին: Կարեւորը ոգեւորությունն էր: Մեր զինվորների ոգին էլ տեղն ընկավ: Մնում էր ճակատը ճիշտ կազմակերպել ու ազատագրել Սարսանգի ձորը: Առաջին մեր փորձերը անարդյունք էին: Սակայն մի տասնհինգ օրում տղաներն ահագին փորձ կուտակեցին: Մի շաբաթ հետո Վազգենը երկու հարյուր կազակներ բերեց: Հյուսիսային Կովկասից էին եկել: Մտածում էի, որ իրար վնաս չտան: Պատահել է, որ անփորձությունից սխալմամբ իրար վրա են կրակել: Ես ժամերով բացատրում էի՝ ինչպես քարտեզով կողմնորոշվեն, ռադիոհաղորդիչն ինչպես օգտագործեն, մարտի ժամանակ ինչպես իրար հետ շփվեն: Մինչ գործողությունը սկսելը հրամանատարներին տանում էի, տեղանքը ցույց տալիս: Տղաները հատկապես դժվար էին կողմնորոշվում անտառում: Մեծ մասը արագ յուրացրեց խնդիրը:

Վաղուհասի ազատագրումն եմ հիշում: Շատ դժվար ու դաժան ճակատամարտ էր: Կազակների հետ էլ ամենը հաջողվեց: Կարեւորը մահապարտների ու տեղի բնակչության արագ բարեկամանալն էր: Մեկը մյուսի համար աղոթում էր, իրար քավոր-սանիկ կանգնում, հարազատություն ստեղծում: Մարդիկ եղան մահապարտներից, որ

մնացին էնտեղ ապրելու: Դա ինձ համար ամենահուզիչն էր ու ամենամեծ ձեռքբերումը: Մեր ժողովրդի երկու հատվածները վերագտնում են իրար: Տեսնեիր, թե արցախցի կանայք ինչպես էին խնամում վիրավոր տղաներին: Գիտե՞ս, մեր հաղթանակի գաղտնիքը այդ փոխադարձ սիրո, միասնության մեջ էր:

Վաղուհասի կռիվները ամենադաժանն էին: Նման ճակատամարտերում է որոշվում պատերազմի ճակատագիրը:

Բ. - Այդ ժամանա՞կ հանդիպեցիր Նինային:

Ա.Ա. - Հա, այդ ժամանակ էր: Պարզեւ սրբազանը կապվել էր հետս, թե շատ կարեւոր գործ կա, գնամ վանք: Վանք չհասած՝ տեսնեմ՝ ականապատված լեռան լանջին մի աղջիկ ծաղիկ է հավաքում: Ականապատել էինք, որ թուրքերը թիկունքից մեզ անակնկալի չբերեն: Հետո այլ վտանգ էլ կար: Թշնամու հետախույզները հաճախ գալիս էին, մարդ փախցնում կամ սպանում: Ցերեկները չէինք նայում, բայց գիշերները հսկողություն էինք սահմանել: Ու հանկարծ՝ մեկն անհոգ ծաղիկ է հավաքում: Ասում եմ. «Ո՞վ ես, ո՞վ է քեզ թույլ տվել այս դաշտը մտնես»: Թե. «Ծաղիկ հավաքելու համար Ղարաբաղում հատուկ թույլտվությո՞ւն է պետք»: Ասացի. «Այո, արի շուտ նստիր ավտոն ու հեռացի՛ր այստեղից»: Այդ օրը անտրամադիր էի, մոտիկ ընկերոջս էի կորցրել: Գլխարկով էր, սիրուն, բարակիրան աղջիկ էր: Հայերեն շատ դժվար էր խոսում, բայց կարողանում էր բացատրել իր ուզածը: Բայց տեսա, որ ինձ չի լսում, չի հասկանում, զայրացա, նույնիսկ հայհոյեցի: Ծաղկեփունջը խփեց երեսիս: Ավելի ջղայնացա ու կարգադրեցի դնել մեքենայի մեջ, տանել: Հետո եկա սրբազանի մոտ: Հարցրեց, թե ուր է Նինան: Ես գլխի ընկա, որ Նինան հենց ծաղիկ հավաքող աղջիկն էր: Պատմեցի սրբազանին, նա էլ ահագին սրտնեղեց, ասաց. «Կանչեք, ետ բերեք»: Պարզվեց, որ ես Նինայի հետ պետք է հանդիպեի, ներկայացնեի իրավիճակը, թե ինչի կարիք ունի բանակը: Չորս կողմից նրա հորից՝ Վահագն Հովնանյանից, փող էին ուզում: Նա էլ աղջկան էր ուղարկել՝ իրավիճակին ծանոթանալու եւ ճիշտ տեղեկություններ հավաքելու: Բայց մեր զրույցն այդ օրը, իհարկե, չկայացավ:

Ես Հաթերքի ձորակի հրամանատարն էի: Սեյրան Օհանյանը եկել էր ուղղումներ մտցնելու մեր գործողություններում, շտաբից հանձնարարականներ տալու: Հավաքեցի հրամանատարական կազմին՝ Դրմբոնի մեր շտաբում ժողովի: Մեկ էլ լուր եկավ, թե թուրքերը թիկունքից մտել են մեր տարածքը: Ալաշանի մոտ անտառի ճանապարհով երեք տանկ ներխուժել են ու գալիս են մեր կողմը: Դա 1992 թվականին էր, դեռ ջոկատներով էինք կռվում: Մենք էլ մեր զենքերը դիրքերում

էինք թողել, ատրճանակներով էինք: Դուրս եկանք, տեսանք՝ տանկերը արդեն Դրմբոն են մտնում: Կիրճի նեղ ճանապարհով են գալիս: Ինչ անել: Սեյրանը մոտակա բարձունքը որպես հրամանատարական դիրք ընտրեց՝ այնտեղից հսկելու իրավիճակը, կանչեց հակատանկային ֆագոտչիկներին: Բայց նրանք ուշանում էին: Ասացի. «Ես իջնեմ, տեսնեմ՝ ոնց պահենք տանկերը, մինչեւ նրանք հասնեն»: Դավիթ Ոսկանյանը օգնականս էր: Ճրջադարձի վրա անցանք ճանապարհին ու մտանք անտառը: Երեք տանկերը արագությամբ գալիս էին դեպի մեզ: Ճանապարհի եզրին փոս կար: Ասացի. «Ես մտնում եմ փոսը, դու ինձ ստրախովկա արա»: Հա, ձեռքիս ատրճանակից բացի մի հակատանկային նռնակ կար: Սեյրանի դիտակետը մոտ կես կիլոմետրի վրա էր, որտեղից նա ամեն ինչ տեսնում էր: Ես էլ կապով ասում էի հրավիճակի մասին: Առաջին տանկի վարորդը տեսնում է ինձ, կանգ է առնում, մյուսներն էլ են կանգնում: Ես այնպես եմ պառկում, որ տանկի վարորդը տեսնի նռնակը: Սեյրանն ասում է, որ «Ֆագոտը» բերել են: Խփում են երրորդ տանկին: Էս տանկերն էլ բեռնված են հայկական գյուղերից թալանված սառնարաններով, հեռուստացույցներով, կահ-կարասիքով, անկողիններով: Տանկից թնդանոթով կրակում են իմ ուղղությամբ, արկը թռչում անցնում է վերեւով: Տեսնեմ՝ տանկի աշտարակի լյուկը բացվեց, հրամանատարը դուրս եկավ, որ լուծի հարցերն ինձ հետ: Ես ատրճանակով կրակեցի, ու տանկի հրամանատարը լյուկով ցած ընկավ: Ես էլ նռնակը չեմ գցում տանկի վրա, որ տանկը չփչանա, մաքուր, անվնաս վերցնենք: Տանկերի անձնակազմի անդամները դուրս եկան ու սկսեցին փախչել: Սեյրանը, տեսնելով այս ամենը, հրամայեց, որ հակատանկայինները այլեւս չկրակեն: Երրորդ տանկի աշտարակին էր կպել արկը, հեշտ էր նորոգելը: Այդ երեք տանկերը մինչեւ պատերազմի ավարտը լավ ծառայեցին մեզ: Մեր ջոկատայինները հասան, մտան անտառ, որ այդ տանկի զինվորներին բռնեն:

Պատերազմից մեկ այլ դեպք էլ եմ հիշում: Վազգեն Սարգսյանը երեք հարյուր վաթսուն մահապարտ էր զինվորագրել, ուղարկել Հաթերքի կիրճը՝ մեզ օգնության: Հետո երկու հարյուր հոգի կազակներ բերեց: Ծխախոտի խնդիր կար, որ մահապարտների գալով՝ լուծվեց: Կազակների հրամանատարը, որ ատամանն էր, շարքի առաջ կանգնած, հրաժարվեց հանձնարարությունը կատարել: Վեճ ծագեց, ասացի, որ շարքի առաջ իրավունք չունի այդպես խոսել: Ասաց, որ իրենց առաջադրանքի ուղղությունը ականապատված է, եւ ինքը չի կարող գնալ: Սակայն այդտեղ բոլոր տեղերն էին ականապատված: Կյանքի ու մահվան խնդիր էր: Ում բախտը բերեց, նա էլ կապրի: Ոչ ոք չգիտե, թե հաջորդ պահին ինչ կլինի: Որպեսզի խուճապ

չառաջանա, ասացի, որ ոչ մի ական էլ չկա այդտեղ: Ատամանը թե. «Այդ դեպքում դու առաջինը անցիր, մենք քո ետեւից կգանք»: Վազգեն Սարգսյանը միջամտեց՝ ասելով, որ ճակատի հրամանատարը իրավունք չունի զորքի առաջից քայլի ու ճանապարհ հարթի: Սակայն ես հանձն առա նրանց առջեւից գնալ: Այլ ելք չկար: Խնդրեցի շտաբից շտապ կոնյակ ուղարկեն: Երկու ժամից բետոնների մեջ հասավ կոնյակը: Կանաչ հեղուկ էր: Ամեն մի կազակ մի բաժակ խմեց: Հիմա նրանք պետք է իմ ոտքի հետքերով քայլեին: Հետաքրքիր բան էր. վեցերորդ զինվորի ոտքի տակ ական էր պայթում: Ընդամենը երեք պայթյուն եղավ: Ես մեջքից, ոտքից վիրավորվել էի, բայց կարելի էր դեռ դիմանալ, կազակներին տեղ հասցնել: Ութ հոգի զոհվել էին, տասը՝ վիրավորվել: Իմ ետեւից ատամանն էր գալիս, իսկ շտաբի պետ Ֆյոդորը երրորդն էր: Նրանց եւս բան չեղավ: Հասնում ենք բլրի տակ: Կազակների խմբի հետ տասնութ տարեկան երեխաների ջոկատ ունեի, հրամանատարը Հարութն էր Երեւանից: Գանձասարի վանքի պահակ Բենիկն էր մեզ հետ: Բենիկի ուղեկցությամբ շրջանցեցինք բլուրն ու հայտնվեցինք թուրքերի թիկունքում: Թուրքերի համար անսպասելի բարձրացանք բլուրը, մտանք խրամատներն ու գնդակահարեցինք բոլորին: Ոչ մի դիմադրության հնարավորություն չունեին: Բլուրն ու գյուղը ազատագրեցինք, դիրքեր դրեցինք, որոշեցինք մի քիչ հանգստանալ: Ոչ դեղորայք, ոչ բինտ , ոչինչ չկար, իսկ ծնկոսկրիս մեջ բեկոր էր մնացել: Դանակի ծայրով սկսեցի քանդել: Փայտի կտոր էի դրել ատամներիս արանքը, ուժեղ կծել, որ դիմանամ ցավին: Բայց ցավից ոռնում եմ: Քանի որ յոդ չկար, ես երեխաներին ասում եմ՝ չիշիկ արեք վերքիս վրա: Վախից ցամաքել էր սրանց միզապարկերը: Սիգարետ վառեցի, մոխիր լցրի: Երեխաներից մի երկուսի ուշքը գնաց այդ տեսարանից: Էդ պահին էլ Գրադի Ժորան եկավ, նրա հետ՝ բուժքույր Աղավնին, Սերոբյան Հիդան, Կարինեն, որ զոհվեց: Սկսեցին գոռգոռալ, նախատել, թե ինչպես կարելի է կեղտոտ ձեռքերով ինքնավիրահատում անել: Ժորան ասաց, որ հակառակորդը հսկայական ուժեր է կենտրոնացրել, ետ քաշվել է պետք: Հրաժարվեցի այդ կարեւոր դիրքը թողնել: Հաջորդ օրը ավիացիայով, հրետանիով ռումբեր էին թափում մեզ վրա: Մի երկու գումարտակ էլ հետեւակ էին ուղղել մեր դեմ: Ստիպված էինք ետ նահանջել: Նահանջելը ճիշտ էր: Հայկազի հետ, որն աջ թեւում էր, նախապատրաստեցինք հարձակումը, մի տասնհինգ օրից սկսեցինք գործողությունն ու լրիվ ազատեցինք ձորը: Այդտեղից սկսեցինք նախապատրաստվել Քարվաճառի ազատագրմանը, որը երեք ամիս հետո իրականացվեց:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբգարյան Արմեն 78
Աբրահամյան Էմիլ 200
Աբրահամյան Վրթանես վարդապետ 70
Ադո 6, 7, 8
Ազգալդյան Լեոնիդ 75, 168, 179, 181, 197
Աթայան Պավլիկ 169
Ալեքսանյան Արթուր 5, 59, 69, 71, 82, 220
Ալիեւ Հեյդար 33, 47, 220, 221
Ախունդով 65
Աղաբաբյան Բորիս 144
Աղաբեկյան Արթուր 141, 193,
Աղաջանյան Ռոլես 12, 76
Աղայան Սամվել 207, 209
Ամիրխանյան Ռոբերտ 226
Այվազյան Լարիսա 167, 169, 171, 172, 174
Այվազյան Սուրեն 199
Անդրանիկ 15, 16, 17, 112, 184
Աշոտ Բեկոր 105, 193, 194, 196, 197, 206
Աջապալյան Միքայել վարդապետ 70
Առաքելյան Գառնիկ 203, 206, 219
Առաքելյան Կիմ 221
Առնո 15, 17, 18, 20, 21
Առուշանյան Հրայր 151
Առուշանյան Սլավիկ 199, 201, 202
Աստրյան Անահիտ 6, 22, 46, 69, 81, 92, 112, 134, 176, 190, 199, 220
Աստրյան Վարդան 134
Ավանեսյան Գենա 151
Արարքցյան Բաբկեն 89, 92, 96, 97
Արջ Աշոտ 85
Արկադի Տեր-Թադեւոսյան (Կոմանդոս) 76, 105, 146, 152, 158, 159, 160, 162, 163, 165, 190, 209, 210, 211, 212, 215, 218, 232
Արշաբ 6, 9, 223
Աֆանասյան Գրիշա 12, 36, 203

Բաբայան Աշոտ 138
Բաբայան Բորիս 140
Բաբայան Էդիկ 204
Բաբայան Սեմյոն 39
Բաբայան Սամվել 72, 76, 78, 79, 105, 107, 110, 196, 208, 211, 215
Բալայան Վալերի 16, 76, 193
Բաբուրյան Կարեն 14, 38, 39
Բագիրով 33, 34, 35, 37, 38
Բագրատունի 4
Բագրատյան Արտակ 184
Բալայան Զորի 55, 76, 77, 79, 95, 199, 234
Բալայան Կիմ 191
Բալուջեցի Գարիկ (Հաչաբաշ) 153
Բախշյան Գոգո 222
Բախշյան Բորիկ 159
Բակատին 51
Բաղդասարյան Գեւորգ 176, 177, 180
Բաղդասարյան Ռոբերտ 10, 14, 204
Բաղունց Ռաֆիկ 174,
Բարոնուհի Քերոլայն Քոքս 79
Բարխատով Սաշա 42
Բարխուդարով Գեւորգ 221
Բեգլարյան Էդիկ 6, 7
Բեգլարյան Հրաչ 10, 205
Բեկնազարյան Յուրի 33
Բեղլի Վալո 201, 202, 205
Բրեժնեւ Լեոնիդ 92, 220, 221, 222
Բրեժնեւա Գալինա 92
Բուդո (Ռոմիկ) 82, 84
Բունիաթյան Արցախ 170
Բուռնաս 180

Գաբրիելյան Գեղամ 134
Գաբրիելյան Գուրգեն 10, 11, 36, 205, 222
Գալստյան Ժաննա 6, 76, 155, 193, 227
Գալստյան Համբարձում 55, 82, 83
Գալստյան Վագիֆ 145, 169
Գամսախուրդիա 89
Գասպարյան Մարգարիտա 36
Գասպարյան Յուրա 134
Գեորգիսյան Մովսես 56, 81, 82
Գզողյան Ֆելիքս 120, 124, 131, 158, 159, 160, 162, 177, 187, 194, 210
Գորբաչով Միխայիլ 13, 30, 31, 33, 49, 67, 93, 95, 222
Գրիգորյան Արման 148
Գրիգորյան Բարմեն 144, 160
Գրիգորյան Գրիգոր 46, 216
Գրիգորյան Հովիկ 150, 156
Գրիգորյան Մանվել 121, 123, 124, 126, 146, 149, 191
Գրիգորյան Վաչագան 14, 39
Գրիգորյան Վիգեն 184
Գեւորգյան Գագո 180
Գեւորգյան Լեւոն 112
Գեւորգյան Կարեն 113, 187
Գեւորգյան Սամվել (Ծաղիկ) 89
Գեւորգյան Տեր Թադեւոս քահանա 70
«Դավաճան» Վալոդ 182
Դադամյան Բորիս 67, 225
Դալիբալթայան Գուրգեն 76, 79, 104, 106, 114, 115, 124, 140, 197, 210, 211, 215, 216, 229, 234
Դանիելյան Արարատ 180
Դանիելյան Կամո (Չուգուն) 181, 182, 186
Դանիելյան Ռազմիկ 73
Դանիելյան Մաքսիմ 38
Դավիդյան Սերգեյ 164
Դարբինյան-Չիլինգարյան 96
Դեմիչեւ 11, 200, 201, 203
Դեմիրճյան Կարեն 23, 25, 51, 58, 94, 95
Դիլանյան 51
Դեւրիկյան Վարդան 128, 129

Ելցին Բորիս 103, 138
Եղոյան Ռուբիկ 145, 146, 159
Եղիշե 4
Եղիշե պատրիարք 92
Եսիկոլոպով ակադ. 10, 201
Եպիսկոպոսով 10
Եսայան Օլեգ 31, 76
Երեմին 55
Երիցյան Պավել 130

Զադոյան Դավիթ 56, 57, 58
Զաքարյան Վաղինակ 183, 184

Էրքիաջյան Էդվարդ 179

Թաթարյան 135
Թամրազյան Հենրիկ 152
Թովմասյան Տեր Մկրտիչ քահանա 70

Իշխանյան Հովիկ 223
Իշխանյան Ռաֆայել 94, 96

Լեդի Հակոբ 178, 180, 186
Լենին Վ.Ի. 13, 17, 33, 77, 201, 203
Լիգաչով Եգոր 25, 43, 51
Լիսաուսկաս 58, 59
Լյովա (ճուտ) 128
Լուկյանով 30, 31

Խաչատրյան Լյուդվիգ 92
Խաչատուրով գեն. 130, 140
Խաչիկյան Արթուր 113
Խանլարովա Զեյնաբ 220
Խորենացի 4

Կարապետյան Արկադի (Ագո) 10, 11, 12, 16, 36, 76, 157, 158, 171, 172, 174, 195, 196, 199, 205, 206, 207, 216, 218, 222, 224, 225, 227
Կարապետյան Բակուր 2, 5, 6, 22, 33, 36, 38, 42, 44, 46, 66, 67, 69, 70, 81, 92, 112, 134, 144, 167, 168, 176, 190, 199, 220
Կարապետյան Էդուարդ 134
Կարապետյան Սամվել 13
Կարատինսկի 134
Կապուտիկյան Սիլվա 94
Կովալենկո 204
Կեւորկով Բ. 10, 12, 33, 34, 35, 37, 38, 39, 201, 203, 204, 205

Հակոբյան Արմեն 10, 12
Հակոբյան Սմբատ 81, 82, 89, 98, 104, 112, 180, 187
Հակոբյան Վարդան 10, 205
Հարությունյան Գրիգոր 49
Հարությունյան Ռոզա 167, 169, 170
Հարությունյան Սուրեն 56, 57, 144, 134
Հարությունյան Միքայել գեն. 124
Հայրապետյան Ռուբեն (Նեմեց) 104, 133
Հայրապետյան Վիգեն 39
Հայրիկյան Պարույր 50, 93, 95, 156
Հովհաննիսյան Միլետա 167, 168, 169, 170, 171, 172
Հովհաննիսյան Յուրա 146, 152, 192, 193, 228
Հովնանյան Հրայր 92
Հովնանյան Վահագն 237
Հովնանյան Նինա 5, 229
Հովսեփյան Հովսեփ 197
Հրազդանի Սասուն (Միքայելյան)136, 145, 146, 149, 191, 192, 228

Ղազարյան Հայկ 92
Ղազարյան Վիտալի 174
Ղազարով Էդուարդ 10
Ղահրամանյան Վովա 168
Ղանդիլյան 58, 59
Ղուլյան Աշոտ (Բեկոր) 199, 206, 219
Ղուկասով 187

Մադաթով 77
Մազմանյան Արմեն 81
Մամեդով 100
Մամեդովա Ֆարիդա 65
Մամիկոնյան 4
Մամյան Ռաշիդ 24
Մայիլյան Վարդան 118
Մանուչարյան Աշոտ 82, 83, 97, 109, 196
Մանուչարով Արկադի 6, 10, 12, 13, 14, 39, 224

Մարգարյան Դիոնիս 87
Մարգարյանց 30, 55, 56
Մարտիրոսյան Աշոտ 171
Մարտիրոսյան Պարգեւ արք. 69, 70, 79, 229, 230, 231, 236
Մարտիրոսյան Ֆելիքս 137
Մարտիրոսով Լեոնիդ 218
Մելիքյան Գուրգեն 226
Մելքոնյան Մոնթե 75, 104, 105, 132, 177, 179
Մելքումյան 35
Մեղրյան Շահեն 12, 73, 75, 139, 226
Միխայլով 11, 33
Միրզոյան Գրիգոր (Գիրո) 175
Միրզոյան Մաքսիմ 39, 76, 202, 204
Միքայելյան Հասմիկ 35
Միքայելյան Սասուն 136, 191, 192
Մխոյան Մուշեղ (Վոժդ) 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 98, 177
Մկրտչյան Արթուր 64, 199, 226
Մնացականյան Լյովա 174
Մոսունց Սլավա 168
Մովսիսյան Զավեն 38, 203
Մովսիսյան Վլադիմիր 22, 27, 49, 52, 53, 56
Մորուք Ռաֆո 56, 71, 73, 74, 78, 142, 150, 153, 158, 164, 191, 197, 209
Մութալիբով 31, 33, 196
Մուխի դայի 168
Մուրադյան Իգոր 10, 83, 92, 93, 94, 96, 97, 99, 199, 200, 202

Յակովլեւ 51

Նազարբաեւ Նուրսուլթան 138
Նավասարդյան Աշոտ 82, 197
Նավթալյան Արմեն 153, 156, 157
Նելսոն 113, 116, 119, 120, 122, 123, 124, 128, 133
Նեֆեդով Բորիս 67
Նիկողոսյան Ստեփան 134, 135
Նորայր Դանիելյան 75

Շահբազյան Նորիկ 184
Շահինյան Հայկազ 50
Շահինյան Սամվել 176, 177, 185
Շահվերդյան Սերգեյ 10, 11, 21, 199
Շահրամանյան 201
Շաքարյան Զոյա 6, 7, 13
Շաքարյան Սերգեյ 6
Շիրինյան Վիգեն 144, 226
Շիրխանյան Վահան 191

Ոսկանյան 25, 30, 224, 237

Չաուշ 60

Պասկալեւա Ցվետանա 216
Պատաշյան Արմեն 167, 168, 174
Պետրոսյան Աստվածատուր 136, 191
Պետրոսյան Գեորգի 76
Պետրոսյան Հրաչիկ 15
Պետրոսյան Շմավոն 39
Պետրոսյան Ռազմիկ 12, 14, 206, 207, 224, 225
Պողոսյան Գենրիխ 12, 13, 39, 64

Ջամբո 135, 136, 138, 139, 140, 142

Ռասիզադե Շամիլ 23, 25
Ռիժկով Ն. 30, 43, 100
Ռոմա 153, 168

Սահակյան Մելս 92
Սանյա 173
Սարգսյան Աշոտ (ֆիզիկ) 199, 206
Սարգսյան Հրանտ 223
Սարգսյան Սերգեյ 39
Սարգսյան Սերժ 60, 76, 78, 105, 156, 157, 158, 161, 210, 235
Սարգսյան Վազգեն 18, 56, 57, 72, 87, 97, 98, 100, 101, 102, 112, 149, 150, 177, 187, 208, 232, 236, 238
Սարուխանյան Արշակ 181, 186
Սարուխանյան Վաչե 10, 11, 51, 200, 205
Սաֆոնով գեն. 40, 53, 73
Սեպտա 12, 35
Սերովբե սրբազան 92
Սեֆիլյան ժիրայր 215, 219
Սիրադեղյան Վանո 97, 176, 178, 183, 196
Սողոմոն 4, 127, 133
Սպանդարյան 27
Ստարավոյտովա Գալինա 62, 92
Ստարիկով գեն. 150
Ստեփայան Վարդան («Դուշ-ման») 149, 161, 209, 213
Սուլեյմանով 23
Սուրո («ղըժ-ղըժ») 82
Սեւանի Սուրիկ 146, 191, 228

Վազգեն Առաջին կաթողիկոս 69, 70, 71
Վանցյան Սերգեյ 137, 143, 226, 226, 232
Վարդան («Տոգ») 83
Վարդանյան Դավիթ 92, 96
Վարդանյան Շավարշ 77, 228
Վարդանյան Սամվել 71
Վարդանով Վլադիմիր 176
Վարդգես Պարսամ 72
Վարսենիկ 17
Վերդյան Ելենա 167, 168, 170, 171
Վերոնիկա 226,
Վիտյա 99, 179, 180
Վլադիմիր 22, 36, 38, 52, 56, 153, 154, 168, 175, 176, 197, 216
Վոլսկի Արկադի 67, 70

Տեր-Գրիգորյանց գեն. 102, 103, 109
Տեր Հովհաննես 235
Տեր-Պետրոսյան Լեւոն 56, 89, 96, 97, 98, 100, 101, 102, 103, 106, 109, 110, 192, 196, 209

Ուլուբաբյան Բագրատ 6, 7, 200

Փափազյան Արթուր 193
Փիլոյան Անդո 124, 126

Քոչարյան Ռոբերտ 14, 39, 42, 76, 78, 79, 105, 110, 225, 227
Քոչարյան Համլետ 186
Քոչարյան Վալերի 13, 193
Քոչինյան Անտոն 29, 49

Օհանյան 77, 169, 170, 171, 172, 174, 193, 196, 215, 232, 233, 237
Օհանյան Սեյրան 77, 193, 196, 215, 232, 233, 237
Օսիպով Վլադիմիր 36, 38, 39

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբովյան 50, 56, 89
Աղլեր 72
Ադրբեջան 4, 22, 23, 24, 26, 27, 28, 33, 35, 38, 39, 40, 41, 42, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 58, 65, 67, 72, 94, 97, 99, 104, 106, 108, 109, 111, 113, 114, 142, 173, 188, 189, 190, 191, 192, 193, 194, 195, 196, 202, 204, 205, 220, 223, 226, 227
Ազատ 178, 180, 186
Ալաշան 171, 172, 173, 235, 237
Աղդանիշ 177
Աղդամ 8, 9, 10, 11, 12, 21, 66, 77, 109, 114, 139, 168, 187, 188, 206, 225
Աղստաֆա 23, 202
ԱՄՆ 72
Ամասիա 52
Ամարաս 69, 70, 71, 73, 82, 104, 135, 140, 158, 161, 225, 230
Ասկերան 10, 15, 144, 199, 201, 202, 203, 206
Ատրպատական 45
Արաքս գ. 26, 28
Արեգասար 121, 126, 127, 128
Արեշ 82, 85, 86
Արցախ 4, 5, 46, 63, 69, 70, 71, 72, 73, 134, 170, 191, 234
Արեւմտյան Հայաստան 22
Աֆղանստան 42, 82, 83, 98, 113, 114, 170, 176, 210

Բաթումի 108, 225
Բալուջա 76
Բաղանիս 56, 57
Բարխուդարլու 23, 178, 179, 181
Բաքու 117, 196, 221
Բելառուսիա 190
Բերդ 47, 52, 183
Բերդաձոր 15, 16, 17, 18, 19, 20, 184, 209, 233

Գետաբեկ 182, 186
Գետավան 74, 152, 152, 157, 158, 160, 162, 164, 235
Գետաշեն 81, 82, 87, 134, 135, 142, 178
Գանձասար 70, 73, 79, 80, 230, 234, 235, 239
Գանձակ 46, 54
Գորիս 18, 20, 48, 53, 56, 69, 113, 121, 122, 123, 133, 135, 136, 137, 138, 141, 191
Գյարավանդ 145, 148, 150, 155, 156
Գյուլաթաղ 36, 171

Դաստագիր 127
Դավիթաշեն 190
Դաղստան 108
Դաշքեսան 54
Դովեղ 23
Դիլիջան 176
Դրմբոն 79, 160, 162, 171, 174, 235, 237

Եղակեր 127
Երասխ 46
Երասխավան 51, 56, 82, 83, 84, 87, 89, 177, 179, 180
Երեւան 6, 11, 14, 15, 18, 20, 21 22, 25, 39, 40, 46, 49, 50, 58, 86, 87, 89, 91, 93, 112, 121, 125, 136,

137, 139, 141, 143, 149, 150, 152, 162, 171, 172, 174, 175, 177, 185, 190, 194, 197, 205, 210, 226, 227, 229, 230, 232, 233, 234, 235
Եղցահող 19

Զագլիկ 146, 156, 157
Զանգեզուր 53
Զանգեզուրի լեռներ 48
Զառիսլու 20, 79, 211, 215, 233
Զարդախաչ 147, 153, 157, 171, 235

Էրեբունի 90, 183, 232

Թալակի ձոր 48
Թալիշ 128, 159, 168, 171, 217, 218
Թաղիլար 26
Թբիլիսի 82, 87, 134, 190
Թովուզ 53, 186
Թուրքիա 27, 49, 51, 126

Իջեւան 23, 24, 26, 46, 47, 52, 53, 54, 136, 176, 177, 178, 179, 181, 202

Լաչին 15, 20, 53, 102, 105, 107, 121, 123, 131, 132, 195, 215, 229, 233, 234
Լենինավան 168, 216, 217
Լենինգրադ 9, 27, 36, 62
Լեռնային Ղարաբաղ 30, 31, 33, 42, 45, 62, 63, 67, 70, 72
ԼՂԻՄ 33, 35, 36, 39, 62, 64, 65, 66, 67, 220, 221
ԼՂՀ 4, 72
Լոռի 54

Խոջալու 11, 13, 14, 29, 45, 113, 114, 115, 141, 187, 188, 189, 194, 195, 206, 215, 226
Խոջավենդ 138
Խորհրդային Միություն 12, 23, 28, 33, 46, 47, 73, 93, 94, 95, 96, 98, 102, 103, 112, 136, 137, 178, 190, 203
ԽՍՀՄ 24, 25, 39, 43, 51, 58, 62, 71, 176, 190, 191, 200, 201, 220
Խնձորեսկ 48

Ծաղկաձոր 173, 184
Ծամձոր 186

Կամո 180, 182
Կասպից ծով 26, 27, 44
Կարաչինար 136
Կարս 22, 76
Կարմիր 191, 211
Կիրովաբաղ 7, 9, 36, 38, 134, 139, 142, 190
Կրասնոսելսկ 141, 181, 182, 187
Կրասնոդար 86
Կուսապատ 171, 172, 173, 198
Կոռնիձոր 56, 60, 73, 121, 131

Հադրութ 15, 16, 18, 32, 64, 141, 157, 183, 184, 186, 190, 192, 193, 199, 200, 209, 226
Հաթերք 15, 32, 144, 145, 146, 155, 159, 191, 192, 209, 210, 234, 235, 237, 238
Հակոբ Կամարի 120, 124, 124
Հայաստան 10, 16, 17, 22, 23, 24, 26, 27, 29, 31, 33, 35, 39, 44, 46, 48, 49, 50, 51, 52, 53, 53, 54, 58, 63, 65, 72, 90, 92, 93, 94, 95, 97, 98, 99, 104, 107, 110, 111, 112 113, 132, 135, 139, 145, 148, 149, 171, 176, 177, 178, 187, 190, 191, 194, 199, 200, 201, 203, 205, 208, 211, 217, 221, 224, 225, 226, 229, 230, 233, 234, 236
Հարությունագոմեր 153
Հորդանան 69

Ղազախ 23, 24, 25, 46, 178, 202
Ղազանչեցոց վանք 63, 186
Ղարաբաղ 9, 10, 11, 14, 16, 17, 26, 28, 29, 30, 31, 32, 33, 39, 42, 43, 44, 45, 46, 49, 51, 62, 63, 65, 67, 70, 71, 74, 76, 78, 81, 82, 86, 87, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 99, 100, 104, 105, 106, 107, 110, 111, 125, 135, 138, 141, 144, 156, 158, 162, 181, 182, 184, 186, 187, 190, 191, 193, 194, 199, 200, 201, 202, 205, 206, 207, 208, 210, 214, 216, 220, 222, 225, 226, 228, 229, 230, 231, 232, 235, 237
Ղափան 52, 106, 110, 136, 139, 186

Մալխալաֆ 123, 132
Մասիսի շրջան 112
Մատաղիս 138, 217, 218, 219
Մարալյան Սարով 217
Մարաղա 145, 153, 168, 169, 170
Մարտակերտ 15, 32, 36, 73, 75, 79, 93, 100, 101, 104, 105, 106, 107, 119, 122, 123, 124, 130, 131, 133, 138, 140, 142, 144, 145, 146, 153, 157, 158, 159, 160, 166, 167, 168, 170, 172, 175, 184, 190, 191, 192, 196, 197, 198, 200, 216, 217, 218, 219, 226, 230
Մարտունի 8, 73, 75, 138, 200
Մեծ շեն 20, 160, 166, 233
Մեղրի 50, 52, 53, 54, 58, 59
Մերձբալթիկա 58, 86
Միջին Ասիա 7, 92
Մոխրենիս 185
Մուսուլմանլար 18
Մոսկվա 10, 11, 22, 23, 24, 25, 28, 33, 36, 39, 42, 43, 44, 46, 51, 53, 54, 55, 58, 69, 70, 77, 82, 92, 93, 94, 100, 102, 137, 179, 191, 192, 200, 201, 202, 203, 222, 223
Մուշ 22

Յուխարի Ջիբիխլի 118, 116, 130, 133
Յողոնես 18

Նախիջեւան 46, 49, 50, 51, 56, 57, 58, 109, 112, 136, 137, 180, 183, 187, 188
Նարեշտար 78, 79, 80, 135, 160, 235
Ներքին Հոռաթաղ 70, 73, 138, 140, 143, 152, 153, 157, 164, 170, 171, 235
Ներքին շեն 75
Նոյոմբերյան 23, 24, 47, 136, 176, 177, 179, 187, 191
Նորագյուղ 113, 114, 181
Նորք 81

Շահումյան 12, 15, 72, 75, 79, 136, 137, 138, 139, 141, 142, 160, 169, 177, 196, 198, 209, 216, 226
Շամխոր 54
Շամշադին 26, 52, 53, 134, 163, 177, 181, 182, 184, 186
Շենավան 22,
Շոշ 14, 181, 185, 211, 212, 213
Շուռնուխ 113, 115, 116, 117, 121, 133

Շուշի 5, 8, 15, 19, 20, 43, 63, 64, 66, 67, 69, 73, 75, 76, 77, 79, 100, 101, 135, 136, 140, 147, 181, 184, 185, 186, 194, 195, 196, 210, 212, 213, 215, 228, 229, 230, 231, 232, 234

Ոսկեպար 26, 89, 176, 177, 191
Որոտան 27

Չայլու 123, 216, 217, 218
Չարդախլու 54, 69, 94
Չափար 143, 150, 151, 152, 153, 155, 156, 160, 161, 162, 164, 166, 209, 235
Չինչին 134
Չլդրան 15, 79, 156, 171, 173, 174, 235, 236

Պառավաքար 178, 181
Պուշկին յալ 105

Ջախարլու 23, 46, 47, 52, 136
Ջանհասան 76, 193, 195, 215, 228
Ջավախք 49, 226, 227
Ջերմուկ 48, 113, 132
Ջիջիմլի 60
Ջուլֆա 59

Ռիգա 81, 84
Ռոստով 82, 86

Սադարակ 57, 180
Սարի գյուղ 23
Սարի թաղ 87, 89, 99
Սարուշեն 186, 193
Սիսիան 48, 52, 121, 140, 228
Սողոմոնա կյուղեր 127
Սոս 201
Սովետաշեն 89, 119, 183
Սպիտակ 22, 122
Սպիտակ խաչվանք 64
Սումգայիթ 12, 20, 43, 54, 97, 173, 225
Սեւ ծով 27
Սեւան 27, 28, 48, 58, 146, 191, 228
Սեւսուլան 168, 170
Ստեփանակերտ 6, 8, 11, 13, 14, 15, 16, 17, 19, 20, 21, 28, 33, 36, 38, 42, 49, 62, 75, 77, 100, 113, 115, 135, 140, 146, 149, 156, 157, 158, 160, 162, 168, 181, 182, 193, 194, 195, 196, 199, 206, 210, 213, 214, 216, 227, 228, 230, 234, 235
Ստոկհոլմ 106

Վազաշեն 23
Վաղուհաս 101, 150, 152, 159, 166, 175, 209, 235, 236
Վարդաձոր 58
Վարդենիս 52, 53, 54, 106, 177, 228
Վերին Հոռաթաղ 73, 143, 170, 171
Վրաստան 22, 26, 27, 46, 47, 50, 72, 86, 89, 99, 108, 109

Տալլին 82, 84
Տաշքենդ 19
Տեղ 48, 136, 233
Տող 76, 183, 184, 185, 192
Տողասար 185
Տոնաշեն 126, 127

Ցխինվալի 136

Ումուտլու 146, 147, 148, 149

Քաջավան 75
Քաջարան 217
Քարվաճառ 15, 48, 104, 106, 107, 109, 110, 136, 140, 148, 149, 199, 208, 239
Քյամալռու 23, 24
Քյոսալար 193, 195, 196, 228, 232
Քումե քար 16, 17, 18

Ֆիզուլի 107, 108, 193, 225

ԲԱԿՈՒՐ

ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ

գիրք առաջին

Համակարգչային ձեւավորումը՝ *Վազգեն Ղազարյանի*
Խմբագիր եւ սրբագրիչ՝ *Սնահիտ Սասարյան*

Չափսը՝ 60x84 ¹/₁₆. թուղթը՝ օֆսեթ,
ծավալը՝ 15,75 տպ. մամուլ, տպաքանակը՝ 1000:

Տպագրվել է «Ամարաս» տպարանում
Երեւան, Տերյան 44:

«ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ»
ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ՀԱՋՈՐԴ ՀԱՏՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ՝

Արկադի Մանուչարով

Բաբկեն Արարքցյան

Մուրադ Պետրոսյան

Ժորա Գասպարյան

Վալերի Պողոսյան

Գուրգեն Դալիբալթայան

Ալիկ Ալեքսանյան

Սերժիկ Ասլանյան

Տեր-Գրիգոր քահ. Մարկոսյան

Ամալյա Աղաջանյան

Ռոլես Աղաջանյան

Շահեն Հովասափյան

Կարո Կարապետյան

Սերգեյ Վանցյան

Նելսոն Մինասյան

Սլավիկ Դանիելյան

Գրիգոր Միրզոյան (Գիրո)

Արայիկ Խուդավերդյան